Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1376

491.992
4-34

2010

ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

ՉԱԳՄԱԳՃԸԼԱՐ ՓՈՂՈՑ ԱԿՕՐԵԱՆ ԽԱՆ

Թիւ 10, 11, 12, 13.

002

491.99
Գ-34

# ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ա. Մ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆԷ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1870

12240

997
40



# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ահա նոր քերականութիւն մը որուն ընթացքը մինչև հիմա հրատարակուած քերականութեանց ընթացքէն տարբեր է։ Ասոր մեծ տարբերութիւնը, և, ինչպէս կը յուսանք, գէթ գործնական կրթութեան մասին ունենալու առաւելութիւնը՝ գլխաւորաբար գործնական հրահանգներ պարունակելուն մէջ կը կայանայ։ Ասոր մէջ՝ տղան, անունն ու բայը ճանչցած օրէն, պիտի սկսի նաև անոնց գործածութիւնն ընելու վարժիլ։

Դարձեալ այս քերականութեան ընթացքին մէջ, տղան ոչ թէ, մինչև հիմա գրեթէ առ հասարակ եղածին պէս, իւրաքանչիւր մասին բանի այլ և այլ ձևերն ու բոլոր գիտելիները, և համաձայնութեան կանոններուն երկայն շարքը միանգամայն և միայն տեսականաբար միտք առնելու պիտի յոգնի, կամ թէ ըսենք, քերականութեան երկայն ճամբան մէկ ծայրէն մինչև միւս ծայրը վազելով պիտի երթայ առանց տեղ մը զկայ և շունչ առնելու, այլ իւրաքանչիւր հրահանգ, այն երկայն ընթացքին մէջ իբրև մէն մի օթևան, անոր թէ շունչ և հանգիստ առնելու, և թէ ըրած կարճ ճամբուն վրայ ստէպ ստէպ դառնալով նայելու և անցած առենը ճանչցածէն աւելի լաւ զայն ճանչնալու պիտի ծառայէ։ Զօրօրինակ՝

հոս քերականութեան բոլորովին անտեղեակ տղան անուններուն բոլոր հոլովներն ու հոլովումները ոչ թէ մէկէն թութակօրէն բերան մանաւանդ քան թէ միտք պիտի առնէ, այլ ուղղականը սորված ատեն սեռականը, տրականը, բացառականը միանգամայն հասկնալու պիտի չյոգնի . ասոնց մէկը սորվելէ և լաւ մը հասկնալէ և անոր գործնական կրթութիւնն ընելէ ետքը միւսին պիտի անցնի : Այս կերպով քերականութիւնը խառն և տեսական ըլլալէն դադրելով՝ կ'ըլլայ աստիճանաբար, և գործնականապէս սորվուելու ուսում մը :

Կը յուսանք թէ այս քերականութիւնը մասնաւոր կերպով շատերուն ուշադրութիւնը պիտի գրաւէ, մանաւանդ որ կը տեսնէինք թէ քանի մը յաջողակ ուսուցիչներ արդէն իրենք իրենցմէ այս ընթացքը բռնած էին, և անոր համեմատ դասագրքի մը կը փափաքէին : Եթէ մեր աշխատութիւնն ընդունելի ըլլայ, կը խոստանանք անոր յաջորդ տպագրութեանը կարևոր զարգացում մը տալ :

### ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

### ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

## ԴԱՍ Ա.

### ԼԵԶՈՒ, ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

1. Լեզու կ'ըսուին այն արտաքին նշանները՝ որով մարդիկ իրենց գաղափարները, խորհուրդները եւ զգացումները կը յայտնեն ։

2. Այս արտաքին նշաններուն գլխաւորներն են ձայնը եւ գիրը ։

3. Ձայնիւ կամ գրով եղած բացատրութիւնը խօսք կը կոչուի ։

4. Ամէն խօսք բառերէ կը բաղկանայ . զոր օրինակ՝ Ամէն մարդ երջանկութեան կը դիմէ, բայց շատ քիչերն անոր կը հասնին . այս խօսքը ինը բառէ բաղկացած է, որք են՝ ամէն, մարդ, երջանկութիւն, դիմել, բայց, շատ, քիչ, ան, հասնիլ ։

5. Բառերը խօսքի մը մէջ օրէնքով մը իրարու քով գալով խօսքը կը կազմեն ։

Եթէ այն օրէնքին համաձայն չկազմուին կամ չշարադրուին, անոնց իրարու քով գալէն բան մը չի հասկցուիր ։ Այս օրէնքը լեզուին օրէնքն է ։

6. Քերականութիւնն այն գիտութիւնը կամ արուեստն է որ այս օրէնքին կանոնները կը սորվեցնէ։ Այսինքն՝ Քերականութեամբ կը սորվինք թէ՛ բառերն ինչպէս շարուելու են որ իմաստ կամ նշանակութիւն մը ունեցող խօսք կազմուի։

7. Լեզուի մը մէջ հազարաւոր բառեր կը գտնուին, բայց ամէնն ալ ինը տեսակի կը վերածուին։

8. Այս ինը տեսակ բառերը Մասունք բանի կ'ըսուին, եւ անոնք են՝ Անուն կամ Գոյական, Ածական, Բայ, Յօդ, Դերանուն, Նախադրութիւն, Մակբայ, Շաղկապ, Միջարկութիւն։

## ԴԱՍ Բ.

### ԱՆՈՒՆ, ԱԾԱԿԱՆ ԵՒ ԲԱՅ

1. Անուն կամ գոյական կ'ըսուին այն տեսակ բառերը որ իրերու անուններ են. ինչպէս՝ Ծառ, Ծաղիկ, Շուն, Մարդ, եւայլն։

2. Ածական կ'ըսուին այն բառերը որ իրի մը յատկութիւնները, այսինքն՝ անոնց ինչպէս ըլլալը կը ցուցնեն. այսպէս են հետեւեալ բառերը. Բարձր (ծառ), Անուշահոտ (ծաղիկ), Կատաղի (շուն), Կենդանի (մարդ)։

3. Ամէն Գոյական եւ Ածական իր պարզ ձեւին մէջ, այսինքն՝ երբ վերջը ն գիրէն զատ ուրիշ գիր մը կամ գիրեր չունի՝ Ուղղական հոլով է, ինչպէս՝ Մարդ, Կին, Տղայ, եւն.

4. Բայ կ'ըսուին այն բառերը՝ որոնք բան մը ընել կամ բան մը ըլլալ կը ցուցնեն. ինչպէս՝ Գրել, Կարդալ, Քալել, Ննջել, որոնք բան մը ընել կը ցուցընեն, եւ Մարիլ, Սեւնալ, Զօրանալ, որոնք բան մը ըլլալ կը ցուցնեն։



5. Բայը կ'ունենայ Եղանակ, Ժամանակ, Դէմք եւ Թիւ։

6. Եղանակը չորս է՝ Սահմանական կամ Պատմական, Ստորադասական (Կախման), Հրամայական եւ Աներեւոյթ (Անորոշ)։

7. Ժամանակը բուն երեք է՝ Ներկայ, Անցեալ եւ Ապառնի։ Ներկան կը ցուցնէ ան որ հիմա կ'ըլլայ. ինչպէս՝ կը գրեմ (կոր)։ Անցեալը կը ցուցնէ ան որ արդէն եղաւ, ինչպէս՝ գրեցի։ Ապառնին կը ցուցնէ ան որ դեռ պիտի ըլլայ, ինչպէս՝ պիտի գրեմ։

Անցեալը կրկին է՝ Անկատար Անցեալ եւ Կատարեալ Անցեալ. Կը գրէի (կոր)՝ Անկատար Անցեալ է. Գրեցի՝ Կատարեալ անցեալ։

Դարձեալ ժամանակները երկու տեսակ են, Պարզ եւ Բաղադրեալ։ Պարզ ժամանակը մի է, Բաղադրեալը ուրիշ (եմ) բայով կը շինուի։ Զոր օրինակ (կը) Սիրեմ, պարզ է. Սիրեալ եմ, բաղադրեալ է։

8. Դէմքը երեք է. Առաջին, Երկրորդ եւ Երրորդ։ Ես՝ առաջին դէմք է, Դու՝ երկրորդ, Նա՝ (ան) երրորդ։

9. Թիւը երկու է՝ Եզակի, որ մէկ անձ կը ցուցնէ գործող, ինչպէս՝ (կը) Սիրեմ, (կը) Սիրես, (կը) Սիրէ, եւ Յոգնակի, որ մէկէ աւելի անձինք կը ցուցընէ գործող. ինչպէս՝ (կը) Սիրենք, (կը) Սիրէք, (կը) Սիրեն։

10. Բայերը երկու տեսակ են՝ Գոյական կամ Էական Բայ, եւ Ածական Բայ։ Էական Բայն է Եմ Բայը. ուրիշ բոլոր բայերն Ածական Բայ են։

Գոյական Բայն այսպէս կը խոնարհի ։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզ. Յոգ.

Ներկայ ժամանակ. Եմ, ես, է. եմք, էք, են.
Եմ, ես, է, ևն.

Անցեալ անկատար. Էի, էիր, էր. էաք, էիք, էին.
Էի, էիր, ևն.

Անցեալ Կատարեալ. Եղէ, եղեր, եղև. եղաք, եղէք, եղեն. Եղայ, եղար, ևն.

Ապառնի. Եղէց, եղիցիս, եղիցի. Եղիցուք, եղիջիք, եղիցին. Ըլլամ, ըլլաս, ևն.

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզ. Յոգ.

Իցեմ, իցես, իցէ. իցեմք, իցէք, իցեն. Եմ, Ըլլամ և այլն.

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եզ. Յոգ.

Լեր, մի լինիր. լերուք, մի լինիք. Եղիր, մի ըլլար. եղէք, մի ըլլաք.

ԱՆԵՐԵՒՈՅԹ ԵՂԱՆԱԿ

Ներկայ. Լինել. ըլլալ.
Անցեալ. Լեալ, եղեալ. եղած
Ապառնի. Լինելոց. ըլլալու.

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Յարակատար. Եղեալ եմ, եղեալ ես, ևն. Եղած եմ, եղած ես, ևն.



Գերակատար. Եղեալ էի, եղեալ էիր, ևն. Եղած էի, եղած էիր, ևն.

Ստորադ. Անց. Եղեալ իցեմ, եղեալ իցես, ևն. Եղած եմ, կամ ըլլամ, ևն.

Ապառնի Ներկ. Լինելոց եմ, լինելոց ես, ևն. Պիտի ըլլամ, պիտի ըլլաս, ևն.

Ապառ. Անկա. Լինելոց էի, լինելոց էիր, ևն. Պիտի ըլլայի, ևն.

Ապառ. Ստոր. Լինելոց իցեմ, լինելոց իցես, ևն. Պիտի ըլլամ, ևն.

## ԴԱՍ Գ.

### ԼՈՒԾՈՒՄ ԵՒ ՅՕԴ

### ԼՈՒԾՈՒՄ

ԿԱՆՈՆ. — Նախադասութիւն կ'ըսուի խօսք մը որուն մէջ Դիմաւոր էական բայ, Տէր բայի եւ Ստորոգելի կայ ։ Բանտը մթին է, Նախադասութիւն մըն է. է՝ դիմաւոր էական բայ է, բանտ՝ տէր բայի է, մթին՝ ստորոգելի է ։

Բայը միշտ յայտնի է. Տէր բային ո՞վ կամ ի՞նչ հարցմամբ կը գտնուի. Ստորոգելին ալ ինչպիսի՞, որպիսի՞ հարցմամբ ։ Վերի Նախադասութեան մէջ աս հարցումներն ընենք. Է. — ո՞վ կամ ի՞նչ է. — բանտը է. — բանտը ինչպիսի՞ է. — մթին է ։ Ասա Բանտը Տէր բայի է էին. մթին՝ Ստորոգելի է բանտին ։

Այսպէս պէտք է լուծել ամէն Նախադասութիւն ։

Տէր բային գրեթէ միշտ գոյական մը կ'ըլլայ, Ստորոգելին ալ գրեթէ միշտ ածական :

---

## ՅՕԴ

1. Յօդ կը կոչուի ն գիրը՝ գրաբարի մէջ, իսկ աշխարհաբարի մէջ ը գիրը. ինչպէս՝ Աշխ. տունը, կինը. Գրաբ. տունն, կինն :

2. Յօդը թէ գրաբարի եւ թէ աշխարհաբարի մէջ բառին ծայրը կը դրուի :

3. Երբ բառ մը սեռ կամ տեսակ կը ցուցնէ, գրաբարի մէջ յօդ չառներ, աշխարհաբարի մէջ՝ կ'առնէ :

Բառ մը սեռ կը ցուցնէ, երբ ամէն բառը զօրութեամբ կ'իմացուի. զոր օրինակ՝ Բանտը մթին է, Շունը հաւատարիմ է, Ձին արագ է, Մարդը մահկանացու է. կը նշանակեն՝ Ամէն բանտ, ամէն շուն, ամէն ձի, ամէն մարդ. ուստի այս խօսքերուն մէջ՝ Բանտ, Շուն, Ձի, Մարդ սեռ կը ցուցնեն :

| | |
|---|---|
| Բանտը մթին է. | Մթին է բանտն |
| Շունը հաւատարիմ է. | Հաւատարիմ է շունն |
| Մարդը մահկանացու է. | Մահկանացու է մարդ |
| Առաքինութիւնը սիրելի է. | Սիրելի է առաքինութիւն |

4. Երբ բառի մը նշանակած իրը բնութեան մէջ միակ է, նոյնպէս գրաբարի մէջ յօդ չառներ, բայց աշխարհաբարի մէջ կ'առնէ : Աստուած բարի է, Արեգակը լուսատու է, Լուսինը աղօտ է, Երկիրը գնդաձեւ է, խօսքերուն մէջ՝ Աստուած, Արեգակ, Լուսին, Երկիր՝ միակ առարկաներ են, ուստի եւ գրաբարի մէջ յօդ չեն առներ :



| | |
|---|---|
| Աստուած բարի է. | Բարի է Աստուած |
| Արեգակը լուսատու է. | Լուսատու է արեգակ |
| Երկիրը գնդաձեւ է. | Գնդաձեւ է երկիր |
| Լուսինն աղօտ է. | Աղօտ է լուսին |

### 1. Հրահանգ աշխարհաբար

Բանտը մթին է. Լուսինն աղօտ է. Ձիւնը թանձր է. Անձրեւը լոյծ է. Շունը հաւատարիմ է. Ձին արագ է. Երկիրը գնդաձեւ է. Ծովն ընդարձակ է. Մարդը մահկանացու է. Ջուրը պաղ է. Օդը թեթեւ է. Առաքինութիւնը սիրելի է. Արեգակը լուսատու է. Աստուած բարի է. Հոգին անմահ է. Մարմինը նիւթեղէն է. Քարը կարծր է. Ցամաքը պինդ է. Մելանը սեւ է. Ձիւնը ճերմակ է. Խոտը կանանչ է. Յակինթը կարմիր է. Երկինքը կապոյտ է. Անիւը կլոր է. Խաղողը քաղցր է. Ազոխը թթու է. Թռչունը թեւաւոր է. Ձուկը թեփոտ է. Ոչխարը չորս ոտքով է. Հաւը երկու ոտքով է. Առիւծը հպարտ է. Վագրը անգութ է. Որդը գարշելի է. Նապաստակը շատ վազող է. Եղէգը դիւրաւ կոտրող է. Աղիւսը փուռն մէջ եփած է. Աստուած վարձատրող է. Շնորհքը ձրի է.

| | |
|---|---|
| Պաղ, ցուրտ | Անգութ, անագորոյն |
| Մելան, թանաք | Որդ, որդն |
| Ճերմակ, սպիտակ | Գարշելի, զազիր |
| Կանանչ, կանաչ | Շատ վազող, արագոտն |
| Կապոյտ, կապոյտ | Եղէգ, եղեգն |
| Կլոր, բոլորակ | Դիւրաւ կոտրող, դիւրաբեկ |
| Թեփոտ, թեփաւոր | Փուռն մէջ եփած, թրծուն |

Չորս ոտքով, չորքոտանի Վարձատրող, պարգեւատու
Երկու ոտքով, երկոտանի

Հրահանգին մէջ մնացեալ բառերը՝ գրաբարի հետ նոյն են ։

Աշակերտը թող վերի հրահանգը գրաբարի դարձնէ, ստորոգելին բայէն առաջ, ու տէր բային բայէն ետքը դնելով. Թող աշակերտք աս կանոնը չմոռնան, այսինքն՝ ստորոգելին առաջ դնել. այս կերպը գրաբարի մէջ սովորական եւ դիւրին է ։

Աշակերտք կրնան այս հրահանգին ամէն մէկ խօսքը (նախադասութիւնը) վերի լուծման կանոնին համեմատ լուծել ։

## ԴԱՍ Դ.

### ԱՆՈՒԱՆ ԹԻՒԸ

1. Երբ անուն մը մէկ բան կը ցուցնէ, Եզակի կ'ըսուի. երբ մէկէ աւելի բան կը ցուցնէ, Յոգնակի կ'ըսուի ։ Ուստի, Բանտ, Շուն, Մարդ, Ձի՝ եզակի են. Բանտեր, Շուներ, Մարդեր կամ մարդիկ, Ձիեր՝ յոգնակի են ։

2. Գրաբարի մէջ սովորաբար անունի մը վերջը ք գիրն աւելցնելով յոգնակի կ'ըլլայ. ինչպէս՝ Բանտք, Շունք, Մարդք, Ձիք, որ Բանտեր, Շուներ, եւայլն կը նշանակեն ։

3. Գրաբարի մէջ ն վերջաւորած անունները, ինչպէս՝ Հիմն, հիմ. Ակն, աչք. Մատն, մատ. Ատամն, ակռայ՝ սովորաբար յոգնակիի մէջ ն գիրը



ունքի կը փոխեն. ինչպէս՝ Հիմունք, Ակունք, Մատունք, Ատամունք ։

4. Աս տեսակ անուններէն ոմանց յոգնակին ինք կը վերջաւորի. ինչպէս՝ Դաշն, դաշինք, դաշնադրութիւն. Խաշն, խաշինք, ոչխար. Գառն, գառինք, գառնուկ ։ Ոմանց ալ՝ անք. ինչպէս՝ Սերմն, սերմանք. Ակն (գոհար), ականք, եւայլն ։

5. Ըղ եւ ըր վերջաւորած բառերուն յոգնակիին մէջ՝ ըղ եւ ըր վերջաւորութիւնները՝ եղք եւ երք կ'ըլլան. ինչպէս՝ Աստղ, աստեղք. Կայսր, կայսերք. Ոսկր, ոսկերք, եւայլն ։

6. Կան անուններ՝ որոնց եզակին շատ քիչ կամ ամենեւին չի գործածուիր, ինչպէս՝ Երկինք, Դըժոխք, Միտք, Կամք, եւն ։ Այս տեսակ բառեր Անեզական կը կոչուին ։

### 2. Հրահանգ աշխարհաբար

Երկինքը բարձր է. Աստղերը լուսաւոր են. Դուռները բաց էին. Ճամբաները նեղ են. Փողոցները շիտակ են. Ապակին ջինջ է. Ջուրը յստակ է. Աղբիւրն առատ է. Սովը սաստիկ է. Հիւանդութիւնը ծանր է. Կրակն այրող է. Դատաւորն անաչառ է. Իշխանը խիստ է. Պալատը շքեղ է. Շէնքերը փառաւոր են. Պարտէզը գեղեցիկ է. Ժողովուրդը շատ է. Զինուորները քիչուոր են. Մարդը հարուստ է. Աստուած ստեղծող է. Հրեշտակները հոգի են. Սատանաները չար են. Դրախտը երանաւէտ է. Տղաք անմեղ են. Իմաստութիւնը յարգի է. Գիտութիւններն օգտակար են. Եզը, Ձին եւ Էշը պիտանի են ։ Որդիները ժառանգ են ։ Ծառաները հնազանդ ըլ-

լան. Թագաւորը յաղթող է. Զօրավարը քաջ է. Զինուորները հաւատարիմ են. Առիւծը զօրաւոր է. Գետինը խոնաւ է. Փայտը չոր էր. Հիւանդութիւնը ծանրացաւ է. Բեռը ծանր է. Զգոյշ եղիր. Վստահ եղիր. Ժողովուրդը աղքատ է. Իշխանները հարուստ են. Մարդը ո՞ւր է. Անոնք ո՞վ են. Տղան ո՞վ է. Ուսումը օգտակար է. Մոլութիւնը ատելի է. Աղքատները հարուստ եղան. Պատմութիւնը ճշմարիտ է. Վկայութիւնները սուտ են. Ճամբան երկայն է. Ժամանակը կարճ է։

---

## ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

1. ԿԱՆՈՆ. Երբ Տէր բային անեզական բառ մըն է, գրաբարի մէջ բայը յոքնակի կը դրուի.

| | |
|---|---|
| Երկինքը բարձր է. | Բարձր են երկինք |
| Աղօթքը զօրաւոր է. | Հզօր են աղօթք |
| Ապարանքը (պալատը) փառաւոր է. | Շքեղ են ապարանքն |
| Կառքը ոսկի է. | Ոսկեղէն են կառքն |

2. ԿԱՆՈՆ. Երբ բայ մը քանի մը տէր բայի ունի, բայը նոյնպէս յոքնակի կը դրուի.

| | |
|---|---|
| Շոգին եւ ծուխը թեթեւ են. | Թեթեւ են շոգի եւ ծուխ |
| Քարն ու երկաթը ծանր են՝ | Ծանր են քար եւ երկաթ |

3. ԿԱՆՈՆ. Երբ անուն մը՝ ոչ թէ սեռ (Տես Գ. Դաս), այլ մէկ՝ կամ քանի մը որոշեալ անհատներ կը ցուցնէ, յօդ կ'առնէ. Երբ բառ մը ոչ թէ ամէն, այլ այս ինչ, այս անուն՝ կը նշանակէ, որոշեալ անհատ ցուցուցած կ'ըլլայ. զոր օրինակ՝ Աստղերը լուսա-



ւոր են, խօսքին մէջ աստղերը բառով՝ ամէն աստղ կ'իմացուի. բայց՝ Դուռները բաց էին, Ճամբաները նեղ են, Դատաւորն անաչառ է, խօսքերուն մէջ Դուռները, Ճամբաները, Դատաւորը, ըսելով՝ ամէն դուռ, ամէն ճամբայ, ամէն դատաւոր չի հասկցուիր, այլ կը նշանակէ այսինչ դուռները, այսինչ ճամբաները, այս անուն դատաւորը։

| Սեռ ցուցնող | Որոշեալ անհատ ցուցնող |
|---|---|
| Օդը բարակ է. Նուրբ է օդ | Օդը ապականած է. Ապականեալ է օդն |
| Ջուրը վազուն է. Ծորան է ջուր | Ջուրը պղտոր է. Պղտոր է ջուրն |
| Ձին չորքոտանի է. Չորքոտանի է ձի | Ձին կաղ է. Կաղ է ձին |

Այս եւ նախընթաց Դասի կանոններուն համեմատ՝ աշակերտք վերի հրահանգը Գրաբարի դարձունեն։

| | |
|---|---|
| Աստղ, Աստղ, յք. աստեղք. | Շատ, բազում |
| Դուռ, Դուռն, յք. դրունք. | Քիչուոր, սակաւ |
| Ճամբայ, ճանապարհ, յք. ճանապարհք. | Մարդ, այր |
| | Հարուստ, ընչեղ, մեծատուն |
| Շիտակ, հարթ (տափ) | |
| Հիւանդութիւն, ախտ | Ստեղծող, արարիչ |
| Կրակ, հուր | Սատանայ, դեւ, յք. դեւք |
| Այրող, կիզիչ | Տղայ, մանուկ, յք. մանկունք |
| Պալատ, ապարանք | |
| Շէնք, շինուած, յք. շինուածք | Յարգի, պատուական |
| | Եզ, եզն, յք. եզինք |
| Փառաւոր, Հոյակապ | Զօրաւոր, հզօր |

Բեռ, բեռն, յք. բեռինք — Ուսում, ուսումն
Անոնք, նոխս — Մոլութիւն, յոռութիւն

## ԼՈՒԾՈՒՄ

Աշակերտք թող վերի հրահանգին խօսքերը լուծեն։

Եթէ անուն մը յոդ ունի, լուծման մէջ ան ալ յիշելու է, զոր օրինակ.

Բաց են դռները. Են՝ էակ. բայ. սահմ. ներկ. յոք. գ. դէմք. — Ո՞վ են. — Դուռները, Դռները. Դրուներ տէր բայի է Են ին. աս բառին և գիրը յոդ է, վասն զի դուռները հոս ոչ թէ ամեն դուռ կը նշանակէ, այլ՝ այս ինչ որոշեալ դուռները։ Դուռները ինչպիսի՞ են. — Բաց են. Բաց ած. ստորոգելի է Դուռին։

### 3. Հրահանգ

Գրագիրը շուտ գրող է. Եզը, ոչխարը եւ այծը եղջերաւոր են. Պատմուճանը ծիրանի է. Բնակիչները սեւ են. Քաջ եղիք. Հնազանդ եղիր. Տաղտ մ'ըլլար. Համատարիմ ըլլայ. Զգոյշ եղիք. Եղեւինը բարձր է. Եղէգը դիւրաբեկ է. Տօսախը ցած է. Ձիւնն ու եղեամը ճերմակ են. Գետինը սահուն (խայղան) է. Խեղճ եմ. Ողորմելի է. Երանելի ես. Նապաստակը շուտ քալող է. Ապերախտ մ'ըլլար. Մարդը բարերար է. Երամակը (սիւրիւն) մեծ էր. Ես վկայ եմ. Դուն երաշխաւոր (քէֆիլ) ես. Անիկա ամբաստանող (տավաճի) է. Անոնք դատաւոր են. Անիկա դահիճ է. Տէրը վրէժխնդիր է. Պարգեւը ձրի է. Սախկա շնորհք է. Գիրքը պարգեւ է. Պտուղներն ընծայ են։



Գրագիր, Դպիր — Ապերախտ, նrախsանnուag, ապաշնոrհ
Շուտ գրող, աrագագիr — Բարերար, նrախsաւոr
Ցած, խոնաrh — Ամբաստանող, դաsախագ
Ճերմակ, սպիsակ — Շնորհք, ձիr
Սահուն, լպիrծ — Գիրք, մաsեան
Խեղճ, եղուկ
Շուտ քալող, նrագոsն

---

# ԴԱՍ Ե.

## ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ածականները չորս տեսակ են. Որակական, Թուական, Ստացական, Ցուցական։

Ա. Որակական կ'ըսուին բոլոր այն ածականները, որոնք իրերուն այլ եւ այլ յատկութիւնները կը ցուցնեն։ Ուստի՝ մեծ, փոքr, բաrձr, ցած, լայն, խոr, իմաստուն, sգեs, բարի, չաr, եւ ուրիշ շատ ասոնց նման բառեր Որակական ածական են։

Բ. Թուական ածականներն են թիւ ցուցնող բառերը, որ հետեւեալներն են.

| | |
|---|---|
| Մի, մեկ. | Տասն, sասը. |
| Երկու, երկու. | Մետասան, sասնումեկ |
| Երեք, երեf. | Երկոտասան, sասուերկու |
| Չորք, չոrս. | Երեքտասան, sասուիրեf. |
| Հինգ, հինգ. | Չորեքտասան, sասնուչոrս |
| Վեց, վեց. | Հնգետասան, sասնուհինգ |
| Եօթն, եօթը. | Վեշտասան, sասնուվեց. |
| Ութ. ութը. | Եօթնեւտասն, sասնուեօթը |
| Ինն, ինը. | Ութեւտասն, sասնուութը. |

Իննևտասն, տասնուինը· Չորեքհարիւր, չորս հարիւր
Քսան, քսան· Հինգհարիւր, հինգ հարիւր.
Երեսուն· երեսուն· Վեցհարիւր, վեց հարիւր.
Քառասուն, քառասուն. Եօթնհարիւր, եօթը հարիւր.
Յիսուն, յիսուն· Ութհարիւր, ութը հարիւր·
Վաթսուն, վաթսուն. Իննհարիւր, ինը հարիւր·
Եօթանասուն, եօթանա- Հազար, հազար·
Ութսուն, ութսուն· [սուն Երկուհազար, երկու հազար
Իննսուն, իննսուն· Երեքհազար, երեք հազար·
Հարիւր, հարիւր. Չորեքհազար, չորս հազար.
Երկերիւր, երկու հարիւր· ևն·
Երեքհարիւր, երեք հարիւր. Բիւր, բիւր (տասը հազար)

Այս թուականները Բացարձակ Թուական կ'ըսուին։

Դասական կ'ըսուին ուրիշ տեսակ մը թուականներ որոնք կրերուն ոչ թէ թիւը կամ քանի հատ ըլլալը, այլ քանիերորդ ըլլալը կը ցուցնեն։ Ասոնք են.

Առաջին, Երկրորդ, Երրորդ, Չորրորդ, Հինգերորդ, Վեցերորդ, ևայլն.

Ասոնք աշխարհաբար ալ նոյն են։ Միերորդ չըսուիր, բայց Առաջներորդ կ'ըսուի։ Չորսէն ետքը միւս բոլոր թուականները երորդ մասնիկով Դասական կ'ըլլան։ Ութերորդ, տասներորդ, քսաներորդ, հարիւրերորդ, ևայլն։

Գ. Ստացական ածականները հինգ հատ են՝ Իմ, Քու (քու), Մեր, Ձեր, Իր (իր)·

Դ. Ցուցական ածականներն են՝ Այս, Այդ, Այն. ասոնց յոքնակին կ'ըլլայ՝ Այսօքիկ, Այդօքիկ, Այնօքիկ.



## 4. Հրահանգ աշխարհաբար.

### ԳՈՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ.

Խաբեբայ մարդը խորշելի է. Հնազանդ որդին սիրելի է. Վատ զինուորը անարգ է. Ջախուր աշխատութիւնը օգտակար է. Շատ հարստութիւնը վտանգաւոր է. Սաստիկ բարկութիւնը վնասակար է. Մազերը ճերմկած մարդը պատկառելի է. Արդար օրէնքը մեծարոյ է. Խօսք մտիկ չընող աշակերտը պատժելի է. Խօսք խառնող մարդը անարգ է. Համատարած ծովը ահագին է. Մատակ առիւծը կատաղի է. Գիշակեր թռչունները յափշտակող են. Իմ մէկ հատիկ աղջիկս հաս է. Քու աստուածավախ մայրդ հիւանդ է. Վախկոտ զինուորը վնասակար է. Մեծ որդին խելացի է. Խելօք տղան սիրելի է. Պզտիկ եղբայրս խոհեմ է. Ջուխայէ վերարկուն պատռուած է. Վերի սենեակը մութ է. Ներսի սրահը ընդարձակ է. Անմարդի տեղերը վտանգաւոր են. Մեր նոր տունը շատ հանգիստ է. Խօսք մտիկ ընող տղան յառաջադէմ է. Պարապ խօսքերն ի՞նչ են. Անառիկ լեռները մեր ապաւէնն են. Ծովեզերեայ երկիրը բարեօդ է. Հասուն պտուղներն ախորժելի են, տհասները անախորժ. Երկայն ճամբան խորտուբորտ է։

### ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆ. Ածականը գրաբարին մէջ սովորաբար գոյականէն ետքը կը դրուի, և անոր հետ թուով կը համաձայնի. այսինքն՝ եթէ գոյականը յոքնակի է, ածականին վրայ ալ յոքնակի ք նշանը կը դրուի։

Բարի մարդ· Այր բարի

| | |
|---|---|
| Իմաստուն որդի· | Որդի իմաստուն |
| Սիրելի եղբայր· | Եղբայր սիրելի |
| Բարի մարդիկ· | Արք բարիք |
| Իմաստուն որդիներ· | Որդիք իմաստունք |
| Սիրելի եղբայրներ· | Եղբարք սիրելիք |

Այս եւ նախընթաց կանոններուն համեմատ՝ վերի հրահանգը գրաբարի կը դառնայ։

| | |
|---|---|
| Խաբեբայ մարդը խորշելի է· | Խորշելի է այր խաբեբայ |
| Հնազանդ որդին սիրելի է· | Սիրելի է որդի հնազանդ |
| Վատ զինուորը անարգ է· | Խոտան է զինուոր վատ, եւն. |

| | |
|---|---|
| Չափաւոր, համեստ | Խոհեմ, զգօն |
| Հարստութիւն, մեծութիւն | Չուխայէ, ասուի |
| Բարկութիւն, ցասումն | Պատռուած, պատառատուն |
| Մազերը ճերմկած, ալեւոր | Ներսի, ներքին |
| Խօսք մտիկ չընող, անսաստ | Անմարդի, ամայի |
| Խօսք խառնող, քսու | Տեղ, տեղի |
| Աղջիկ (զաւակ), դուստր | Շատ, յոյժ |
| Յափշտակող, յափշտակիչ | Հանգիստ, անդորր |
| Մէկ հատիկ, միամօր | Խօսք մտիկ ընող, հլու |
| Հոս, աստ | Պարապ, ունայն |
| Աստուածավախ, երկիւղած | Խօսք, բան |
| Վախկոտ, երկչոտ | Ի՞նչ, զի՞նչ |
| Մեծ (որդի), երէց | Անառիկ, ամուր |
| Խելացի, հանճարեղ | Բարէջօղ, հովանուն |
| Խելօք, մտավարժ | Տհաս, խակ |
| Տղայ, մանուկ | Խորտուբորտ, դժուարին |
| Պզտիկ (եղբայր), կրտսեր | |



## ԼՈՒԾՈՒՄ

Խաբեբայ մարդը խորշելի է· Խորշելի է այր խաբեբայ։ է. հայկ. բայ. սահմ. ներկ. եզ. գ. դէմ — Ո՞վ է. — Խաբեբայ մարդը, այր խաբեբայ. մարդը, այր՝ տէր բայի է. Խաբեբայ ածական է եւ մարդուն որպիսութիւնը կը ցուցնէ ։ — Խաբեբայ մարդը է ինչ՞. — Խորշելի է. Խորշելի՝ ստորոգելի է խաբեբայ մարդուն ։

---

## 5. Հրահանգ աշխարհաբար.

### ԳՈՅԱԿԱՆ ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ.

Տունս մեծ է. Ձեր քաղաքն ընդարձակ է. Մեր փողոցը լայն է. Քու ճամբադ շիտակ է. Անոնց երկիրը պտղաբեր է. Եղբայրներս գիտուն են. Ձեր որդիքը յիմար են. Քու ծառաներդ անմիտ են. Բարեկամներդ տգէտ են. Մեր տուները բարձր են. Իմ որդիս անուշահոտ է. Քու աղջիկդ տգեղ է. Մայրս աստուածավախ է. Եղբայրդ վախկոտ է. Իմ աշակերտս ծոյլ է. Մեր կեանքը կարճ է. Ձեր խօսքերը երկայն են. Մեր նոր տունը գեղեցիկ է. Ձեր հին հանդերձները պատռուած են. Քու մեծ որդիդ խելօք եւ խոհեմ է. Իմ պզտիկ եղբայրս զուարթ է. Մեր վերի սրահը լուսաւոր է. Անոր ներսի սենեակը խաւարին է.

### ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

1. ԿԱՆՈՆ. Ստացականներն ալ, իմ, քո, մեր, ձեր, իւր, երբեւ ածական գրաբարի մէջ սովորաբար գոյականին յետադաս կ'ըլլան, բայց յօդնակի

գոյականէ ետքը յօդնակիր ք նշանը չեն առներ։

2. Անոր, անոնց, իրենց բառերուն գրաբարն է՝ նորա, նոցա, իւրեանց։

| | |
|---|---|
| Իմ որդիս. | Որդի իմ |
| Մեր եղբայրը. | Եղբայր մեր |
| Իր գիրքը. | Մատեան իւր |
| Իմ որդիներս. | Որդիք իմ |
| Մեր եղբայրները. | Եղբարք մեր |
| Իր գիրքերը. | Մատեանք իւր |
| Անոր տունը. | Տուն նորա |
| Իրենց երկիրը. | Երկիր իւրեանց |
| Անոնց խօսքերը. | Բանք նոցա |

3. Երբ անուն մը ստացական ածական ունի, յօդ՝ այսինքն ն գիրը սովորաբար չառներ գրաբարի մէջ, թէ եւ բառը որոշեալ անհատ ցուցնէ. ուստի Տուն իմ, Եղբայր քո՝ ըսել բաւական է, փոխանակ Տունն իմ՝ Եղբայրն քո, ըսելու։

4. Աշխարհաբարի մէջ ալ իմ, քու, մեր, ձեր, իր ստացականները կը գործածուին, բայց ս, դ կամ ը գիրերն ալ գոյականին վերջը կ'աւելցուին. կամ (եզակիի մէջ մանաւանդ) միայն ս, դ. ը կը գործածուին իմ, քու, իր կամ անոր ածականները զանց ընելով. ինչպէս՝ իմ տունս, քու տունդ, իր կամ անոր տունը. եւ կամ լոկ տունս, տունդ, տունը։ Բայց գրաբարի մէջ իմ, քո, մեր, եւն, միայն դնել բաւական է. ս, դ, ն գիրերն աւելցնել հարկ չէ. ուստի չ'ըսուիր տունս իմ, տունդ քո, եւն. Այս ս, դ, ն գիրերն ուրիշ նշանակութիւն ունին, ինչպէս ետքը պիտի տեսնենք։



Այս կանոններուն համեմատ՝ աշակերտք վերի 5 երորդ հրահանգը գրաբարի դարձնեն, հետեւեալ բառերուն նայելով։

| | |
|---|---|
| Շիտակ, ուղիղ | Խօսք, բանք |
| Անոնց, նոցա | Պատռուած, պատառատուն |
| Եղբայր, եղբայր, յգ. եղբարք | Մեծ (որդի), երէց |
| | Խելօք, մտավարժ |
| Աղջիկ (զաւակ), դուստր | Խոհեմ, զգօն |
| Աստուածավախ, երկիւղած | Պզտիկ (եղբայր), կրտսեր |
| | Վերի, վերին |
| Վախկոտ, երկչոտ | Ներքի, ներքին |
| Տունս մեծ է. | Մեծ է տուն իմ |
| Ձեր քաղաքն ընդարձակ է. | Ընդարձակ է քաղաք ձեր |
| Մեր փողոցը լայն է. | Լայն է փողոց մեր |
| Քու ճամբադ շիտակ է. | Ուղիղ է ճանապարհ քո։ |

## 6. Հրահանգ աշխարհաբար

### ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆԻ ՀԵՏ ԳՈՅԱԿԱՆ

Այս տունը բարձր է. Այս մարդիկը թշնամի են. Այն երկիրն անմարդաբնակ է. Այս տեղս հանգիստ է. Այդ պարտէզը գեղեցիկ է. Այն տղաքը խօսք մտիկ ընող են. Այս գինուորները հնազանդ են. Այդ խօսքերը պարապ են. Այն պարիսպներն անառիկ են. Այս ջուրերը յորդ են. Այն գետը պղտոր է. Այդ տեղը բարեօդ է. Այս պտուղները հասած են. Այն կողմերը լեռնային են. Այս երկիրը դաշտային է. Այս ճամբաները խորտուբորտ են. Այդ

խօսքերը հանճարեղ են․ Այն մարդիկը պանդուխտ են։

## ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

1․ ԿԱՆ․ Ցուցականներն այս, այդ, այն, եւ անոնց յոքնակին՝ այսոքիկ, այդոքիկ, այնոքիկ, երբ ածական սովորաբար գոյականէն ետքը կը դրուին, գոյականին վերջն ալ ս, դ, ն գիրերը կ'աւելցուին, այսինքն՝ եթէ Ցուցականն այս է, ս գիրը․ եթէ այդ է, դ գիրը․ եթէ այն է ն գիրը։

2․ ԿԱՆ․ Շատանգամ գրաբարի մէջ այս, այդ, այն ցուցականները զանց ընելով՝ միայն ս, դ, ն գիրերը կը պահուին․ զոր օրինակ՝ փոխանակ ըսելու՝ Բարձր է տունս այս, կրնայ ըսուիլ՝ Բարձր է տունս։

Այս տունը․ Տունս այս կամ Տունս

Այն երկիրը․ Երկիրն այն կամ Երկիրն

Այդ բարեկամը․ Բարեկամդ այդ կամ Բարեկամդ

Այս խօսքերը․ Բանքս այսոքիկ կամ Բանքս

Այն քաղաքները․ Քաղաքքն այնոքիկ կամ Քաղաքքն

Այդ պտուղները․ Պտուղքդ այդոքիկ կամ Պտուղքդ

Այս լեռը բարձր է․ Բարձր է լեառնս․

Այդ մատնին ինծի տուր․ Տուր ինձ զմատանիդ․

Ասկէ կը տեսնուի որ ս, դ, ն գիրերուն պաշտօնը աշխարհաբարի եւ գրաբարի մէջ տարբեր են․ տունս, տունդ, տունը, աշխարհաբարի մէջ կը նշանակէ իմ տունս, քու տունդ, իր կամ անոր տունը։ Իսկ գրաբարի մէջ տունս, տունդ, տունն, կը նշանակէ այս տունը, այդ տունը, այն տունը։ Կամ թէ ըսենք, ս, դ, ն, աշխարհաբարի մէջ Ստացական ածականները իմ, քու, անոր կը ներկայացնեն, գրա-



բարի մէջ ցուցական դերանունը՝ այս, այդ, այն։

Այս կանոններուն համեմատ՝ աշակերտք վերի 6․երորդ Հրահանգը գրաբարի դարձունեն հետեւեալ բառերուն միտ դնելով։

| | |
|---|---|
| Մարդիկ, արք | Պարապ, սնոտի |
| Անմարդաբնակ, ամայի | Անառիկ, ամուր |
| Տեղ, տեղի, վայր | Բարէօդ, հովասուն |
| Հանգիստ, անդորր | Հասած, հասուն |
| Տղաք, մանկունք | Կողմ, կողմն, յք․ կողմանք |
| Խօսք մտիկ ընող, հլու | Խորտուբորտ, դժուարին. |
| Խօսք, բան, յք․ բանք | |

| | |
|---|---|
| Այս տունը բարձր է․ | Բարձր է տունս այս, կամ տունս |
| Այս մարդիկը թշնամի են. | Թշնամի են արքս այսոքիկ, կամ արքս |
| Այս երկիրը անմարդաբնակ է․ | Ամայի է երկիրս այս, կամ երկիրս, եւ այլն։ |

# ԴԱՍ Զ.

## 7. Հրահանգ նախընթաց դասերուն

Տունը նոր է․ Եկեղեցին հին է․ Շոգին ու ծուխը թեթեւ են․ Անձրեւն ու կարկուտը ծանր են․ Հոգին զգացող, իմացող եւ գործող է․ Կինը տրտում էր․ Մայրը վշտագին էր․ Քոյրը զուարթ է․ Մարդիկ եւ կենդանիները քալող են․ Հողը խոնաւ է․ Երկիրը բարեբեր է․ Դաշտը բերքով լեցուն է․ Արտն ու պարտէզը պտղաբեր են․ Հրեշտակները հոգի են․

Ձին կրակոտ է. Շունը հաւատարիմ է. Վարժապետը հմուտ եւ փորձ է. Աշակերտները կրթեալ են. Կառավարը վարժ է. Էշը դանդաղ է. Նապաստակն արագ է. Քացախը սաստիկ եւ կծու է. Եղը լոյծ է. Կարակը թանձր է. Փայտը պինդ է. Քարն ու երկաթը կարծր են. Նարինջը գնդակերպ է. Սկաւառակն ու անիւը կլոր են. Թաթը կակուղ է. Սմբակն ու կճղակը կարծր են. Լիմոնը թթու է. Թեւերն ու ոտքերը շարժող են. Լեզուն եւ աչքերը ասդին անդին դարձող են. Ակռաները հաստատ են. Պատանին հասուն է. Տղան տհաս է. Թռչունները թռչող են. Չորքոտանիները քալող են. Եղջերուն ու նապաստակը արագընթաց են. Առիւծն ուժով է. Վագրը փարատող եւ անգութ է. Ոչխարը հեզ է. Ուղտը հանդարտ է. Էշը համբերող է. Դաւիթ հովիւ էր եւ թագաւոր եղաւ. Հայկը դիւցազն էր. Արամ քաջ էր. Աստուած կարող է. Պաշտօնեայն հաւատարիմ է. Լեռը դժուարին է.

Անոր աղջիկը մէկհատիկ է. Ձեր գիրքը աղէկ է. Քու քոյրդ պարկեշտ է. Մեր տղան խելօք է. Անոնց որդին անառակ է. Մեր գիրքերն օգտակար են. Իմ բարեկամս աղքատ է. Մեր շունը հաւատարիմ է. Անոր լեռները բարձր են. Քու դասդ դժուարին է. Մեր ծառան հիւանդ է. Իմ անձս տրտում է. Մեր կեանքը կարճ է. Քու ստակդ շատ է. Անոնց գինին աղէկ է. Իմ հարստութիւնս անչափ է. Որդիս արի եւ ժրաջան է. Մեր կեանքը երանելի է. Ձեր հանդերձները նոր են. Քու գոհարներդ մեծագին են. Քու կինդ ապերախտ է. Անոնց հանդերձները սեւ են.



Այս խօսքերը ճշմարիտ են. Այդ բարկութիւնը արդար էր. Այն ստակը մերն է. Այս տղաքը իմս են. Այս գիրքերը քուկդ են. Այդ կիները ո՞վ են. Այս գիրքը լեցուն է. Այս քաղաքը պզտիկ է. Այդ պարտէզը մեծ չէ. Այս լեռները բարձր են. Այդ տղան իմ եղբայրս է. Այդ աղջիկը մէկհատիկ (աղջիկ) զաւակ է. Այս տղաքը ձեր որդիքն են.

| | |
|---|---|
| Զգացող, զգայուն | Փարատող, գիշատիչ |
| Իմացող, իմաստուն | Անգութ, անագորոյն |
| Գործող, գործօն | Անոր, նորա |
| Կենդանի, անասուն | Մէկհատիկ, միամօր |
| Քալող, գնայուն | Գիրք, մատեան |
| Բարեբեր, բերրի | Աղէկ, ազնիւ |
| Բերքով լեցուն, յուռթի | Անոնց, նոցա |
| Կրակոտ, ջերմ | Դաս (համար), ուսումն |
| Վարժապետ, վարդապետ | Ստակ, արծաթ |
| Կրթեալ, կիրթ | Արի, քաջ |
| Սաստիկ (քէսքին), բարկ | Ժրաջան, ժիր |
| Կարակ, կոգի | Գոհար, ակն, յք. ականք |
| Կլոր, բոլորշի | Մեծագին, պատուական |
| Լիմոն, կիտրոն | Ապերախտ, ապաշնորհ |
| Շարժող, շարժուն | Բարկութիւն, ցասումն |
| Ասդին անդին դարձող, յեղյեղուկ | Ստակ, արծաթ |
| Ակռայ, ատամն, յք. ատամունք | Քուկդ, քո |
| | Ո՞վ, ո՛վ, ո՛, յք. ո՛յք |
| | Սեւ, թուխ |
| Հաստատ, հաստ | Կին, կին, յք. կանայք |
| Տհաս, խակ | Լեցուն, լի |
| Թռչուն, հաւ | Պզտիկ, փոքր |

Թռչող, թռչուն — Աղջիկ զաւակ, դուստր
Ուժով, հզօր

Վերի 7. երորդ Հրահանգը հետեւեալ կերպով գրաբարի կը դառնայ։

| | |
|---|---|
| Տունը նոր է. | Նոր է տունն |
| Եկեղեցին հին է. | Հին է եկեղեցին |
| Շոգին ու ծուխը թեթեւ են. | Թեթեւ են շոգի եւ ծուխ եւ այլն։ |

# ԴԱՍ Է.

## ԱՐՄԱՏ ԵՒ ԱԾԱՆՑԵԱԼ ԲԱՌԵՐ

1. Արմատ կ'ըսուի բառ մը, որուն սկիզբը կամ վերջը գիր կամ վանկ աւելցած չէ. իսկ երբ բառի մը սկիզբը կամ վերջը գիր կամ վանկ կ'աւելնայ, այն բառն ածանցեալ կը կոչուի։ Ոսկի, թագ, ծով, հայր, գեղ, մահ, արմատ բառեր են. Ոսկեղէն, թագաւոր, ծովակալ, հայրենի, տգեղ, անմահ՝ ածանցեալ են։

2. Ածանցեալ բառերուն վրայ աւելցուած գիրը կամ վանկը Մասնիկ կ'ըսուի. ուստի եղէն, աւոր, ակալ, ենի, տ, ան՝ ածանցական մասնիկներ են։

3. Հայերէն լեզուն բաւական ածանցական մասնիկներ ունի, որոնք բառերուն սկիզբը կամ վերջը կցուելով՝ անոնց բուն նշանակութեանը վրայ այլ եւ այլ միտքեր կը յաւելուն։

4. Հայերէն ածանցական մասնիկներուն գլխաւորներն են.



Ական· աւոր· ուտ· ոտ· եղ· ատ· աւէտ· եայ· եղէն· ուն· ի, անի կամ ենի· իկ, ակ, ուկ· ոց կամ անոց· որդ·ային· ենի. ան, տ, դժ, չ, ապ։

Ասոնց բառերուն տուած այլ եւ այլ նշանակութիւնները մեծաւ մասամբ յայտնի են։

---

### 8. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ դոյականներուն վերաբերեալ եւ մի եւ նոյն արմատէ եղող ածականները ցուցնեն։

Զօրութիւն. Գիտութիւն. Լոյս. Մութ. Ինչք. Խաւար. Մեծութիւն. Մեծութիւն (հարստութիւն). Խորութիւն. Եռանդն. Ջերմութիւն. Ջերմն (սըթմա). Ոսկի. Արծաթ. Պղինձ. Կապար. Զնջում. Ջիղ. Որկոր. Հիւսուած. Բաղց. Ծարաւ. Նկար. Պատրանք. Երգ. Գեղ. Բազմութիւն. Ոտն. Ձեռն. Բնակութիւն. Բնութիւն. Աչք. Ակն. Հաստատութիւն. Շէն. Գիւղ. Պատիւ. Քաղաք. Ադամանդ. Ցաւ. Ույժ. Ձիք. Խնամք. Ճանաչում. Սին. Աար. Մահ. Ամօթ. Ջուր. Շինութիւն. Մարտ. Գմբէթ. Ահ. Ժրութիւն. Հայր. Մայր. Քոյր. Կին. Այր. Շունչ. Հոգի. Մարմին. Միս. Մազ. Շուք. Փառք. Իմաստութիւն. Հանճար. Պաշտպանութիւն. Հուր. Մարդ. Մօր. Ճախին. Երկինք. Կեղծիք. Շուտութիւն. Ապառաժ. Քար. Ուշ. Սպաս. Բախտ. Մթեր. Սէր. Կարիք. Պէտք. Անուն. Ժողովում. Ժողով. Ուղղութիւն. Շահ. Վայր. Տէր. Տիկին. Արքայ. Խոցուած. Վէրք. Տաղտկութիւն. Ձանձրութիւն. Կորով։

## 9. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ անունները ական մասնիկով ածական ընեն ․

Տրտում․ Սեպուհ ․ Օրէնք ․ Ազնիւ ․ Բարք ․ Լեառն ․ Կայսր ․ Փախուստ ․ Հովիւ ․ Մեհեան ․ Եկեղեցի ․ Երէց ․ Քուրմ ․ Էգ ․ Խուժ ․ Հալածումն ․ Ձմեռն ․ Մարմին ․ Յաղթութիւն ․ Շէն ․ Շահ ։

Աշակերտք հետեւեալ ածականներուն գոյականները ցուցնեն.

Քննական ․ Վանական ․ Պատմական ․ Լուսնական ․ Կորստական. Շնական ․ Կուսական ․ Պատուական ․ Սրբական ․ Տեւական ․ Մշտնջենական ․ Տիրական ․ Արքունական ․ Մարմնական ։

## 10. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ անունները աւոր մասնիկով ածականի դարձունեն ։

Ձիք ․ Հովանի ․ Թոյն ․ Հեռի ․ Կնիք ․ Անցք ․ Լոյս Աղեղն ․ Գլուխ ․ Երկիր ․ Երկինք ․ Բուռն ․ Գէս ․ Կարիք ․ Հոգի ․ Ճաճուկ ․ Գօտի ․ Գոյք ․ Գոյն ․ Երախտիք ․ Ալիք ․

Հետեւեալ ածականաց գոյականները ցուցուին ։

Եղջերաւոր ․ Դաշնաւոր ․ Մտաւոր ․ Պարսպաւոր ․ Պարտաւոր ․ Զինաւոր ․ Պատժաւոր ․ Ճգնաւոր ․ Մըկընդաւոր ․ Վիրաւոր ․ Տիգաւոր ․ Սուինաւոր ․ Քինաւոր ․ Սախաւաւոր ․ Փառաւոր ․ Քուաւոր ․ Տանաւոր ․ Սգաւոր ․ Ոտանաւոր ․ Մանեկաւոր ․ Հաւատաւոր ․



## 11. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ անունները ուտ մասնիկով ածական ընեն ։

Տիղմ ․ Օձ ․ Յորձանք ․ Ձիղ ․ Ոսկր ․ Աւազ ․ Վէմ ․ Լպիրծ ․ Հաց ․ Թուփ ․ Թաւ ․ Մացառ ․ Ճախին ․ Ժանտ ․ Շէջ ․ Ծարաւ ․ Թօն ․ Շամբ ․ Ապառաժ ․ Աւազակ ։

Հետեւեալներն ալ ոտ վերջաւորեալ ածականներու դարձունեն ․

Երկիւղ ․ Բոր ․ Դեղ ․ Ցասումն ․ Ծակ ․ Կասկած ․ Մոռացումն ․ Ցաշաղանք ․ Նենգ ․ Նախանձ ․ Ժանգ ․ Արիւն ․ Խընամք ․ Ցեխ ․ Քոս ․ Դանդաղանք ․ Վաղվաղումն ․ Ցաւ ․ Եռանդն ․ Վէրին ․ Լուսին ․ Հիւանդ ։

## 12. Հրահանգ

Հետեւեալ անունները եղ մասնիկով ածականի դարձուին ․

Ահ ․ Աար ․ Ոյժ ․ Զօրութիւն ․ Շուք ․ Ինչք ․ Թիկն ․ Համ ․ Հիւթ ․ Մաղ ․ Ուշ ․ Գոյն ․ Ձայն ․ Անձն ․ Մարմին ․ Կարչն ․

Աշակերտք հետեւեալ անունները ատ մասնիկով ածականի փոխեն ։

Ազգ ․ Ձեռն ․ Ականջ ․ Լեզու ․ Ունչ ․ Գոյն ․ Կարճ ․ Մէջ ․ Պինչ ․ Կառափն ․ Ծայր ․ Շուրթն ․

## 13. Հրահանգ

Հետեւեալ անունները աւէտ մասնիկով ածականի փոխուին ։

Ծաղիկ · Երանելի · Այգի · Թիկն · Ինչք · Միրգ · Պտուղ · Շահ · Քրքում · Խոտ · Խաչն ։

Հետեւեալ անունները եայ մասնիկով ածականի փոխուին ։

Աղիւս · Սիրտ · Կիճ կամ Կուճ · Կաճ · Մաշկ · Որկոր · Մետաքս · Փղոսկր · Բեհեզ · Ադամանդ · Գըմբէթ · Եղէգն · Մագաղաթ · Ծաղիկ · Կաշի · Նեարդ · Պրտու · Փուշ · Փախուստ · Ցախճապակի ·

Հետեւեալ անունները եղէն մասնիկով ածականի փոխուին ·

Ոգի · Վէմ · Տարր · Փուշ · Քար · Լոյս · Հուր · Գարի · Մարդ · Միս · Բոց · Մաղ · Աստուած · Ոսկի · Արծաթ · Նիւթ · Մետաքս · Կերպաս · Ասր · Ապակի ·

## 14. Հրահանգ

Հետեւեալ անուններն ուն մասնիկով ածականի փոխուին ·

Ցած · Պատառումն · Գնացք · Զգայութիւն · Զեղումն · Հաստատութիւն · Սահումն · Թաթախումն · Շարժումն · Տոկումն · Փայլումն · Եռանդն · Կանգնումն · Կայ · Սէր · Հասումն · Կարկատումն · Թաքուստ · Թռիչ · Ջեռումն · Սողումն · Զուարթ ·

Հետեւեալ անուններն ի, անի եւ ենի մասնիկով ածականի փոխուին ·

Երկաթ · Ասր · Արծաթ · Ջուր · Կորով · Պղինձ · Ծարաւ · Նքթումն · Ջար · Բուռն · Դալարի · Ցայտ · Մօրուք · Պէտք · Լեզու · Լիրբ · Հայր · Մայր · Մսեղ · Նախ · Նման · Վայր · Այր ·



## 15. Հրահանգ

Հետեւեալ անուններն իկ, ակ եւ ուկ մասնիկով նուազական անուններու փոխուին ·

Տուն · Խուց · Ձուկն · Անասուն · Մասն · Միրգ · Նաւ · Հաց · Լիճ · Գունդ · Պատանի · Պատանեակ · Մանուկ · Խուղ · Հայր · Որդի · Վայր · Ձորձ · Մեկնոց · Գետ · Ծով · Աղիճ · Աչք · Թիզ · Շուն · Քաղաք · Թի · Լեզու · Դուռն ։

Հետեւեալ անուններն ոց կամ անոց մասնիկով տեղ կամ միջոց ցուցնող անուններու փոխուին ։

Ձմեռն · Ամառն · Հովանի · Մարտիկ · Մեղու · Ուրուկ · Որբ · Վարժ · Մրջիւն · Մթեր · Վաճառք · Հիւր · Արուեստ · Վարդապետ · Դպիր · Օտար · Հիւանդ · Աղքատ · Այրի · Ծաղիկ · Գլուխ · Հալումն · Կին · Հանգիստ · Ուս · Ամուր ·

## 16. Հրահանգ

Հետեւեալ անուններն որդ մասնիկով պաշտօն կամ գործ ցուցնող անուններու փոխուին ·

Այգի · Անցք · Ճանապարհ · Նաւ · Փոխանակ · Ժառանգութիւն · Բաժին · Որս · Պահապան · Նախանձ · Սեղան · Պարապ · Ուղիղ · Յետին · Լուծ · Լիւղ · Սայլ · Ցանց · Միջին · Կից · Ձախ · Աջ ·

Աշակերտք հետեւեալ անուններն ային մասնիկով ածական ընեն ։

Ջուր · Ծով · Լեառն · Երկիր · Աստուած · Հուր · Ցամաք · Դաշտ · Մարդ · Երկինք · Մաղձ · Քաղաք · Նաւ · Դեւ · Հող · Ազգ · Տոհմ · Աստղ · Տիղմ · Օդ · Տունկ · Բոյս ·

## 17. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ անուններուն վրայ ենի մասնիկն աւելցունեն. Աս մասնիկով անասնոց մորթերու եւ ծառերու անուններ կը կազմուին. Ծառերու անունները ի գիրին յաւելուածովն ալ կը շինուին.

Գայլ. Ոչխար. Այծ. Առիւծ. Կուզ. Սամոյր. Գառն. Աղուէս. Խնձոր. Տանձ. Վարդ. Կաղին. Ընկոյզ. Դեղձ. Ծիրան. Նուշ. Նուռն. Մուրտ. Սերկեւիլ. Թութ. Թուզ. Ձէթ.

## 18. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ բառերը ակ, ս, դժ, չ, ապ մասնիկներով ածանցեն.

Գէտ. Գործ. Շունչ. Բան. Բարբառ. Ձայն. Ողբ. Ցոյս. Յայտ. Տէր. Սուրբ. Օրէնք. Կար. Համ. Բուն. Մարդ. Գեղ. Գոյն. Գին. Գոհ. Կամք. Գոյ. Լուր. Կայ. Համազգի. Պէտ. Ուշ. Շնորհ. Կար. Երախտիք. Տոհմ. Երասան.

# ԴԱՍ Ը.

## ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

1. Բարդ կ'ըսուին երկու բառէ բաղադրեալ անուններ. ինչպէս Աստուածասէր, Լուսաբեր, բարդ բառեր են, եւ կը բաղկանան, առաջինը՝ Աստուած եւ սէր, երկրորդը՝ լոյս եւ բեր բառերէն.



2. Երբ բարդ բառ մը երկու գոյականէ կը բաղկանայ, այն երկու բառերը իբրեւ յատկացեալ եւ յատկացուցիչ իրարու հետ կապուած կ'ըլլան. ինչպէս՝ Գաւառապետ, որ գաւառ եւ պետ գոյականներէն շինուած է, կը նշանակէ գաւառի գլուխ կամ իշխան. Աս տեսակ բառեր ընդհանրապէս գոյական են.

## 19. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ աշխարհաբար բառերը թող գրաբար բարդ բառերու դարձունեն, միշտ յատկացուցիչ եղող անունը յառաջ դնելով.

Զօրքի գլուխ. Դրան փակ (սիւրկիւ). Գազանի (հետ) կռիւ. Գանձի գլուխ. Գետի եզր. Ծովի եզր. Գիրքերու պահարան. Դայեկի (սիւտանա) որդի. Դիւանի գլուխ. Դիւանի գրագիր. Եղնիկի ձագ. Բանակի տեղ. Եղեւնիի փայտ. Աղբիւրի ակ. Լուսոյ մտնելու տեղ. Խաչի փայտ. Խունկի աման. Ծերոց խումբ. Հարսի եղբայր. Հողի բլուր կամ կոյտ. Ոտքի կապ. Ձիւնի ծաղիկ. Ջուրի գաւաթ. Ճաշու ժամ. Մաղձի դեղ. Մարդոց մահ. Մարդու պատկեր. Մաքսի տուն. Մեհեանի տեղ. Մոխրի կոյտ. Նաւի խումբ. Քաղքի մէջտեղ. Շունչի փող. Ոտքի տեղ. Հորթու գլուխ. Գետի ձի. Պատի (մէջ) ծակ. Ջուրի հեղեղ. Սանդղի ոտք. Վանքի երէց. Վարազի ջիղ. Որթի տունկ. Քաղաքի պատ։

3. Երբ բառ մը ածականէ մը եւ անունէ մը կը բաղկանայ, ինչպէս՝ Մեծապանծ, որ մեծ ածականէն եւ պանծ գոյականէն բաղկացած է, կը նշանակէ

մեծ գանձ ունեցող, կամ գանձը մեծ ։ Աս տեսակ բառեր առհասարակ ածական են ։

Աշակերտք հետեւեալ աշխարհաբար բառերը թող գրաբար բառի դարձունեն, ածականը գոյականէն առաջ դնելով.

Տունը մեծ. Զօրութիւնը մեծ. Ձայնը մեծ. Թեւը երկայն. Պրկունքը (շուրթն) լայն. Ոտքը կարճ. Զգեստը կարճ. Ջուրը խորունկ. Վիզը բարձր. Ձայնը բարձր. Մարդը (բնակիչը) շատ. Բարքը աղէկ. Հոտը գէշ. Համն անոյշ. Դէմքը գեղեցիկ. Գեղեցկութիւնը հազուագիւտ. Ոտքը շուտ (շուտ քալող). Միտքը երկու (անհաստատ). Լեզուն թանձր. Բեռը ծանր. Քալուածքը թեթեւ. Հաւատքը թերի (պակաս). Մորթը թոյլ (հեշտասէր, փափկասէր). Սիրտը վատ (վախկոտ). Բերանը լեցուն. Պարանոցը խիստ (անհնազանդ, խեռ). Սիրտը հիւանդ (խօթ). Խորհուրդը լաւ. Այտերը կարմիր. Գլուխը ծուռ (ամօթով). Թեւերը ոսկի. Պարիսպը կրկին. Պատիւը հաւասար. Թեւերը հաստատ. Կաշին հաստ. Զօրութիւնը հսկայական. Ջուրը շատ. Ծարակը շատ. Հանդերձը մաշկ. Սիրտը նեղ. Փետուրը նոր. Ձայնը բարակ. Պարիսպը ամուր. Անդամները ողջ կամ ամբողջ. Միտքը պակաս. Նիստը (տարածութիւնը) քիչ. Աչքը սուր. Ականջը սուր. Անունը վատ. Ձայնը քաղցր. Սիրտը քաջ. Սանձը ոսկի. Ձեռքը պարապ. Միտքը թեթեւ. Հոտը գէշ. Հաւատքը չիտակ. Աչքը չար (նախանձոտ). Բեռը թեթեւ. Մեղքը մեծ (շատ). Մեղքը քիչ. Անունը մեծ. Միտքը մեծ (հպարտ). Հասակը բարձր. Ականջը երկայն. Թեւը (խանատը) մաշկէ. Միտքը



թանձր (ապուշ). Սիրտը խիստ. Դէմքը երկու. Բերանը երկու (սուր). Մորթը լերկ. Ձայնը քաղցր. Միտքը երկայն (համբերող). Ջուրը յորդ. Մարմինը խոշոր. Միտքը ցած (խոնարհ). Լեզուն ծանր. Ջուրը խորունկ.

# ԴԱՍ Թ.

## ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Սեռական հոլովը բանի մը տէրը կամ ստացողը կը ցուցնէ, եւ յատկացուցիչ կը կոչուի. զոր օրինակ՝ Պարսկին դուռը. պարսկին բառը սեռական հոլով կամ յատկացուցիչ է, քանզի դրան տէրը, կամ դուռը որուն ըլլալը կը ցուցնէ ։

2. Սեռական հոլովը կամ յատկացուցիչը Որուն (քիմին) հարցման պատասխան է. Որո՞ւն դուռը. — Պարտէզին ։

3. Ինչպէս որ ստացողը կամ սեռական հոլովը յատկացուցիչ կ'ըսուի, այնպէս ալ ստացեալը, այսինքն՝ այն բանը որ ստացողին կը վերաբերի, յատկացեալ կը կոչուի ։ Վերի օրինակին մէջ դուռ բառը Յատկացեալ է ։

4. Հայերէնի մէջ անուն մը սեռական կ'ըլլայ ուղղականին վրայ գիր մը կամ մասնիկ, վանկ մը աւելցնելով ։

Սեռական շինող գիրերը կամ մասնիկները հետեւեալներն են՝ ի, ոյ, ու, այ, ան, ին, եր ։ Ուստի

Ա. Շատ մը բառեր սեռական կ'ըլլան՝ ուղղականին

վերջը եզակիին մէջ ի գիրը դնելով. ինչպէս՝ Բանտ, բանտի, Արքայ, արքայի. Քաղաք, քաղաքի, Ձայն, ձայնի։

Եզակի սեռականը ի վերջաւորող անուններէն ոմանց յոգնակի սեռականը ից կ'ըլլայ, ոմանց ալ աց. զոր օրինակ՝ Բանտ, բանտի. բանտք, բանտից. Արքայ, արքայի. արքայք, արքայից. Ձայն, ձայնի, ձայնք, ձայնից. Քաղաք, քաղաքի. քաղաքք, քաղաքաց։ Ասոնք վարժութեամբ միայն կը սորվուին։

Բ. Ոմանք ալ սեռական կ'ըլլան ուղղականին վերջը ոյ աւելցնելով. ինչպէս՝ Գետ, գետոյ. Ձի, ձիոյ. Ծեր, ծերոյ։ Ասոնց յոգնակի սեռականը ոց կ'ըլլայ. ինչպէս՝ Գետոց, Ձիոց, Ծերոց։

Գ. Պէտք է գիտնալ որ ուղղականին մէջ ի վերջաւորած միավանկ անուններուն սեռականը ոյ կ'ըլլայ առանց ուրիշ փոփոխութեան. ինչպէս՝ Ձի, ձիոյ, Դի, դիոյ. Մի, միոյ։ Բայց ի վերջաւորած բազմավանկներն ի գիրը ւ ի փոխելով ոյ կ'առնեն. ուստի, Գինի, գինւոյ. Տեղի, տեղւոյ. Եկեղեցի, եկեղեցւոյ. Որդի, որդւոյ. Հոգի, հոգւոյ. Այս վերջին տեսակ անուններուն, այսինքն ի վերջաւորած բազմավանկներուն յոգնակի սեռականը եաց կ'ըլլայ. ինչպէս՝ Տեղի, տեղեաց. Եկեղեցի, եկեղեցեաց։ Միայն Որդի եւ Հոգի բառերուն, եւ ցի վերջաւորած ազգի կամ տեղացւոյ անուններուն յոգ. սեռականը ւոց կ'ըլլայ. ինչպէս՝ Որդի, որդւոյ. որդիք, որդւոց (ոչ որդեաց). Հոգի, հոգւոյ. հոգիք, հոգւոց. Իսրայելացի, իսրայելացւոյ. իսրայելացիք, Իսրայելացւոց. Հռովմայեցի, հռովմայեցւոյ. հռովմայեցիք, հռովմայեցւոց։



Դ. Կան բառեր որոնց եզակի սեռականը ու, յոգնակի սեռականն ալ ուց կ'ըլլայ. ինչպէս՝ Զգեստ, զգեստու. զգեստք, զգեստուց. Ծով, ծովու. ծովք, ծովուց. Խրատ, խրատու. խրատք, խրատուց։ Այս տեսակ բառերը քիչ են։

Ե. Յատուկ անուններ, այսինքն՝ մարդոց եւ տեղերու (ինչպէս քաղաքներու, գեղերու, լեռներու եւ գետերու) անուններէն շատերը սեռականին մէջ, այ կը վերջաւորին, եթէ վերջին գիրը բաղաձայն է. իսկ եթէ վերջին գիրը ձայնաւոր է, այն ձայնաւորով մէկտեղ եայ կը վերջաւորին. ինչպէս՝ Տրդատ, Տրդատայ. Հայկ, Հայկայ, Մեսրովբ, Մեսրովբայ. Նոյէ, Նոյեայ. Հռիփսիմէ, Հռիփսիմեայ։ Բայց ու վերջաւորածներն՝ առանց փոփոխութեան այ կ'ըլլան. ինչպէս՝ Յեսու, Յեսուայ։

Զ. Ըն վերջաւորած անուններէն ոմանք ան կ'ըլլան, ոմանք ալ ին. ինչպէս՝ Հիմն, հիման. Սերմն սերման. Արեգակն, արեգական. Գառն, գառին. Հարսն, հարսին. Ձեռն, ձեռին. Ոտն, ոտին։

Ասոնց ամէնուն ալ յոգնակի սեռականը կ'ըլլայ անց. ինչպէս՝ Հիմն, հիման. հիմունք, հիմանց. Սերմն, սերման. սերմանք, սերմանց. Գառն, գառին. գառինք, գառանց. Հարսն, հարսին. հարսունք, հարսանց։

Միայն Ձեռն եւ Ոտն բառերուն յոգնակին զարտուղելով կ'ըլլայ, Ձեռք, ձեռաց. Ոտք, ոտից։

Կան քանի մը անուններ ալ՝ որոնց նոյնպէս սեռականը ան կ'ըլլայ. ինչպէս՝ Անուն, անուան. անուանք, անուանց. Շուն, շան. շունք, շանց. Տուն, տան, տունք, տանց։

Այս եւ ասոնց նման զարտուղութիւններ բառարաններէ կամ վարժութեամբ կը սորվուին ։

Է. Իւն վերջաւորած անուններուն եզ. սեռականը եան կ'ըլլայ, յոգ. սեռականն ալ՝ եանց. ինչպէս՝ Նեղութիւն, նեղութեան. նեղութիւնք, նեղութեանց. Մեծութիւն, մեծութեան. մեծութիւնք, մեծութեանց. Արիւն, արեան. արիւնք, արեանց. Անկիւն, անկեան. անկիւնք, անկեանց.

Կան քանի մը անուններ ալ՝ որոնց սեռականը այս կերպով կ'ըլլայ, թէպէտ իւն չեն վերջաւորիր. ինչպէս՝ Կորուստ, կորստեան. Տեսիլ, տեսլեան. Տեսիլք, տեսլեանց. Հանգիստ, հանգստեան ։

Ը. Ըր եւ ըղ վերջաւորած քանի մը գոյականներուն եզ. սեռականը կ'ըլլայ եր, եղ. ինչպէս՝ Ոսկր, ոսկեր. Կայսր, կայսեր. Աստղ, աստեղ ։ Ալիւր եւ Աղբիւր բառերուն ալ սեռականը նոյն կերպով կ'ըլլայ. Աղբիւր, աղբեր. Ալիւր, ալեր ։

Աս տեսակ անուններուն յոգնակի սեռականը կ'ըլլայ, երաց, եղաց. ինչպէս՝ Ոսկր, ոսկեր. ոսկերք, ոսկերաց. Կայսր, կայսեր. կայսերք, կայսերաց. Աստղ, աստեղ. աստեղք, աստեղաց. Աղբիւր, աղբեր. աղբիւրք կամ աղբերք, աղբերաց ։

Բայց ըր վերջաւորած քանի մը ածականներուն. սեռականը կ'ըլլայ ու. ինչպէս՝ Ծանր, ծանու. Թանձր, թանձու. Քաղցր, քաղցու. Բարձր, բարձու. Մանր, մանու ։ Ասոնց յգ. ուղղականը կ'ըլլայ ունք, սեռականն ալ ունց. Ծանունք, ծանունց. Մանունք, մանունց ։ Բարձր, յոգ. կ'ըլլայ, Բարձունք, բարձանց ։

Ծաղր եւ Մեղր բառերը որ գոյական են, սեռական կ'ըլլան Ծաղր, ծաղու. Մեղր, մեղու ։



Թ. Հետեւեալ սովորական անունները տարբեր տարբեր սեռականներ ունին ։

Հայր, Մայր, Եղբայր. սեռական կ'ըլլան Հօր, մօր եղբօր. յգ. Հարք, մարք, եղբարք. սեռ. Հարց, մարց, եղբարց ։

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Եզ. | Քոյր | Սեռ. | քեռ | Օր | Սեռ. | աւուր |
| Յգ. | Քորք | » | քերց | Աւուրք | » | աւուրց |
| Եզ. | Կին | » | կնոջ | Գիւղ | » | գեղջ |
| Յգ. | Կանայք | » | կանանց | Գիւղք | » | գիւղից |
| Եզ. | Այր | » | Առն | Տիւ | » | տուընջեան |
| Յգ. | Արք | » | արանց | Տիւք | » | տուընջեանց |
| Եզ. | Տէր | » | տեառն | | | |
| Յգ. | Տեարք | » | տերանց | | | |

## ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

Բաղաձայնով վերջացող անուններուն վերջի վանկին ձայնաւորը եթէ ե է, սեռականին մէջ այն ին ի կը փոխուի. ինչպէս՝

Հանդէս, հանդիսի. հանդէսք, հանդիսից.
Պարտէզ, պարտիզի. պարտէզք, պարտիզաց
Էշ, իշոյ. էշք, իշոց
Զէն, զինու. զէնք, զինուց ։

Եթէ ի կամ ու է, ըի կը փոխուի. ինչպէս

Գիծ, գծի. գիծք, գծից
Գին, գնոյ. գինք, գնոց
Միս, մսոյ. միսք, մսոց
Ինձ, ընձու. ինձք, ընձուց.

Տեսիլ, տեսլեան· տեսիլք, տեսլեանց
Մարդիկ, մարդկան
Քոյն, քնոյ
Մանուկ, մանկան· մանկունք, մանկանց

Եթէ եա է, եի կը փոխուի· ինչպէս
Սենեակ, սենեկի. սենեակք, սենեկաց
Մատեան, մատենի· մատեանք, մատենից։

Եթէ ոյ է, ուի կը փոխուի· ինչպէս
Ողջոյն, ողջունի· ողջոյնք, ողջունից
Թոյն, թունոյ· թոյնք, թունոց

Իւ վերջաւորած բառերուն սեռականին մէջ իւ ը ուի կը փոխուի· ինչպէս
Հովիւ, հովուի· հովիւք, հովուաց
Պատիւ, պատուոյ· պատիւք, պատուոց
Թիւ, թուոյ· թիւք, թուոց
Անիւ, անուոյ. անիւք, անուոց։

Դեւ բառին սեռականին մէջ եւ իի կը փոխուի. ինչպէս՝ Դեւ, դիւի։

Աստուած բառին սեռականին մէջ վերջին ու կը կորսուի. Աստուած, Աստուծոյ։

Եայ վերջաւորած բառերուն սեռականին մէջ եայն եի կը փոխուի· ինչպէս
Աշտեայ, աշտեի· աշտեայք, աշտեից
Միջօրեայ, միջօրեի. միջօրեայք, միջօրեից
Դուզնաքեայ, դուզնաքեի. դուզնաքեայք, դուզնաքեից։

Տեղացի նշանակող եայ վերջաւորած բառերուն սեռականը հետեւեալ կերպով կ'ըլլայ.
Հայաստանեայ, Հայաստանւոյ· Հայաստանեայք, Հայաստանեայց



Աստրեստանեայ, Աստրեստանւոյ· Աստրեստանեայք, Աստրեստանեայց
Արեւելեայ, Արեւելւոյ· Արեւելեայք, Արեւելեայց։

---

## 20. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ անուններուն եզ. սեռականն ու յոք. ուղղականն ու սեռականը գտնեն·

Ընծայ· ժամանակ· նշան· գործ· հողմ· թուղթ· մարդ· երկիր· սէր· պատիւ· թիւ· անիւ· գրիչ· հուր· կարգ· մատուռն· գօտի· թթենի. ձիթենի· ձագ. թռչուն· մատեան· ատեան. շունչ· մարմին· պատանի· մուկն· շուրթն. հովիւ· հովանի· հող· ջուր· հաց· պանիր· հոգի· հոտ· հօտ· ոչխար· արջառ· այծ. հունձ· պտուղ· հրաման· հրապարակ· ամբոխ· աղի· աղտ· երէց· երկաթ. արծաթ. ոսկի· պղինձ· զգեստ· զարդ· տաճար· բեռն· Գնէլ Տիրան· Միհրան· զէն· զոհ· կողմն· լաւութիւն· կոճղ· կոչումն· մեծատուն· վերնատուն· գալուստ· կրօն· յօդ· շէն· ազգ· լոյս· յոյս· ճշմարտութիւն· տարի· ամիս· ժամ· վայրկեան· ծառ· սուրբ· անձն· տարր· արկղ· մեհեան· ցեղ· քահանայ· մահ· խաշն· դաշն· հանդէս· ողջոյն· էշ· ծով· մանուկ· ծեր· աղջիկ· ուստր· դուստր· որդեակ· լեզու· ծիր· խունկ· քաղց· ինձ· իժ· աւազան· խրատ· Արամ· Վահան· Վարդան· Գայիանէ· Լուկրետիա· Հայկ· կղզի· փարիսեցի· սադուկեցի· անեցի· այր· մեղր· խոստումն· ուսումն· սկիզբն· եզր· ծայր· ափն· քիրտն· աշուն· գարուն· ձմեռն· ամառն· մարդիկ· պաշ-

տօն · ձեղուն · կորեակ · սենեակ · տտուն · ադի · գլուխ · փոքրիկ · տնիկ · մատն · մրջիւն · սիւն. կորիւն · թոռն · հանգիստ · փախուստ · թաքուստ · համր · երր · իր · իղձ · ունչ · ունդ · ուս . ուխտ · քրիստոնեայ · փախստեայ · աշտեայ · գանձ · զօր · ժողովուրդ · ծնունդ · խորհուրդ · կոչ · ճրագ · մահ · պատերազմ · պատուաւ · քար · այր (մաղարա) · գայլ (գործիք) · գայլ (անասուն) · գեղ (գեղեցկութիւն) · մայր (չամ) · որթ · (ասմա) · որթ (տանա) . սան (կաթսայ) . սան (աշակերտ) . փող (պօրու) · փող (պօղազ) · օդ (հավա) · օդ (ոտքի աման) · խօսք · աղօթք · միտք · պարտք · կամք · դժոխք · մեղք · մանկտի · ոսկրոտի · բանեար · աւագանի · խողեան · գրեան · որեար . խուժան · կանանի ։

Այս անուններէն ոմանց յոգնակին չի գործածուիր, ինչպէս են՝ սէր, հուր, հոտ եւ այլն. ընդհանրապէս այնպիսի իրաց անուններ որոնց թիւ եւ քանակութիւն չի կրնար տրուիլ. բայց աշակերտք ասոնք ալ ըստ կանոնի յոգնակի կրնան ընել, ուստի կրնան ըսել՝ սէրք, սիրոց · հուրք, հրոց · միայն գիտնալու են որ աս տեսակ անուանց յոգնակին սովորական չէ ։ Նոյնպէս յատուկ անուանց յոգնակին ընդհանրապէս չի գործածուիր ։ Անեզական անուններուն ալ եզակին գործածական չէ, ինչպէս են՝ աղօթք, կամք, դժոխք եւ ասոնց նման բառեր ։ Կան անուններ ալ որոնք եզակի ձայնիւ յոգնակի են. ինչպէս մարդիկ որ մարդեր կը նշանակէ, ոչ թէ մէկ մարդ. ուստի եւ հարկ չէ ըսել մարդիկք, մարդկանց։ Վերի անուններուն մէջ ուրիշ այսպիսի բառեր ալ կը գտնուին, ինչպէս ոսկրոտի, որեար ։ Ուսուցիչք կրնան այսպիսի անունները ցուցնել աշակերտաց ։



## 21. Հրահանգ

### ԳՈՅԱԿԱՆ ՅԱՏԿԱՑՈՒՑՉՈՎ

Պարտէզին դուռը բաց է. Տանը պատուհանները գոց են. Երկրին բնակիչները վայրենի էին. Ծառին պտուղը գեղեցիկ էր. Արեւին լոյսը պայծառ է. Լուսնին լոյսն աղօտ է. Տղուն հայրը ծեր է. Թագաւորին զօրքերը հաւատարիմ են. Տէրոջը կամքն այս է. Քրոջը տունը մօտ է. Կնոջը որդիքը ստահակ են. Մարդուն խօսքերը խիստ էին. Հօրը բարկութիւնը սաստիկ էր. Օրուան հանդէսը մեծ էր. Ցորեկուան ժամերը կարճ են. Գիշերուան ժամերը երկայն են. Կէս օրուան տաքն աւելի է. Գարնան օրերը զով են. Ամառուան օրերը տաք են. Գեղին բնակիչները մարդասէր են. Թագաւորին հրամանը անխպողական է. Քաղքին դուռները պղնձէ են. Գետին ջուրերը քաղցր են. Ծերին խօսքերը խելքով են. Ասոնք քաղքներուն իշխաններն են. Ծովին ձուկերը տեսակ տեսակ են. Գինիին կարասը ծակ է. Եղին սրուակը լեցուն է. Կաթին ամանները պարապ են. Տեղւոյն դիրքը բարձր է. Որդիներուն պարծանքը հայրերն են. Մայրերը աղջիկներուն պաշտպանն են. Արդարներուն հոգիները երանելի են. Հռոմայեցւոց տէրութիւնն ահագին էր. Իսրայելացւոց ազգը ընտրեալ էր. Խրատին խօսքերն ազդու էին. Հայկին որդիներն ու թոռները քաջ էին. Տրդատին պատմութիւնը զարմանալի է. Հռիփսիմէին ընկերները կուսանք էին. Ձեռուըներուն եւ ոտուըներուն մատուըները հինգ հինգ են. Այսօր ուրախութեան տօն

է. Ջիթենին հաշտութեան նշան է. Այս տնկուած քարը քաջութեան յիշատակ է. Շաբաթը Հրէից հանգստութեան օրն էր. Անոր արիւնին հեղումը փրկութիւն եղաւ. Աստղերուն թիւն անհամար է. Կայսրին իշխանութիւնը ատելի էր. Աղբիւրին ջուրը զուտ էր. Անիկա անկիւնի քար եղաւ. Այրերուն եւ կիներուն թիւը շատ էր։

## ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

1. ԿԱՆ. Սեռական հոլովը կամ յատկացուցիչը աշխարհաբարի մէջ գրեթէ միշտ յատկացեալէն առաջ կը դրուի. գրաբարի մէջ յատկացուցիչը սովորաբար յատկացեալէն ետքը կու գայ։

2. ԿԱՆ. Խօսքի մը մէջ ուր յատկացուցիչ եւ յատկացեալ կայ՝ աշխարհաբարի մէջ յօդը երկուքին վրայ ալ կը դրուի. գրաբարի մէջ, եթէ յօդ դնել պէտք է, յօդը յատկացուցչին վրայ միայն կը դրուի. եւ եթէ յատկացուցիչը յատուկ անուն է եւ յատկացեալը հասարակ անուն, յօդը յատկացելոյն վրայ միայն կը դրուի։

| | |
|---|---|
| Պարտէզին դուռը. | Դուռն պարտիզին |
| Մարդուն հոգին. | Հոգի մարդոյ (ամէն մարդու վրայ է խօսքը) |
| Թագաւորին եղբայրը. | Եղբայր թագաւորին |
| Հայոց պատկերագիրը. | Պատկերագիրն Հայոց (յատկ. ան.) |
| Յիսուսին մայրը. | Մայրն Յիսուսի |
| Դպրոցներուն տղաքը. | Մանկունք դպրոցաց (ամէն դպրոցի) ։ |

Հետեւեալ բառերուն նայելով՝ աշակերտք վերի



կանոններուն համեմատ 21 երորդ հրահանգը գրաբարի դարձունեն։

| | |
|---|---|
| Գոց, փակեալ | Տեսակ տեսակ, ազգի ազգի |
| Արեւ, արեգակն, կան | Եղ, իւղ, կամ եւղ, իւղոյ |
| Թագաւոր, արքայ | Կաթ, կաթն, թին |
| Մօտ, մերձ | Պարապ, թափուր |
| Ցորեկ, տիւ | Թոռ, թոռն, յգ. թոռունք |
| Կէս օր, միջօրեայ, րէի | Մատ, մատն, յգ. մատունք |
| Տաք (գոյ.), տապ | Նշան, նշանակ |
| Աւելի, առաւել | Տնկուած քար, արձան |
| Ստիպողական, բուռն | Հանգստութիւն, հանգիստ, հանգստեան |
| Պղնձէ, պղնձի | Քար, վէմ |
| Խելքով, հանճարեղ | |
| Ասոնք, սոքա | |

## ԼՈՒԾՈՒՄ

Բաց է դուռն պարտիզին. Է, բայ էակ. սահմ. ներկ. եզ. գ. դէմք. Ո՞վ է — Դուռը. Դուռն՝ գոյ. ան. ուղղ. հոլ. Տէր բայի էին. Որո՞ւն կամ ի՞նչ բանին դուռը — Պարտէզին. Պարտիզին գոյ. ան. սեռ. հոլ. յատկացուցիչ Դուռին. Դուռն է՝ ի՞նչպիսի — Բաց. Բաց ած. ստորոգելի դուռին։

# ԴԱՍ Ժ.

## ԱԾԱԿԱՆԱՑ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

### ՍՏԱՑԱԿԱՆ ԵՒ ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆԱՑ ՍԵՌԱԿԱՆՆԵՐԸ

1. Ստացականներուն եզակի սեռականը կ՚ըլլայ ոյ. յոքնակին ոց. ինչպէս՝ Իմ, իմոյ, իմոց. Քո,

քոյ, քոց. Մեր, մերոյ, մերոց. Ձեր, ձերոյ, ձերոց. Իւր, իւրոյ, իւրոց:

Նորա, նոցա, իւրեանց ամենեւին չեն փոխուիր:

2. Ցուցականներուն սեռականը կ'ըլլայ այսպէս.

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Այս, այսորիկ | յք. | Այսոքիկ, այսոցիկ |
| » | Այդ, այդորիկ | » | Այդոքիկ, այդոցիկ |
| » | Այն, այնորիկ | » | Այնոքիկ, այնոցիկ |

3. Ածականները սովորաբար իրենց գոյականէն ետքը կը դրուին, եւ անոր հետ թուով եւ հոլովով կը համաձայնին. այսինքն՝ եթէ գոյականը եզակի կամ յոգնակի, ուղղական կամ սեռական է, ածականն ալ նոյնպէս եզակի կամ յոգնակի, ուղղական կամ սեռական պիտի ըլլայ:

| | |
|---|---|
| Քաջ մարդ, | Այր քաջ |
| Քաջ մարդեր, | Արք քաջք |
| Քաջ մարդու, | Առն քաջի |
| Քաջ մարդոց, | Արանց քաջաց |
| Իմաստուն որդի, | Որդի իմաստուն |
| Իմաստուն որդիներ, | Որդիք իմաստունք |
| Իմաստուն որդւոյ, | Որդւոյ իմաստնոյ |
| Իմաստուն որդիներու, | Որդւոց իմաստնոց |

4. Նոյնպէս են Ստացականները. սակայն ասոնք յոգնակի գոյականի հետ ուղղականի մէջ ք գիրը չեն առներ:

| | |
|---|---|
| Իմ տունս, | Տուն իմ |
| Իմ տուներս, | Տունք իմ, ոչ՝ տունք իմք |
| Իմ տանս, | Տան իմոյ |
| Իմ տուներուս, | Տանց իմոց |
| Ձեր որդին, | Որդի ձեր |
| Ձեր որդիները, | Որդիք ձեր, ոչ՝ որդիք ձերք |



| | |
|---|---|
| Ձեր որդւոյն, | Որդւոյ ձերոյ |
| Ձեր որդիներուն, | Որդւոց ձերոց |

5. Ցուցականներն ալ ընդհանրապէս գոյականէն ետքը կը դրուին, միայն ս, դ, ն գիրերը գոյականին վրայ կ'աւելցուին: Այս գիրերը բուն ցուցական ածականներուն տեղն ալ կրնան բռնել, այնպէս որ կրնան ցուցականները զանց առնուլ՝ այն գիրերը միայն դրուելով (Տես 6 երորդ Հրահանգին Տարադրութեան 1 եւ 2 կանոնները):

| | |
|---|---|
| Այս մարդը, | Այրս այս, այրս |
| Այս մարդուն, | Առնս այսորիկ, առնս |
| Այս մարդերը, | Արքս այսոքիկ, արքս |
| Այս մարդերուն, | Արանցս այսոցիկ, արանցս |
| Այն տղան, | Մանուկն այն, մանուկն |
| Այն տղուն, | Մանկանն այնորիկ, մանկանն |
| Այն տղաքը, | Մանկունքն այնոքիկ, մանկունքն |
| Այն տղոցը, | Մանկանցն այնոցիկ, մանկանցն |
| Այդ խօսքը, | Բանդ այդ, բանդ |
| Այդ խօսքին, | Բանիդ այդորիկ, բանիդ |
| Այդ խօսքերը, | Բանքդ այդոքիկ, բանքդ |
| Այդ խօսքերուն, | Բանիցդ այդոցիկ, բանիցդ |

---

## 22. Հրահանգ աշխարհաբար.

ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ՍՏԱՑԱԿԱՆ, ՑՈՒՑԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿ ԱԾԱԿԱՆՈՎ.

Եղբօրս հանդերձները նոր են. Ձեր տղոցը կօշիկ-

ները հին են. Մեր երկրին հողը պտղաբեր է. Ձեր պարտէզին ծառերը շատ են. Մեր Աստուծոյն ողորմութիւնը շատ է. Ձեր աղօթքին զօրութիւնը մեծ է. Քու ծառաներուդ խօսքերը տկար են. Այս տունին յարկը բարձր է. Այս քաղքին բնակիչները շատ են. Այն մարդոց ստակը քիչ է. Այն ծառաներուն տէրը խիստ է. Այն քաղքին պարիսպներն ամուր են. Այն գետին ջուրերը յորդ են. Այդ կնոջը որդին խելացի է. Այս ջուրին ակը պղտոր է. Այն աղբիւրին ջուրը պաղ է. Այդ բարեկամներուն խօսքերը քաղցր են. Այս ծառերուն պտուղները հասուն են. Այն երկրին օդն առողջ է. Այն ճամբուն երկայնութիւնը չափազանց է. Այն տղուն մահը ժամանակէն առաջ էր. Այս մարդուն չարութիւնը շատ մեծ է. Այս կնոջը բարեգործութիւնները հռչակեալ են։

Քաջ մարդու որդի է. Իմաստուն ծառայի տէր է. Բարի մարդու կին է. Հարազատ եղբօր քոյր եմ. Մեծ քաղքի բնակիչ ենք. Բարեբարոյ կնոջ այր է. Հզօր թագաւորի բարեկամ եմ. Մեծամեծ բանակներու զօրավար է. Իմաստուն վարժապետի աշակերտ է. Ազնիւ հօր որդի է. Բարեպաշտ մօր աղջիկ էր. Երկնաւոր թագաւորին ծառաներն ենք. Աբրահամ շատ ծառաներու տէր էր. Հնազանդ որդիներու բնութիւնն այս է. Այս անտառը վայրենի գազաններու բնակարան է. Գէշ մարդու կին եմ. Արդար հոգիներու բնակարան է.

| | |
|---|---|
| Խելացի, հանճարեղ | Բարեգործութիւն, ղաւ-ուրքիւն |
| Աչք, ակն. յք. ակունք | Վարժապետ, վարդապետ |
| Չափազանց, կարի | Ժամանակէն առաջ, տարաժամ |
| Շատ մեծ, անհնարին | Բնութիւն, բարք |
| | Բնակարան, բնակութիւն |
| | Գէշ, ժանտ |



---

Գրաբար

Նոր են հանդերձք եղբօր իմոյ. Հին են կօշիկք մանկանց ձերոց. Բարձր է յարկ տանս այսորիկ կամ տանս. Բազում են բնակիչք քաղաքիս այսորիկ կամ քաղաքիս. Սակաւ է արծաթ արանցն այնոցիկ կամ արանցն. Խիստ է տէր ծառայիցն այնոցիկ կամ ծառայիցն... Որդի է առն քաջի. Տէր է ծառայի իմաստնոյ. Կին է առն բարւոյ. Քոյր է եղբօր հարազատի, եւ այլն։

ԼՈՒԾՈՒՄ

Նոր են հանդերձք եղբօր իմոյ. Են, բայ էակ. սահմ. ներկ. յք. գ. դէմք. — Ո՞վ կամ ի՞նչ բաներ են. — Հանդերձները. Հանդերձ, գոյ. ան. յք. ուղ. Տէր բայի են ին։ Որո՞ւն հանդերձները. — Եղբօրս. Եղբօր իմոյ, սեռ. հոլ. իմ ստաց. ածականով, յատկացուցիչ հանդերձին։ Հանդերձները են ի՞նչ. — Նոր. Նոր ած. ստորոգելի հանդերձին. Այսպէս մնացածները։

# ԴԱՍ ԺԱ.

## ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ

1. Յատկացուցիչը յատուկ անուն ալ ըլլայ, աշխարհաբարի մէջ յօդը (ը գիրը) թէ յատկացեալին եւ

թէ յատկացուցչին վրայ կը դրուի․ Գրաբարի մէջ, երբ յատկացուցիչը յատուկ անուն է, յօդը (և գիրը) սովորաբար յատկացեալին վրայ միայն կը դրուի։ Տես եւ Թ Դասին Շարադրութեան 2 կանոնը։

| | |
|---|---|
| Յովհաննէսին եղբայրը, | Եղբայրն Յովհաննու |
| Արշակին որդին, | Որդին Արշակայ |
| Պետրոսին զօքանչը, | Զոքանչն Պետրոսի |
| Դաւիթին թագաւորութիւնը, | Թագաւորութիւնն Դաւթի |

2․ Երբ թէ յատկացուցիչը եւ թէ յատկացեալը յօդ առնող բառ չեն, զոր օրինակ՝ երբ սեռ կը ցուցնեն, եւ կամ բնութեան մէջ միակ գտնուող բանի մը անուն են, ինչպէս՝ Աստուած, արեգակն, լուսին, երկիր, եւն, գրաբարի մէջ երկուքն ալ յօդ չեն առներ, թէպէտ աշխարհաբարի մէջ կ՚առնեն․

| | |
|---|---|
| Աստուծոյ դատաստանները, | Դատաստանք Աստուծոյ |
| Լուսնին լոյսը, | Լոյս լուսնի |
| Արեւին ճառագայթները, | Ճառագայթք արեգական |
| Երկրին շուքը, | Ստուեր երկրի |

## 23. Հրահանգ աշխարհաբար.

Յովհաննէսին եղբայրը իմաստուն է․ Արշակին որդին չար է․ Պետրոսին զօքանչը հիւանդ էր․ Յովսէփին աները ծեր է․ Սաւուղին որդին կաղ էր․ Դաւիթին զօրավարները քաջ եւ հաւատարիմ էին․ Դեկոսի կեանքը կարճ եղաւ․ Յակոբին որդիքը նախանձոտ էին․ Երուսաղէմին պարիսպներն ամուր էին․ Հայոց երկիրը պտղաբեր է․ Հնդկաց լեռները բարձր



են․ Տրդատայ թագաւորութիւնը երկար եղաւ․ Նիփատայ ջուրերը յորդ են․ Սոդոմի բնակիչներն անզգամ էին․ Աբրահամին ծառաները հաւատարիմ էին․ Արեգական ճառագայթները այրող են․ Լուսնին լոյսն աղօտ է․ Աստուծոյ դատաստաններն արդար են․ Հովին զօրութիւնը ուժով է․ Ծովին ալիքներն ահագին են․ Լոյսին բնութիւնը բարակ է․ Արդարներուն ճամբաները շիտակ են․ Առիւծին մռնչիւնը սոսկալի է․ Աստուծոյ խօսքը ճշմարիտ է․ Երկրիս կողմերը չորս են․ արեւելք, արեւմուտք, հիւսիս եւ հարաւ․ Ծովին ջուրն աղի է․ Լեռներուն գլուխները բարձր են․ Երկրիս անդունդները խորունկ են․ Աստղերուն հեռաւորութիւնն անբաւ է․ Տիեզերքին ընդարձակութիւնն անհուն է․ Անձրեւին, ձիւնին եւ հովերուն օգուտը մեծ է․ Արեւին լոյսն ու տաքութիւնը շատ կարեւոր են։

| | |
|---|---|
| Լեռ, լեառն․ յք․ լերինք, լերանց | Շիտակ, ուղիղ |
| | Սոսկալի, ահեղ |
| Այրող, կիզիչ | Խորունկ, խոր |
| Հով, հողմ, հողմոյ | Տիեզերք, տիեզերք, ռաց |
| Ուժով, բուռն | Տաքութիւն, ջերմութիւն |
| Բարակ, նուրբ | Շատ (մկ), յոյժ |

Աս բառերուն միտ դնելով, աշակերտք վերի 23 երորդ աշխարհաբար Հրահանգը գրաբարի դարձնեն։

| | |
|---|---|
| Յովհաննէսին եղբայրն իմաստուն է․ | Իմաստուն է եղբայրն Յովհաննու |
| Արշակին որդին չար է․ | Չար է որդին Արշակայ |

| | |
|---|---|
| Պետրոսին զոքանչը հիւանդ էր · | Հիւանդ էր զոքանչն Պետրոսի |

Աշակերտք թող լուծեն նոյն խօսքերը ։

# ԴԱՍ ԺԲ.

## ԴԵՐԱՆՈՒՆ

1. Դերանուն կը կոչուին քանի մը բառեր՝ որոնք խօսքին մէջ արդէն յիշուած անունի մը տեղ կը դրուին ։ Զոր օրինակ՝ Թագաւորը եւ անոր զինուորները · Տեսա՞ք այն մարդը որուն որդին իմ աշակերտս է ։ Աս խօսքերուն մէջ անոր եւ որուն դերանուն են . առջինը՝ Թագաւորը կը յարաբերէ , երկրորդը՝ մարդը · փոխանակ ըսելու, Թագաւորը եւ Թագաւորին զինուորները · Տեսա՞ք այն մարդը , այն մարդուն որդին իմ աշակերտս է ։

2. Դերանունները քանի մը տեսակ են , այսինքն՝ Էական կամ Անձնական , Ցուցական , Ստացական եւ Յարաբերական ։

Էականները երեք են . Ես , Դու , Նա ։ Ես առաջին դէմք կ'ըսուի , Դու՝ երկրորդ դէմք , Նա՝ երրորդ դէմք ։

| Եզ. | Յգ. |
|---|---|
| Ես, ես, Սեռ. Իմ, իմ | Մենք, մենք, Սեռ. Մեր, մեր |
| Դու, դուն, » Քո կամ քոյ, քու | Դուք, դուք, » Ձեր, ձեր |
| Նա, ան, » Նորա, անոր | Նոքա, անոնք, » Նոցա, անոնց |



Նա դերանունը կ'ըլլայ նաեւ, Սա, Դա ։

| Եզ. | Յգ. |
|---|---|
| Սա, աս, Սեռ. Սորա, ասոր | Սոքա, ասոնք Սեռ. Սոցա, ասոնց |
| Դա, ատ, » Դորա, ատոր | Դոքա, ատոնք, » Դոցա, ատոնց |

Դնենք թէ առջեւս երկու գիրք կայ · աւելի մօտ եղածին համար կ'ըսեմ՝ Սա իմ է · ինծի աւելի հեռու եղածին համար ալ կ'ըսեմ՝ Դա քո է · ինչպէս որ աշխարհաբարի մէջ ալ կ'ըսենք՝ Աս իմս է, Ատ քուկդ է ։

3. Ուրիշ Էական կամ Անձնական դերանուն մ'ալ կայ , Ինքն, ինք · որուն սեռականն է՝ Իւր կամ ինքեան , իրեն · յոգնակիին մէջ ալ ուղղ · Ինքեանք, իրենք , սեռ · իւրեանց կամ ինքեանց ։

4. Ցուցական դերանուններն են նոյնպէս Սա, Դա, Նա · եւ կամ Այս, Այդ, Այն · (Այս վերջիններուն սեռականին եւ յոգնակիին վրայ տես Դաս Ե եւ Ը ։

5. Ստացական դերանուններն են Իմ , Քո, Մեր , Ձեր, Իւր ։ (Ասոնց վրայ ալ տես Դաս Ե եւ Ը ։)

6. Ցուցականներն Այս, Այդ , Այն, եւ Ստացականներն Իմ, Քո, Մեր, Ձեր, Իւր, թէ ածական են եւ թէ դերանուն ։ Երբ գոյականի մը հետ են՝ ածական կ'ըլլան . երբ առանց գոյականի մինակ կը գործածուին , դերանուն կ'ըլլան ։ Զոր օրինակ՝ երբ կ'ըսեմ Տունս այս, Այս տունը , այս՝ ածական է ։ Երբ կ'ըսեմ՝ Այս է մատեան քո , Այս է քու գիրքդ , այս դերանուն կ'ըլլայ ։ Նոյնպէս երբ կ'ըսեմ՝ Տուն իմ, Իմ տունս , իմ ածական է . երբ կ'ըսեմ՝ Իմ է տունս , Իմս է այս տունը . կամ Տուր ինձ զիմն, Իմինս ինծի տուր , իմ դերանուն է ։

7. Յարաբերական Դերանունն է Որ կամ ո. որ, որուն սեռականն է որոյ կամ ոյր, յոգնակի ուղղականը կ'ըլլայ Որք կամ Ոյք, որոնք. սեռականը՝ Որոց կամ ոյց, որոնց։

## 24. Հրահանգ աշխարհաբար

### ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ես քու բարեկամդ եմ. Դուն իմ ծառաս ես. Ան իմ եղբայրս է. Մենք ձեր ընկերներն ենք. Դուք մեր օգնականն էք. Անոնք իմ տղաքս են։ Այս երկիրը ձերն է. Այդ գետը մերն է. Իմ որդիներս ասոնք են. Իմ որդիս գեղեցիկ է. Քուկինդ տգեղ է. Ձեր խօսքերն արդար են. Անոնցն անիրաւ են. Ատոնք ո՞վ են. Ասոնք իմ աղջիկներս են. Այս դպրոցին աշկերտներն ասոնք են. Իմ անունս այս է. Անոր խօսքերն ասոնք են. Ձեր որդւոյն վարպետն ես եմ. Այս եկեղեցւոյն շինիչն աս է. Դուն մարգարէ մըն ես. Ատիկայ մեղաւոր է. Մենք արդար ենք. Այս գեղեցիկ ամարանոցն իմս է. Այս տունին բոլոր կարասին անորն է. Այդ տղան քուկդ է. Անիկա իմ եղբօրորդիս է. Դուք մեր սիրելիներն էք. Քու տղաքդ անհնազանդ են. Իմիններս խօսք մտիկ ընող են. Ատիկա ճերմակ է. Իմինս սեւ (էսմէր) էր։

| | |
|---|---|
| Ասոնք, սոքա | Մը, ումն |
| Քուկինդ, քուկդ, քոյդ | Անհնազանդ, խեռ |
| Անոնցը, նոցայն | Խօսք մտիկ ընող, հլու |
| Ատոնք, դոքա | Ճերմակ, սպիտակ |
| Ասոնք, սոքա, այսոքիկ | Սեւ, թուխ |
| Վարպետ, վարդապետ | |



ԿԱՆ. Ստացական դերանունները՝ Իմ, իմինս. Քո, քուկինդ. Մեր, մերինը. Ձեր, ձերինը. Իւր, իրենը, ինչպէս նաեւ Նորա, անորը, Նոցա, անոնցը, երբ Տէր բայի են, յոգնակիի մէջ ք գիրը եւ ն յօդը կ'առնեն. երբ ստորոգելի են, աս երկու գիրն ալ չեն առներ. զոր օրինակ.

| | |
|---|---|
| Իմինս աղէկ է, քուկինդ գէշ է. | Բարւոք է իմն, քոյն կամ քոյդ՝ յոռի |
| Մերինները հնազանդ են, անոնցը անհնազանդ. | Հնազանդ են մերքն, նոցայքն՝ ստահակ |
| Այս տղաքը իմս են. | Իմ են մանկունքս |
| Այդ գիրքն անորն է. | Նորա է մատեանդ |

Այս կանոններուն համեմատ, եւ նախընթաց բառերուն միտ դնելով, աշակերտք վերի 24 երորդ Հրահանգը գրաբարի դարձնեն.

| | |
|---|---|
| Ես քու բարեկամդ եմ. | Բարեկամ քո եմ ես |
| Դուն իմ ծառաս ես. | Ծառայ իմ ես դու |
| Ան իմ եղբայրս է. | Եղբայր իմ է նա |

---

### ԼՈՒԾՈՒՄ

Ես քու բարեկամդ եմ. Բարեկամ քո եմ ես. Եմ, էակ. բայ, սահմ. ներկ. եզ. Ա. Դէմք. — Եմ, ո՞վ. — Ես. ես էակ. դեր. Ա. դէմք, Տէր բայի Եմին. — Ես եմ ի՞նչ, — Քու բարեկամդ, բարեկամ քո. բարեկամ, գո. ան. եզ. ուղղ. ստորոգելի եսին, քո ստաց. ած. Բարեկամին։

Ատոնք ո՞վ են. Ո՞վ են դոքա. Են էակ. բայ. սահմ. ներկ. յք. Գ. դէմք. — Են ո՞վ. —Ատոնք,

Դոքա. դոքա էակ. դեր. յք. ուղղ. Գ. դէմք, Տէր բայի ենին. Ով, հարցական անուն, ստորոգելի դոքային:

Այս գեղեցիկ ամառանոցն իմն է. Իմ է ամառանոցս գեղեցիկ. է, էակ. բայ. սահմ. ներկ. եզ. Գ. դէմք. — Ո՞վ է, — Այս գեղեցիկ ամառանոցը. Ամառանոցս գեղեցիկ. Ամառանոց՝ Տէր բայի է ին. ս ցուցական ած., գեղեցիկ որակական ած. ամառանոցին: Այս գեղեցիկ ամառանոցը որո՞ւ է. Իմս, Իմն է. Իմ ստաց. դեր. ստորոգելի Ամառանոցին:

# ԴԱՍ ԺԳ.

## ՀԱՅՑ. ՀՈԼՈՎ. ԱԾԱԿԱՆ ԲԱՅ. ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

---

### ՀԱՅՑ. ՀՈԼՈՎ.

1. Ինչպէս որ (Տես Դաս Բ. 3. եւ Դաս Գ.) Ո՞վ, Ի՞նչ (քի՞մ, նէ՞) հարցման պատասխանը Ուղղական է, այնպէս ալ Զո՞վ, ի՞նչ բանը (քիմի՞, նէյի՞) հարցման պատասխանը Հայցական է:

2. Հայցականը գրեթէ միշտ ուղղականին հետ նոյն է, միայն իրմէ առաջ սովորաբար զ գիրը կ'առնէ. զոր օրինակ՝ Բանտ, հյց. զԲանտ. Գետ, հյց. զգետ. Հիմն, հյց. զհիմն. Արիւն, հյց. զարիւն, եւ այլն,

3. Յոքնակի ուղղականին ք գիրը (Տես Դաս Գ. 2.) հայցականին մէջ ս ի կը փոխուի. զոր օրինակ՝ Բանտք, հյց. զբանտս. Գետք, հյց. զգետս. Հիմունք, հյց. զհիմունս. Աստեղք, հյց. զաստեղս:



4. Այս, Այդ, Այն ցուցականներուն յոք. ուղղականները՝ Այսոքիկ, այդոքիկ, այնոքիկ, հայցական կ'ըլլան ք ն ս ի փոխելով. ինչպէս՝ զայսոսիկ, զայդոսիկ, զայնոսիկ:

5. Էական դերանուններուն հայցականները կ'ըլլան, Ես, հյց. զիս. Դու, հյց. զքեզ. Նա, հյց. զնա. Մեք, հյց. զմեզ. Դուք, հյց. զձեզ. Նոքա, հյց. զնոսա: (Տես եւ Դաս ԺԲ. 2.)

---

### ԱԾԱԿԱՆ ԲԱՅ, ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

1. Եմ բայէն զատ ուրիշ բոլոր բայերն Ածական կ'ըսուին. քանզի Եմ բայէն ու ածականէ մը շինուած են. զոր օրինակ՝ Սիրեմ՝ կը նշանակէ Սիրող եմ. Գործեմ՝ Գործող եմ. Ննջեմ՝ Ննջող եմ. այսպէս ամէն բայ:

2. Ածական բայերը երկու տեսակ են, Ներգործական եւ Չեզոք:

Ա. Ներգործական են այն բայերը՝ որոնք հայցական հոլով մը կ'ուզեն ամբողջ իմաստ մը տալու համար. զոր օրինակ երբ կ'ըսեմ՝ կը սիրեմ, կ'ուտեմ, կը գրեմ, ամբողջ իմաստ մը չեմ յայտներ. քանզի չեմ յայտներ թէ զով կը սիրեմ, ինչ բան կ'ուտեմ. բայց երբ կ'ըսեմ՝ Կը սիրեմ բարեկամս, Կ'ուտեմ հացը, Կը գրեմ նամակը, բարեկամս, հացը, նամակը բառերը՝ կը սիրեմ, կ'ուտեմ, կը գրեմ բայերուն իմաստը կ'ամբողջացնեն: Ամէն բայ որ այսպէս հայցական հոլով մը կրնայ ունենալ՝ Ներգործական բայ է: Ներգործական բայերուն այս հայցականին Սեռի խնդիր կ'ըսուի:

Բ. Ան բայերը որ այսպէս Սեռի խնդիր չեն կըրնար ունենալ, կամ առանց սեռի խնդրոյ ամբողջ իմաստ մը կը յայտնեն՝ Չէզոք են. ինչպէս՝ կը քնանամ, կը պտտիմ, կը նստիմ, կը մեռնիմ, Չէզոք են. քանզի սեռի խնդիր չեն կրնար ունենալ։

Ուստի գիտնալու համար թէ՝ բայ մը ներգործակա՞ն է թէ չէզոք, զո՞վ կամ ի՞նչ բառն հարցումն ընելու է. եթէ կը յարմարի բային իմաստին, այն բայը ներգործական է. ապա թէ ոչ՝ չէզոք է։ Զոր օրինակ՝ կրնանք ըսել. կը սիրեմ. — զո՞վ կամ ի՞նչ. կ'ուտեմ — ի՞նչ. կը գրեմ — ի՞նչ. — կը ծեծեմ — զո՞վ. կը պատմեմ — ի՞նչ. ապա՝ կը սիրեմ, կ'ուտեմ, կը գրեմ, կը ծեծեմ, կը պատմեմ, ներգործական են։ Բայց չենք կրնար ըսել. կը քնանամ — զո՞վ կամ ի՞նչ. կը դառնամ — զո՞վ կամ ի՞նչ. կը պտտիմ — զո՞վ կամ ի՞նչ. կը նստիմ — զո՞վ կամ ի՞նչ. ուրեմն կը քնանամ, կը դառնամ, կը պտտիմ, կը նստիմ, չէզոք են։

Գ. Հայերէն բայերը չորս կերպ վերջաւորութիւն ունին. Եմ, կը սիրեմ. Իմ, կը խօսիմ. Ամ, կ'աղամ. Ում, կը թողում։ Աս չորս կերպ վերջաւորութեանց Չորս Լծորդութիւն կ'ըսուի. Սիրեմ՝ Առաջին Լծորդութեան բայ է. Խօսիմ՝ Երկրորդ Լծորդութեան. Աղամ՝ Երրորդ. Թողում՝ Չորրորդ։

Առաջին Լծորդութեան, այսինքն՝ Եմ վերջաւորողներուն խոնարհման կերպը հետեւեալն է.

| | Եզ. | Յգ. |
|---|---|---|

Սահմ. ներ. Սիրեմ, սիրես, սիրէ. Սիրեմք, սիրէք, սիրեն. կը սիրեմ, եւն.



Անկ. անց. Սիրէի, սիրէիր, սիրէր. Սիրէաք, սիրէիք, սիրէին. Կը սիրէի, եւն.

Կատ. անց. Սիրեցի, սիրեցեր, սիրեաց. Սիրեցաք, սիրեցիք, սիրեցին. Սիրեցի, եւն.

Ապառնի. Սիրեցից, սիրեսցես, սիրեսցէ. Սիրեսցուք, սիրեսջիք, սիրեսցեն. Պիտի սիրեմ, կամ սիրեմ, եւն.

Ստոր. Սիրիցեմ. սիրիցես, սիրիցէ. Սիրիցեմք, սիրիցէք, սիրիցեն. Կը սիրեմ, եւն.

Հրամ. Սիրեա, մի սիրեր. Սիրեցէք, մի սիրէք. Սիրէ, մի սիրեր, եւն.

Աներ. ն. Սիրել, սիրել.

» Անց. Սիրեալ, սիրած.

» Ապ. Սիրելոց, սիրելու.

---

## 25. Հրահանգ աշխարհաբար

### ՆԵՐԳ. ԲԱՅ ՍԵՌԻ ԽՆԴՐՈՎ.

Կը սիրեմ իմ բարեկամս. Հայրը կը խրատէր իր որդին. Ընկերներս գիս կ'ատեն. Մայրն իր աղջիկը կը խնամէ. Մեր ծառաները ղրկեցինք. Եղբայրդ քեզ կը կանչէ. Ձեզի (հյց) կ'աղաչեմ. Հայրս գրեց այս թուղթը. Սենեակին դուռը գոցեց. Մեր ընկերները սիրենք. Իր բարեկամները հրաւիրեց. Զանոնք կերակրեցին. Իմ օրէնքներս մերժեցին. Զիս խաբեցիր. Պահէ զանոնք. Մեզ պահպանէ. Ծառին պտուղները քաղեցինք. Իր տունը շինեց. Աշտարակը կործանեցին. Իրենց ուռկանները կազմեցին.

Քուրձը պարպեցինք․ Զանոնք արձակեմ․ Վարժապետն իր ստահակ աշակերտը կը պատժէ․ Աստուած մեզ պիտի փրկէ․ Իրենց գերիներն ազատեցին․ Ոստիկանները գողը կը փնտռեն․ Ձին ծախեցի․ Գիրքը գնեցինք․ Մեր հայրն այս պարտէզը գնեց․ Իր բոլոր բարեկամները կանչեց․ Կինն իր դրացիները կը կանչէ․ Հովիւներն ոչխարները կ՚արածեն․ Ես կը մատնեմ զանի․ Քահանայապետն իր հանդերձը պատռեց․ Այս կինն իր տղաքը կը սիրէ․ Իմ եղբայրներս եւ քոյրերս կը սիրեմ․ Քու ծաղիկներդ ոռոգեցի՞ր․ Իմիններս եւ քուկիններդ ոռոգեցի․ Քոյրս իրեններն ոռոգեց․ Մշակներն երկիրը կը գործեն․ Իր գործը կատարեց․ Ցորենը ժողվենք․ Ցարդն այրեցին․ Ամբոխը ցրուեցին․ Քաղաքը նուաճեց․ Իր արցունքները սրբեց․ Լաթերդ մի աղտոտեր․ Փողոցը շտկեցին․ Իր տունը զարդարեց․ Անոր ձեռքերն ու ոտքերը կապեցին․ Մեր մեռելները թաղենք․ Անոր ծնկուըները ջարդեցին․ Այծին ձագն եփեց․ Տանը դուռը կը զարնէր․ Տղան մկրտեցին․ Իր բոլոր ունեցածը վաճառեց․ Աստուած Աբրահամը օրհնեց։

## ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

1․ Թէ՛ աշխարհաբարին եւ թէ գրաբարին մէջ դերանուան տէր բայները, ես, դու, նա, մեք, դուք, նոքա սովորաբար չեն գրուիր․ ուստի կ՚ըսենք․ Բարեկամներս կը սիրեմ․ Զանոնք կերակրեցին․ Զիս խաբեցիր, փոխանակ ըսելու Ես կը սիրեմ բարեկամներս․ Անոնք կերակրեցին զանոնք․ Դուն զիս խաբեցիր․ Այսպէս ալ գրաբար կ՚ըսուի․ Սիրեմ զբարեկամս իմ․ Կերակրեցին զնոսա․ Խաբեցեր զիս․



փոխանակ ըսելու, Ես սիրեմ զբարեկամս իմ․ Նոքա կերակրեցին զնոսա․ Դու խաբեցեր զիս։

2․ Եթէ սեռի խնդիրն ածական մը ունի, ածականն իր գոյականէն ետքը կը դրուի, եւ զ գիրը միայն անունին վրայ կը դրուի․ զոր օրինակ՝ զտունն մեծ, զմատեանն փոքր․ մեծ տունը, պզտիկ գիրքը․ Հարկ չէ ըսել զտունն զմեծ, զմատեանն զփոքր։ Նոյնպէս կ՚ըսուի՝ զտուն իմ, զեղբարս ձեր․ Իմ տունս, Ձեր եղբայրները․ չըսուիր, զտուն զիմ, զեղբարս զձեր։ Միայն այս, այդ, այն ցուցական ածականներուն վրայ զ նախդիրը կը դրուի․ այսպէս՝ զտունս զայս, զմատեանդ զայդ, զայրն զայնոսիկ, եւն։

Աշակերտք սա կանոններուն համեմատ, հետեւեալ բառերուն ալ միտ դնելով՝ վերի 25 երորդ հրահանգը գրաբարի դարձունեն։

| | |
|---|---|
| Աղջիկ, դուստր | Քուկիններդ, քոյքն |
| Ծառայ, սպասաւոր | Իրենները, իւրքն |
| Դրկել, առաքել, յղել | Ցորեն, ցորեան |
| Կանչել, կոչել | Արցունք, արտասուք |
| Գոցել, փակել | Լաթ, ձորձ |
| Իրենց, իւրեանց | Աղտոտել, աղտեղել |
| Պարպել, թափել | Շտկել, յարդարել |
| Ազատել, արձակել | Մեռել, մեռեալ |
| Փնտռել, խնդրել | Ծնկուըներ, բարձք |
| Ծախել, վաճառել | Ջարդել, խորտակել |
| Ոչխար, խաշն․ յգ․ խաշինք | Այծի ձագ, ուլ |
| Պատռել, պատառել | Զարնել, բաղխել |
| Տղայ, մանուկ․ յգ․ մանկունք | Բոլոր, ամենայն |
| Իմիններս, իմքն | Ունեցածը, ինչք |

| | |
|---|---|
| Կը սիրեմ իմ բարեկամս. | Սիրեմ զբարեկամ իմ |
| Հայրը կը խրատէր իր որդին. | Հայրն խրատէր զորդի իւր |
| Ընկերներս զիս կ'ատեն. | Ասեն զիս ընկերք իմ, եւն։ |

Աշակերտք հետեւեալ բայերուն մէկը կամ երկուքը գրով խոնարհեն.

| | |
|---|---|
| Բժշկեմ, կը բժշկեմ | Բրեմ, երկիրը փորել |
| Արտասուեմ, կու լամ | Պեղեմ, փորուած հողը դուրս հանել |
| Կեղեքեմ, կը հարստահարեմ | Մաշեմ, կը մաշեմ |

---

## ԼՈՒԾՈՒՄ

ԿԱՆՈՆ 1. Նախադասութեան մէջ միշտ դիմաւոր էական բայ, տէր բայի եւ ստորոգելի ըլլալու է (Տես Դաս Գ)։ Երբ բայն ածական բայ է, էական բայն ու ստորոգելին միացած կ'ըլլան (Տես Դաս ԺԱ)։

ԿԱՆ. 2. Երբ բայը ներգործական է, նախադասութեան մէջ բայէն եւ տէր բայէն զատ սեռի խնդիր ալ կը գտնուի։

Սիրեմ զբարեկամս իմ. Սիրեմ՝ բայ, սհմ. ներկ. եզ. Ա. դէմք. — Ո՞վ է սիրողը — Ես. էակ. դեր. տէր բայի Սիրեմ ին, զօրութեամբ կ'իմացուի. Սիրեմ զո՞վ — Զբարեկամս իմ, իմ բարեկամներս. զբարեկամս, գոյ. եզ. հյց. սեռի խնդիր Սիրեմ ին. Իմ ստաց. ած. բարեկամ ին։



# ԴԱՍ ԺԴ.

## Ա. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

Առաջին Լծորդութեան, այսինքն՝ եմ վերջաւորած բայերէն ոմանք անեմ կը վերջաւորին։ Ասոնց խոնարհման կերպը հետեւեալն է.

| | |
|---|---|
| Սհմ. ներ. | Հատանեմ, հատանես, հատանէ, եւն. Կը կտրեմ. |
| Անկ. անց. | Հատանէի, հատանէիր, եւն. Կը կտրէի. |
| Կատ. անց. | Հատի, հատեր, հատ կամ եհատ. Հատաք, հատէք, հատին. Կտրեցի, եւն. |
| Ապ. | Հատից, հատցես, հատցէ. Հատցուք, հատջիք, հատցեն. Պիտի կտրեմ, կամ կը կտրեմ. եւն. |
| Ստ. ներկ. | Հատանիցեմ, հատանիցես, եւն. Կը կտրեմ կամ կտրեմ, եւն. |
| Հրամ. | Հատ, մի հատաներ. Հատէք, մի հատանէք. Կտրէ, մի կտրեր, եւն. |
| Ան. ներկ. | Հատանել, կտրել. |
| » Անց. | Հատեալ, կտրած. |
| » Ապ. | Հատանելոց, կտրելու. |

---

### 26. Հրահանգ աշխարհաբար.

Մարդը տեսա՞ր. Ձանի տեսայ. Գեղեցիկ մարգարիտը գտանք. Իր սուրը հանեց. Ձեր սպասաւորները եւ աղախինները տեսանք. Մեր ճամբորդները

հասան· Սպասաւորը խօսքը յայտնեց· Հայրը որդին անիծեց· Ձեր տղաքը բերէք· Լաթերդ հագիր· Կորսուած ոչխարս գտայ· Սուրդ կապէ· Զանոնք կլլենք· Զմեզ մոցուց· Մեր օրերը կ'անցնին· Մակոյկին չուանը կտրեցին· Անոր կապերը քակեցին· Իր իմաստութիւնը ցուցուց· Անձրեւներն իջան· Արեգակը կ'ելնէ· Լուսինը եւ աստղերը կը մտնեն· Քու եղբայրներդ գտայ· Զանոնք պիտի տեսնեմ· Սպասաւորները զանի զարկին· Այրի կնոջն աղջիկը սպաննեց· Ճրագը վառեցին· Զանոնք զարնենք· Դուրս ելլեն· Ներս մտնենք· Առիկա կտրէ· Այդ աւանակը մի քակեր· Երեսդ ինծի ցուցուր· Սպաննեցէք զանոնք·

Աշակերտք հետեւեալ բառերուն նայելով՝ վերի 26 երորդ հրահանգը գրաբարի դարձունեն·

| | |
|---|---|
| Տեսնեմ, տեսանեմ | Չուան, պարան |
| Գտնեմ, գտանեմ | Կտրեմ, հատանեմ |
| Ճամբորդ, ճանապարհորդ | Կապ, կապանք |
| Հասնիմ, հասանեմ | Քակեմ, լուծանեմ |
| Յայտնեմ, 'ի վեր հանեմ | Ցուցնեմ, ցուցանեմ |
| Անիծեմ, անիծանեմ | Իջնեմ, իջանեմ |
| Բերեմ (շնչաւոր մը որ քալելով կուգայ), ածեմ | Ելլեմ, ելանեմ |
| Հագնիմ, արկանեմ | Մտնեմ, մտանեմ |
| Կորսուած, կորուսեալ | Զարնեմ, հարկանեմ· Կտր. հարի |
| Կապեմ (փաթթելով, գօտի եւն), ածեմ | Սպաննեմ, սպանանեմ |
| Կլլեմ, կլանեմ | Վառեմ, լուցանեմ |
| Մտցնեմ, մուծանեմ | Դուրս, արտաքս |
| Անցնիմ, անցանեմ | Ներս, 'ի ներքս |
| | Աւանակ, յաւանակ |



| | |
|---|---|
| Մարդը տեսա՞ր· | Տեսեր զայրն |
| Զանի տեսայ· | Տեսի զնա |
| Գեղեցիկ մարգարիտը գըտանք· | Գտաք զմարգարիտն գեղեցիկ |

Աշակերտք հետեւեալ բայերը գրով խոնարհեն·

| | |
|---|---|
| Հարկանեմ, կը զարնեմ | Արկանեմ, կը դնեմ |
| Կլանեմ, կը կլլեմ | Հանեմ, կը հանեմ |
| Գտանեմ, կը գտնեմ | Ածեմ, կը բերեմ |
| Մուծանեմ, կը մտցնեմ, կը խոթեմ | Անիծանեմ, կ'անիծեմ |

### ԼՈՒԾՈՒՄ

Տեսեր զայրն· Մարդը տեսա՞ր· Տեսեր, բյ· ներգ· կատ· եզ· Բ· դէմք· Տեսանեմ էն։ Տեսեր, ո՞վ է տեսնողը· — Դու, էակ· դեր· եզ· ուղ· Բ· դէմք· տէր բայի Տեսեր ին· զօրութեամբ կ'իմացուի։ Տեսեր զո՞վ· — Զայրն, մարդը· զայրն գո· եզ· հյց· սեռի խնդիր Տեսեր ին։

## ԴԱՍ ԺԵ.

### Բ. ԼԾ. ԻՄ ՎԵՐՋԱՒՈՐԱԾ ԲԱՅԵՐ

### ԱՆՈՐՈՇ ՀԱՅՑԱԿԱՆ, ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1· Երկրորդ լծորդութեան բայերը իմ կը վերջաւորին· ինչպէս՝ Խօսիմ, Երեւիմ, Ծնանիմ, Նստիմ։

2· Ասոնք հետեւեալ կերպով կը խոնարհին·

Սհմ. ներ. Խօսիմ, խօսիս, խօսի. Խօսիմք, խօսիք, խօսին. Կը խօսիմ, ևն.

Անկ. անց. Խօսեի, խօսեիր, ևն. Կը խօսէի, ևն.

Կտ. անց. Խօսեցայ, խօսեցար, խօսեցաւ. Խօսեցաք, խօսեցայք, խօսեցան. Խօսեցայ, ևն.

Ապ. Խօսեցայց, խօսեսցիս, խօսեսցի. Խօսեսցուք, խօսեսջիք, խօսեսցին. Պիտի խօսիմ, ևն. կամ խօսիմ, ևն.

Ստր. Խօսիցիմ, խօսիցիս, խօսիցի. Խօսիցիմք, խօսիցիք, խօսիցին. Կը խօսիմ, կամ խօսիմ, ևն.

Հրամ. Խօսեաց, մի խօսիր. Խօսեցարուք, մի խօսիք.

Աներ. ն. Խօսել, Խօսիլ.
» Անց. Խօսեալ, Խօսած.
» Ապ. Խօսելոց, Խօսելու:

---

## Բ. ԼԾ. ԱՆԻՄ ՎԵՐՋԱԻՈՐԱԾ ԲԱՅԵՐ

Բ. Լծորդութեան, այսինքն՝ իմ վերջաւորած բայերէն ոմանք անիմ կը վերջաւորին։ Ասոնց խոնարհման ձեւը հետեւեալն է.

Սհմ. ներ. Ուսանիմ, ուսանիս, ևն. Կը սորվիմ, ևն.

Անց. անկ. Ուսանէի, ևն. Կը սորվէի.

Անց. կտր. Ուսայ, ուսար, ուսաւ. Ուսաք, ուսայք, ուսան. Սորվեցայ, սորվեցար, ևն.

Ապ. Ուսայց, ուսցիս, ուսցի. Ուսցուք, ուսջիք, ուսցին. Պիտի սորվիմ, ևն.



Հրամ. Ուսիր, մի ուսանիր. Ուսարուք, մի ուսանիք. Սորվէ, մի սորվիր. Սորվեցէք, մի սորվիք.

Ստր. Ուսանիցիմ, ուսանիցիս, ևն. Կը սորվիմ, կամ Սորվիմ.

Աներ. ներ. Ուսանել, Սորվիլ.
» Անց. Ուսեալ, Սորված.
» Ապ. Ուսանելոց, Սորվելու:

---

## ԱՆՈՐՈՇ ՀԱՅՑԱԿԱՆ

1. Առանց զ ի հայցականին Անորոշ հայցական կ'ըսուի։ Անորոշ կերպով մը, այսինքն՝ որը կամ որուն ըլլալն առանց ցուցնելու, ընդհանուր իմաստով առնուած բան մը կամ բաներ՝ Անորոշ կ'ըսուին. զոր օրինակ, երբ կ'ըսեմ՝ Տղան հոս է, կամ Տղաքը հոս են, տղան կամ տղաքը բառերն որոշեալ են. քանզի այս ինչ տղան կամ տղաքը կը ցուցնեն. բայց երբ կ'ըսեմ՝ Ներսը տղաք կան, հոս տղաք բառն անորոշ մտքով առնուած է. քանզի ո՛ր կամ որո՛ւ տղաքն ըլլալը չի ցուցըներ։

2. Երբ անուն մը անորոշ է, աշխարհաբարի մէջ յօդ, այսինքն՝ ը գիրը չառներ. ինչպէս՝ Հաց կը փնտռուի, Ջուր չկայ, Ձիաւորներ տեսայ, ևն։ Գրաբարի մէջ ալ անորոշ մտքով առնուած անունները յօդ, և զ գիրը, չեն առներ. հայցականի մէջ ալ զ գիրը չեն առներ. եւ այսպիսի հայցականներ Անորոշ հայցական կը կոչուին.

Ինծի բաժին տուր. Տուր ինձ բաժին.

| | |
|---|---|
| Աղջիկներ ու մանչեր ծը-նաւ. | Ծնաւ ուստերս եւ դստերս |
| Տղաք ժողվեցին. | Ժողովեցին մանկունս |

ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ.

1. Որո՞ւ (քիմէ՞) հարցման պատասխանը Տրական հոլով կ'ըսուի։

2. Անուններուն տրականն ընդհանրապէս սեռականին հետ նոյն է. զոր օրինակ՝ Բանտ, Սեռ. եւ Տր. բանտի. յք. Բանտք, Սեռ. եւ Տր. բանտից։ Գետ, Սեռ. եւ Տր. գետոյ. յք. Գետք, Սեռ. եւ Տր. գետոց. Հիմն, Սեռ. եւ Տր. հիման. յք. Հիմունք, Սեռ. եւ Տր. հիմանց, եւն. (Տես Սեռականին վրայ Դաս Թ.)։

3. Միայն ի վերջաւորած բազմավանկներուն եզակի Տրականը Սեռականէն տարբեր է. զոր օրինակ՝ Ուղղ. Տեղի, Սեռ. Տեղւոյ, Տր. Տեղւոջ. Ուղղ. Եկեղեցի, Սեռ. Եկեղեցւոյ, Տր. Եկեղեցւոջ, եւն։

4. Իմ, Քո, Մեր, Ձեր, Իւր ստացականներուն եզակի տրականն ում կ'ըլլայ. զոր օրինակ՝ Իմ, Սեռ. իմոյ, Տր. իմում. Քո, Սեռ. քոյ, Տր. քում. Մեր, Սեռ. մերոյ, Տր. մերում, եւն։ Ասոնց յոգնակի տրականը յոգնակի սեռականին հետ նոյն է։ (Տես Դաս Ժ.)։

5. Այս, այդ, այն Ցուցականներուն ալ եզակի Տրականը սեռականէն տարբեր է. զոր օրինակ՝ Այս, Սեռ. այսորիկ, Տր. այսմիկ. Այդ, Սեռ. այդորիկ, Տր. այդմիկ, եւն։ Ասոնց ալ յոգնակի տրականը սեռականին հետ նոյն է։ (Տես Դաս Ժ.)։



6. Ես, դու, նա էական դերանուններուն Տրականներն ալ սեռականներէն տարբեր են. զոր օրինակ՝ Ես, Սեռ. իմ, Տր. ինձ. յք. Մեք, Սեռ. մեր, Տր. մեզ. Դու, Սեռ. քո, Տր. քեզ. յք. Դուք, Սեռ. ձեր, Տր. ձեզ. Նա, Սեռ. նորա, Տր. նմա. յք. Նոքա, Սեռ. եւ Տր. նոցա։

7. Ինքն բառին սեռականն ու տրականը նոյն է. զոր օրինակ՝ Ինքն, Սեռ. եւ Տր. իւր, ինքեան. յք. Ինքեանք, Սեռ. եւ Տր. իւրեանց, ինքեանց։

| | |
|---|---|
| Մարդուն (տր) տուի | Ետու առնն |
| Քու եղբօրդ (տր) ըսի. | Ասացի եղբօր քում |
| Անոր (տր) իր յանցանքները ներեցի. | Թողի նմա զյանցանս իւր |
| Ինծի պարգեւներ տուաւ. | Ետ ինձ պարգեւս |
| Իր գանձերը ցուցուց անոնց (տր) | Եցոյց նոցա զգանձս իւր |
| Գաղտնիքս քեզի յայտնեցի. | Յայտնեցի քեզ զգաղտնիս իմ |

---

## 27. Հրահանգ

### Բ. ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ, ԿԱՄ ԻՄ ՎԵՐՋԱՒՈՐԱԾ ԲԱՅԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԿՐԹՈՒԹԻՒՆ, ՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՆՈՐՈՇ ՀԱՅՑԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

Շատ ստակ շահեցաւ. Երթալ կ'ուզեմ. Մարդիկ կը խօսին. Զօրքատանիները կը պտտին. Մարդը գայթակղեցաւ. Ձեր եղբայրները մեկնեցան. Շատ բան խօսեցան. Ժողովուրդը պիտի գայթակղի. Խօսէ, ինչո՞ւ կը լռես. Աստուծոյ հրեշտակն անոր ե-

րեւցաւ. Քու հայրդ կ'աշխատի եւ շատ բան կը շահի. Քու ծառաներդ յոգնեցան. Ինծի աղէկ երեւցաւ. Եթէ անոնց մայրը մեկնի. Աղբիւրը ցամքեցաւ. Իր որդին ծնաւ. Մեզի ողորմեցէք. Աստուած անոր ողորմեցաւ. Երկրիս հիմերը շարժեցան. Արեգակը պիտի խաւարի. Ճրագը մարեցաւ. Այս ամէնը խորհեցայ. Ձեր վարժապետներուն հնազանդեցէք. Գրագրութեան արուեստը սորվեցաւ. Լեզուներ երեւցան. Իր հանդերձները հագաւ. Քու հայրդ մեռաւ. Տղաքը սկսան պոռալ. Բէլ ինկաւ. Մեր լապտերները կը մարին.

## ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Աշխարհաբարին բան (չէյ) բառը՝ գրաբար շատ անգամ ինչ կը թարգմանուի ։ Ինչ բառին սեռականը կ'ըլլայ իրիք, տրականը՝ իմիք.

| | |
|---|---|
| Աղէկ բան մը, | Բարի ինչ |
| Մեծ բանի մը, | Մեծի իրիք |
| Լաւագոյն բանի մը (տր.), | Ազնուագունի իմիք |
| Պզտիկ բան մը, | Փոքր ինչ |
| Պզտիկ բանի մը, | Փոքու իրիք |
| Քիչ բան մը, | Խուն կամ սակաւ ինչ |

2. Եթէ բառին հետ բայը Ապառնի կամ Ստորադասական կը գրուի, երբ խօսքը տարակուսական կամ անստոյգ է. ուստի՝ Եթէ ունիս, Եթէ տեսնես, Եթէ մեկնի, խօսքերը գրաբարի կը դառնան. Եթէ ունիցիս, Եթէ տեսանիցես, Եթէ մեկնեսցի, եւ այլն ։

3. Երբ ստորադասին մէջ ըլլալու բանի մը վրայ



վճիռ կամ սպառնալիք կ'ըլլայ, բայն Ապառնի կը գրուի. ուստի՝ Աստղերը պիտի թափին, Ամբարիշտները պիտի կորսուին, Արդարները երկիրը պիտի ժառանգեն, խօսքերը գրաբարի կը դառնան այսպէս. Աստեղք թօթափեսցին, Ամբարիշտք սատակեսցին, Արդարք ժառանգեսցեն զերկիր ։

| | |
|---|---|
| Շատ, բազում | Մարիլ, շիջանիլ |
| Ստակ, արծաթ | Այս ամէնը, այս ամենայն |
| Ուզել, կամիլ | Հնազանդիլ, հնազանդիլ |
| Պտտիլ, շրջիլ | կամ հնազանդ լինիլ |
| Շատ բան, բազում ինչ | Գրագրութիւն, գրչութիւն |
| Ինչո՞ւ, ընդէր | Սորվիլ, ուսանիլ |
| Յոգնիլ, վաստակիլ | Հագնիլ, ագանիլ |
| Աղէկ (մկ.), բարւոք | Սկսիլ, սկսանիլ |
| Երեւիլ, թուիլ | Պոռալ, աղաղակել |
| Ցամքիլ, ցամաքիլ | Իյնալ, անկանիլ |

Այս բառերուն միտ դնելով, եւ վերի կանոններուն համեմատ՝ աշակերտք նախընթաց Հրահանգը գրաբարի դարձունեն.

| | |
|---|---|
| Շատ ստակ շահեցաւ. | Շահեցաւ արծաթ բազում |
| Երթալ կ'ուզեմ. | Կամիմ երթալ |
| Մարդիկ կը խօսին. | Մարդիկ խօսին |

---

## ԼՈՒԾՈՒՄ

Շահեցաւ արծաթ բազում. Շահեցաւ բայ ներգ. կոր. եզ. Գ. դէմք. Բ. Լծ. — Ո՞վ է շահողը. — Նա, նա էակ. դեր. Գ. դէմք եզ. ուղղ. տէր բայի

Շահեցաւ ին, զօրութեամբ կ'իմացուի. — Նա շահեցաւ ի՞նչ բան. — Արծաթ, ստակ. արծաթ՝ գոյ. եզ. անորոշ հյց. սեռ. խնդիր շահեցաւ ին. բազում՝ ած. արծաթ ին։

# ԴԱՍ ԺԶ.

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Նախադրութիւն կը կոչուին այն բառերը, որ գործողութեան մը պարագաները ցուցնելու կը ծառայեն։

2. Գործողութեան մը գլխաւոր պարագաներն են Տեղը եւ ժամանակը։

3. Տեղւոյ պարագան ու՞ր հարցման պատասխան է. ժամանակի պարագան ե՞րբ հարցման։ Զոր օրինակ՝ Յիսուս ծնաւ. — Ո՞ւր — Երուսաղէմ. — Ե՞րբ — Օգոստոս կայսեր օրով։ Երուսաղէմ՝ ծնանելուն տեղը, Օգոստոս կայսեր օրովը խօսքն ալ՝ ժամանակը կը ցուցնէ։

4. Հայերէն գրաբարի մէջ այս պարագաները ցուցնելու համար ի նախդիրը կը գործածուի։

5. Այս ի նախդիրը տեղը կամ ժամանակը ցուցնող բառէն առաջ կը դրուի, այն բառն ալ եթէ եզակի է, տրական կը դրուի. եթէ յոքնակի է՝ հայցական առանց զ ի։ Զոր օրինակ՝ Ո՞ւր — Տունը կամ քաղաքը. գրաբար կ'ըլլայ 'ի տան, 'ի քաղաքի։ Ո՞ւր, — Տուները, քաղաքները. գրաբար՝ 'ի տունս, 'ի քաղաքս։

Նոյնպէս է ժամանակին համար. Ե՞րբ — Նեղութեան ատեն, Տօնի ատեն. գրաբար՝ 'ի նեղութեան, 'ի տօնի։ Յք. Ե՞րբ — Նեղութիւններու ատեն, Տօներու ատեն. գրաբ. 'ի նեղութիւնս, 'ի տօնս։



6. Եթէ բայը ոչ թէ դադարման մէջ, այլ շարժմամբ, կամ տեղէ տեղ փոխադրուելով ըլլալու գործողութիւն մը կը ցուցնէ, ինչպէս՝ Երթալ, Գալ Մտնել եւն, տեղ ցուցնող բառը՝ եզակին մէջ ալ ի նախդիրէն ետքը հայցական կը դրուի. զոր օրինակ՝ Գնաց — Ո՞ւր — Իր տունը կամ քաղաքը. գրաբար կ'ըսուի՝ Գնաց 'ի տուն իւր կամ 'ի քաղաք իւր, ոչ թէ՝ Գնաց 'ի տան իւրում, ի քաղաքի իւրում։

7. Նոյնպէս տեղւոյ պարագան ցուցնող յատուկ անունները ի նախադրութեան հետ միշտ հայցական կը դրուին, բայց թէ շարժում ցուցնէ, եւ թէ դադարում. զոր օրինակ՝ Հռոմ կը բնակի, Հռոմ գնաց, խօսքերուն մէջ՝ որոնց առաջինը դադարում կը ցուցնէ, երկրորդը շարժում, Հռոմ բառը ի նախդրին հետ միշտ հայցական կը դրուի գրաբարի մէջ, այսպէս՝ Բնակի 'ի Հռոմ. Գնաց 'ի Հռոմ, ուր եթէ փոխանակ Հռոմ բառին հասարակ անուն մը ըլլար տեղ ցուցնող բառը, զոր օրինակ եթէ քաղաք բառն ըլլար, Քաղաքը կը բնակի, Քաղաքը գնաց, գրաբար պիտի ըսէինք. Բնակի 'ի քաղաքի (դադարում). Գնաց 'ի քաղաք (շարժում)։

8. Ձայնաւորով սկսող անուններու առջեւ ի նախդրի տեղ յ կը դրուի։ Ըստ այսմ, փոխանակ ըսելու 'ի ատենի, 'ի Երուսաղէմ, 'ի երկրի, 'ի երկինս, կ'ըսուի՝ յատենի, յԵրուսաղէմ, յերկրի, յերկինս։

9. Ի կամ յ նախդիրն առնող անունը եթէ անձի այսինքն՝ մարդու կամ ուրիշ բանական էակի մը վե-

րաբերեալ բառ է, 'ի կամ յ նախդրին տեղ առ նախդիրը կը դրուի. զոր օրինակ՝ Հօրը կամ թագաւորին գնաց, գրաբար փոխանակ ի նախդիրով ըսելու՝ Գնաց 'ի հայր իւր կամ 'ի թագաւորն. կ'ըսուի. Գնաց առ հայր իւր կամ առ թագաւորն ։

Դադարում, եզ.

| | |
|---|---|
| Իր խուցին մէջ կը քնանայ. | Ննջէ 'ի սենեկի իւրում |
| Բազմոցի վրայ կը նստէր. | Նստէր 'ի բազմոցի |
| Տունիս մէջ գոցուած էի. | Էի փակեալ 'ի տան իմում |

Շարժում, եզ.

| | |
|---|---|
| Իր խուցը մտաւ. | Եմուտ 'ի սենեակ իւր |
| Զանի տունս հրաւիրեցի. | Հրաւիրեցի զնա 'ի տուն իմ |
| Վերնատունը ելանք. | Ելաք 'ի վերնատունն |

---

## 28. Հրահանգ

### ՏԵՂԻՈՅ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱՆ 'Ի ՆԱԽԴՐԻՒ

Անոնք քաղաքը կը բնակին, մենք գեղը. Քու եղբայրներդ լեռները կը պտտին, իմիններս՝ դաշտերը. Զանի դատաւորին բերին. Յունաստան երթալ կը խորհի. Մեզի գալ ուզեց. Եղբայրդ պարտէզը մտաւ. Բարեկամներս ինծի ղրկեց. Զանի բանտ դրաւ. Սպասաւորները սրահը կը նստէին. Այդ քաղաքը նստեցէք. Երբ խօսքը լմնցուց, լեռը ելաւ. Զանոնք բարձր լեռ մը հանեց. Քու որդիքդ պատերազմի մէջ ինկան. Քու սենեակդ մտիր. Զանի եկեղեցին տեսայ. Զանոնք իր այգին ղրկեց. Հայաստան բնակեցաւ. Զանոնք քեզի բերինք. Անոր նայե-



ցաւ. Այս խօսքերը ձեր գիրքերուն մէջ գրեցէք. Անոր մեծ որդին ագարակն էր. Անոր գլուխը կտրեցին ու թագաւորին բերին. Շատերը Երուսաղէմ ելան. Իր անկողինը մտաւ. Իր մառանին մէջ շատ գինի ունէր. Անոր ծննդեան ատենը շատերը պիտի տրտմին. Անոր մահուան ատենը մեծ սուգ եղաւ. Իսահակին աչուըները կուրցան անոր ծերութեան ատենը. Տրտմութեան ատենը զանի ոչ մէկը կը մխիթարէր. Սողոմոն իր հօրը թագաւորութեան աթոռն ելաւ. Մեզ իրենց տուները հրաւիրեցին. Հօս ի՞նչպէս մտար, պատմէ ինծի. Բազմութիւնը եկեղեցին կը դիմէր. Զանի տաճարը տեսան. Անոր ծննդեան ատենը շատերը պիտի ուրախանան. Բոլոր քաղաքն անոր մահուան ատենը սուգ ըրաւ. Թռչուններն օդին մէջ կը թռին. Հարուստ մէկու մը տունը ժողըվուած էինք. Օտար մէկու մը չի տար. Եթէ մէկը հակառակի. Մէկը ղրկեցէք հոն. Ուրիշ մէկու մը տունը մի մտներ. Ի՞նչպիսի մէկն է այդ. Դուն մե՞ծ մէկն ես. Եթէ մէկը ինծի գալ կ'ուզէ.

### ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Հայիմ, Նայիմ բայերն 'ի կամ առ նախդրիւ հայցական կ'ուզեն. զոր օրինակ՝ Անոր նայեցաւ, Հայեցաւ 'ի նա. Ինծի նայէ. Նայեաց առ իս ։

2. Ոչ մէկը, գրաբար կը թարգմանուի Ոչ ոք ։ Ոք կը նշանակէ մէկը, սեռականը կ'ըլլայ՝ ուրուք, տրականը՝ ումեք ։

| | |
|---|---|
| Բարեպաշտ մէկը, | Աստուածապաշտ ոք |
| Ազնուական մէկուն որդին | Որդի ազնուականի ուրուք |

| | |
|---|---|
| Ոչ մէկուն յայտնեց , | Ոչ ումէք յայտնեաց |
| Մէկուն տանը մէջ , | 'Ի տան ուրուք |

Այս կանոններուն եւ հետեւեալ բառերուն միտ դնելով՝ աշակերտք վերի հրահանգը գրաբարի դարձունեն .

| | |
|---|---|
| Գեղ , գիւղ | Անկողին , մահիճք |
| Իմիններս , իմքն | Մահ , մահ , սեռ . մահու , տր . մահուան |
| Բերեմ , ածեմ | Աչուըներ , աչք |
| Յունաստան , Յոյնք | Կոյրնամ , կատիմ |
| Ուզեմ , կամիմ | Ոչ մէկը , ոչ ոք |
| Դնեմ , արկանեմ | Հոս , այսր (շարժում) |
| Երբ , իբրեւ | Ի՞նչպէս , զիա՞րդ |
| Լմնցնեմ , կատարեմ | Ուրախանամ , խնդամ |
| Լեռ , լեառն | Սուգ ընեմ , սուգ առնում |
| Իյնամ , անկանիմ | Թռիմ , ճախրեմ |
| Հայաստան , Հայք | Ինչպիսի , որպիսի |
| Նայիմ , հայիմ | |

---

## ԼՈՒԾՈՒՄ

1. Ամէն նախադասութեան մէջ գլխաւոր էական բայ մը, տէր բայի մը եւ ստորոգելի մը գտնուելու է . (Տես Դաս Գ.) ։

2. Երբ բայը ներգործական է, նախադասութեան մէջ սեռի խնդիր մ՚ալ կը գտնուի (Տես Դաս ԺԱ. Լուծման մէջ) ։

3. Շատ անգամ նախադասութեան մէջ տրական հոլով բառ մը, եւ կամ ի եւ ուրիշ նախադրութեամբ խնդիր մ՚ալ կը գտնուի . այս տեսակ խըն-



դիրները Բնութեան խնդիր կը կոչուին . զոր օրինակ՝ Հրեշտակն անոր երեւցաւ . Երեւեցաւ նմա հրեշտակն . այս նախադասութեան մէջ նմա տրական հոլով Բնութեան խնդիր է Երեւեցաւ ին ։ Տունը կը նստէր . Նստէր 'ի տան . այս նախադասութեան մէջ ալ 'ի տան՝ ի նախադրութեամբ նոյնպէս բնութեան խնդիր է Նստէր ին ։

4. Երբեմն նախադասութեան մը մէջ՝ տէր բային կամ բայը, կամ ստորոգելին եւ կամ խնդիր մը ըսելեայն կ՚իմացուի, այս տեսակ նախադասութիւն մը Զեղջեալ կը կոչուի ։ Զոր օրինակ՝ Եղբայրս հարուստ է, քուկինդ՝ աղքատ . Եղբայր իմ մեծատուն է . քոյդ՝ աղքատ . աս խօսքին մէջ՝ քոյդ՝ աղքատ, Զեղջեալ նախադասութիւն է . քանզի բայը և ըսելեայն կամ զօրութեամբ կ՚իմացուի ։

Զեղջեալ նախադասութիւն մը լուծելու համար, պէտք է նախադասութիւնը լրացնել, այսինքն՝ զեղջեալ մասը դնել, եւ ապա սկսիլ ըստ կանոնի լուծելու ։

Նոքա բնակին 'ի քաղաքի . Բնակին, բնակիմ բային սահմ . ներկ . յք . Գ . դէմքը . — Ո՞վ են բնակողները . — Նոքա . նոքա, ցուց . դեր . յք . ուղղ . տէր բային բնակին ին . — Նոքա բնակին ո՞ւր . — 'ի քաղաքի (քաղաքը) . 'ի քաղաքի, ի նախդիրով տրական խնդիր բնակին ին . տեղւոյ պարագան կը ցուցնէ ։

Մեք՝ 'ի շինի . Այս նախադասութիւնը զեղջեալ է, բայը զօրութեամբ կ՚իմացուի . ամբողջը պիտի ըլլայ . Մեք բնակիմք 'ի շինի ։ Աս ալ վերի նախադասութեան պէս կը լուծուի ։

# ԴԱՍ ԺԷ.

## Գ. ԼԾ. ԱՄ ԵՒ ԱՆԱՄ ՎԵՐՋԱՒՈՐԱԾ ԲԱՅԵՐ

---

### ՄԱԿԲԱՑ

*Գ. Լծորդութեան բայերն Ամ եւ Անամ կը վերջաւորին.*

Սհմ. ներ. Աղամ, աղաս, աղայ. Աղամք, աղայք, աղան. Կ'աղամ, ևն.

Անց. անկ. Աղայի, աղայիր, աղայր. Աղայաք, աղայիք, աղային. Կ'աղայի, ևն.

Անց. կտր. Աղացի, աղացեր, աղաց. Աղացաք, աղացէք, աղացին. Աղացի, աղացիր, ևն.

Ապ. Աղացից, աղասցես, աղասցէ. Աղասցուք, աղասջիք, աղասցեն. Պիտի աղամ, կամ Աղամ, ևն.

Ստոր. Աղայցեմ, աղայցես, աղայցէ. Աղայցեմք, աղայցէք, աղայցեն. Կ'աղամ կամ Աղամ, ևն.

Հրամ. Աղա, մի աղար. Աղացէք, մի աղայք.

Ան. ներկ. Աղալ, Աղալ.

» Անց. Աղացեալ, Աղացած.

» Ապ. Աղալոց, Աղալու:

---

Սհմ. ներ. Գողանամ, գողանաս, ևն. Կը գողնամ, և այլն.



Անկ. անց. Գողանայի, գողանայիր, ևն. Կը գողնայի, ևն.

Կատ. անց. Գողացայ, գողացար, գողացաւ. Գողացաք, գողացայք, գողացան. Գողցայ, գողցար, ևն.

Ապ. Գողացայց, գողասցիս, գողասցի. Գողասցուք, գողասջիք, գողասցին. Պիտի գողնամ, կամ Գողնամ, ևն.

Ստոր. Գողանայցեմ, գողանայցես, ևն. Գողնամ, ևն.

Հրամ. Գողացիր, մի գողանար. Գողացարուք, մի գողանայք. Գողցիր, մի գողնար, ևն.

Ան. ներ. Գողանալ, Գողնալ.

» Անց. Գողացեալ, Գողցած.

» Ապ. Գողանալոց, Գողնալու.

*Գ. Լծորդութեան բաղաձայնով սկսող բայերէն ոմանց, կատարեալին եզ. Գ. դէմքը՝ Բ. Լծորդութեան անեմ վերջաւորող բայերուն պէս, ե գիրը կ'առնէ. ինչպէս՝ Բանամ, եբաց. Լամ, ելաց. Կամ, եկաց. Կեամ, եկեաց. Թանամ, եթաց:*

---

### ՄԱԿԲԱՑ

*1. Բակբայ կ'ըսուին տեսակ մը բառեր որոնք, Նախադրութեան խնդիրներու պէս, տեղւոյ եւ ժամանակի պարագան կը ցուցնեն. այսինքն՝ Ուր եւ Երբ հարցմանց պատասխան են. Զոր օրինակ՝*

Աստ, հոս. անդ, հոն. 'ի ներքոյ, ներքը. արտաքոյ,

դուրը· շուրջ, բոլորտիքը· 'ի մէջ, մէջը· առաջի, առջեւը, եւ այլք. Ուր հարցման պատասխան են, եւ տեղւոյ պարագան կը ցուցնեն։

Այժմ, արդ, հիմա· յայնժամ, ան ատենը· այսօր ասօր· վաղիւ, վաղը· յետոյ, ապա, ետքը· նախ, առաջ· երբեմն, ատեն ատեն, ատենօք· միշտ, հանապազ, ամէն ատեն, եւ այլք, Երբ հարցման պատասխան են, եւ ժամանակի պարագան կը ցուցնեն։

2. Կան մակբայներ, որոնք գործողութեան մը որպիսութիւնը, ինչպէս ըլլալը կը ցուցնեն· զոր օրինակ·

Բարւոք, աղէկ· չարաչար, գէշ· դառնապէս, դառն կերպով· փութով, շուտով· մեղմով, կամաց· հաւաստեաւ, ճշդիւ, ստուգիւ, եւ այլք։ Ասոնք ինչպէս հարցման պատասխան են։

3. Քանակութեան կամ չափ ցուցնող մակբայներ ալ կան, ինչպէս՝

Յոյժ, շատ· կարի, չափազանց· ստէպ, յաճախ, շատ անգամ· դուն ուրեք, սակաւ, քիչ անգամ· այսչափ, այնչափ, եւ կամ հարցմամբ՝ որչափ, քանի։ Ասոնք որչափի հարցման պատասխան են։

4. Քանի մը մակբայներ ալ պատճառը կամ կերպը հարցնելու կը գործածուին. ինչպէս՝ ընդէ՞ր, զի՞, ինչո՞ւ համար· զիա՞րդ, որպէս, ի՞նչպէս։

5. Աստ, անդ, Այսր անդր (հոս, հոն) մակբայները, այս, այդ, այն դերանուններուն տրականին եւ հայցականին տեղ կը գործածուին, սա տեսակ խօսքերու մէջ. 'Ի քաղաքի աստ· 'ի քաղաքի անդ· այս քաղքին մէջ, այն քաղքին մէջ. փոխանակ ըսելու՝ 'ի քաղաքիս յայսմիկ, կամ 'ի քաղաքիս· 'ի քա-



ղաքին յայնմիկ, կամ 'ի քաղաքին. 'Ի քաղաք այսր, 'ի քաղաք անդր· այս քաղաքը, այն քաղաքը· փոխանակ ըսելու՝ 'ի քաղաքս յայս, 'ի քաղաքն յայն։ Առջի երկու ձեւը՝ Աստ, Անդ, տրականով կը գործածուի, երբ բայը դադարում կը ցուցնէ· վերջին երկու ձեւն ալ՝ Այսր, Անդր, հայցականով կը գործածուի, երբ բայը շարժում կը ցուցնէ. ուստի կ'ըսուի· Բնակի 'ի քաղաքի անդ· այն քաղաքը կը բնակի (դադարում)։ Գնաց 'ի քաղաք անդր· այն քաղաքը գնաց (շարժում)։

| | |
|---|---|
| Այն դաշտը գնա· | Երթ 'ի դաշտ անդր |
| Այս տունը եկէք· | Եկայք 'ի տուն այսր |
| Այն կողմերը ղրկեցինք· | Յղեցաք 'ի կողմանս անդր |
| Այս տանը մէջ է· | 'Ի տան աստ է |
| Այն երկրին մէջ· | Յերկրի անդ |
| Այս աշխարհի մէջ· | Յաշխարհի աստ |
| Այն լեռներուն մէջ· | 'Ի լերինս անդ |

---

## 29. Հրահանգ

Տղաքը հրապարակին մէջ կը խաղային։ Եղբայրներս իրենց վարժապետներուն միշտ մտիկ կ'ընեն, շատ անգամ կը սորվին, եւ քիչ անգամ կը խաղան։ Այս տղան ինչո՞ւ համար կու լայ։ Նոյ տապանին պատուհանը բացաւ։ Անոնց քով կեցանք։ Լաթերս լուացի։ Կը փութար Երուսաղէմ երթալ։ Ինչո՞ւ կը հեգգաս· աճապարէ, դուրս ել։ Զինուորները մէկդի կեցան։ Երբ զաս տեսան, շատ ուրախացան։ Անոր ոտուըները կը թրջէր։ Անոնք պիտի լան, դուք պի-

տի ուրախանաք։ Երբ խելքը գլուխը եկաւ, ան ա-տեն զգաց։ Հաց ուտելու մոռցան։ Կը խոստանաք ու չէք կատարեր։ Այս ամէնը իմացա՞ք։ Գերեզմանը փակեց։ Իր պատմուճանը հանեց։ Մարդը հիւանդա-ցաւ։ Ձեր հանդերձները հանեցէք, ու քուրձեր հա-գէք։ Իր անկողնին մէջ զօրացաւ։ Սգացէք եւ ող-բացէք։ Աշակերտները գողցան զանի։ Ամպը վեր-ցաւ։ Ինչո՞ւ կը զարմանաք։ Անոր դողաց։ Ինծի մի դպչիր։ Իրենց տեղերը դարձան։ Ագարակ ստացաւ։ Եթէ մէկը վշտանայ։ Ձեր բեռերը վերցուցէք։ Ո՞վ բացաւ քու աչքերդ։ Ձեռուըները լուաց։

Աշակերտը գրով խոնարհեն Գ. Լծորդութեան վրայ հետեւեալ բայերը։

Բառնամ, կը վերցնեմ
Թանամ, կը թրջեմ
Կարդամ, կը կանչեմ
Խաղամ, կը խաղամ կամ կը պարեմ
Ստանամ, կը ստանամ
Իմանամ, կ'իմանամ
Մերկանամ, կը հանուեցը-նեմ
Գոհանամ, շնորհակալ կըլ-լամ

1. ԴԻՏ. Ընդհանրապէս նամ վերջաւորող բայե-րուն Ն գիրը խոնարհման մէջ, կատարեալ, ապառնի հրամ. եւ անցեալ ժամանակներուն, ց ի կը փոխուի. Թանամ, Թացի, Թացից, Թաց, Թացեալ. այսպէս է նաեւ Բանամ. քանզի այս բայերուն արմատն է Թաց, Բաց։ Ջանամ սակէ դուրս է, եւ կ'ըլլայ, ջանացայ. քանզի արմատը Ջան է։

Բառնամ եւ Դառնամ բայերուն յիշեալ ժամանակ-ները, այսինքն՝ կատարեալն, ապառնին, եւն, կ'ըլ-լան. Բարձի, բարձից, բարձ, բարձեալ. Դարձայ,



դարձայց, դարձ, դարձեալ. քանզի ասոնց ալ ար-մատներն են՝ Բարձ, Դարձ։

2. ԴԻՏ. Քանի մը բայեր, ինչպէս՝ Հոգամ, Յուսամ, Ողբամ, Որսամ, Ցնծամ, Ջանամ, Փութամ, Դառնամ, ոչ թէ Աղամ ին այլ Գողանամ ին պէս կը խոնարհին, կատ. ու ապառնի, ացայ եւ ացայց վերջաւորելով, ոչ ացի եւ ացից։ Աշակերտը այս բայերը խոնարհեն։

3. ԴԻՏ. Լուանամ բայն, ընդհակառակն, կրնայ Աղամ ին պէս ալ խոնարհելով, ըսուիլ՝ Լուացի, լուացից։

4. ԴԻՏ. Արբենամ, Յամենամ, Մերձենամ, բա-յերը որ ենամ կը վերջաւորին, Ն գիրը բոլոր խո-նարհման մէջ կը պահեն. Արբենամ, արբեցայ, ար-բեցայց, արբեցիր, արբեցեալ։

Աշակերտը հետեւեալ բառերուն նայելով՝ վերի 29 երորդ Հրահանգը գրաբարի դարձունեն։

Մտիկ ընել, անսալ
Շատ անգամ, յաճախ
Քիչ անգամ, դուն ուրեք
Ինչո՞ւ, ինչո՞ւ համար, ընդէր, զի
Կենամ, կամ, կացի, եւն.
Դուրս, արտաքս (մկ)
Մէկդի, ի բաց (մկ)
Թրջեմ, Թանամ
Խելքը գլուխը գալ, զգաստանամ, սթափիմ
Անտեն, յայնժամ
Առնեմ, առնում
Մոռնամ, մոռանամ
Վազեմ, ընթանամ
Հանեմ (հանդերձը), մերկանամ
Սգամ, սուգ առնում
Ողբամ, ողբամ, ողբացայ
Գողնամ, գողանամ
Վերնամ, վերանամ
Դպչիմ, մերձենամ
Մէկը, ոք
Վերցնեմ, բառնամ, կտ. բարձի

## ԼՈՒԾՈՒՄ

Խաղային մանկունքն ի հրապարակի անդ: Խաղային, խաղամ բայէն, անկ. յք. գ. դէմք: Խաղային՝ մը. — Մանկունքն, տղաքը: Մանկունքն խաղ. յք. գր. տէր բայի խաղային ին: Մանկունքն խաղային՝ տըր. — ի հրապարակի անդ, հրապարակին մէջ. ի հրապարակի անդ՝ ի նախադրութեամբ խնդիր խաղային ին. Ուր հարցման պատասխան է, եւ տեղւոյն պարագան կը ցուցնէ: Հրապարակ բառը ի նախադրութեան քով տրական հոլով դրուած է, քանզի խաղային բային գործողութիւնը դէպ ի տեղ մը շարժում չի ցուցներ: Անդ մակբայ է, եւ այն դերանուան կամ ն յօդին տեղ դրուած է. փոխանակ ըսելու՝ Խաղային ի հրապարակին յայնմիկ կամ ի հրապարակին:

# ԴԱՍ ԺԲ.

## Դ. ԼԾ. ՈՒՄ ՎԵՐՋԱՒՈՐԱԾ ԲԱՅԵՐ

Ում վերջաւորած բայերուն խոնարհման ձեւը Անեմ վերջաւորածներուն հետ մեծաւ մասամբ նոյն է:

Սհմ. ներ. Թողում, թողուս, թողու. Թողումք, թողուք, թողուն. Կը թողում, ևն.

Անկ. անց. Թողուի, թողուիր, թողոյր. Թողուաք, թողուիք, թողուին. Կը թողուի, ևն.



Կատ. անց. Թողի, թողեր, եթող կամ թող. Թողաք, թողէք, թողին. Թողուցի, թողուցիր, և այլն:

Ապ. Թողից, թողցես, թողցէ. Թողցուք, թողջիք, թողցեն. Պիտի թողում, կամ թողում, ևն.

Ստոր. Թողուցում, թողուցուս, թողուցու. Թողուցումք, թողուցուք, թողուցուն. Կը թողում, կամ թողում, ևն.

Հրամ. Թող, մի թողուր, Թողէք, մի թողուք.

Ան. ներկ. Թողուլ, Թողուլ.

» Անց. Թողեալ, Թողած.

» Ապ. Թողլոց, Թողելու:

ԴԻՏ. 1. Ում վերջաւորած բայերէն ոմանց կատարեալը, ապառնին եւ հրամայականը կ'ըլլան այ, այց, իր, արուք.

| | Կատ. | Ապ. | Հրամ. եզ. | յգ. |
|---|---|---|---|---|
| Զբօսնում, | զբօսայ, | զբօսայց, | զբօսիր, | զբօսարուք. |
| Զգենում, | զգեցայ, | զգեցայց, | զգեցիր, | զգեցարուք. |
| Յենում, | յեցայ, | յեցայց, | յեցիր, | յեցարուք. |
| Հեղձնում, | հեղձայ, | հեղձայց, | հեղձիր, | հեղձարուք. |
| Ընթեռնում, | ընթերցայ, | ընթերցայց, | ընթերցիր, | ընթերցարուք. |

ԴԻՏ. 2. Սահմանականին մէջ նում վերջաւորած բայերէն մեծ մասին ն գիրը, բային արմատին նայելով, ցի կփոխուի, կամ բոլորովին կը թողուի կատարեալ, ապառնի, հրամ. եւ անցեալ ժամանակներուն մէջ

| | Կտ. | Աղ. | Հր. | Անց. |
|---|---|---|---|---|
| Ընկենում, | ընկեցի, | ընկեցից, | ընկեա, | ընկեցեալ. |
| Լնում, | լցի, | լցից, | լից, | լցեալ. |
| Խնում, | խցի, | խցից, | խից, | խցեալ. |
| Զենում, | զենի, | զենից, | զեն, | զենեալ. |
| Առնում, | առի, | առից, | առ, | առեալ: |

Տես եւ վերը 1. Դիտողութեան տակի բայերը: Աս բայերուն արմատներն են՝ Ընկէց, լից, խից, զեն, առ, զբօս, զգեաց, յեց, հեղձ, ընթերց:

Աշակերտք գրով խոնարհեն՝

| | |
|---|---|
| Արգելում, կ'արգիլեմ | Զգենում, կը հագնիմ |
| Հեղում, կը թափեմ | Զբօսնում, կը զբօսնում |
| Յաւելում, կ'աւելցնեմ | Ընթեռնում, կը կարդամ |
| Առնում, կ'առնեմ | Լնում, կը լեցնեմ |
| Ընկենում, կը նետեմ | Հեղձնում, կը խեղդուիմ |

---

## 30. Հրահանգ աշխարհաբար.

Կ'ուզէր երթալ, բայց զանի արգելեցինք. Թողէք այդ մարդը. Անմեղ արիւն մի թափեր. Զանի թողուց եւ գնաց. Ոչխարներ եւ արջառներ կը մորթեմ. Նաւին կարասիները ծովը նետեցին. Այդ գաւաթները լեցուցէք. Գիրքը կարդացի՞ր. Դպիրները հրովարտակը կարդացին. Անոնց տեղը լեցուցին. Զիս մի թողուր. Իր հանդերձները հագաւ. Իր գաւազանին կը կրթնի (յենում). Տղաքը պարտէզին մէջ կը զբօսնուին. Ջուրին սափորն առ. Ստակն առի. Առիւծներուն բերանը գոցեցին. Անոր ցաւերը մի աւելցներ. Ջուրերուն մէջ խեղդուեցան. Ձեր հին լաթերը հանեցէք ու նորեր հագէք. Ժողո-



վուրդը դաշտին մէջ կը զբօսնուր. Անոր լուծը նետենք. Հայրդ սնուցուած (պէպլի) եզը մորթեց. Այդ թակոյկները (քիւփ) ջրով լեցուցէք. Զանոնք անկէ վար նետենք. Զիս ինչու՞ թողուցիր. Քեզ որբ պիտի թողում. Անոր արիւնը գետինը թափես. Իմինս առ ու քուկինդ ինծի տուր. Գաւաթդ մօտեցուր որ լեցունեմ. Ինկածներուն տեղը լեցուցէք. Ամէն ծակ գոցեցինք. Ո՞րը առնենք եւ ո՞րը թողունք. Սրահին վարագոյրը երկուք ըրաւ (ճեղքեց). Ինչ՞ բանով զբօսնունք. Եղբօրս արիւնը ի՞նչպէս թափեմ. Ուրկէ՞ առնեմ ստակը.

Ինչու՞, ընդէ՞ր, զի՞.

| | |
|---|---|
| Ինչու՞ կը լռես. | Ընդէ՞ր լռես |
| Ինչու՞ կը դանդաղիս. | Զի՞ հեղգաս |
| Ինչու՞ տրտում ես. | Ընդէ՞ր տրտում ես |
| Զիս ինչու՞ կը խռովես. | Ընդէ՞ր խռովես զիս |

Ի՞նչպէս, զիա՞րդ.

| | |
|---|---|
| Ձեզի ի՞նչպէս կ'երեւայ. | Զիա՞րդ թուի ձեզ |
| Հոս ի՞նչպէս մտար. | Զիա՞րդ մտեր այսր |
| Ի՞նչպէս կը տեսնէ. | Զիա՞րդ տեսանէ |

Ուրկէ՞, ուստի՞.

| | |
|---|---|
| Ուրկէ՞ կու գաս. | Ուստի՞ գաս |
| Այդ ստակն ուրկէ՞ առիր. | Ուստի՞ առեր զարծաթդ |
| Ուրկէ՞ կ'ելլեն կռիւները. | Ուստի՞ ծագին կռիւք |
| Ագարակիդ մէջ աղէկ սերմ ցանեցիր, որոմն ուրկէ՞ է. | Սերմն բարի սերմանեցեր յագարակի քում, ուստի՞ իցէ որոմնն |
| Անոր ուսին վրայ կռթընած էր. | Յեցեալ էր յուս նորա |
| Ինծի մի կռթնիր. | Մի յենուր յիս |

Աշակերտք հետեւեալ բառերուն նայելով՝ վերի հրահանգը գրաբարի դարձունեն.

| | |
|---|---|
| Ուզեմ, կամիմ | Կռթնիմ, յենում |
| Բայց, այլ | Գոցեմ (ծակ մը եւն.) խնում |
| Արգիլեմ, արգելում | Աւելցնեմ, յաւելում |
| Անմեղ, անպարտ | Լաթ, հանդերձ |
| Թափեմ, հեղում | Անուցուած եզ, եզն պարարակ |
| Մորթեմ, զենում | Ասկէ, աստի |
| Նետեմ, ընկենում | Վար, ի վայր |
| Գաւաթ, բաժակ | Գետին, երկիր |
| Լեցունեմ, լնում | Մօտեցնեմ, մատուցանեմ |
| Գիրք, մատեան | Երկու ընել, կրկնում |
| Կարդամ, ընթեռնում | Ինչ՞ բանով, իւ իւիք |
| Հագնիմ, զգենում | |
| Գաւազան, ցուպ | |

## ԼՈՒԾՈՒՄ

Կամէր երթալ, այլ արգելաք զնա : Կամէր, կամիմ բայէն, անկ. եզ. Գ. դէմք։ — Կամէր, ո՞վ — Նա. դեր. տէր բայի զօրութեամբ կ'իմացուի։ Նա կամէր զինչ. — Երթալ. սեռի խնդ. կամէր ին։

Արգելաք, արգելում բայէն. կատ. յք. Ա. դէմք։ — Ո՞վ է արգիլողը. — Մեք. դեր. տէր բայի, զօրութեամբ կ'իմացուի. — Մենք արգելանք, զո՞վ. — Զնա. դեր. եզ. Գ. դէմք, հյց. սեռի խնդ. արգելաք ին։ Այլ, շաղկապ, երկու նախադասութիւնը կը կապէ իրարու հետ։



# ԴԱՍ ԺԹ.

## Ի, ԱՌ, ԸՆԴ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՔԱՆԻ ՄԸ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

ԿԱՆ. 1. Ի նախադրութիւնը տեղւոյ եւ ժամանակի պարագայ կը ցուցնէ։ (Տես Դաս ԺԶ. 4-8)

ԿԱՆ. 2. Ի նախադրութիւնը գործիականի նշանակութիւն ալ ունի հայցականով. ի ձայն մեծ, մեծ ձայնով։

ԿԱՆ. 3. Բայերուն աներեւոյթին կամ անորոշ դերբային հետ ի, առ ի, կամ առ նախադրութիւնը կը գործածուի, վասն, համար, նշանակութեամբ. Եկեալ եմ ի լսել. Լսելու համար կամ լսելու եկած եմ. այսինքն՝ եկած եմ որ, կամ որպէս զի լսեմ։

ԿԱՆ. 4. Բայերու աներեւոյթներու տեղ՝ ի նախադրութեամբ բայանուններ ալ կը գործածուին։ Ասեմ զայս քեզ ի խրատ. Ասիկա քեզի կ'ըսեմ որպէս զի խրատուիս. Պատժեաց զյանցաւորսն ի զգուշութիւն այլոց. Անիկա յանցաւորները պատժեց որ ուրիշներն զգուշանան։

Բայանուն կ'ըսուին բայի նշանակութիւն ունեցող անուններ, այսինքն այնպիսի անուններ որոնցմէ բայեր կ'ածանցուին. ինչպէս՝ Սէր, գործ, կեր, լուր բայանուն են, քանզի ասոնցմէ կ'ածանցուին (կ'ելլեն, կը շինուին) սիրել, գործել, ուտել, լսել բայերը։

Լսելու համար, Առ ի լսանել, ի լսանել, ի լսացումն.

Զբօսնելու համար, Առ ի զբօսնուլ, ի զբօսնուլ, ի զբօսանս.

Ոռոգելու համար, Առ ոռոգել, յոռոգել, յոռոգումն.

Լոյս տալու համար, Առ ի լուսատու լինել, ի լոյս.

Իշխելու համար, Առ իշխել, յիշխանութիւն.

Ի, առ, կամ առ ի նախադրութեանց առջեւ աներեւոյթը կրնայ սեռական ալ դրուիլ. յիշեալ նախադրութիւնները կրնան նաեւ բոլորովին թողուիլ.

Լուալու համար, Առ ի լուանալոյ, կամ լուանալ.

Իշխելու համար, Առ իշխելոյ, կամ իշխել։

---

## 31. Հրահանգ

Լսելու համար եկած եմ. Դատաւորները նստան դատելու համար. Աչք ունինք տեսնելու համար, ականջներ՝ լսելու համար, ռնգունք՝ օդ առնելու համար, ձեռք կամ մատուըներ՝ շօշափելու համար. Տեսարանը դիտելու եկած էին. Պիթագորաս իր աշակերտներուն օրէնք դրաւ լռելու եւ միսէ հրաժարելու. Ձիերուն բերանը սանձ կը դնենք որ մեզի հնազանդին. Անոնց ոտուըները լուալու համար ջուր բերին. Ուտելու համար անոնց հաց եւ արմաւ հանեց. Առատ ջուր ունինք խմելու. Իրիկուան դէմ դաշտը ելաւ զբօսնլոյ համար. Ջրշեղջներ շինեցին ոռոգելու համար արտերը որ անջուր էին. Զօրք դրկեց բերդը պահելու համար. Երկիրը սրով եւ հըրով ապականեցին. Բոլոր օրը ուրախութեամբ եւ երգով անցուցին. Զօրքը կը մօտեցնէր փողի ձայ-



նով. Խեղճ ձայնով կ'ըսէր ասիկա. Խորգով եւ մոխրով ապաշխարեցին. Այս ամենը խօսեցաւ զանի մըխիթարելու համար։ Հիւանդները տեսնելու կ'երթանք. Ասիկա ըրին իրենց հաւատարմութիւնն ապացուցանելու համար. Այն տեղէն փախչելու կը նայէին. Զօրք պատրաստեցին թշնամին երկրէն դուրս ընելու. Տանը դուռը բացաւ ներս նայելու համար. Ամպեղէն սիւնով իջաւ անոնց. Հովերուն թեւովը թռաւ. Ասոնք գրեցի ետքը գալու ազգերուն յիշեցնելու համար. Անոր խօսքերը լսելու եկած էին. Բանիւ եւ գրով կ'աշխատէր. Այս գիրքը շինեցի տղոց գործածութեանը համար. Անոր բնակելու համար տուն եւ մշակելու համար արտեր տըւաւ. Ոսկի եւ արծաթ բերաւ տաճարին նուիրելու համար. Թագաւորին ծառայելու համար մարդիկ դրկեց. Այդ ցորենը եւ այդ անասունները ձեզի ապրուստի համար, այս կտաւն ալ հագուստի համար տուի։

Եկած, եկեալ
Օդ առնել, ծծել զօդ
Մատ, մատն. յգ. մատունք
Տեսարան, տեսիլ, տեսլեան
Դիտելու, ի զննին
Դրաւ, եդ
Ուտելու համար, ի կերակուր
Խմել, ըմպել
Շինել, առնել. շինեցին, արարին
Երկրէն, յաշխարհէն
Նայիլ, հայիլ
Ամպեղէն սիւնով, ի սիւն ամպոյ
Թռչիլ, թռչիմ. (կոր.) թռեաւ
Ետքը գալու ազգերուն, ազգաց եկելոց առ յապա
Յիշեցնելու համար, ի յիշատակ
Լսելու, յունկնդրութիւն

| | |
|---|---|
| Արտ, անդ | Գործածութիւն, պէտք |
| Անջուր, անջրդի | Բնակելու համար, ի բնա-կութիւն |
| Բոլոր օրը, զօրն ողջոյն | Մշակելու համար, ի մշա-կութիւն |
| Մօտեցնել, յառաջ մա-տուցանել | Նուիրելու համար, ի նը-ւէր |
| Ձայն, բարբառ | Ծառայելու համար, ի սպաս |
| Խեղճ, ողորմ | Ապրուստի համար, յու-տեստ, ի պաշար |
| Տեսնելու, տեսանել, յայ-ցելութիւն | Հագուստի համար, ի հանդերձ |
| Ըրին, արարին | Տուր, ետու |
| Ապացուցանելու համար, ի հանդէս | |
| Կը նայէին (փախչելու), աչս ածէին | |

| | |
|---|---|
| Լսելու համար եկած եմ․ | Ի լսել եկեալ եմ |
| Դատաւորները նստան դատելու համար․ | Նստան դատաւորքն ի դա-տել |
| Տեսարանը դիտելու եկած էին․ | Եկեալ էին ի զննել տե-ղեանն |

---

ԼՈՒԾՈՒՄ

Ի լսել եկեալ եմ․ Եկեալ եմ, Եկած եմ․ բայ․ եզ․ Ա․ դէմք․ — Ո՞վ եկած է — Ես․ հակ․ դեր․ եզ․ Ա․ դէմք, զօրութեամբ կ'իմացուի, տէր բայի եկ-եալ եմ ին․ — Ես եկած եմ, ինչո՞ւ համար․ — Ի լսել, լսելու համար․ ի լսել՝ ի նախադրութեամբ աներեւոյթ խնդիր եկեալ եմ ին, գալուն պատճառը կամ նպատակը կը ցուցնէ ։



Եկեալ էին ի զննել տեղեանն․ Եկեալ էին, Եկած էին․ բայ․ յք․ Գ․ դէմք․ — Ո՞վ եկած էր — Նոքա անոնք․ հակ․ դեր․ յք․ Գ․ դէմք, զօրութեամբ կ'իմացուի, եւ տէր բայի է Եկեալ էին ին․ — Եկեալ էին, ինչու․ — Ի զննել, դիտելու․ ի զննել, ի նախադրութեամբ խնդիր եկեալ էին ին, գալուն նպատակը կը ցուցնէ․ — Եկեալ էին ի զննել ինչ բանի․ — Տեղեանն, տեսարանին․ Տեղեան, գո․ անուն, սեռ․ հոլ․ յատկացուցիչ ի զննել բառին․ այսինքն՝ տեսարանին զննութեանը, տեսարանը դիտելու ։

# ԴԱՍ Ի.

## ՉՈՐՍ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆՑ ԿՐԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

ԿԱՆ․ 1․ Ներգործական բայը՝ բան մը ընել, Կրաւորականն ալ այն բանը ուրիշէն կրել կը ցուցնէ․ Կը սիրեմ, ներգործական է․ Կը սիրուիմ, կրաւորական։

ԿԱՆ․ 2․ Ամէն ներգործական բայ կրաւորականի կրնայ փոխուիլ․ զոր օրինակ՝ ներգ․ Կը բժշկեմ, կր․ կը բժշկուիմ․ Կը բանամ, կը բացուիմ․ Կը թողում, կը թողուիմ։

ԿԱՆ․ 3․ Հայերէն գրաբարի մէջ ներգործական բայերը հետեւեալ կանոններուն համեմատ կրաւորականի կը փոխուին․

Ա․ Եմ եւ անեմ վերջաւորած բայերուն սահմանական ներկան իմ ի փոխուելով՝ խօսիմ եւ ուսանիմ ին սահմ․ ներկային պէս կ'ըլլայ․ ինչպէս՝ Գործեմ,

կը գործեմ· գործիմ, կը գործուիմ Հատանեմ, կը կտրեմ· հատանիմ, կը կտրուիմ։

Բ. Իմ, ամ, եւ ում վերջաւորած բայերուն ներգործական սահմանական ներկան նոյն կը մնայ կրաւորականին մէջ· Խօսիմ, Բանամ, Թողում, թէ՛ կը խօսիմ, կը բանամ, կը թողում ըսել է, եւ թէ կը խօսուիմ, կը բացուիմ, կը թողուիմ։

Գ. Զորս լծորդութեանց ալ բայերուն անկատարները թէ՛ ներգործականին եւ թէ կրաւորականին մէջ նոյն են։

Դ. Ներգործական կատարեալներուն ի գիրը կրաւորականին մէջ այ ի փոխուելով, խօսիմ եւ ուսանիմ ին կատարեալներուն պէս կ՚ըլլան. ինչպէս՝ Ներգ. Սիրեցի, կր. սիրեցայ. Ներգ. Հատի, կր. հատայ. Ներգ. Բացի, կր. բացայ. Ներգ. Թողի, կր. թողայ։

Ե. Ապառնիներուն ալ ներգործականին ից վերջաւորութիւնը այց ի կը փոխուի. զոր օրինակ՝ Ներգ. Սիրեցից, կր. սիրեցայց. Ներգ. Հատից, կր. հատայց. Ներգ. Բացից, կր. բացայց. Ներգ. Թողից, կր. թողայց։

Զ. Ստորադասականներուն ներգործականին իցեմ վերջաւորութիւնը՝ կրաւորականին մէջ իցիմ. այցեմ վերջաւորութիւնն ալ այցիմ կ՚ըլլայ. ինչպէս՝ Ներգ. Սիրիցեմ, կր. սիրիցիմ. Հատանիցեմ, հատանիցիմ. Բանայցեմ, բանայցիմ. Խօստանայցեմ, խօստանայցիմ։ Չորրորդ լծորդութեան ստորադասականը Թողուցում, կրաւորականին մէջ նոյն կը մնայ։

Է. Եմ վերջաւորածներուն եա վերջաւորած եզ. հրամայականը՝ կրաւորականին մէջ եաց կ՚ըլլայ. եցէք վերջաւորած Ներգ. յոքնակին ալ՝ կրաւորականին



մէջ եցարուք կ՚ըլլայ. ինչպէս՝ Ներգ. Գործեա, գործէ. կր. գործեաց, գործուէ. յք. Ներգ. Գործեցէք, գործեցէք. կր. գործեցարուք, գործուեցէք։

Անեմ, ամ եւ ում վերջաւորածներուն ներգործական եզ. հրամայականին վրայ կրաւորականին մէջ իր մասնիկը կ՚աւելնայ. Ներգործական յոքնակի հրամայականին էք վերջաւորութիւնն ալ՝ կրաւորականին մէջ արուք կ՚ըլլայ. ինչպէս՝

| | |
|---|---|
| Ներգ. եզ. Հատ, կտրէ. | Կր. Հատիր, կտրուէ. |
| » յք. Հատէք, կտրեցէք. | » Հատարուք, կտրուեցէք. |
| » եզ. Բաց, բաց. | » Բացիր, բացուէ. |
| » յք. Բացէք, բացէք. | » Բացարուք, բացուեցէք. |
| » եզ. Թող, թող. | » Թողիր, թողուէ. |
| » յք. Թողէք, թողէք. | » Թողարուք, թողուեցէք. |

Ը. Աներեւոյթը կամ Անորիշ դերբայը եղ, ալ եւ ուղ՝ թէ՛ ներգործականին եւ թէ կրաւորականին մէջ նոյն է։

Նոյնպէս աներ. անցեալին կամ անցեալ դերբային եալ վերջաւորութիւնը՝ ներգործականին եւ կրաւորականին մէջ նոյն է։

Աներ. ապառնույն կամ ապառնի դերբային ոց վերջաւորութիւնը՝ կրաւորականի մէջ ի կ՚ըլլայ. ինչպէս՝ Ներգ. Սիրելոց, սիրելու. կր. սիրելի, սիրուելու. Բանալոց, Բանալի, Թողլոց, Թողլի։

Աշակերտք հետեւեալ ներգործական բայերուն կրաւորականները գրով խոնարհեն.

Սիրեմ, գտանեմ, բանամ, լնում.

## ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Բացառական հոլովը ումէ՞, ինչ՞ բանէ (քիմտէ՞ն, նէտէ՞ն) հարցման պատասխան է. զոր օրինակ՝ Հօրմէս առի. Որմէ՞ առի. — Հօրմէս. հօրմէ բացառական է.

2. Եզակի սեռականը ոյ եւ այ վերջաւորած անուններէն զատ ուրիշ բոլոր անուններուն բացառականը է կը վերջաւորի, եւ սովորաբար ի նախդիրով կը գործածուի. ինչպէս.

| Ուղ. | Սեռ. | Բաց. |
|---|---|---|
| Բանտ, | բանտի, | ի բանտէ. |
| Քաղաք, | քաղաքի, | ի քաղաքէ. |
| Զգեստ, | զգեստու, | ի զգեստէ. |
| Հիմն, | հիման, | ի հիմանէ. |
| Նեղութիւն, | նեղութեան, | ի նեղութենէ. |
| Կայսր, | կայսեր, | ի կայսերէ. |

3. Այր, Հայր, Մայր, Եղբայր, Քոյր, Կին, Օր, Գիւղ, Տիւ բառերուն բացառականները կ'ըլլան՝

| Ուղ. | Սեռ. | Բաց. |
|---|---|---|
| Այր, | առն, | յառնէ. |
| Հայր, | հօր, | ի հօրէ. |
| Մայր, | մօր, | ի մօրէ. |
| Եղբայր, | եղբօր, | յեղբօրէ. |
| Քոյր, | քեռ, | ի քեռէ. |
| Կին, | կնոջ, | ի կնոջէ. |
| Օր, | աւուր, | յօրէ. |
| Գիւղ, | գեղջ, | ի գեղջէ. |
| Տիւ, | տուընջեան, | ի տուէ կամ ի տուընջենէ. |



4. Եզակի սեռականը ոյ եւ կամ այ վերջաւորող անուններուն բացառականը սեռականին պէս է բայց ի նախդրէն. ինչպէս՝

| Ուղ. | Սեռ. | Բաց. |
|---|---|---|
| Գետ, | գետոյ, | ի գետոյ. |
| Տրդատ, | Տրդատայ, | ի Տրդատայ. |
| Եսայի, | Եսայեայ, | յԵսայեայ. |

5. Եզակի սեռականը ւոյ վերջաւորող անուններուն բացառականը ւոյ, ոմանց նաեւ ւոջէ կ'ըլլայ. ինչպէս՝ Տեղի, տեղւոյ, ի տեղւոյ, կամ ի տեղւոջէ։

6. Իմ, Քո, Մեր, Ձեր, Իւր ստացականներուն բացառականը մէ կը վերջաւորի, ինչպէս՝

| Ուղ. | Բաց. |
|---|---|
| Իմ, | յիմմէ. |
| Քո, | ի քումմէ. |
| Մեր, | ի մերմէ. |
| Ձեր, | ի ձերմէ. |
| Իւր, | յիւրմէ. |

7. Այս, Այդ, Այն ցուցականներուն բացառականը մանէ կը վերջաւորի. զոր օրինակ՝ Այս, յայսմանէ. Այդ, յայդմանէ. Այն, յայնմանէ։ Ասոնց յոգնակի բացառականը կ'ըլլայ ցանէ, ինչպէս յայսցանէ, յայդցանէ, յայնցանէ։

8. Ես, Դու, Նա էական դերանուններուն բացառականը կ'ըլլայ. Ես, յինէն. Դու, ի քէն. Նա, ի նմանէ. Ինքն, յինքենէ. յոգնակին՝ Մեք, ի մէնջ. Դուք, ի ձէնջ. Նոքա, ի նոցանէ. Ինքեանք, յինքեանց.

9. Էական եւ ցուցական դերանուններէն զատ, ուրիշ բոլոր անուններուն յոգնակի բացառականնե-

րը սեռականներուն հետ նոյն են. զոր օրինակ՝ Բանտք, բանտից, ի բանտից. Քաղաքք, քաղաքաց, ի քաղաքաց. Գետք, գետոց, ի գետոց. Հիմունք, հիմանց, ի հիմանց. Արք, արանց, յարանց. Հարք, հարց, ի հարց. Իմք, իմոց, յիմոց. Մերք, մերոց, ի մերոց. եւ այլն։

---

## 32. Հրահանգ

### ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՅ ԵՒ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ.

Աստուծմէ կը պատժուինք. Գողն ու մարդասպանը կը պատժուին. Շատերը բռնաւորներէն տանջուեցան. Թշնամին քաղքէն հեռացաւ. Անոնց մարմինները գերեզմաններէն հանուեցան. Դարձիր ինէ. Մենէ ելան. Լեռնէն կ'իջնէին. Երբ ջուրէն ելաւ. Այն տեղէն գնաց. Ասիկա ձենէ լսեցինք. Անոր վէրքերը բժշկուեցան. Հարիւրապետին ծառան դէշ հիւանդութենէն բռնուցաւ. Իր տանջանքներէն պիտի ազատի. Աբէլին մահուան վրէժը խնդրուեցաւ Կայենէն. Անոր լեզուին կապերը քակուեցան. Աստուծմէ Յովսէփին հրեշտակ ղրկուեցաւ. Հայրս աւազակներէն սպաննուեցաւ. Երկինքին սահանքները (քէփէնք) բացուեցան. Քաղքին դուռները պիտի գոցուին. Եղբայրդ գետին յորձանքին մէջ նետուեցաւ. Անոր արիւնը պիտի թափուի. Ահա մենք ձենէ ճամբայ կը դրուինք. Երկիրս օդէն կը պատի. Ցամաքը ջուրերէ պաշարուած է. Քաղաքը թշնամիէն պաշարուեցաւ. Բոլոր երկիրը շարժեցաւ. Լեռնէն քար մը բրդաւ. Տղան պիտի բժշկուի. Ինէ լսեցիք. Մենէ են. Մօրմէն անիծուեցաւ. Աբէլ իր



եղբօրմէն սպաննուեցաւ. Ճամբայ ելլելու կը պատրաստուինք. Շատ ստակ ժողվուեցաւ. Անոր մահուան վրէժն անկէ պիտի խնդրուի. Անոնց ամանները լեցուեցան. Քաղաքը պիտի առնուի. Աստղերը պիտի թափին, երկիրը պիտի շարժի. Իմ տունէս ել. Վախցիր անկէ որ հոգին կը սպաննէ. Ինէ սորվեցէք. Քենէ ինչ՞ կը խնդրէ. Ոսկին, արծաթը եւ ուրիշ բոլոր մետաղները հանքերէն կը հանուին. Ամէն բան հողէն է եւ հող կը դառնայ. Մենէ՞ ես թէ անոնցմէ. Այդ ամէնը չարէն է. Հիմէն խախտեցաւ։

Աշակերտք հետեւեալ բառերուն նայելով՝ վերի Հրահանգը գրաբարի դարձնեն.

| | |
|---|---|
| Մարդասպան, սպանող | Բոլոր, ամենայն |
| Շատերը, բազումք | Շարժել, դղրդել |
| Երբ, իբրեւ | Բրդիլ, հատանիլ |
| Երթալ (տեղէ մը), մեկնիլ | Լսեցիք, լուարուք |
| Լսեցինք, լուաք | Ճամբայ ելլել. ելանել ի ճանապարհ |
| Դէշ (հիւանդութիւն), չարաչար | Ստակ, արծաթ |
| Ըռնտնալ, ապաքինիլ | Թափիլ, թօթափիլ |
| Կապեր, կապանք | Շարժիլ, սասանիլ |
| Քակուիլ, լուծանիլ | Վախնալ, երկնչիլ |
| Գոցել, փակել | Վախցիր, երկիր |
| Նետել, ընկենուլ | Սորվիլ, ուսանիլ |
| Թափել, հեղուլ | Ուրիշ, այլ |
| Ճամբայ դնել, յուղարկել | Հանք, բովք, բովուց |
| | |
| Աստուծմէ կըպատժուինք. | Պատժիմք յԱստուծոյ |
| Գողն ու մարդասպանը կը պատժուին. | Գողն եւ սպանող պատժին |

## ԼՈՒԾՈՒՄ

Պատժիմք յԱստուծոյ. Պատժիմք, բայ կրաւոր. սահմ. ներկ. յք. Ա. դէմք: Ո՞վ կը պատժուի. — Մեք, մենք. ուղղ., չակ. դեր. յք. Ա. դէմք. տէր բայի Պատժիմք ին. զօրութեամբ կ՚իմացուի: Պատժիմք, ումէ. — յԱստուծոյ, Աստուծմէ. յԱստուծոյ բացառ. խնդիր Պատժիմք ին:

### 33. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ անուններուն թէ եզակի եւ թէ յոգնակի սեռականը, տրականը եւ բացառականը նշանակեն:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ. Բառի մը սեռականը գիտնալէն ետքը բացառականը գտնելը շատ դիւրին է: Ինչպէս վերը յիշուեցաւ, սեռականը ոյ եւ այ վերջաւորող անուններէն զատ, ուրիշ բոլոր անուանց բացառականը է կը վերջաւորի. սեռականը ոյ եւ այ վերջաւորողներուն բացառականը սեռականին հետ նոյն է: Բոլոր անուանց յոգնակի բացառականները յոգնակի սեռականներուն հետ նոյն են:

Ագարակ. Ջանգակ. Անտառ. Դաշտ. Գաւառ. Եզն. Ձի. Հսկայ. Հռիփսիմէ. Աստղ. Արիւն. Տեսիլ. Ագի. Բերան. Աթոռ. Ալիք. Բարիք. Բարք. Փառք. Վարք. Դուռն. Դեղ. Հարսանիք. Աչք. Ակն. Հարսն. Մանուկ. Սենեակ. Ատեան. Աղբիւր. Երկիւղ. Յոյս. Ձայն. Յիմար. Իմաստուն. Տուն. Մեծատուն. Աղքատ. Թագաւոր. Ծով. Սով. Զարդ. Ագռաւ. Ձոր. Զգեստ. Բարձր. Թանձր. Մանր. Փոքր. Մեղր. Ասր. Լեառն. Ամառն. Ձմեռն. Գա-



ջուն. Աշուն. Պտուղ. Տեղի. Գօտի. Մորի. Քուն. Հայկ. Արամ. Դաւիթ. Սողոմէ. Եւգինէ. Տիւ. Մայր. Երկինք. Երկիր. Գիւղ. Կին. Տիկին. Տէր. Միտք. Կամք. Մուկն. Գալուստ. Կորուստ. Փախուստ. Երդումն. Դառնութիւն. Բարութիւն. Անկիւն. Շուն. Ձիւն. Կարկուտ. Անձրեւ. Պատճառ. Պատկեր. Պատիժ. Արարած. Գործուած. Դարձուած. Աղիք. Կերակուր. Հովիւ. Անիւ. Պատիւ. Թիւ. Ազդր. Դուստր. Ուստր. Ոսկի. Ուղի. Հեղի. Քար. Ձեռն. Ոտն. Պատերազմ. Փրկիչ. Մկրտիչ. Արարիչ. Գլուխ. Որդի. Հոգի. Ջուր. Հուր. Համբոյր. Ողջոյն. Սուտ. Խրատ. Գոյն. Գող. Քող. Ամպ. Շունչ. Հողմ. Կողի. Այգի. Հող. Մրրիկ. Գետին. Օդ. Լոյս. Իմաստութիւն. Գիտութիւն. Հանճար. Խելք. Ուղեղ. Ուղիղ. Որդն. Որթ (տունկ). Որթ (անասուն). Խաշն. Ոչխար. Առիւծ. Արծուի. Թռչուն. Հաւ. Ջորքատանի. Ծաղիկ. Ծառ. Բանջար. Խոտ. Սերմն. Տերեւ. Բուն. Փայտ. Բողբոջ. Արմատ. Ողկոյզ. Խաղող. Ծուխ. Բոց. Ժամանակ. Օր. Ամ. Տարի. Դար. Բան. Գիր. Մատեան. Գրիչ. Սուր. Աղեղն. Կառք. Սայլ. Ինչք. Ունչք. Իժ. Իլ. Իր. Իմ. Ձեր. Քո. Իւր. Դու. Մեք. Ես. Նա. Նոքա. Այն. Այդ. Այս. Մեր. Դուք. Սա. Դա:

# ԴԱՍ ԻԱ.

## ԱՌ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ.

ԿԱՆ. 1. Դէպ ի տեղ մը շարժումը, կամ ուր հարցման պատասխանը ի նախադրութեամբ կը բա-

յատուկ ։ (Տես Դաս ԺԶ 4)։ Երբ շարժումը դէպ ի մարդ կամ անձ է, ի նախադրութեան տեղ առ կը դրուի հայցականով ։ (Տես Դաս ԺԶ. 9)։

| | |
|---|---|
| Թագաւորին գնաց. | Գնաց առ թագաւորն |
| Ձանի եղբօրը ղրկեցինք. | Առաքեցաք զնա առ եղբայր իւր |
| Ինծի եկէք. | Եկայք առ իս |

ԿԱՆ. 2 Առ նախադրութիւնը տրական խնդրով կը նշանակէ մէկուն տունը կամ քովը, բանի մը քովը կամ մօտը, առջեւը ։

| | |
|---|---|
| Առ դրան, | Դրանը քով |
| Առ հօր իւրում, | Հօրը տունը, քովը |
| Ո՞ւր իցէ նա արդ. | Հիմա ո՞ւր է |
| Է նա առ քեռայրն իւրում. | Քեռայրին քովն է |

ԿԱՆ. 3. Առ նախադրութիւնը սեռական, երբեմն ալ հայցական կամ բացառական խնդրով կը նշանակէ համար կամ պատճառաւ, եւ աշխարհաբարի մէջ սովորաբար բացառականի կը դառնայ. ինչպէս՝ Առ նախանձու, Նախանձէն. Առ ահի, վախէն ։

| | |
|---|---|
| Ոչ յայտնեաց զանձն առ երկիւղի. | Վախէն ինքզինք չյայտնեց. |
| Շիկնէր առ ամօթոյ. | Ամօթէն կը կարմրէր |
| Առ սէր քո արարի զայս. | Ասիկա քու սիրոյդ համար ըրի |
| Առ չգիտելն եկեր. | Չգիտնալով կերաւ |
| Ո առ ակն ինչ առնեմ զայս. | Աս կ՚ընեմ ոչ թէ ատե-լուս համար |
| Առ ի չգոյէ կերակրոյ. | Կերակուր չըլլալէն |



## ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ.

1. Գործիական հոլովը որո՞վ, ինչ բանով (քիմի՞լէ, նէ՞ իլէ) հարցման պատասխան է ։ Ոսկւով լեցուն, — Ի՞նչ բանով լեցուն. — Ոսկւով ։

2. Յոքնակի սեռականը ից վերջաւորող անուններուն գործիականը իւ կ՚ըլլայ. յոք. սեռականն աց վերջաւորողներուն ալ գործիականն աւ կ՚ըլլայ. ինչպէս՝ Բանտ, յոք. սեռ. բանտից, գործ. բանտիւ. Քաղաք, յոք. սեռ. քաղաքաց, գործ. քաղաքաւ ։

3. Եզակի սեռականը ոյ վերջաւորող անուններուն գործիականը ով կ՚ըլլայ. Գետ, սեռ. գետոյ, գործ. գետով ։

4. Եզակի սեռականը ւոյ եղողներուն գործիականը եաւ կ՚ըլլայ. ինչպէս՝ Տեղի, սեռ. տեղւոյ, գործ. տեղեաւ. Եկեղեցի, եկեղեցւոյ, եկեղեցեաւ. բաց ի Հոգի, Որդի եւ ուրիշ քանի մը բառերէ, եւ ցի վերջաւորող ազգի կամ տեղացւոյ անուններէն, ինչպէս Հռոմայեցի, քաղաքացի. ասոնց գործիականը ւով կ՚ըլլայ. զոր օրինակ՝ Որդի, որդւով. Հոգի, հոգւով, Հռոմայեցի, Հռոմայեցւով ։

5. Եզ. սեռականն ու վերջաւորողներուն գործիականն ալ ու կ՚ըլլայ. ինչպէս՝ Զգեստ, սեռ. եւ գործ. զգեստու ։

6. Եզ. սեռականն ան եւ ին եղող անուններուն գործիականը՝ ամբ, եան եղողներունն ալ՝ եամբ կ՚ըլլայ. ինչպէս՝

| Ուղ. | Սեռ. | Գործ. |
|---|---|---|
| Հիմն, | հիման, | հիմամբ. |
| Դառն, | դառին, | դառամբ. |

Նեղութիւն, նեղութեան, նեղութեամբ.
Արիւն, արեան, արեամբ.

7. Եզ. սեռականը եր եւ եղ եղողներուն գործիականը կ'ըլլայ երբ եւ եղբ, ինչպէս՝

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Սեռ. | Գործ. |
| Կայսր, | կայսեր, | կայսերբ. |
| Աստղ, | աստեղ, | աստեղբ. |

8. Այր, Հայր, Մայր, Եղբայր, Քոյր, Կին, Օր, Գիւղ, Տիւ անուններուն գործիականը կ'ըլլայ, Արամբ, Հարբ, Մարբ, Եղբարբ, Քերբ, Կանամբ (կամ կնաւ), Աւուրբ, Գիւղիւ, Տուընջեամբ։

9. Ստացականներուն սեռականը ոյ ըլլալուն համար՝ գործիականը ով կ'ըլլայ. ինչպէս՝ Իմ, իմոյ, իմով. Քո, քոյ, քով. եւն. (Տես վերը թիւ 3)։

10. Այս, Այդ, Այն ցուցականներուն եզ. գործիականները կ'ըլլան՝ Այսուիկ, այդուիկ, այնուիկ. յոքնակին՝ Այսոքիւք, այդոքիւք, այնոքիւք։

11. Ես, Դու, Նա. Մեք, Դուք, Նոքա էական դերանուններուն գործիականները կ'ըլլան, Ինեւ, Քեւ, Նովաւ. Մեօք, Ձեօք, Նոքօք։ Ինքն դերանուան գործիականը կ'ըլլայ՝ Ինքեամբ կամ իւրեւ, իւրեաւ։

12. Բոլոր գործիականներուն յոքնակին՝ եզակի գործիականին վրայ ք մը աւելցնելով կ'ըլլայ, ինչպէս. Բանիւ, բանիւք. Քաղաքաւ, քաղաքաւք (որ օք, քաղաքօք կը գրուի). Գետով, գետովք. Հիմամբ, հիմամբք. Հարբ, հարբք. եւն։

Աշակերտք 33երորդ Հրահանգին բառերուն գործիականները գտնեն։

Ագարակ. Զանգակ. {Անտառ. եւ այլն. տես էջ 98։



## 34. Հրահանգ

Բարեկամս ինծի եկաւ. Զանոնք ձեզի ղրկեցի. Տանտիրոջը գացինք. Պատգամաւորները պաշտօնէին եկան. Դատաւորին գրեցինք. Իր եղբօրը քով կը բնակի. Այդ մարդիկը մեր քովը հիւր են. Կայսեր կը բողոքեմ. Այս գիշեր մեզի կեցիր. Անոր տունը (քովը) իջաւ. Իր սիրելի որդին ղրկեց անոնց. Մեզի ինչո՞ւ գրեցիք. Դրացւոյն տունը (քովը) մտաւ. Մահապարտ է այն մարդը որուն քով ստակը գտնուի. Ցաւէն կը պոռար. Ուրախութենէն կը պոռային. Բաղձանքէն կը մաշէր. Կարօտէս կը մեռնիմ. Բարկութենէն կը հայհոյէր. Զանի ինծի բերէք. Դատաւորին եկան. Հօրս երթամ. Ինծի նոր կուժ մը բերէք. Եկէք, անոր ըլլենք. Պարտական մը ներկայացուեցաւ անոր. Վախէն անոր դէմ չկեցաւ. Կերակուր չուտելէն հիւծած էր. Քու երկանդ դարձիր. Զանի իր բարեկամներուն ղրկեցի. Զանի իր քովն առաւ. Այդ տղան իր մօրը տարէք. Պատուհանին քով կը նստէր. Աստուծոյ կանչեցին եւ անիկա փրկեց զանոնք. Սրտին ցաւէն լացաւ. Նախատինքին չդիմանալէն անկէ գնաց. Խորթ մայր մը իր խորդ զաւկին քով չի բնակիր. Եղբայրդ ո՞ւր է. Խորդհօրը քովն է. Ինչո՞ւ համար ինծի չեկար. Մօրեղբօրս քովն էի. Զիս որո՞ւն պիտի ղրկես. Աներոջս, անոր աւետիս տալու համար որ ինծի մանչ զաւակ մը եղաւ. Եղբայրդ իմ քովս հիւր է. Անոնց մի դըպչիք. Լեռնէն մեզի իջաւ. Ասիկա տուր այն աղքատ տղուն որ դրան քով կը կենայ. Ոչ ոք կը համարձա-

կէր անոր մօտենալ. Իր մէկ հատիկ աղջիկէն ուրիշ մէկը չկար անոր քով. Մենք լճին քով կը բնակէինք, անոնք ալ բլրոյն վրայ. Գիտէր որ ատելութեան համար անոր վրայով կը չարախօսէին. Թագաւորին քով ամբաստանութիւն ըրին անոր վրայով։

Աշակերտք վերի հրահանգը գրաբարի դարձունեն՝ հետեւեալ բառերուն միտ դնելով։

| | |
|---|---|
| Եկաւ, եկն | սուաղութիւն |
| Տանտէր, տանուտէր | Էրիկ, այր |
| Կենալ (գիշերը մէկուն), ագանիմ | Կանչել (մէկուն), կարդալ |
| Մէկուն տունը, այսինքն քովը· առ (տրականով) | Սրտի ցաւ, վիշտ |
| Իջնել (ճամբորդին), իջեւանիմ | Դիմանալ, ժուժել |
| Պոռամ, ճչեմ, գոչեմ | Անկէ, անտի |
| Բաղձանք, ցանկութիւն | Խորթ մայր, մօրու |
| Բարկութիւն, ցասումն | Խորթ զաւակ, ուրջու |
| Եկան, եկին | Խորթ հայր, յօրայ, հօրու |
| Բերէք ինծի, առէք առ իս | Եկար, եկիր |
| Եկէք, եկայք | Մօրեղբայր, քեռի |
| Ներկայացուիմ, մատուցանիմ | Մանչ զաւակ, ուստր |
| Վախ, ահ | Դպչիմ, մերձենամ |
| Դէմ կենալ, ընդդիմանալ | Մօտենամ, մատչիմ |
| Կերակուր չուտելը, ան- | Լիճ, ծովակ |
| | Անոր վրայով, զնմանէ |
| | Ամբաստանութիւն ընել, ամբաստան լինել |



## Ա. Պատկեր հոլովման անուանց

| | | Ուղ. | Սեռ. | Տր. | Հյց. | Բաց. | Գործ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Եզ. | Բանտ | -ի | -ի | զ- | ի-է | -իւ |
| | Յք. | Բանտս | -ից | -ից | զ-ս | ի-ից | -իւք |
| 2 | Եզ. | Քաղաք | -ի | -ի | զ- | ի-է | -աւ |
| | Յք. | Քաղաքս | -աց | -աց | զ-ս | ի-աց | -աւք օք |
| 3 | Եզ. | Զգեստ | -ու | -ու | զ- | ի-է | -ու |
| | Յք. | Զգեստս | -ուց | -ուց | զ-ս | ի-ուց | -ուք |
| 4 | Եզ. | Գետ | -ոյ | -ոյ | զ- | ի-ոյ | -ով |
| | Յք. | Գետս | -ոց | ոց | զ-ս | ի-ոց | -ովք |
| 5 | Եզ. | Տեղի | -ւոյ | -ւոյ -ւոջ | զ-ի | ի-ւոյ ի-ւոջէ | -եաւ |
| | Յք. | Տեղիս | -եաց | -եաց | զ-իս | ի-եաց | -եաւք |
| 6 | Եզ. | Տրդատ | -այ | -այ | զ- | ի-այ | -աւ |
| | Եզ. | Հռիփսիմէ | -եայ | -եայ | զ-է | ի-եայ | -եաւ |
| 7 | Եզ. | Հիմն | -ան | -ան | զ-ն | ի-անէ | -ամբ |
| | Յք. | Հիմունս | -անց | -անց | զ-ունս | ի-անց | -ամբք |
| 8 | Եզ. | Գառն | -ին | -ին | զ-ն | ի-անէ | -ամբ |
| | Յք. | Գառինս | -անց | -անց | զ-ինս | ի-անց | -ամբք |
| 9 | Եզ. | Նեղութիւն | -եան | -եան | զ-իւն | ի-ենէ | -եամբ |
| | Յք. | Նեղութիւնս | -եանց | -եանց | զ-իւնս | ի-եանց | -եամբք |
| 10 | Եզ. | Աստղ | -եղ | -եղ | զ-ղ | յ-եղէ | -եղբ |
| | Յք. | Աստեղս | -եղաց | -եղաց | զ-եղս | յ-եղաց* | -եղբք |

## Բ. Պատկեր հոլովման դերանուանց

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ | Եզ. | Ես | իմ | ինձ | զիս | յինէն | ինեւ |
| | Յք. | Մեք | մեր | մեզ | զմեզ | ի մէնջ | մեւք |
| | Եզ. | Դու | քո | քեզ | զքեզ | ի քէն | քեւ |
| | Յք. | Դուք | ձեր | ձեզ | զձեզ | ի ձէնջ | ձեւք |
| | Եզ. | Նա. | նորա | նմա | զնա | ի նմանէ | նովաւ |
| | Յք. | Նոքա | նոցա | նոցա | զնոսա | ի նոցանէ | նոքօք |
| | Եզ. | Ինքն | ինք-եան, իւր, իւրեան | ինք-եան իւր, իւրեան | զինքն | յինքենէ յիւրմէ | ինք-եամբ իւրեւ, իւրեաւ |
| | Յք. | Ինքեանք | ինք-եանց | ինք-եանց | զինք-եանս | յինք-եանց | ինք-եամբք |
| | | Իւրեանք | իւր-եանց | իւր-եանց | զիւր-եանս | յիւր-եանց | իւր եամբք |

(*) Ըղ եւ ըր վերջաւորած անուններուն, ինչպէս Աստղ, Տարր,

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՑՈՒՑ. ԴԵՐ. | Եզ. | Այս | -որիկ * | -միկ | զ- | յ-մանէ | -ուիկ |
| | Յք. | Այսոքիկ | -ցիկ | -ցիկ | զ-ոսիկ | յ-ցանէ | -օքիւք |
| ԱՆՁՆ. ԴԵՐ. | Եզ. | Իմ | -ոյ | -ում | զ- | յ-մէ | -ով |
| | Յք. | Իմք | -ոց | -ոց | զ-ս | յ-ոց | -ովք |

# ԴԱՍ ԻԲ.

## ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

(Տես Դաս Ը.)

Բարդ բառ մը շատ անգամ կը բաղկանայ գոյականէ մը եւ բայանունէ մը, այսինքն՝ բայի նշանակութիւն ունեցող անունէ մը. ինչպէս. Որդեսէր, Հայրասպան, Արեւակէզ, որ կը նշանակեն՝ Որդին սիրող, հայրը սպանող, արեւէն այրած ։ Այս բառերուն մէջ սէր, սպան, կէզ, Սիրեմ, Սպանանեմ եւ Կիզում բայերուն արմատներն են եւ Բայանուն կ'ըսուին ։ Որդի, Հայր, Արեւ գոյականներն ալ խնդիր են. առջի երկուքը հայց. սեռի խնդիր Սէր եւ Սպան բայանուանց, երրորդն ալ բացառական խնդիր է Կէզ բայանուան ։

---

յոքնակի սեռականը, տրականը և բացառականը կ'ըլլայ նաև եղց, երց. ինչպէս՝ Աստեղց, Տարերց. նոյնպէս յոքնակի գործիականը կ'ըլլայ եղբք, երբք. ինչպէս՝ աստեղբք, տարերբք ։

(*) Այս բառը սա կերպով ալ կը հոլովի. Ուղ. այս, Սեռ. այսր, Տր. այսմ. Գործ. այսու. Յոքնակի. Ուղ. այսք, Սեռ. և Տր. այսց, Գործ, այսու ։ Այսպէս կրնան հոլովիլ նաև այդ, այն ։ Պէտք է գիտնալ որ երբ այս, այդ, այն ածականներն իրենց գոյականէն առաջ դրուին, սա կարճ կերպով կը գործածուին. սակայն սովորաբար գոյականէն ետքը կը դրուին ու օրինակին մէջ ցուցուած երկայն հոլովներով կը գործածուին ։



### 35. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ բայերուն բայանունները գտնեն ։

Սիրեմ. Կապեմ. Կոծեմ. Տեսանեմ. Կորանամ. Ձգեմ. Բեկանեմ. Արկանեմ. Կիզում. Ատեմ. Պատեմ. Գիտեմ. Ծնանիմ. Կլանեմ. Պահեմ. Գործեմ. Հարկանեմ ։

Աշակերտք հետեւեալ աշխարհաբար խօսքերը վերի բայանուններով գրաբար բարդ բառերու դարձունեն ։

Հայրենիքը սիրող. Ականջով կապուած. Ալիքներէ, հովէ կոծուած (ծեծուած). Երազ տեսնող. Աչուըները կորացած (ամօթով). Ակօս ձգող (քաշող). Նետ, քար ձգող (նետող), Կրակ ձգող (դնող). Ահիւ բեկած (վախէն լեղին բրդած). Ծանրութենէ բեկած (կոտրած). Գազաններէ բեկած (պատառուած.) Ահ արկանող. Խունկ արկանող (տուող). Տաքէն, ցուրտէն կիզեալ (այրած). Իր տէրն ատող. Ինչք ատող. Արծաթով, սառոյցով, մութով պատած. Ծածուկ (բաներ) գիտցող. Ձեռքի գործ (արուեստ) գիտցող. Անձրեւ ծնանող (յառաջ բերող.) Երկրէ, ծովէ, ջուրէ, հողէ ծնած. Ծովէն կլլուած. Ոգին (կեանքը) պահող. Ուխտ, պատուիրանք, ոխ պահող. Այգի, երկիր, հող գործող (մշակող). Նաւ, հաց, իւղ գործող (պատրաստող). Պղինձ գործող (պղնձէ բան շինող). Չար, բարի, ժանտ (գէշ), զազիր (զզուելի բաներ), եղեռն, ոճիր (ծանր յանցանք) գործող. Մաղէ գործուած. Ասեղով, ձեռքով գործուած. Սրինգ, քնար, փող հարկանող. Դիւէ, նետէ, շանթէ, սուրէ, ցուրտէ, խորշակէ հարեալ (զարնուած).

Աշակերտք հետեւեալ բայերուն բայանունները գտնեն ։

Խնդրեմ· Խանձիմ· Հեղում· Գնեմ· Օծեմ· Ձուլեմ· Խլեմ· Մեծարեմ· Առնում· Կռուիմ· Քաղեմ· Արգելում· Խօսիմ· Ասեմ· Քարշեմ Վարեմ· Վաճառեմ· Մխեմ· Շնչեմ· Պարտաւորեմ· Մնանիմ· Հոսեմ· Գտանեմ·

Աշակերտք աս բայերուն արմատներովը հետեւեալ աշխարհաբար խօսքերը գրաբար բարդի դարձունեն ։

Վրէժ, քէն խնդրող· Նախանձով (եռանդով) խընդրող· Արեան, գէշի (լէշի) խանձած (բորբոքած)· Արիւն թափող· Արծաթով (ստակով) գնուած Մարդ գնող· Ոսկով, արծաթով օծուած· Արծաթէ, պղնձէ, ոսկիէ ձուլուած (թափուած)· Արմատէն խըլուած· Աւագները (մեծերը), հիւրերը մեծարող· Փոխ, աւանդ, կաշառ, պարգեւ, համար, վրէժ առնող· Երախտիք առնող (ընդունող)· Բանիւ (խօսքով) կռուող· Ծաղիկ, պտուղ, հասկ, կրկուտ քաղող (ժողվող)· Ծայրերէն քաղուած (կտրուած)· Բանտի, պատերու, քարերու մէջ արգիլուած· Բարի խօսող (միջնորդող)· Չար խօսող (ամբաստանող)· Բարի, չար ըսող· Գետինը քսուող (սիւրիւքլէնէն)· Կառք, նաւ վարող· Գերի, մարդ վարող (յափշտանող, տանող)· Հովէն վարուած (տարուած)· Գինի, ցորեն, մարդ վաճառող· Ժամանակը վաճառող (պարապ անցընող)· Խորը, մէջը մխուող (խոթուող)· Ձեռքը մխող (ձեռք զարնող)· Ծուխ, բոց, հուր, մահ շնչող· Աստուծմէ, հոգիէն շնչուած (ներշնչեալ)· Մահու, պատժոյ պարտաւորուած (դատապարտուած)· Դատաստանով



պարտաւորուած· Ջրոյ մէջ, կաթով սնած· Տունը, մէկուն ձեռքը սնած (կրթուած)· Զով տեղեր սնած· (մեծցած·) Հուր, ջուր վազցնող· Դարէ (ուշուրումէ) վար նետուած· Հնարք գտնող·

## 36. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ բայերուն բայանունները գտնեն ։

Այրիմ· Գովեմ· Ապրիմ· Գրեմ· Զգենում· Կամիմ· Մոռանամ· Ուրանամ· Պաշտեմ· Գնամ· Իմանամ· Սպանանեմ· Բերեմ· Ցուցեմ· Կրեմ· Կեամ Մտանեմ· Շինեմ· Պատմեմ Տարածեմ· Խօսիմ· Բխեմ· Զարդարեմ ։

Աշակերտք հետեւեալ աշխարհաբար խօսքերը վերի բայանուններով գրաբար բարդ բառերու դարձունեն։

Անձկով (կարօտով) այրող· Կէս այրած· Ինքզինք գովող· Ինքզինք ապրեցնող (ազատող)· Մատեան (գիրք) պատմութիւն գրող· Ձեռքով գրուած· Խարազն, ծիրանի զգեցող (հագուող կամ հագած)· Բարի, չար կամեցող· Երախտիք մոռցող· Աստուած ուրացող· Աստուած, կուռք, դիք (չաստուածներ) պաշտող· Ճամբայ գացող· Ծովով, նաւով գացող· Հնարք (ճամբայ, կերպ) իմացող (գտնող)· Չար բաներ իմացող (հնարող)· Տէրը, եղբայրը սպաննող· Պտուղ, փուշ, անձրեւ, բուք (թխփի) բերող· Խորերը, ջուրերուն մէջ յուզող (փնտռող)· Խռովութիւն, անձրեւ յուզող (հանող, շարժող)· Նախանձէ յուզեալ (շարժեալ)· Բեռ, ջուր կրող (տանող)· Վիշտ կրող· Լեռը, շինի (մարդ եղած տեղ) մէջ ապրող· Վիշտով ապրող· Որջ, ծակ, խորը, մէջը

մնող· Պատ, խորան շինող· Տուն, աշխարհք շինող (շէնցնող)· Մարդով շէնցած· Սուտ բաներ պատմող· Դիւրին, դժուարին (ոճով) պատմուած· Բազուկները տարածելով· Գետնի վրայ տարածուած· Առակ խօսող· Որովայնէն (փորէն խօսող)· Ատեանի մէջ խօսող· Հնութեանց վրայ խօսող· Երկրէ բխած· Հուր, Ջուր բխող· Աստղերով, ծաղիկներով զարդարուած,

## 37. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ բայերուն բայանունները գտնեն ։

Քաղցնում· Մածնում· Կատարեմ· Վարժեմ· Մահանամ· Զուեմ· Պշնում· Կոխեմ· Առաքեմ· Չափեմ· Հատիմ· Զգածնում· Խորհիմ· Ընտրեմ· Եփեմ· Ամոքեմ· Դարմանեմ· Արածեմ· Զգենում· Ածեմ· Կապեմ· Կոտրեմ· Կարեմ· Ցնորեմ· Աղամ· Կերտեմ· Ճարակիմ·

Աշակերտք հետեւեալ աշխարհաբար խօսքերը վերի բայերուն բայանուններովը կամ արմատներովը գրաբար բարդի դարձունեն ։

Ինչքի (հարստութեան) քաղցած (անօթի)· Տախտակով մածուած (վրան ծածկուած)· Կամք, հրաման կատարող· Ձի, մանուկ (աղայ) վարժող· Մտօք վարժուած (ան որ խեռ, անհնազանդ չէ)· Սրով, սովով թոպելով (ծեծելով) մահացած (մեռած)· Խղդուելով, հեղձնլով մահացած· Երկինք չուող· Երկինք պշնող· Մարմնոյ, երկրի պշնող (մարմնաւոր, երկրաւոր բաներու յարեալ)· Ոտքով կոխուած· Երկինքէն առաքուած (ղրկուած)· Երկիր չափող· Ժանտ, չար (գէշ) հատող· Սուսերով, մթով, քուրձով զգածեալ (պատած)· Իրը (եղելութիւնը) զգացող (իմացող), գիտցող· Մտքին մէջ (ինքիրեն) խորհող· Իրաւունքը խորհող (իրաւունքը հատուցանելով հաշտուող)· Իրաւունքն ընտրող (կտրող, որոշող)· Իւղ (օծանելիք), հաց եփող· Կերակուր ամոքող (բարեխառնող)· Խոշինք դարմանող, արածող· Խարազն, ծիրանի, քուրձ, տերեւ զգեցող (հագած)· Քուն, պատիժ բերող (տուող)· Կամար (գօտի) կապող (մէջքը)· Կամարներով կապուած (շինուած). Հոգ, խնամ տանող· Նուագ (եղանակ) հանող (երաժիշտ)· Խունկ ծխող· Տղաք, մարդիկ, փայտ, սանձ, չերտեր կտրող· Ծայրերէն, կէսէն, մէջ տեղէն, մօտէն (խորունկէն), տակէն (արմատէն) կտրուած· Քարէ կտրուած (մէկ կտոր քարէ)· Խելքը ցնորեցնող կամ ցնորած· Խունկ աղացող· Մլյ (ջաղացքի) մէջ աղացող (տէյիրմէնճի)· Կաւէ, փայտէ, քարէ, կրկտէ (չալը չըրբը) կերտուած (շինուած)· Հրաշքով (զարմանալի կերպով) կերտուած· Ձեռքով, նկարով կերտուած (շինուած)· Խոտ ճարակող ։



## 38. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ բայերուն բայանուն արմատները գտնեն ․

Կապտեմ· Դաւեմ· Ծախեմ· Շարժեմ· Բառնամ· Ծեծեմ· Խողխողեմ· Վիժեմ· Լնում· Սուղեմ· Ընկենում· Փորեմ· Խարեմ· Հասանեմ· Հանեմ· Ցուցանեմ· Կորուսանեմ· Հատուցանեմ· Հատանեմ· Ցարդարեմ· Բխիմ· Քննեմ· Զանցանեմ· Հեղձնում· Թափեմ·

Աշակերտք այս բայերուն բայանուն արմատներովը հետեւեալ աշխարհաբար խօսքերը գրաբար բարդի դարձունեն ։

Դի, տաճար, սեղան կապտող (կողոպտող)· Մարդ-դաւող. Մարդ ծախող (սպառող)· Հովէն շարժած. Բեռ վերցնող. Կական (լաց) վերցնող (բրցնող)· Բրով (սափայով), ոզորով (բարակ գաւազանով) ծեծուած· Սրով խողխողուած. Գահէ (ուշուրումէ), քարէ (ժայռի վրայէ վար) նետուած· Գետի մէջ նետուած· Ծաղկով, հացով, պտղով, որդերով, խնդութեամբ լեցուած· Գանիւ (ծեծով) լեցուած (շատ կամ չարաչար ծեծուած)· Գետի, ձեան, ջրոյ մէջ, խորը սուզած (ընկղմած)· Տերեւն ինկած (թափած)· Նետ, շանթ, քար, կրակ նետող· Ջէնքը, լուծը նետող (ապստամբ·) Գետը նետուած· Գետնի, քարի մէջ փորուած· Եղեմէն խարած (այրած)· Ձեռքը հասնող (կարող)· Ձուկ, ջուր հանող· Միս հանող (քէփչէ·) Կինը հանող (արծըկող)· Պատկեր հանող (նկարող·) Խաչը հանող· Հարկ հանող (առնող, ժողվող)· Մուխ հանող (օճագ)· Քէն հանող (ոխ առնող)· Երազ հանող (մեկնող)· Ճամբայ, երազ, ժամեր, տօներ ցուցընող· Պտուղը (արդիւնքը), յոյսը կորսնցնող· Հետքը (իզը) կորսուած· Երախտիքը կորսնցնող (ապերախտ)· Վարձքը, երախտիքը, քէնը (վրէժը) հատուցանող· Քար, երկաթ կտրող (մետաղներէն հանող)· Փայտ կտրող· Յոյսը, քունը հատած· Թաթերը կտրած· Երակը կտրող (արիւն առնող)· Մէջ կտրուած (միս չուտելու ուխտ ընող)· Տաճար, սեղան յարդարող (շտկող)· Խոտով, ընդով բտող (կերակրուող)· Խորունկ բաներ քննող· Երդումը, ուխտը, պատուի-



րանքը, օրէնքը զանց ընող (չրռնող)· Ծովը խեղդուած. Տերեւները թափած. Մարդէ (բնակչէ), յիշողութենէ թափուր. Ոխը թափող· Նետ թափող (տեղացող) ։

## 39. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ բայերուն բայանունները գտնեն ։

Ներկեմ· Ծփամ· Խառնեմ· Կռեմ· Կոփեմ· Հայիմ· Ամամ· Կարեմ· Համբերեմ· Պատճառեմ· Կրծեմ· Ուտեմ· Բնակիմ· Ապստամբիմ· Մանեմ· Քանդակեմ· Պարարեմ· Դրժեմ· Նենգեմ· Բարձրանամ· Լլկեմ· Յիշեմ· Նիւթեմ· Կծանեմ· Յօդեմ· Երդնում· Դիեմ· Վիրամ ։

Ծիրանի ներկող· Նարօտ ներկող (պօյաճի)․ Ծովին մէջ ծփացող· Ծծմբով, ծխով խառնուած. Կռանով (չէքիճով) կռուած (ծեծուած, չէքիճ իշի)· Քարէ կռուած· Քար կոփող (թաշճի)· Ծովու վրայ նայող· Երկինք նայող· Ծովը թափող· Կօշիկ, խորան (չատըր) կարող· Ուզածը կրցող (անձնիշխան)· Խստութեան, վիշտերու համբերող· Հիւանդութիւն պատճառող (կեղծող, հիւանդ ձեւացող)· Կաշառք ուտող· Գազաններէ բնակուած· Անտառներու մէջ բնակող· Իր անձին ապաւինող· Ոսկւով մանուած (հիւսուած)· Ոսկւով քանդակուած· Որովայնը պարարող· Ուխտին դրժող (ուրող)· Տէրոջը դրժող (մատնիչ)· Ուխտը, տէրը նենգող· Մինչեւ երկինք բարձրացած· Սովէ լլկուած (տանջուած, նեղուած)· Չարիքը յիշող (ոխ պահող)· Չարիք նիւթող Ջերմութեամբ կըծանող (խայթող)· Սուտ բաներ յօդող (շինող), կամ

սուլթեամբ յօղուած. Սուտ երդուող. Ստինք դիեցող (տղայ, կաթ կերող). Վարս (գլխու մազ) վերայող (ածիլող, պերպեր) ծամքայ վերայող (չոկող)։

# ԴԱՍ ԻԳ.

## ԱՆԿԱՆՈՆ ԿԱՄ ԶԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ

### ԲԱՅԱՍԱԿԱՆ ՄԱԿԲԱՅ. ԱՌ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՈՒՐԻՇ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ. Յ ՆԱԽԴԻՐ

ԿԱՆ. 1. Անկանոն կամ Զարտուղի կ'ըսուին այն բայերը, որոնց քանի մը ժամանակներն, այսինքն՝ Կատարեալը, Ապառնին, Հրամայականն ու Անցեալը չորս Լծորդութեանց խոնարհման հասարակ կերպէն կը զատուին։

ԿԱՆ. 2. Անկանոն բայերէն ոմանք շատ փոքր տարբերութիւն մը ունին. ինչպէս՝ Ասեմ, Գիտեմ, Կարեմ (կրնամ) բայերը, որոնց կատարեալը փոխանակ եցի վերջաւորելու՝ ացի կ'ըլլայ. Ապառնին ացից, Անցեալը՝ ացեալ. ինչպէս.

| | Կտ. | Ապ. | Հր. | Անց. |
|---|---|---|---|---|
| Կարեմ, | Կարացի, | Կարացից, | (անսովոր), | Կարացեալ. |
| Ասեմ, | Ասացի, | Ասացից, | Ասա, | Ասացեալ. |
| Գիտեմ, | Գիտացի, | Գիտացից, | Գիտա, | Գիտացեալ. |

ԿԱՆ. 3. Առնեմ, Կ'ընեմ, Յառնեմ, Կ'ելլեմ (նստած կամ պառկած տեղէն), Յանցանեմ, սխալիմ, յանցանք գործեմ, Մեղանչեմ, մեղք գործեմ, հետեւեալ կերպով կը խոնարհին.



ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ

| | | | |
|---|---|---|---|
| Առնեմ. | Յառնեմ. | Յանցանեմ. | Մեղանչեմ. |

ԱՆԿԱՏԱՐ ԱՆՑԵԱԼ

| | | | |
|---|---|---|---|
| Առնէի. | Յառնէի. | Յանցանէի. | Մեղանչէի. |

ԿԱՏԱՐԵԱԼ ԱՆՑԵԱԼ

| | | | |
|---|---|---|---|
| Արարի. | Յարեայ. | Յանցեայ. | Մեղայ |
| Արարեր. | Յարեար. | Յանցեար. | Մեղար. |
| Արար. | Յարեաւ. | Յանցեաւ. | Մեղաւ. |
| Արարաք. | Յարեաք. | Յանցեաք. | Մեղաք. |
| Արարէք. | Յարեայք. | Յանցեայք. | Մեղայք. |
| Արարին. | Յարեան. | Յանցեան. | Մեղան. |

ԱՊԱՌՆԻ

| | | | |
|---|---|---|---|
| Արարից. | Յարեայց. | Յանցեայց. | Մեղայց. |
| Արասցես. | Յարիցես. | Յանցիցես. | Մեղիցես. |
| Արասցէ. | Յարիցէ. | Յանցիցէ. | Մեղիցէ. |
| Արասցուք. | Յարիցուք. | Յանցիցուք. | Մեղիցուք. |
| Արասջիք. | Յարիջիք. | Յանցիջիք. | Մեղիջիք. |
| Արասցեն. | Յարիցեն. | Յանցիցեն. | Մեղիցեն. |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

| | | | |
|---|---|---|---|
| Արա. | Արի. | Յանցիր. | Մեղիր. |
| Մի առներ. | Մի յառներ. | Մի յանցաներ. | Մի մեղանչեր. |
| Արարէք. | Արիք. | Յանցերուք. | Մեղարուք. |
| Մի առնէք. | Մի յառնէք. | Մի յանցանէք. | Մի մեղանչէք. |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

| | | | |
|---|---|---|---|
| Առնիցեմ | Յառնիցեմ. | Յանցանիցեմ. | Մեղանչիցեմ. |

ԱՆԵՐԵՒՈՅԹ

| | | | |
|---|---|---|---|
| Առնել. | Յառնել. | Յանցանել. | Մեղանչել. |

ԱՆՈՐԻՇ ԱՆՑԵԱԼ

Արարեալ· Յարուցեալ· Յանցուցեալ· Մեղուցեալ·

ԱՆՈՐԻՇ ԱՊԱՌՆԻ

Առնելոց· Յառնելոց· Յանցանելոց· Մեղանչելոց·

---

ԲԱՑԱՍԱԿԱՆ ՄԱԿԲԱՅ

1. Բացասական Մակբայ կ'ըսուին ոչ, չ, եւ մի բառերը :

2. Ասոնք սովորաբար բայէն առջը կը դրուին. ոչը զատ կը գրուի, չ՝ բային հետ կից. ոչ գիտեմ; չգիտեմ.

Մի կը գործածուի, երբ խօսքը հրամայելով է.

| | |
|---|---|
| Չեմ սիրեր. | Ոչ սիրեմ |
| Չենք կարդար· | Ոչ ընթեռնումք |
| Չուզեցին· | Ոչ կամեցան |
| Պիտի չտեսնէ· | Ոչ տեսցէ |
| Չտեսնէ (հրամայելով կամ սպառնալով) | Մի տեսցէ |
| Մի խօսիր· | Մի խօսիր |
| Չընենք (հրամայելով) | Մի արասցուք |

ԱՌ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՈՒՐԻՇ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ

Առ նախադրութիւնը գործիական խնդրով կը նշանակէ

Նախ՝ մէկուն կամ մէկ բանի ատենը, օրինակ·

| | |
|---|---|
| Սողոմոնին ատենը, | Առ Սողոմոնիւ |
| Տրդատայ ատենը, | Առ Տրդատաւ |
| Կենդանութեան ատենը, | Առ կենդանութեամբ |
| Անոր ատենը, | Առ նովաւ |



Երկրորդ՝ կը նշանակէ քովն ի վեր, եզերքը (քէնարը

| | |
|---|---|
| Գետին քովն ի վեր, | Առ եզերբ գետոյն |
| Պատին քովն ի վեր, | Առ որմովն |
| Ճամբուն եզերքը, | Առ ճանապարհաւ |

Երրորդ՝ կը նշանակէ բանի մը հետ բաղդատելով, անոր նայելով·

| | |
|---|---|
| Յարդը ցորենին նայելով ի՞նչ է· | Զինչ է յարդ առ ցորենով |
| Անիկա քեզի նայելով տգէտ է· | Տգէտ է նա առ քեւ |
| Այս խռովութիւնը երեկուանին քով բան մը չէ· | Աղմուկս չէ ինչ առ այնու որ երեկն եղեւ |

Յ ՆԱԽԴԻՐ

Յ Նախդիրը հայցականով սովորաբար Ասեմ բային տրական խնդրոյն տեղ կը դրուի·

| | |
|---|---|
| Ինծի ըսէ· | Ասա ցիս |
| Անոր կ'ըսէ· | Ասէ ցնա |
| Անոնց մի ըսէք· | Մի ասիցէք ցնոսա |
| Իր հօրը ըսաւ· | Ասաց ցհայր իւր |

---

## 40. Հրահանգ

Օրէնքը չեն գիտեր· Գաւաթը կրնա՞ս խմել· Ինծի ըսէ· Ծառայիս կ'ըսեմ, այդ (բանը) ըրէ, եւ կ'ընէ· Իրաւունք եւ արդարութիւն ըրի· Աստուած երկինքըն ու երկիրն ըրաւ· Աստուծոյ կամքն ընենք· Մի ըսեր թէ չեմ կարող· Անոր կամքը գիտէ· Ելաւ եւ

կ'ուզէր երթալ. Ժողովուրդը մեղանչեց. Մեղանչեցի, վասն զի արդար արիւն թափեցի. Ծառ որ պտուղ չըներ. Ետքը քեզի պիտի ըսեմ. Անոր կ'ըսէ. Ինծի ըսէ. Ինծի ականջէս վար ըսաւ. Դուք հոն չէք կըրնար դալ. Հիմա չես կրնար դալ. Ինչո՞ւ չեմ կրնար դալ հիմա. Դուն ամէն բան գիտես. Մէկը չի կրնար ներս մտնել. Չէի գիտեր որ հոս է. Ան ինծի ամէն (բան) ըսաւ. Եթէ եղբայրդ քեզի յանցանք ընէ, յանդիմանէ զանի. Եւ, քալէ. Գազաններն անոր չէին վնասեր. Քեզի ի՞նչ ըրաւ. Ինծի զարնել կ'ուզէր, բայց չկրցաւ. Գիտեմ որ այն մարդը բարկասիրտ է. Եթէ դուն ես, մեզի համարձակ ըսէ. Ձեզի ըսի եւ չէք հաւատար. Խորհուրդ ըրին որ զանի սպաննեն. Անոր ընթրիք ըրաւ. Անոր ատենը մեծ սով եղաւ. Տրդատայ եւ Գրիգորի ատենը եղաւ Հայաստանի դարձը. Դիոկղետիանոսի ատենը քրիստոնեաներէն շատերը սպաննուեցան. Լեռան տակէն կ'երթային. Դաշտին քովն ի վեր բանակեցաւ զօրքը. Ծովին եզերքն ի վեր ցամաքին մօտ կը նաւէին. Ես անոր նայելով կամ անոր քով բան մը չեմ. Մեր իմաստութիւնը քուկինիդ քով փոքր բան մըն է. Ինչպէս տղայ մը հսկայի մը քով, դուն ալ այնպէս ես անոր քով. Աս երկիրը պզտիկ գնտակի մը պէս է արեգական նայելով. Քրիստոս Հերովդէսին ատենը ծնաւ, եւ Պիղատոսի ատենը խաչուեցաւ:

Աշակերտք վերի հրահանգը գրաբարի դարձունեն՝ հետեւեալ բառերուն միտ դնելով.

| | |
|---|---|
| Խմել, ըմպել | Վնասեմ, մեղանչեմ |
| Ետքը, ապա | Զարնեմ, հարկանեմ |
| Ականջէ վար, յունկանէ | Որ (շղկ.), զի |



| | |
|---|---|
| Հոն, անդր (շարժում) | Հայաստան, աշխարհն Հայոց |
| Հիմա, այժմ | |
| Ամէն բան, զամենայն (հյց.) | Տակ (լեռան), ստորոտ |
| | Մօտ, մօտ ի |
| Ներս, ի ներքս | Բան մը, ինչ |
| Որ (շղկ.), թէ | Ինչպէս, որպէս |
| Հոս, աստ | Տղայ, մանուկ |
| Յանցանք ընել, մեղանչել | Պզտիկ, փոքր |
| Քալեմ, գնամ | Գնտակ, գնդակ |

| | |
|---|---|
| Օրէնքը չեն գիտեր. | Ոչ գիտեն զօրէնս |
| Գաւաթը կրնա՞ս խմել. | Կարես ըմպել զբաժակն |
| Ինծի ըսէ. | Ասա ցիս |

---

## ԼՈՒԾՈՒՄ

Ոչ գիտեն զօրէնս. Նախադասութիւն ժխտական. Գիտեն, բայ ներգ. սահմ. ներկ. յք. Գ. դէմք: —Գիտեն, որոնք. —Նոքա. նոքա. էակ. դեր. յք. Գ. դէմք, տէր բայի գիտենին. զօրութեամբ կ'իմացուի. —Գիտեն, զինչ. —Զօրէնս. զօրէնս, գոյ. յք. հյց. սեռի խնդիր Գիտենին: Ոչ, բացասական մակբայ, բային նշանակած գործողութիւնը կը բացասէ, կը ժխտէ:

Ասա ցիս. Ասա բայ ներգ. հրամ. եզ. Բ. դէմք: —Ո՞վ պիտի ըսէ. —Դու, էակ. դեր. եզ. Բ. դէմք, զօրութեամբ, տէր բայի Ասային: Ասա, որո՞ւն. —Ցիս, ինծի. ցիս, ց նախդրիւ բնութեան խնդիր Ասային:

# ԴԱՍ ԻԴ.

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

(Շարունակութիւն)

### ԸՆԴ ԵՒ ԸՍՏ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Լսեմ, Ճանաչեմ, Ուտեմ, Տանիմ անկանոն բայերն հետեւեալ կերպով կը խոնարհին ։

ՍԱՀՄ. ՆԵՐԿ.

| | | | |
|---|---|---|---|
| Լսեմ, | Ճանաչեմ, | Ուտեմ, | Տանիմ. |

ԱՆԿ. ԱՆՑ.

| | | | |
|---|---|---|---|
| Լսէի, | Ճանաչէի, | Ուտէի, | Տանէի. |

ԿՏ. ԱՆՑ.

| | | | |
|---|---|---|---|
| Լուայ, | Ծանեայ, | Կերայ կամ Կերի, | Տարայ. |
| Լուար, | Ծանեար, | Կերար » Կերեր, | Տարար. |
| Լուաւ, | Ծանեաւ, | Կերաւ » Եկեր | Տարաւ. |
| Լուաք, | Ծանեաք, | Կերաք, | Տարաք. |
| Լուայք, | Ծանեայք, | Կերայք, | Տարայք. |
| Լուան, | Ծանեան, | Կերան, | Տարան. |

ԱՊԱՌՆԻ

| | | | |
|---|---|---|---|
| Լուայց, | Ծանեայց, | Կերայց » Կերից, | Տարայց. |
| Լուիցես, | Ծանիցես, | Կերիցես, | Տարցիս. |
| Լուիցէ, | Ծանիցէ, | Կերիցէ, | Տարցի. |
| Լուիցուք, | Ծանիցուք, | Կերիցուք, | Տարցուք. |
| Լուիջիք, | Ծանիջիք, | Կերիջիք, | Տարջիք. |
| Լուիցեն, | Ծանիցեն, | Կերիցեն, | Տարցին. |

ՍՏՈՐ.

| | | | |
|---|---|---|---|
| Լսիցեմ, | Ճանաչիցեմ, | Ուտիցեմ, | Տանիցիմ. |



ՀՐԱՄ.

| | | | |
|---|---|---|---|
| Լուր, | Ծանիր, | Կեր, | Տար. |
| մի Լսեր, | մի Ճանաչեր, | մի Ուտեր, | մի Տանիր. |
| Լուարուք, | Ծաներուք, | Կերայք, | Տարայք. |
| Մի Լսէք, | մի Ճանաչէք, | մի Ուտէք, | մի Տանիք. |

ԱՆԵՐ.

| | | | |
|---|---|---|---|
| Լսել, | Ճանաչել, | Ուտել, | Տանիլ. |

ԱՆՈՐ. ԱՆՑ.

| | | | |
|---|---|---|---|
| Լուեալ, | Ծանուցեալ, | Կերեալ, | Տարեալ. |

ԱՆՈՐ. ԱՊ.

| | | | |
|---|---|---|---|
| Լսելոց, | Ճանաչելոց, | Ուտելոց, | Տանելոց. |

---

### ԸՆԴ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Ընդ նախադրութիւնը սեռական խնդրով կը նշանակէ փոխանակ, տեղը. եզակին՝ տրական, յոգնակին՝ հայցական խնդրով կը նշանակէ հետը ։

| | |
|---|---|
| Ընդ իմ եւ ընդ քո, | Իմ եւ քու տեղդ |
| Ընդ քո, | Քու տեղդ |
| Ընդ նորա, | Անոր տեղը |
| Ընդ եղբօր իւրոյ, | Եղբօրը տեղը |
| Ընդ իս (ոչ ինձ). | Ինծի հետ |
| Ընդ նմա, | Անոր հետ |
| Ընդ նոսա, | Անոնց հետ |
| Ընդ եղբօր իւրում, | Իր եղբօրը հետ |
| Ընդ եղբարս իւր, | Իր եղբայրներուն հետ |

2. Ընդ հայցական խնդրով տեղէ մը անցնելու, մտնելու, ելլելու. բան մ'ուրիշ բանի հետ կապելու,

կցեալ. ընդարձակ տեղ մը տարածուելու, պտտելու, եւ ուրիշ ասոնց նման խօսքերու մէջ կը գործածուի.

| | |
|---|---|
| Եմուտ ընդ պատուհանն ի ներքս. | Պատուհանէն ներս մտաւ |
| Անց ընդ դուռն պարտիզին. | Պարտէզին դուռնէն անցաւ |
| Կապեաց զՋորին ընդ մացառն. | Ջորին մացառին կապեց |
| Եղ համբաւ նորա ընդ ամենայն երկիրն. | Անոր անունը բոլոր այն երկրին մէջ տարածուեցաւ |

3. Ընդ նախադրութիւնը հայցական խնդրով կըրկնուելով կը նշանակէ մէջտեղը ։

| | |
|---|---|
| Մի լիցի կռիւ ընդ իս եւ ընդ քեզ. | Իմ ու քու մէջտեղ կռիւ չըլլայ |
| Կախեալ էր ընդ երկինս եւ ընդ երկիր. | Երկնի ու երկրիս մէջտեղ կախուած էր |

4. Ընդ գործիականով կը նշանակէ տակը.

| | |
|---|---|
| Նստայ ընդ ծառովն. | Ծառին տակը նստայ |
| Գունդն երկրորդ ընդ իմով ձեռամբ է. | Երկրորդ գունդը իմ ձեռքիս տակն է |

ԸՍՏ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Ըստ տրական խնդրով կը նշանակէ՝ համեմատ (կէօրէ).

| | |
|---|---|
| Ըստ բանի քում, | Քու խօսքիդ համեմատ |
| Ըստ նմա, | Անոր (կարծեացը, խօսքին) նայելով |

2. Ըստ հայցականով տեղէ մը, բանէ մը անդին անցնիլ կը նշանակէ.



| | |
|---|---|
| Անցին ըստ գետն. | Գետէն անդին անցան. |
| Ելին ըստ քաղաքն. | Քաղքէն դուրս, անդին ելան |

## 41. Հրահանգ

Անոր ձայնը լսեցի. Հայրդ գլխս ճանչցաւ. Զանի թագաւորին տարաւ. Զանոնք իրենց տուները տարին. Չար գազան մը կերաւ իմ որդիս. Խուլերը կը լսեն, ու համրերը կը խօսին. Իմ աղաչանքիս մտիկ ըրէ. Ինծի մտիկ ըրէք. Քեզ չեմ ճանչնար. Տեղացիները զանոնք ճանչցան. Այդ տղան իր մօրը տար. Քեզ իմ տունս տանիմ. Զանոնք օտար երկիր մի տանիք. Զքեզ ճանչցիր. Մարախը երկրին բոլոր կանաչեղէնը կերաւ. Եղբայրդ անոր հետ կը պտտի. Ծառին տակը կը նստէր. Զանի բոլոր քաղաքը պըտըտցուց. Դաշտին վրայ տարածուեցան. Քաղքին մէջ լուր մը ելաւ թէ թագաւորը մեռաւ. Ինծի հետ մի խօսիր. Կիրճէն անցնելով անոր ետեւէն ինկան, բայց չկրցան հասնիլ. Ծովէն երթանք, մեզի ցամաքէն ճամբայ չկայ. Արեւելքին կողմը եղող գունէն չելլես. Իմ յարկիս տակը մտան. Նեղ դուռնէն մըտէք. Անոնց հետ վէճի մի մտներ. Երկու եղբարք իրարու հետ կռուեցան (խօսքով). Զօրքը կամուրջէն անդին անցաւ. Անոնք իրենց տիրոջը հրամանէն անդին անցան. Մեզի (մեր կարծեացը) նայելով դըժուարին չէ. Մեր կարողութեան համեմատ պիտի ջանանք. Գաւթէն անդին չելան ։

Աշակերտք հետեւեալ բառերուն նայելով այս հրահանգը գրաբարի դարձունեն ։

| | |
|---|---|
| Տեղացիք, որք տեղւոյն | Կանաչեղէն, բանջար |

| | |
|---|---|
| Պտտիմ, շրջիմ | Ճամբայ, ճանապարհ |
| Պտտցունեմ, շրջեցուցանեմ | Արեւելքին կողմը եղող, որ ընդ արեւելս |
| Տարածուիմ, սփռիմ | Վէճի մտնել, մտանել ի պայքար |
| Լուր, համբաւ | Կռուիլ (խօսքով), կագել |
| Ետեւէն իյնալ, զհետ պնդել | Կարողութիւն, կար |
| Չկայ, չիք | |

ԴԻՏՈՂ. Լսեմ բայը հայցական խնդրով լսել կը նշանակէ, տրականով՝ մտիկ ընել, անսալ։

---

### ԼՈՒԾՈՒՄ

Եմուտ ընդ պատուհանն ի ներս. Եմուտ բայ չէզոք. կտ. եզ. Գ. դէմք, մտանեմ էն. — Եմուտ, ո՞վ, —Նա. Ճակ. դեր. եզ. Գ. դէմք, զօրութեամբ, տէր բային եմուտ ին։ —Եմուտ նա, ուր. —Ի ներս. մակբայ, որ տեղւոյ պարագայ մը, այսինքն՝ ուր մտնելը կը ցուցնէ. Եմուտ նա ի ներքս, ուստի. —Ընդ պատուհանն, պատուհանէն. ընդ նախադրութեամբ բնութեան խնդիր, նոյնպէս մտնելուն ուրիշ մէկ տեղւոյ պարագան կը ցուցնէ, այսինքն՝ ուստի մտնելը։

## ԴԱՍ ԻԵ.

### ԲԱՐԴ. ԲԱՌԵՐ

Զ ՆԱԽԴՐԻՆ ԱՅԼԵՒԱՅԼ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բարդ բառերու վրայ բաղդատէ Ը եւ ԻԲ դասերը։ Կան բարդ բառեր որոնք Բայանունէ եւ Մակբայէ մը բաղադրուած են. ինչպէս. Մշտաբուխ. Շատախօս. Քաջատես, որոնք շինուած են Բուխ, Խօս, Տես բայանուններէն ու Միշտ, Շատ, Քաջ մակբայներէն։



Աշակերտք հետեւեալ բայերուն բայանուն արմատները գտնեն։

Բուսանիմ. Հաւանիմ. Բեկանիմ Շարժիմ. Թըռչիմ. Հասանեմ. Ցածիմ. Կամ. Մահանամ. Ջանամ. Մեռանիմ. Հայիմ. Եփիմ. Ծաւալիմ. Ջնջեմ. Ծագեմ. Զարթնում. Ցասնում. Ասեմ. Գուշակեմ. Գիտեմ. Մտանեմ. Կիզում. Կեամ. Տարածեմ. Խօսիմ. Դատիմ. Բխեմ. Մարտնչիմ. Խաղիմ. Ընթանամ. Պշրեմ. Կորովեմ. Շնչեմ. Սնանիմ. Հաւատամ. Գտանեմ. Վիրաւորեմ. Ընծայեմ. Հեղուսեմ. Հիմնեմ. Մաղեմ. Սուեղծանեմ. Կնքեմ. Դիմեմ Կարգեմ. Բարձրանամ. Պարծիմ. Գանեմ. Լկեմ. Զինեմ. Կաղմեմ. Աւերեմ. Փլանիմ. Ցանեմ. Փախիմ. Ամբառնամ. Նուագեմ. Ցնորիմ. Պահեմ։

Աշակերտք հետեւեալ աշխարհաբար խօսքերը վերի բայանուններով բարդի դարձունեն։

Դիւրաւ, ինքնին (ինքնիրէն) բուսնող. Դիւրաւ հաւանող (համոզուող), բեկանող. Ծանր, արագ, միշտ շարժող. Բարձր թռչող. Երագ (շուտ), վաղ (կանուխ) հասնող. Ընդվայր (սադին անդին, դատարկ) յածող (պտտող). Առընթեր (քովը), շուրջ (բոլորտիքը), առաջի (առջեւը) կեցող. Ինքնիրեն կեցող (անսատեղծ, ինքնագոյ). Վրան կեցող. Խայտառակաբար մահացած (սպաննուած). Զուր, ժրութեամբ ջանացող. Կէս, վաղ (կանուխ) մեռած. Քաղցր, առաջուց նայեցող. Կէս եփած. Լայնաբար ծաւալեալ. Համօրէն (բոլորովին) ջնջուած. Ցանկարծ

ծագող· Մանր արթնցող, ցասնող (բարկացող)· Կանխաւ լսող կամ լսուած, գուշակուած, գխտցող, հասած, մնած· Ողջ (ամբողջ) կիզելի (այրելի)· Երկայն, միայն ապրող· Միշտ, լայն, համօրէն (ընդհանուր) տարածուած· Ունայն, արդար, ուղիղ խօսող, դատող· Ցանկարծ, առատ, յորդ բխող· Հակառակ, ընդդէմ մարտնչող· Արագ խամրող (թառամող)· Արագ, թեթեւ, խուռն (բազմութեամբ), զոյգ (հաւասար) ընթացող (վազող)· Արդար կշռող, կորովող (չխաբող)· Դառն, քաղցր, սաստիկ շնչող· Դատարկ, ընտանեաց մէջ, ընդվայր, ընդարձակ, փափուկ սնած (մեծցած)· Թերի (պակաս), ուղիղ, նոր հաստատող· Զքնաղ (հազիւ), դիւրաւ, դըժուարաւ գտնուող· Ցանկարծ, առաջ գտնուած· Կարի (շատ) վիրաւորուած· Նոր ընծայուած· Հաստատ (անշարժ) հեղուսուած (դամուած), հիմնուած· Մանր մանրուած· Նախ, նոր ստեղծուած· Նոր կընքուած· Ցառաջ, տար (հեռու) դիմող· Ցառաջ կարգուած· Ուղիղ բարձրացած· Ունայն, սին (պարապ տեղը) պարծող· Զարաչար գանուած, լլկուած· Խապառ (բոլորովին) գինեալ· Պինդ (սըգը) կազմուած· Վաղ (կանուխ, շուտ) աւերուած, փլած, փտած· Վաղ յառնող (առտուն ելլող)· Վեր ամբարձեալ (վերցուած)· Քաղցր նուագող· Ցայգ (գիշերը) ցնորող (այլըգլոյան)· Գիշերը գացող։

Զ ՆԱԽԴՐԻՆ ԱՅԼԵՒԱՅԼ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1· զ Նախդիրը հայցական հոլովի հետ ներգործական բային գործողութեան առարկան կը ցուցնէ, եւ սեռի խնդիր կը կոչուի (Տես Դաս ԺԳ·)։



2· զ Նախդիրը բացառական հոլովի հետ կը նշանակէ մէկուն կամ բանի մը վրայով·

| | |
|---|---|
| Տղուն վրայով, | Զմանկանէն |
| Կտուրին վրայով, | Զկռուոյն |
| Իմ վրայով, | Զինէն |
| Անոր վրայով, | Զնմանէ |
| Անոնց վրայով, | Զնոցանէ |
| Բանի մը վրայով, | Զիմեքէ |
| Մէկու մը վրայով, | Զումեքէ |
| Ուրիշ բանի մը վրայով· | Զայլմէ իմեքէ |

ԴԻՏ· զ Նախդիրով բացառականը պատմական կը կոչուի։

| | |
|---|---|
| Տղուն վրայով լսել կ'ուզեմ· | Կամիմ լսել զմանկանէն |
| Կտուրին վրայով աղէկ բան մը չի պատմուիր· | Ոչինչ ասոյգ պատմի զկռուոյն |
| Ինչո՞ւ իմ վրայովս ամբաստանութիւն կ'ընէք· | Ընդէ՞ր չարախօսէք զինէն |
| Անոր վրայով շատ բան կը լսենք· | Բազում ինչ լսեմք զնմանէ |
| Անոնց վրայով ըսուած խօսքերը սուտ են· | Սուտ են բանքն որ ասին զնոցանէ |
| Մէկու մը եւ բանի մը վրայով երբեք աղէկ կամ գէշ գրած չեմ· | Զիք իմ երբեք գրեալ բարի ինչ կամ չար զումեքէ կամ զիմեքէ |
| Ուրիշ բանի մը վրայով խօսինք, ոչ միշտ մի եւ նոյն բաներու վրայ· | Խօսեսցուք զայլմէ իմեքէ, եւ ոչ միշտ զնոյնոց իրաց |

3. զ Նախդիրը գործիականի հետ կը նշանակէ 1. մէկուն կամ բանի մը բոլորտիքը. 2. բանի մը առտենները։

Դ.Ի.Տ. զ նախդիրով գործիականը պարառական կը կոչուի։

| | |
|---|---|
| Անոր բոլորտիքը, | Զնովաւ |
| Քաղքին բոլորտիքը, | Զքաղաքաւն |
| Կէսօրուան առտենները, | Զմիջօրէիւ, զհասարակ աւուրբ, զմիջաւուրբ |
| Կէս գիշերուան առտենները, | Զմէջգիշերաւ, զհասարակ գիշերաւ |
| Ճամբուն կէսին մօտ, | Զմիջոցաւ ճանապարհին |
| Այն առտենները, | Զայնու ժամանակաւ |
| Բազմութիւնն անոր բոլորտիքը դիզուեցաւ. | Կուտեցաւ ամբոխն զնովաւ |
| Քաղքին բոլորտիքը նըստան. | Նստան զքաղաքաւն |
| Կէսօրուան կամ կէս գիշերուան առտենները քաղքէն կ'ելլէին. | Զմիջաւուրբ կամ զհասարակ գիշերաւ ելանէին ի քաղաքէն |
| Ճամբուն կէսին մօտ վրան հասան. | Զմիջոցաւ ճանապարհին հասին ի վերայ նորա |
| Այն առտեններն այն երկու ազգին մէջտեղ պատերազմ կար. | Եւ էր զայնու ժամանակաւ պատերազմ ի մէջ ազգացն երկոցունց |

## 42. Հրաման

Անոր ձայնը լսեցինք. Յովսէփ իր եղբայրները ճանչցաւ. Էգ առիւծն իր ձագերը կը պաշտպանէ.



Երկրագործը երկիրը կը մշակէ. Քրիստափոր Կոլոմպոս Ամերիկան գտաւ. Անոր վրայով լսեցինք թէ եղբօրը քով է. Ի՞նչ բանի վրայով կը խօսի այդ գիրքը. Այս գիրքը հանքերու վրայ կը խօսի. Վարդանանց պատերազմին վրայ ո՞վ գրեց. Վարդանանց պատերազմին վրայ կը գրեն, Եղիշէ վարդապետ ու Ղազար Փարպեցի որոնք ժամանակակից են այն պատերազմին. Այդ ձեր խօսքը որո՞ւ վրայով էր. Մեր խօսքը թագաւորին որդւոյն վրայով էր. Ասոնք կ'ամբաստանեն անոր վրայով թէ թշնամիներուն ծածուկ օգնական է. Ինծի համար ո՞վ եմ կ'ըսէք. Ձեր վրայով կը լսենք թէ շատ հարուստ էք. Ջուր բերելու գացին. Բան կը փնտռէին որ անոր վրայով ամբաստանութիւն ընեն. Քաղքին բոլորտիքը պատ քաշեցին. Թշնամիները բոլորտիքս պատեցին. Անոր վրան կարմիր քղամիդ առին. Իր հանդերձը վրան առաւ. Ձեռքէն բռնելով ներս մտցուց. Մազերէն բռնելով կը քաշէին. Չորս ծայրերէն (պոչերէն) կախուած աման մը տեսաւ. Խոյ մը Սաբեկայ ծառէն կախուած կը կենար եղջիւրներէն. Մէկ ոտքէն կախուած էր. Տղաքն իրենց մայրերուն վիզէն կախեցին. Քեզի ծուռ կը նայի. Կ'երեւայ թէ քեզի դէմ բան մը ունի. Ծառաներն անոր բոլորտիքը կը կենային. Անոր հանդերձէն բռնեց. Վրան կտաւ մը առած էր, քանզի մերկ էր. Անոր արիւնէն պատին վրայ ցատկեց. Կռապաշտ ազգերէն ոմանք իրենց զաւկները այրելու սովորութիւն ունէին. Մեր Վարազդատ թագաւորին վրայով կը պատմուի թէ Եփրատ գետէն ցատկեց. Հին առենը ի նշան սգոյ եւ ապաշխարութեան սովորութիւն էր քուրձ հագնիլ եւ գլուխը հող դնել։

Աշակերտք այս հրահանգը գրաբարի դարձունեն, հետեւեալ բառերուն միտ դնելով ։

Էգ, մատակ
Զագ (առիւծի, շունի), կորիւն
Երկրագործ, հողագործ
Ի՞նչ բան, զի՞նչ ինչ
Ի՞նչ բանի վրայով զիմէ՞ իմէք
Հանք, քրէակալն նիւթ
Ո՞վ, ո՞վ, ո՞
Որո՞ւ վրայով, զումէ՞
Ծածուկ, գաղտ
Օգնական, ձեռնտու
Ջուր, ոսկի եւն, բերելու երթալ, դրկել. երթալ, յղել կամ առաքել զջրոյ, զոսկւոյ, եւն.
Փնտռել, խնդրել
Քաշել, (պատ, եւն), ածել
Պատ, պարիսպ

Վրան տալ } արկանել զ
Վրան առնել } (գործ.)
Բռնել, ունել զ (բացառ.)
Քաշել, քարշել
Ծայր (լաթի մը). տտուն. սեռ. տտնոյ
Ծուռ նայիլ, ընդ ակամբ հայել
(Մէկուն դէմ) բան մը ունենալ (սրտին մէջ), ունել ինչ խէթ (զումեքէ)
Ցատկել (ջուր, եւն) ցայտել զ (գործ.)
Այրել, ածել զբոցով (կրակին բոլորտիքը դնել)
Սովորութիւն ունենալ, լինել սովոր
Ցատկել (աթլամագ), վազել զ (գործ.)
Գլուխը հող դնել, արկանել հող զգլխով

---

## ՆԱԽԸՆԹԱՑ ՀՐԱՀԱՆԳԻՆ ՎՐԱՅ ՔԱՆԻ ՄԸ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

ԴԻՏ. 1. Զինչ բառը կը հոլովի այսպէս. Ուղ. Զի՞նչ սեռ. է՞ր, տր. ի՞մ, հայց. զի՞նչ, բաց. առիմէ՞, գործ. իւ՞։ Ինչ, բառն ալ կը հոլովի այսպէս. ուղ.



ինչ, սեռ. իրիք, տր. իմիք, հյց. ինչ, բաց. յիմեքէ, գործ. իւիք ։

Ի՞նչ բան, գրաբար կ'ըսուի Զինչ ինչ, եւ երկուքը մէկէն կը հոլովին ։ Զի՞նչ ինչ, է՞ր իրիք, ի՞մ իմիք, ի մէ՞ իմեքէ, ի՞ւ իւիք ։

Ինչո՞ւ համար եղաւ ասիկա — Վասն է՞ր եղեւ այս
Ի՞նչ բանի կարօտ է. — Ի՞մ իմիք կարօտ իցէ
Ի՞նչ բանի վրայով կը խօսի. — Զմէ՞ ճառիցէ
Ի՞նչ բանով դուն անկէ գերազանց ես. — Ի՞ւ իւիք առաւել իցես դու քան զնա

ԴԻՏ. 2. Զինչ բառին բացառականն ու պատմականը՝ առիմէ, զմէ, ինչո՞ւ համար, ի՞նչ պատճառաւ կը նշանակեն ։

Այնչափ աշխատութիւն ինչո՞ւ համար եղաւ. — Առ իմէ եղեւ այնչափ աշխատութիւն
Ինչո՞ւ համար չզգուշացաւ. — Զմէ ոչ զգուշացաւ

ԴԻՏ. 3. Ո՞վ կամ ո, հարցական բառը կը հոլովի այսպէս. Ուղ. Ո՞վ կամ ո՞, սեռ. որո՞յ կամ ո՞յր. տր. որո՞ւմ կամ ո՞ւմ. հյց. զո՞վ կամ զո՞, բաց. յումմէ՞. գործ. որո՞վ. Յգ. Ո՞յք, որո՞ց, որո՞վք ։

ԴԻՏ. 4. Ով կամ ո շատ անգամ ոք բառով մէկտեղ կը գործածուի, եւ ան ատեն երկուքը մէկտեղ կը հոլովին, այսպէս. Ո՞ ոք, ո՞յր ուրուք, ո՞ւմ ումեք, յումմէ՞ ումեքէ. Ո՞յք ոմանք, որո՞ց ոմանց, որո՞վք ոմամբք ։

ԴԻՏ. 5. Ձեռնտու բառն ի նախդիրով հայցական խնդիր կ'ուզէ. Ձեռնտու ի թշնամիս ։

ԴԻՏ. 6. Արկանեմ բայը, Վրան տալ կամ առնել, այսինքն հագցնել կամ հագնիլ կը նշանակէ, եւ շատ անգամ պարառական խնդիր մը կ'ունենայ.

| | |
|---|---|
| Ոտքի ամանդ հագիր. | Արկ զհողաթափս քո |
| Իր լաթերը հագաւ. | Արկաւ զձորձս իւր. |
| Վրան մազէ վերարկու մը առած (հագած) էր. | Արկեալ էր զանձամբ կամ զիւրեւ վերարկու մազեղէն. |

ԴԻՏ. 7. Ածեմ բայը, պտտել կը նշանակէ. ինչպէս՝ Ածել զօտի, սուր զմիջով. ածել որմ, պատուար։

ԴԻՏ. 8: Կախեմ բայը՝ մէկ, երբեմն՝ երկու պատճառական խնդիր կ'ունենայ.

| | |
|---|---|
| Ծառէն կախուած էր. | Կախեալ էր զծառոյն |
| Մազերէն կախուած էր ծառին. | Կախեալ էր զծառոյն ընդ հերացն. |

# ԴԱՍ ԻԶ.

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

(Շարունակութիւն)

### ՏԵՂԻՈՅ ՊԱՐԱԳԱՅ ՅՈՒՑՆՈՂ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Դնեմ, Գամ, Տամ, Երթամ, Ունիմ, Ըմպեմ, անկանոն բայերը հետեւեալ կերպով կը խոնարհին.

| | | | |
|---|---|---|---|
| Սահմ. ներ. | Դնեմ, | Գամ, | Տամ. |
| Անկ. անց. | Դնէի, | Գայի, | Տայի. |
| Կատ. անց. | Եդի, | Եկի, | Ետու. |



| | | | |
|---|---|---|---|
| | Եդիր, | Եկիր, | Ետուր. |
| | Եդ, | Եկն | Ետ. |
| | Եդաք, | Եկաք, | Տուաք. |
| | Եդիք. | Եկայք, | Ետուք. |
| | Եդին. | Եկին. | Ետուն. |
| Ապ. | Եդից, | Եկից, | Տաց. |
| | Դիցես, | Եկեսցես, | Տացես. |
| | Դիցէ, | Եկեսցէ, | Տացէ. |
| | Դիցուք, | Եկեսցուք, | Տացուք. |
| | Դիջիք. | Եկեսջիք, | Տաջիք. |
| | Դիցեն. | Եկեսցեն. | Տացեն. |
| Ստոր. | Դնիցեմ. | Գայցեմ. | Տայցեմ. |
| Հրամ. | Դիր, | Եկ, | Տուր. |
| | մի Դներ, | մի Գար, | մի Տար. |
| | Դիք, | Եկայք, | Տուք. |
| | մի Դնէք. | մի Գայք. | մի Տայք. |
| Ան. ներկ. | Դնել, | Գալ, | Տալ. |
| » Անց. | Եդեալ, | Եկեալ, | Տուեալ. |
| » Ապ. | Դնելոց. | Գալոց. | Տալոց. |

| | | | |
|---|---|---|---|
| Սահմ. ներ. | Երթամ. | Ունիմ. | Ըմպեմ. |
| Անկ. անց. | Երթայի. | Ունէի. | Ըմպէի. |
| Կատ. անց. | Չոգայ, | Կալայ, | Արբի. |
| | Չոգար, | Կալար, | Արբեր. |
| | Չոգաւ, | Կալաւ, | Արբ, էարբ. |
| | Չոգաք, | Կալաք, | Արբաք. |
| | Չոգայք, | Կալայք, | Արբէք. |
| | Չոգան. | Կալան. | Արբին. |

| | | | |
|---|---|---|---|
| Ապ. | Երթայց, | Կալայց, | Արբից. |
| | Երթիցես, | Կալցիս, | Արբցես. |
| | Երթիցէ. | Կալցի, | Արբցէ. |
| | Երթիցուք, | Կալցուք, | Արբցուք. |
| | Երթիջիք, | Կալջիք, | Արբջիք. |
| | Երթիցեն. | Կալցին. | Արբցեն. |
| Ստոր. | Երթայցեմ. | Ունիցիմ. | Ըմպիցեմ. |
| Հրամ. | Երթ, | Կալ, | Արբ. |
| | մի Երթար | մի Ունիր, | մի Ըմպեր. |
| | Երթայք, | Կալարուք, | Արբէք. |
| | մի Երթայք, | մի Ունիք, | մի Ըմպէք. |
| Ան. ներկ. | Երթալ, | Ունել, | Ըմպել. |
| » Անց. | Երթեալ, | Կալեալ, | Արբեալ. |
| » Ապ. | Երթալոց. | Ունելոց. | Ըմպելոց. |

---

## ՏԵՂՒՈՅ ՊԱՐԱԳԱՅ ՑՈՒՑՆՈՂ ԱՅԼԵՒԱՅԼ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Կան շատ նախադրութիւններ որոնք տեղւոյ այլեւայլ պարագաները կը ցուցնեն, այսինքն՝ բանի մը Առջեւը, Վրան, Բոլորտիքը, Դուրսը, Ներսը, եւն։

| | |
|---|---|
| Առջեւը, առաջի | Մէջտեղը, ի մէջ |
| Ետին, յետոյ | Դիմացը, յանդիման, հանդէպ |
| Ետեւէն, զկնի, զհետ | Դէմ, ընդդէմ |
| Վրան, ի վերայ | Քովը, կիցը, առընթեր |
| Տակը, ընդ (Տես էջ 122) | Քովը, առ (տես Դաս ԻԱ. Կան. 2.) |
| Դուրսը, արտաքոյ | |
| Ներսը, ի ներքոյ | |



| | |
|---|---|
| Մօտ, մերձ ի | Հեռու, հեռի ի |
| Դէպ ի, դէպ ի | Բոլորտիքը, շուրջ զ |
| Մինչեւ, մինչեւ ի, ց | |

2. Այս նախադրութեանց մեծ մասը սեռական խնդիր կ'ուզէ. ոմանք, ինչպէս Առընթեր, տրական ալ կ'ուզեն, ոմանք ալ, ինչպէս Մերձ ի, Դէպ ի, Մինչեւ ի կամ մինչեւ ց՝ հայցական. Հեռի ի՝ բացառական կ'ուզէ, Շուրջ զ՝ գործիական։

| | |
|---|---|
| Աստուծոյ առջեւը խոստովանէ. | Խոստովան լեր առաջի Աստուծոյ |
| Դրանը, անոր ետին կը կենար. | Կայր յետոյ դրանն, յետոյ նորա |
| Անոր ետեւէն գացին. | Գնացին զկնի, զհետ նորա |
| Սեղանին վրայ դրաւ. | Եդ ի վերայ սեղանոյն |
| Սրահին դուրսը կեցան | Կացին արտաքոյ սրահին |
| Վարագուրին ներսն էր. | Էր ի ներքոյ վարագուրին |
| Անոնց մէջտեղ խաղաղութիւն էր. | Խաղաղութիւն էր ի մէջ նոցա |
| Կենաց ծառը դրախտին մէջտեղն էր. | Ծառն կենաց էր ի մէջ դրախտին |
| Անոր դիմացը կը նստէր. | Նստէր յանդիման նորա |
| Մեր դիմացի գիւղը գացէք. | Երթայք ի գեւղն որ հանդէպ մեր կայ |
| Հովը մեզի դէմ էր. | Ընդդէմ մեր էր հողմն |
| Տունը դիակին քով կը կենար. | Տունն կայր առընթեր դիականն |
| Պատգամաւորը ելաւ քովս նստաւ | Պատգամաւորն անցեալ նստէր առընթեր ինձ |
| Դէպ արեւելք կը նաւէինք. | Նաւէաք դէպ յարեւելս |

| | |
|---|---|
| Տունս եկեղեցւոյն մօտ է. | Տուն իմ մերձ է յեկեղեցին |
| Մինչեւ քաղքին դուռը բերին զանոնք. | Ածին զնոսա մինչեւ ի դուռն քաղաքին |
| Տունէն եւ բարեկամներէն հեռու. | Հեռի ի տանէ եւ ի բարեկամաց |
| Քաղքին բոլորտիքը պատ քաշեցին. | Ածին պարիսպ շուրջ զքաղաքաւն |

## 48. Հրահանգ

Գիրքը սեղանին վրայ դրի. Մեր ետեւէն եկան. Ձեր տուները գացէք. Օտարի տուն մ'երթաք. Իմ բաժինս ինծի տուր. Հայրդ պատասխան չի տար. Գիրքերն անոր տուի. Շատ ձուկ բռնեցին. Աշակերտները գինին խմեցին. Իր եղբօրը գնաց. Զանի ո՞ւր դրիր. Անոր բաժկան պաշար տուիր. [illegible]ոց գնելու երթանք. Անոր մարմինը գերեզմանին մէջ դրին. Ինծի եկէք. Շատ ստակ [illegible]. Բան մը չունինք. Զանի իր տունը ընդունեց. Եղբայրդ ինծի եկաւ. Ինծի հետ եկուր, տեղը քեզի ցուցնեմ. Այդ ձեր խուցն մեզի տուէք. Ձեր բոլոր պէտքը ձեզի պիտի տամ. Ինծի հետ դաշտը գացին. Ստակի տեղ անոնց կերակուր տուինք. Քու պատկերդ իմ սենեակս պիտի դնեմ. Պարտքի համար բանտ դրուեցաւ, բայց ժամ մը ետքը հանուեցաւ անկէ. Ինչո՞ւ համար այդ մարդուն ստակ փոխ կու տաս. Անոր փոխ կու տամ, քանզի ստակի պէտք ունի. Ջուր չեմ խմեր, քանզի ծարաւի չեմ. Գինի խմեցինք, քանզի ջուր չգտնուեցաւ. Մատնին ո՞ւր դրիր. Քու սնտուկիդ մէջ դրի զայն. Եղբայրդ ո՞ւր գնաց. Որսի գնաց. Զին-



ւորներն եկան եւ մեզ բռնել կ'ուզէին. Իր եղբօրը հետ եկաւ. Անոր եղբայրն անոր հետ եկաւ. Մեզի հետ եկէք. Իմ ձեռքիս տակն ունիմ. Ձեր իշխանութեանը տակ զինուորներ ունիք. Անոնց վրայ յարձակեցան. Իմ վրաս մի լաք. Իմ առջեւս մի բերէք. Զանի քաղքէն դուրս հանեցին. Ճամբան անոր պատահեցանք գիւղին մօտ. Այս ամէնը մեր առջեւը գործուեցաւ. Անիկա սենեկին դուրսը կը կենար, ես ներսը. Հրապարակին մէջտեղն աղբիւր շինեց, եւ աղբիւրին վրայ կանգնեց իր արձանը. Երբ մօտ եկանք [illegible] քաղքին որ լեռանը գագաթն է. Այգիները [illegible] շատ հեռու չեն. Քաղքին բոլորտիքը պարտէզ [illegible] պարտէզին քովն (քովն ի վեր) գետ կ'անցնի. [illegible]երանը մինչեւ գլուխը կ'ուզէինք ելել, բայց հազիւ մինչեւ կէսը կրցանք հանիլ. [illegible]տիքս [illegible] եւ կը խնդրէին ինէ որ զանի իրենց ձեռքը տամ. Անոնց վրայ ելան. Անոնք որ մեր խաչէն կ'երթային՝ սկսան [illegible] ետեւէն գալ. Զաւղեցինք անոնց ետին կենալ. Մեր կամարներով կապուած սրահին տակ մտանք. Նաւը խարխուլ նեանց աշտարակի գլխացը. [illegible] ներսը փախուստ չկայ, անկէ դուրս է փախուստը. Մինչեւ փողոցին անկիւնը եկաւ, ու անկէ ետ դարձաւ.

Աշակերտք այս հրահանգը գրաբարի դարձունեն՝ հետեւեալ բառերուն մտադնելով:

| | |
|---|---|
| Ետեւէն գալ, գալ զկնի | Անկէ, անտի |
| Պատասխան, պատասխանի | Սնտուկ, արկղ. սեռ. տար- |
| Բռնել (ձուկ, եւն), ունիմ | կեղ |
| Խմել, ըմպել | Ճամբան, ճանապարհայն |

Ո՞ւր, ուր. (եթէ շարժում է,) յո՞
Բաւական, շատ բաւականին
Բան մը (բացասական բայի հետ), ոչինչ
Տեղ (Նախ.), փոխանակ
Դրուեցաւ, եղաւ (դնեմ ին կրաւոր.)
Արձան, պատկեր
Շատ, կարի
Բոլորտիքն առնել, շինել շուրջ
Ելլել (մէկուն վրայ), յառնեմ
Նետել (խարխախ), ընկենուլ
Ես, յես (մկ.)

## ԼՈՒԾՈՒՄ

Եղի զմատեանն ի վերայ սեղանոյն. Եղի, դնեմ բային կտ. եզ. Ա. դէմքը. տէր բային ես, զօրութեամբ կ'իմացուի. զմատեանն, գոյ. հայց. սեռի խնդիր Եղի ին. ի վերայ սեղանոյն, նախադրութեամբ խնդիր Եղի ին, տեղւոյ պարագան կը ցուցնէ։ Եղի, դրի. —Ո՞վ. —Ես. —Ինչ՞ բանը. —Զմատեանն. —Ո՞ւր. —Ի վերայ սեղանոյն, սեղանին վրայ։

Եկին զկնի մեր. Եկին, Գամ բային կտ. յք. Գ. դէմքը. տէր բային նոքա, զօրութեամբ. զկնի մեր, նախադրութեամբ խնդիր. գալուն մէկ պարագան կը ցուցնէ. Եկին, եկան. — Ո՞վ. — Նոքա, անոնք. Որո՞ւն ետեւէն. —Զկնի մեր, մեր ետեւէն։

# ԴԱՍ ԻԷ.

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

(Շարունակութիւն)

Զարթնուլ, Երկնչիլ բայերն հետեւեալ կերպով կը խոնարհին.



Սահմ. ն. Զարթնում, զարթնուս, ևն. Կ'արթննամ, և այլն.
Անկ. անց. Զարթնուի, զարթնուիր, ևն. Կ'արթըննայի, ևն.
Կտ. անց. Զարթեայ, զարթեար, զարթեաւ. Զարթեաք, զարթեայք, զարթեան. Արթընցայ, ևն.
Ապառնի. Զարթեայց, զարթիցես, զարթիցէ. Զարթիցուք, զարթիջիք, զարթիցեն. Պիտի արթննամ, Արթննամ, ևն.
Հրամ. Զարթիր, մի զարթնուր. Զարթիք, մի զարթնուք. Արթնցիր, ևն.
Ստոր. Զարթնուցում, զարթնուցուս, ևն. Կ'արթըննամ, կամ Արթննամ, ևն.
Աներ. ն. Զարթնուլ, Արթննալ.
» Անց. Զարթուցեալ, Արթնցած.
» Ապ. Զարթնլոց, Արթննալու.

Սահմ. ն. Երկնչիմ, երկնչիս, ևն. Կը վախնամ, ևն.
Անկ. անց. Երկնչէի, ևն. Կը վախնայի, ևն.
Կտ. անց. Երկեայ, երկեար, երկեաւ. Երկեաք, երկեայք, երկեան. Վախցայ. ևն.
Ապ. Երկեայց, երկիցես, երկիցէ. Երկիցուք, երկիջիք, երկիցեն. Պիտի վախնամ կամ Վախնամ, ևն.
Հրամ. Երկիր, մի երկնչիր. Երկերուք, մի երկնչիք. Վախցէք, ևն.

Ստոր. Երկնչիցիմ, երկնչիցիս, ևն. Կը վախնամ, կամ վախնամ, ևն.

Աներ. Ն. Երկնչել, Վախնալ.

» Անց. Երկուցեալ, Վախցած.

» Ապ. Երկնչելոց, Վախնալու.

Ասոնց պէս կը խոնարհին՝

Այրնում, Առնում, Ցանում, Բազմնում։

Թագչիմ, Թռչիմ, Հանգչիմ, Մատչիմ, Մարտընչիմ, Փախչիմ.

Բազմնումին անցեալը կ'ըլլայ Բազմեցայ եւ ոչ Բազմեցուցեալ.

Երդնում, կ'ըլլայ կտ. Երդուայ, երդուար, եւն. հր. Երդուիր. անց. Երդուեալ.

Աշակերտը գրաւոր խոնարհէ, Բազմնում, կ'անօթենամ. Ցասնում, կը բարկանամ. Երդնում, երդում կ'ընեմ. Մատչիմ, կը մօտենամ, եւ Փախչիմ բայերը։

ՍԱՀՄ. ՆԵՐԿ.

| | | |
|---|---|---|
| Եղանիմ, եղանիս, ևն. | Լինիմ, լինիս, ևն. | Գոմ, գոս, գոյ. Գոմք, գոյք, գոն. |

ԱՆԿ. ԱՆՑ.

| | | |
|---|---|---|
| Եղանէի, ևն. | Լինէի, ևն. | Գոյի, գոյիր, գոյր. Գոյաք, գոյիք, գոյին |

ԿՏ. ԱՆՑ.

| | | |
|---|---|---|
| Եղէ, եղեր, եղև. Եղաք, եղէք, եղեն. | Նոյնը | Նոյնը |

ԱՊԱՌՆԻ

| | | |
|---|---|---|
| Եղէց, եղիցիս, եղիցի. Եղիցուք, եղիջիք, եղիցին. | Լիցիմ, լիցիս, լիցի. Լիցուք, լիջիք, լիցին. | Նոյնները |



ՀՐԱՄ.

| | | |
|---|---|---|
| Եղիջիր, մի եղանիր. Եղերուք, մի եղանիք. | Լեր, մի լինիր, Լերուք, մի լինիք. | Նոյնները |

ՍՏՈՐ.

| | | |
|---|---|---|
| Եղանիցիմ, եղանիցիս, ևն. | Լինիցիմ, լինիցիս, և այլն. | Գուցեմ, գուցես, գուցէ. Գուցեմք, գուցէք, գուցեն. |

ԱՆԵՐ.

| | | |
|---|---|---|
| Եղանել, | Լինել, | Գոլ. |

ԱՆՈՐ. ԱՆՑ.

| | | |
|---|---|---|
| Եղեալ, | Լեալ, | Նոյները. |

ԱՆՈՐ. ԱՊ.

| | | |
|---|---|---|
| Եղանելոց. | Լինելոց. | Նոյները. |

ԴԻՏ. Եղանիմ, Լինիմ, Գոմ բայերն էական կամ գոյական բայ չեն, այլ չէզոք են. եւ կը նշանակեն, առաջին երկուքը, կ'ըլլամ. վերջինը, Գոմ՝ կամ, գոյ եմ։

---

## 44. Հրահանգ

Հայրդ արթնցաւ, եւ քեզ կը կանչէ. Զարդարած-ները իշխանութենէ կը վախնան. Անիրաւ տեղը բարկացաւ. Իմ տանս մէջ պիտի հանգչիմ. Թռչունները ծառերուն ճիւղերուն վրայ կը հանգչին. Աստուծմէ վախցիր. Սուտ երդում չընես. Մեր զինուորները քաջութեամբ կռուեցան. Անոր մօտեցաւ ու կ'աղաչէր. Երբ անոր ձայնը լսեց, փախաւ. Անիկա անոր

ըսելու փախցան. Ինչո՞ւ կը փախնաք անոնցմէ. Անըզգամներէն փախէք. Երդում ըրէ ինծի անոր վնաս չընելու. Քու խօսքերուդ մէջ հաւատարիմ եղիր. Քաջ եղիք. Հոս ինծի համար տեղ չկայ. Հեղգ մի ըլլար. Երբ արթնցան, զանի իրենց քովը տեսան. Անօթեցայ եւ ինծի ուտելիք չտուիք. Տղաք՝ հնազանդ ըլլան իրենց ծնողացը. Վաղուան պատրաստ եղիք. Եթէ հոն բարեկամ մը կայ. Ինչո՞ւ կը բարկանաս. Չար բան մը չգործեցի. Հոս մեզի բաւական տեղ կա՞յ. Հոս մարդ մը կայ. Անոնց տեղ չկար։

Աշակերտք հետեւեալ բառերուն նայելով վերի Հրահանգը գրաբարի դարձունեն։

| | |
|---|---|
| Կանչեմ, կոչեմ | Ինչո՞ւ, ընդէր |
| Անիրաւ տեղը, յանիրաւի | Վնաս ընել, մեղանչել |
| Ծիւղ, ոստ | Տեղ, տեղի |
| Սուտ (մկ.) սուտ | Ուտելիք տալ, տալ ուտել |
| Երդում ընել, երդնուլ | Վաղուան, առ վաղիւն |

# ԴԱՍ ԻԸ.

## ԵՄ ԲԱՅԻՆ ՔԱՆԻ ՄԸ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԿԱՆ 1. Եմ բայն էական կամ Գոյական բայ է, երբ ստորոգելի մը ենթակային կամ տէր բային հետ կը կապէ, ուստի եւ կապ կը կոչուի. զոր օրինակ՝ սա նախադասութեան մէջ, Աստուած արդար է, կամ Արդար է Աստուած, էն՝ գոյական բայ կամ կապ է, եւ արդար ստորոգելին Աստուած ենթակային հետ կը կապէ։



| | |
|---|---|
| Լուսաւոր է արեգակն. | Արեգակը լուսաւոր է |
| Բազում են աստեղք. | Աստղերը շատ են |
| Դա է որդի իմ. | Իմ որդիս ատ է |
| Այս էին բանք նոցա. | Անոնց խօսքերն ասոնք էին |
| Իմ է երկիրս. | Այս երկիրն իմս է |
| Քո՞ իցէ մատեանդ. | Այդ գիրքը քո՞ւկդ է |
| Այլ է խորհուրդ նոցա. | Անոնց խորհուրդն ուրիշ է |

Բոլոր այս խօսքերուն մէջ եմ բայը էական կամ Գոյական բայ է։

ԴԻՏՈՂ. Գոյ բայն այս մտօք գործածել մաքուր հայերէն չէ. ուստի եւ փոխանակ ըսելու՝ Հիւանդ գոյ, Վայելուչ գոյ, Ճշմարիտ գոլ, պէտք է ըսել՝ Հիւանդ է, Վայելուչ է, Ճշմարիտ լինել։ Գոյ բայը չէզոք է, եւ ոչ էական կամ գոյական բայ։

ԿԱՆ. 2. Եմ բայը շատ անգամ չէզոք բայ է, եւ կը նշանակէ գտնուիլ (տեղ մը), ներկայ ըլլալ. եւ ան ատեն նախադասութեան մէջ ստորոգելի չըլլար. զոր օրինակ՝ Աստուած ամենայն ուրեք է. հոս է՝ ներկայ է, կը գտնուի ըսել է։

| | |
|---|---|
| Ո՞ւր իցէ եղբայր իմ. | Եղբայրս ո՞ւր է. |
| Աստ է որդի քո. | Քու որդիդ հոս է. |
| Եւ էր Պետրոս ի բանտին. | Պետրոս բանտին մէջն էր. |
| Եղաք առ նոսա աւուրս եօթն. | Եօթն օր անոնց քով մնացինք. |

ԿԱՆ. 3. Եմ բայը երբեմն գոլ, կայ, բային տեղ կը գործածուի. զոր օրինակ՝

| | |
|---|---|
| Են (գոն) ոմանք որ ոչ հաւատան. | Կան ոմանք որ չեն հաւատար |

| | |
|---|---|
| Է (գոյ) աստ այր մի · | Հոս մարդ մը կայ |
| Էին (գոյին) անդ թագաւորք եօթն · | Հոն եօթը թագաւոր կար |

ԳԻՏՈՂ · Եմ բայն այս մտօք կը գործածուի, համ. եզ. երրորդ դէմքը ոչ մակբայով փոխանակ ոչ է ըսուելու, չիք կ'ըսուի, որ ոչ գոյ, չկայ, ըսել է:

| | |
|---|---|
| Չիք ոք բարի · | Բարի մէկը չկայ · |
| Չիք (ոչ գոյ) աստ տեղի բնակութեան · | Հոս բնակելու տեղ չկայ |

Եմ այս դէպքին մէջ ալ չէզոք է ։

ԿԱՆ · 4. Եմ բայը հայերէնի մէջ շատ անգամ ունիմ բային նշանակութիւնն ունի · այսպէս կ'ըսուի · է իմ պարտէզ մի · Պարտէզ մը ունիմ · են նորա ուստերք եւ դստերք · Անիկա մանչեր եւ աղջիկներ ունի ։

ԳԻՏՈՂ · Այս դէպքին մէջ ստացողը (ունեցողը) սեռական կը դրուի, եւ ստացեալը (ունեցածը) եմ բային ենթական կ'ըլլայ ։

## 45 · Հրահանգ

Տգիտութիւնն ամբարտաւանութեան քոյրն է · Դատարկութիւնն ամէն չարեաց մայրն է · Կարդալը ձանձրութեան դեղթափն է · Գինին ծերերուն կաթն է · Բարկացած մարդն արձակուած առիւծ է · Շուշանն անմեղութեան նշան է · Առիւծին բարկութիւնը սոսկալի է · Հայրդ ծեր է · Հայրս տունն է · Շատ օրեր հոն եղայ · Պարտէզին մէջ կին մը կար · Անտառին մէջ գազաններ կան · Ձեր եղբայրները պարտէզն են · Բանտին մէջ եղած ատենս · Անիկա մեզի հետ չէր · Կաթսային մէջ մահ կայ · Սրահին մէջ շատ բազմու-



թիւն կար · Մայրս իր սենեկին մէջն է · Ամէնքն ալ հոս են · Երկուքն ալ մէկտեղ էին · Հոս երկու սուր կայ · Անոր մեծ որդին ագարակն էր · Հոն մարդ մը կար · Հօրս տունը շատ սպասաւորներ կան · Դուք ծովն էք, մենք՝ ցամաքը · Օտարականներն այս սրահն են · Հիւրը մեր քովն է · Այս տանը մէջ հարանիք կայ · Թզենույն վրայ պտուղ չկայ · Քու ատակդ իմ սընտուկս է · Անոր գերեզմանը եկեղեցւոյն բակն է · Երկիրը խաղաղութեան մէջ էր · Կենաց ծառը դրախտին մէջ տեղն էր · Մեր սպասաւորները դաշտն են · Ձեր քոյրերը գեղն են · Մայրդ ծեր էր · Մայրս եկեղեցին էր · Հոն խոզերու երամակ մը կար · Անոր ծառաներէն երկուքը քաղաքն են, երեքը՝ գեղը · Անոնցմէ մէկը հոս է ։

## ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

1 · Եքին եւ եքեան, վերջաւորող թուական անունները, ինչպէս՝ երկոքին կամ երկոքեան, երեքին կամ երեքեան, ամենեքին կամ ամենեքեան, աշխարհաբարի մէջ կը բացատրուին՝ թուականին հետ ալ բառն ալ դնելով · զոր օրինակ՝ երկոքին, երկուքն ալ, երեքին, երեքն ալ, եւն ։

2 · Ասոնց սեռականը կ'ըլլայ եցուն կամ եցունց, հայցականը՝ եսին կամ եսեան, գործիականը՝ եքումբք · ինչպէս · Ամենեքեան, եքին, սեռ · ամենեցուն կամ ամենեցունց, հայց · զամենեսեան կամ զամենեսին · գործ · ամենեքումբք ։

Երկոքեան կամ երկոքին, կ'ըլլայ՝ երկոցուն կամ երկոցունց, զերկոսեան կամ զերկոսին, երկոքումբք ։

3 · Թուական անուններն ու քանի մը քանակական

ածականներ , ինչպէս՝ բազումք , սակաւք , կէսք , եւ անորոշ կամ մասնական կոչուած ածականներ , որ են՝ ումն , ոք , իւրաքանչիւր , այլ , միւս , շատ անգամ իբր գոյական առնուելով իրենցմէ ետքը բացառական խնդիր մը կ'ուզեն ։

| | |
|---|---|
| Միղ ի ձէնջ , | Ձենէ մէկը |
| Մի ումն ի նոցանէ , | Անոնցմէ մէկ մը |
| Երկուք ի մէնջ , | Մենէ երկուքը |
| Բազումք ի բարեկամաց նորա , | Անոր բարեկամներէն շատերը |
| Այլք յաշակերտաց անտի , | Աշակերտներէն ուրիշները |
| Ոչ ոք ի հրաւիրելոց անտի , | Հրաւիրեալներէն եւ ոչ մէկը |

Աշակերտք վերի Հրահանգը գրաբարի դարձունեն , այս գիտելեաց եւ հետեւեալ բառերուն միտ դնելով ·

| | |
|---|---|
| Կարդալը , ստէպ ընթերցուածք | Ամէնքն ալ , ամենեքին |
| | Երկուքն ալ , երկոքին |
| Դեղթափ , անդեղեայ | Մէկտեղ , ի միասին |
| Արձակուած , արձակ | Սուր , սուսեր |
| Նշան , նշանակ | Մեծ (որդի) , երէց |
| Բարկութիւն , ցասումն | Սնտուկ , արկղ |
| Սոսկալի , ահագին | Բակ , գաւիթ |
| Եղած ատենս , մինչ էի | Մէջտեղը , ի մէջ |
| Շատ , յոյժ | |

---

## 46. Հրահանգ

### ԵՄ ԲԱՅՆ ՈՒՆԻՄ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Երկու եղբայր ունիմ· Անիկա ոչխար եւ արջառ



ունէր · Մէկ հատիկ աղջիկ մը ունէր · Գիրք մը ունիմ· Եղբայրս պզտիկ պարտէզ մը ունի · Գեղեցիկ տուն մը ունինք · Անոնք մեծամեծ պալատներ ունին · Այն թագաւորը շատ զինուորներ ունի · Անոր զօրքը պաշար չունի · Հօրեղբայրս մանչ մը եւ աղջիկ մը ունի · Շատ ստակ ունիս · Շատ ստակ չունիմ , շատ բարեկամ ունիմ· Ծառաներ եւ աղախիններ ունի՞ն · Հայրս մեծ տուն մը ունի · Անիկա պզտիկ շուն մը ունէր · Տեղ չունիմ· Ծառաներ եւ աղախիններ չունին · Անիկա Եգիպտացւոց հետ պատերազմ ունեցաւ · Աչք ունին եւ չեն տեսներ · ականջ ունին եւ չեն լսեր · Բարեկամս պզտիկ շուն մը ունի որ շատ հաւատարիմ է · Շատ գիրք ունինք · Ուրիշ տուն մը ունիմ որ շատ գեղեցիկ է · Շատ բարեկամներ ունինք , շատ երջանիկ ենք · Չարերը բարեկամ չունին եւ թշուառ են · Անիկա որդի մը ունեցաւ · Անիկա զաւակ չունեցաւ · Հայրս շատ ստացուած ունի · Կինը մեծ գութ ունէր իր զաւակներուն ։

Աշակերտք հետեւեալ բառերուն նայելով , այս Հրահանգը գրաբարի դարձունեն ։

| | |
|---|---|
| Պզտիկ , փոքր | (աղախնայք) |
| Պալատ , ապարանք | Ուրիշ , այլ |
| Աղախին , աղախին , յք · | Զաւակ , որդեակ |

---

### ԼՈՒԾՈՒՄ

Հայր իմ ի տան է · է , չէզոք բայ , կը նշանակէ՝ կը գտնուի , ներկայ է · սահմ· ներկ · եզ · Գ · դէմք · —Ո՞վ է (կը գտնուի) · —Հայր իմ· Հայր , գոյ · եզ · ուղ · տէր բայի է ին · Իմ ստաց · ածական Հայր ին , —Հայր իմ է , ո՞ւր · —Ի տան · ի տան՝ ի նախդրիւ բնու-

թեան խնդիր է ին. տեղւոյ պարագան կը ցուցնէ։

Եւ իմ եղբարք երկու։ Եւ, շաղ. բայ, սահմ. ներկ. յք. գ. դէմք. հոս կը նշանակէ ունենալ։ —Իմ եւ. —Եղբարք երկու. եղբարք՝ գոյ. յք. ուղ. ակր բայի եւ ին. երկու՝ թուակ. ած. եղբարք ին։ — Եղբարք երկու եւ որոն. — Իմ. իմ՝ շաղ. դեր. Ա. դէմք. եզ. սեռ. խնդիր եւ ին։

Եմ բային սեռական խնդրով Ունիմ բայի տեղ գործածութիւնը հայկաբանութիւն է, այսինքն՝ Հայերէնի յատուկ բացատրութեան կերպ մը։

## ԴԱՍ ԻԹ.

### ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐ

1. Եւրոպական լեզուաց մէջ Անցողական կը կոչուին ներգործական բայերը։

2. Հայերէն Անցողական կը կոչուին այն ներգործական բայերը որ չէզոք բայերէն կը շինուին։

Հայերէն լեզուն մասնաւոր յատկութիւն մը ունի որ ամէն չէզոք բայ կրնայ ներգործականի փոխել. ինչպէս. Նստիմ, նստեցուցանեմ. Աշխատիմ, աշխատեցուցանեմ. Զօրանամ, զօրացուցանեմ, եւն։

3. Անցողական բայերը կը շինուին՝ չէզոք բային կատարեալ եղակի առաջին դէմքին վերջին ձայնաւորը ուցանեմ ի փոխելով, ինչպէս՝

| | | |
|---|---|---|
| Ննջեմ, | ննջեցի, | ննջեցուցանեմ. |
| Աշխատիմ, | աշխատեցայ, | աշխատեցուցանեմ. |
| Անցանեմ, | անցի, | անցուցանեմ. |
| Նստիմ, | նստայ, | նստուցանեմ. |



| | | |
|---|---|---|
| Խաղամ, | խաղացի, | խաղացուցանեմ. |
| Զօրանամ, | զօրացայ, | զօրացուցանեմ. |
| Լնում, | լցի, | լցուցանեմ. |
| Զգենում, | զգեցայ, | զգեցուցանեմ. |

ԴԻՏ. Կորնչիմ բային՝ փոխանակ ուցանեմ ի ուսանեմ կ'աւելցուի։

Կորնչիմ, կորեայ, կորուսանեմ.

4. Անցողական բայերը հետեւեալ կերպով կը խոնարհին.

Սահմ. ներ. Հատուցանեմ, հատուցանես, եւն.
Անկ. անց. Հատուցանէի, հատուցանէիր, եւն.
Կտ. անց. Հատուցի, հատուցեր. հատոյց. հատուցաք, հատուցէք, հատուցին.
Ապառնի. Հատուցից, հատուսցես, եւն.
Հրամ. Հատո, մի հատուցաներ. Հատուցէք, մի հատուցանէք.
Ստոր. Հատուցանիցեմ հատուցանիցես, եւն.
Աներ. Ն. Հատուցանել.
» Անց. Հատուցեալ.
» Ապ. Հատուցանելոց.

5. Աս բայերը ներգործական ըլլալով՝ կրաւորական ձայնիւ ալ կը խոնարհին եմ ը իմ ի փոխելով.

Հատուցանիմ, հատուցայ, հատուցայց, հատուցիր եւ այլն։

### 47. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ չէզոք բայերուն անցողականները շինեն.

Հատանեմ. Շրջիմ. Դառնամ. Մատչիմ. Հասանեմ. Վերանամ. Թռչիմ. Ճանաչեմ. Զբօսնում. Շիջանիմ. Յառնեմ. Գնամ. Կեամ. Կամ. Լամ. Խոնարհիմ. Սընանիմ. Ծնանիմ. Մեղանչեմ. Բուսանիմ. Զօրանամ. Փութանամ. Դառնանամ. Ուսանիմ. Ամաչեմ. Լնում. Զարմանամ. Իմանամ. Զգամ. Վրիպիմ. Հաւանիմ. Հաճիմ. Յուսամ. Մոռանամ. Մոլորիմ. Բարձրանամ. Թուլանամ. Խստանամ. Սովորիմ. Ժառանգեմ. Զովանամ. Ցրտանամ. Ուծանամ. Ջեռնում. Մեծանամ. Զարթնում. Ագանիմ. Հնազանդիմ. Դադարիմ. Ապրիմ. Տրտմիմ:

ՏԱՄ ԲԱՅՈՎ ԱՆԵՐԵՒՈՅԹ

6. Հայերէն ամէն աներեւոյթ Տամ բայով կրնայ գործածուիլ, ինչպէս Տամ ուտել, տամ անցանել, տամ խօսել, եւն, Տամ բայն այս կերպ գործածութեան մէջ թոյլ տամ կը նշանակէ:

## 48. Հրահանգ

Եղբայրդ իր պարտքը չի վճարեր. Երբ տղան կաթէն կտրուեցաւ. Ձեռքէն բռնելով վերցուց. Աշակերտները զանի արթնցուցին. Անոր իր հանդերձները հագուցի. Տղան ծնկներուն վրայ քնացուց. Շատերը կը զարմացնէր. Այդ տղան իր մօրը դարձուր. Պարտալան մը անոր աչքերը հանուեցաւ. Կրակը մարեցին. Ճրագն ո՞վ մարեց. Զանի բոլոր քաղաքը պտտցուց. Բոլոր ազգերը հնազանդեցուց. Զանոնք հոն երկու օր դադրեցուցինք. Զիս այս վտանգէն ազատէ. Զանի մի տրտմեցուներ. Զանոնք չարաչար աշխատցուց. Նախ զանոնք անցուց գետէն



եւ ետքը ինք անցաւ. Անոր խօսել չեմ տար. Մեզի շունչ առնել չեն տար. Անոր մեզի հակառակ խօսիլ չտուաւ. Ինքը գիր չի գիտեր, ուրիշներուն գրել կու տայ. Անոր գինի խմել տուին. Զեզ պատժել պիտի տամ. Զանի կղզի մը աքսորել տուաւ. Զեզի մեր երկրէն անցնիլ չենք տար. Երկու ոչխար մորթել տուաւ. Եթէ ինծի տեսնել տաս իմ որդիներս. Անոնց ձայն հանել չէր տար. Զանի իր տունը տանել տուաւ. Պարտքդ ինծի վճարէ. Զիս այս անգամ ալ զօրացուր. Փարաւոնին աղջիկը Մովսէսը մեծցուց. Աստուած Աբրահամը հարստացուց:

Աշակերտք այս հրահանգը գրաբարի դարձունեն հետեւեալ բառերուն միտ դնելով:

Կաթէն կտրել, հատուցանել ի ստենէ
Վճարել, հատուցանել
Վերցունել, յարուցանել
Արթնցունել, զարթուցանել
Հագցունել, ագուցանել
Ծունկ, ծունր · սեռ · ծընգաց
Քնացունել, ննջեցուցանել
(Մէկուն) աչքերը հանել, կուրացուցանել զ(ոք)
Մարել, շիջուցանել
Պտտցունել, շրջեցուցանել
Ազատել, ապրեցուցանել
Գետէն, ընդ գետն
Շունչ առնել, ոգի առնուլ
Գիր (գրութիւն) դպրութիւն
Խմել, ըմպել
Պատժել, պատուհասել
Երկրէն, ընդ երկիր
Մորթել, զենուլ
Ձայն հանել, ճիկ հանել
Ալ, եւս
Մեծցունել, սնուցանել
Հարստացնել, մեծացուցանել

# ԴԱՍ Լ.

## ԱԾԱԿԱՆԱՑ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

### ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ

Գերականք ածականներու երեք աստիճան կուտան. եւ կը կոչեն Պարզ, Բաղդատական եւ Գերադրական։

Ա. Երբ բանի մը յատկութիւնը պարզապէս կը ցուցուի ածականով մը, այն ածականը Պարզ է. ինչպէս՝ Եղբայրս հարուստ է. Հոս հարուստ ածականը պարզ է։

Բ. Երբ բանի մը յատկութիւնն ուրիշի մը հետ բաղդատելով կը ցուցուի, այն յատկութիւնը ցուցնող ածականը Բաղդատական կ՚ըսուի. զոր օրինակ Եղբայրս ձեր հօրմէն հարուստ է. Հոս հարուստ՝ Բաղդատական է։

Գ. Երբ բանի մը յատկութիւնն իր վերջին աստիճան կը ցուցուի, ածականը Գերադրական կը կոչուի, ինչպէս՝ Եղբայրս վերջին աստիճան կամ շատ հարուստ է. Հոս ալ հարուստ՝ գերադրական է։

### ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ

1. Բաղդատութիւնը երկու բանին իրարու հաւասար կամ իրարմէ տարբեր (աւելի կամ նուազ) ըլլալը կը ցուցնէ։

2. Հաւասարութիւնը ցուցնելու համար հայերէն իբրեւ զ, իսկ տարբերութիւնը ցուցնելու համար քան զ նախադրութիւնները կը գործածուին. զոր օրինակ՝ Օդը ջուրի պէս լոյծ է, այլ անկէ աւելի բարակ եւ թեթեւ է։ Աս խօսքը գրաբար կ՚ըսուի.



Լոյծ է օդ իբրեւ զջուր, այլ նուրբ եւ թեթեւ է քան զնա։

3. Բաղդատական խօսքերու մէջ աշխարհաբարին բացառական հոլով դրուած բառը գրաբարի մէջ քան զ նախադրութեամբ հայցական ընելու է։

4. Երբեմն բաղդատական ածականին ծայրը գոյն մասնիկը կ՚աւելցուի. Օդ թեթեւ կամ թեթեւագոյն է քան զջուր։

Երբեմն ալ ածականէն առաջ կամ ետքը եւս մակբայը կը դրուի.

| | |
|---|---|
| Հարստութիւնն աղէկ է. բայց առաքինութիւնն աւելի աղէկ է. | Բարւոք է մեծութիւն, այլ առաքինութիւն բարւոք եւս է |
| Ուժէ աւելի յարգի է իմաստութիւնը. | Իմաստութիւն պատուական կամ պատուականագոյն եւս է քան զզօրութիւն |

ԴԻՏ 1. Երբ բաղդատական նախադասութեան մը բայը հաստատական է, քան զ նախադրութիւնը առաւելութիւն կը ցուցնէ. եթէ բայը բացասական է, նուազութիւն կը ցուցնէ.

| | |
|---|---|
| Եղբայրդ քենէ աւելի աղէկ է. | Եղբայր իմ լաւ կամ լաւագոյն է քան զքեզ. |
| Եղբայրդ քենէ նուազ աղէկ է. | Եղբայր իմ չէ ինչ լաւ կամ լաւագոյն քան զքեզ |

ԴԻՏ. 2. Իբրեւ նախադրութիւնն ալ բացասական բայով նուազութիւն կը ցուցնէ, եւ ոչ հաւասարութիւն. Եղբայր իմ չէ խորագէտ իբրեւ զքեզ. Եղբայրդ քեզի պէս խորագէտ չէ. այսինքն՝ քենէ քիչ խորագէտ է ըսել է։

5. Բանի մը յատկութեանը վերջին աստիճան ըլլալը ցուցնելու համար յիշեալ յատկութիւնը նշանակող ածականին քով սովորաբար յոյժ , կարի, ամենեւին եւն , բառերը կը գործածուին :

## 49 . Հրահանգ

Եղբայրս քու հօրդ պէս հարուստ է , բայց ինծի աւելի հարուստ չէ . Ձեր հօրեղբօրը տունը մերինին պէս ընդարձակ է . Այս պարտէզը մեծ է , բայց իմինիս չափ գեղեցիկ չէ . Առիւծը վագրին չափ անգութ չէ . Կ'ուզեմ տունս քակել եւ աւելի գեղեցիկ շինել . Այս տղան քու աղջկանէդ աւելի խելօք եւ հանդարտ է . Ծովերը լիճերէն աւելի խորունկ եւ ընդարձակ են . Դուք ինծի աւելի իրաւացի էք . Ես անիրաւ եմ , դուն ինծի աւելի անիրաւ ես . Եղբայրդ բոլորովին անիրաւ է . Իմ եղբօրմէս մեծ ես , բայց անկէ աւելի խելօք չես . Մեր ծառաները ձերիններէն երջանիկ են . Իմ բժիշկս քուկինէդ աւելի վարպետ է . Այս մարդը շատ հարուստ է . երեսունէ աւելի տուներ ունի . Դուն շատ բաներով զբաղած ես , բայց եղբայրս քենէ աւելի զբաղած է . Դուն քիչ կը զբօսնուս . ես քենէ քիչ . իսկ քոյրս մենէ աւելի քիչ . Օդը ջուրէն թեթեւ է . Որդիս քենէ իմաստուն է . Այս լեռն ամէն լեռներէն բարձր է . Աշխարհիս մէջ վատահամբաւ ըլլալէն աղէկ է մեռնիլ . Կենդանի շունը մեռած առիւծէն աղէկ է . Թագաւորները զօրաւոր են , բայց Աստուած անոնցմէ աւելի զօրաւոր է . Եղբայրդ խելօք է , բայց իմ եղբայրս անկէ աւելի խելօք է . Ձեր քոյրը պարկեշտ է , բայց մեր գիւղացին աղջիկներն անկէ աւելի պարկեշտ



են . Այս տղաքն իրենց հօրմէն աւելի խելացի են . Հովն ու ջուրն ամէն բանէ աւելի սաստիկ եւ ուժով են . Առիւծէն աւելի սոսկալի կենդանի մը չկայ . Արեւին լոյսը լուսնին լոյսէն պայծառ է . Հոգին մարմինէն գերագանց է . Լուսինն ուրիշ աստղերէն փոքր է . Աստղերէն ոմանք արեգակէն մեծ են . Հին գինին նորէն աւելի յարգի է . Նպատ լեռն Արարատին չափ բարձր չէ , կամ Արարատէն նուազ բարձր է . Սեւ ծովը Միջերկրականէն աւելի շատ անգամ կ'ալեկոծի . Այս մարդը մենէ աւելի շատ անգամ կը ճամբորդէ . Այս լեռները շատ բարձր են . Ջուրին զօրութիւնը շատ սաստիկ է . Անոր յաղթել շատ դժուար է . Ցամաքը մենէ շատ հեռու էր . Այն մարդը շատ ճարտար է :

Աշակերտք վերի Հրահանգը գրաբարի դարձունեն հետեւեալ բառերուն միտ դնելով :

Պէս , իբրեւ զ
Անգութ , անագորոյն
Աւելի , եւս
Խելօք , զգօն
Իրաւացի (հաղգը) , արդար
Բոլորովին , յոյժ , ամենեւին
Վարպետ , ճարտար
Շատ բաներով , զբազում իրիք
Զբաղած , զբաղեալ
Վատահամբաւ , վատանուն

Զօրաւոր , հզօր
Պարկեշտ , զգաստ
Խելացի , հանճարեղ
Սաստիկ , բուռն
Ուժով , ուժգին
Կենդանի , գազան
Սոսկալի , ահագին
Գերագանց , առաւել
Աստղերէն ոմանք , են աստեղք
Յարգի , պատուական
Շատ անգամ , ստէպ , յաճախ

| | |
|---|---|
| Ալէկոծիմ, ամբոխիմ | Շատ (մկ.), յոյժ |
| Ճամբորդեմ, ճանապարհորդեմ | Զօրութիւն, բռնութիւն |
| | Ճարտասան, բանիբուն |

## ԼՈՒԾՈՒՄ

Եղբայր իմ մեծատուն է իբրեւ զհայր ինձ, այլ չէ ընչեղ քան զիս։ Է, էակ. բայ. սահմ. ներկ. եզ. Գ. դէմք։ — Ո՞վ է. — Եղբայր իմ. Եղբայր իմ՝ տէր բայի է ին. — Եղբայր իմ է, ինչ. — Մեծատուն. Մեծատուն՝ ստորոգելի եղբայր ին. — Եղբայր իմ մեծատուն է իբրեւ զո՞վ. իբրեւ զհայր ինձ. Իբրեւ զհայրք՝ նախադրութեամբ խնդիր մեծատուն ին, հաւասարութիւն կը ցուցնէ։

Այլ չէ ընչեղ քան զիս. Է, բայ էակ. սահմ. ներկ. եզ. Գ. դէմք. — Է, ո՞վ. — Նա (եղբայր իմ), դերանուն տէր բայի, զօրութեամբ կ'իմացուի։ — Է նա՝ ինչ, — Ընչեղ, ընչեղ՝ ստորոգելի նա ին. — Է նա ընչեղ քան զո՞. — Քան զիս. քան զիս՝ քան զ նախադրութեամբ խնդիր, առաւելութիւն կը ցուցնէ, հոս բայը բացասական ըլլալուն համար նուազութիւն կը ցուցնէ։ Չ, բացասական մակբայ։ Այլ, շաղկապ խօսքին երկու նախադասութիւնները կը կապէ։

# ԴԱՍ ԼԱ.

## ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ, ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

### ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

ԿԱՆ. 1. Հայցական հոլովը շատ անգամ զո՞վ, ինչ բանը հարցման պատասխան է, եւ Սեռի խնդիր կը կոչուի (Տես Դաս ԺԳ) :



ԿԱՆ. 2. Հայցական հոլովը քանի մը դէպքի մէջ բնութեան խնդիր է. զո՞վ, ինչ բանը, հարցման չի պատասխաներ, այլ ուրիշ հարցմանց:

ԿԱՆ. 3. Բնութեան խնդիր հայցականը նախ՝ ժամանակի տեւողութիւն եւ չափ կը ցուցնէ, եւ՝ որչափ ժամանակ, որչափ, որչափ տեղ հարցմանց պատասխան է. օրինակ. Հոն հինգ օր մնաց. — Ո՞րչափ ատեն մնաց — Հինգ օր. հինգ օր խօսքը որ որչափ ատեն հարցման պատասխան է՝ գրաբարի մէջ զ ով կամ առանց զի հայցական կը դրուի։ Եկաց անդ զաւուրս կամ աւուրս հինգ :

Երկայնութիւնը մէկ կանգուն էր. — Երկայնութիւնը ո՞րչափ էր — Մէկ կանգուն. մէկ կանգուն խօսքը որ որչափ հարցման պատասխանն է՝ հայցական կը դրուի։ Երկայնութիւն նորա էր կանգուն մի։

Մղոն մը գնաց. — Ո՞րչափ տեղ գնաց. — Մղոն մը. մղոն մը խօսքը որ որչափ տեղ հարցման պատասխան է՝ հայցական կը դրուի։ Գնաց մղոն մի :

| | |
|---|---|
| Հայրս եօթանասուն տարի ապրեցաւ. | Հայր իմ եկեաց զամս եօթանասուն |
| Զինք երեք օր փնտռեցին. | Խնդրեցին զնա զաւուրս [երիս |
| Պատերազմը հինգ ամիս տեւեց. | Տեւեաց պատերազմն ամիսս հինգ |
| Եօթը ժամ խօսեցաւ. | Խօսեցաւ ժամս եօթն |
| Օրը տասը ժամ կ'աշխատիմ, երկու ժամ կը հանգչիմ, երեք ժամ կ'ուտեմ եւ կը զբօսնում, մնացած ժամերն ալ կը քնանամ. | Աշխատիմ յաւուրն ժամս տասն, ժամս երկուս հանգչիմ, ժամս երիս ուտեմ եւ զբօսնում, եւ զմնացեալ ժամսն ննջեմ |

| | |
|---|---|
| Սիւնին բարձրութիւնը վեց կանգուն էր · | Բարձրութիւն սեանն էր կանգուն վեց |
| Քաղաքը մէկ օրուան ճամբայ հեռու է մենէ · | Քաղաքն հեռի է ի մէնջ աւուր միոյ ճանապարհ |

### ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

1· Թուական անուանք սովորաբար իրենց գոյականէն ետքը կը դրուին :

2· Մի, եզակի գոյականի հետ միայն կրնայ գործածուիլ :

3· Երկու, երեք, չորք, գոյականէն թէ՛ առաջ եւ թէ ետքը կրնան դրուիլ, եւ միշտ յոգնակի գոյական կ'ուզեն :

4· Հինգէն սկսեալ միացած բոլոր թուականները սովորաբար գոյականէն ետքը կը դրուին, յոգնակի գոյական կ'ուզեն, եւ անոր հետ կը համաձայնին, միայն ուղղականին եւ հայցականին մէջ ք եւ ս գիրերը չեն առներ, ինչպէս՝ Արք հինգ (եւ ոչ արք հինգք), Արանց հնգից, զԱրս հինգ (ոչ զԱրս հինգս), Արամբք հնգօք : (*)

| | |
|---|---|
| Եօթը սիւն կանգնեց · | Կանգնեաց սիւնս եօթն |
| Տունի մը մէջ · | Ի տան միում |
| Մէկ մարդով եկաւ · | Եկն արամբ միով |
| Մէկ թուղթէ մը ման եղաւ. | Ի թղթոյ միոջէ եղեւ նմա |

(*) Հինգ այր, հինգ առն, հինգ արամբ · Հինգ արք, հինգ արանց կամ հնգից արանց, հինգ արամբք եւն, ալ կ'ըլլայ։ Բայց, ինչպէս ըսինք, սովորականն է՝ Արք հինգ, արանց հնգից, եւն :



| | |
|---|---|
| Երեք մարդոց իշխանութիւնը · | Իշխանութիւն երից արանց |
| Չորս զինուորով բերուեցաւ · | Ածաւ չորիւք զինուորօք |
| Անիկա հարիւրէ աւելի տղոց վարպետ էր · | Էր նա վարդապետ մանկանց աւելի քան զհարիւրս |
| Երեք հազարի չափ մարդոց խօսեցաւ · | Խօսեցաւ արանց իբրեւ երից հազարաց |
| Ութ օր ետքը · | Յետ աւուրց ութից · |
| Տասնուերկու որդի ունէր. | Որդիք երկոտասան էին նորա |
| Վեց տարի առաջ · | Յառաջ քան զամս վեց |
| Հինգ ամիս ետքը · | Յետ ամսոց հնգից |

## 50. Հրահանգ

Զանոնք երկու մղոն տարին · Անոնց հինգ քուցրեն առին · Պատը եօթը կանգուն բարձրացուցին · Ասոր համար ութը տարի աշխատեցայ · Աշտարակը երկու քարընկէց մենէ հեռու է · Եղբայրս երեսուն տարի ապրեցաւ · Տասը տարի եղբօրը քով բնակեցաւ · Ութ մղոն քալեցինք · Հարիւր լիտր իւղ ծախեցինք · Զանոնք տասնուերկու օր կը սորվեցնէր · Շատ օրեր նեղութիւն կրեցին · Ամբողջ օր մը ոչ կերաւ եւ ոչ խմեց · Վեց օր դարձէ · Անոնց քով երկու օր կեցանք · Եօթը օր հարանիք ըրին · Երկու մարդ մեզի եկաւ · Երկու օր ետքը որդին մեռաւ · Երկու քանքար շահեցայ · Վեց մարդ տասն օր աշխատեցան · Չորս օր անոնց սպասեցինք · Տարւոյն մէջ տաս-

ուերկու ամիս կայ, ամսոյն մէջ երեսուն կամ երեսունմէկ օր, օրուան մէջ քսան եւ չորս ժամ. ժամու մէջ վաթսուն վայրկեան. Երկու ամիս է քանի որ եղբայրս մեռաւ. Հոն ժամ մը նստայ. Բոլոր այս գիշեր աշխատեցանք. Ինչու համար բոլոր ցորեկը դատարկ կը կենաք. Այն օր անոր քով օթեւան ըրին. Ինծի գաւաթ մը ջուր տուր. Շատ օրեր հոն կեցանք. Երկու օր անոնց հետ քալելէն ետքը՝ գեղ մը հասանք. Տասը ժամ անօթի կեցայ.

Աշակերտք այս հրահանգը գրաբարի դարձունեն՝ հետեւեալ բառերուն միտ դնելով.

| | |
|---|---|
| Պատ, որմ | Ամբողջ, ողջոյն |
| Տարի, ամ | Կենալ, կալ |
| Հեռու, հեռի | Քանի որ, յորմէ հետէ |
| Ապրիլ, կեալ | Օթեւան ընել, ագանիլ |
| Քալել, գնալ | Բոլոր ցորեկը, զտիւն կամ զօրն ողջոյն |
| Ծախել, վաճառել | Անօթի, նօթի |
| Սորվեցնել, ուսուցանել | Գաւաթ, բաժակ |
| Նեղութիւն կրել, տառապիլ | |

---

## ԼՈՒԾՈՒՄ

Տարան զնա մղոնս երկու ։ Տարան բայ ներգ. կատ. յք. Գ. դէմք, Տանիմ էն.—Տարան, ո՞վ.—Նոքա. Նոքա, էակ. դեր. յք. Գ. դէմք, զօրութեամբ կ՚իմացուի, տէր բայի տարանին։—Նոքա տարան զո՞վ.—Զնա. զնա, էակ. դեր. Գ. դէմք. յք. հյց. սեռի խնդիր տարանին։—Տարան զնա, ո՞րչափ տեղ.—Մղոնս երկու. հյց. բնութեան խնդիր տարանին, երկայնութեան չափ կը ցուցնէ ։



# ԴԱՍ ԼԲ.

## ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ. ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Հայցական հոլովը ուրիշ քանի մը դէպքի մէջ ալ բնութեան խնդիր է ։

1. Ճանապարհ, ճամբայ, բառը հայցական կը գրուի երթալ, գնալ, առաքել, ելն, բայերու քով, եւ ո՞ր ճամբէն հարցման պատասխան է. զոր օրինակ՝ Լերան ճամբէն երթալ. Երթալ զճանապարհ լերինն. —Ո՞ր ճամբէն երթալ. —Լերան ճամբէն ։

2. Եղանակ, կերպ եւ կամ ձեւ ցուցնող բառեր, ինչպէս են Օրինակ, գոյն (եղանակ), ազգ (տեսակ), ելն, բառերն, հայցական կը գրուին, եւ ի՞նչ կերպով կամ եղանակաւ, ի՞նչ ձեւով հարցմանց պատասխան են, ինչպէս.

| | |
|---|---|
| Թագաւորական պալատին ձեւով կամ եղանակով իրեն պալատ շինեց. | Շինեաց իւր ապարանս զձեւ կամ զօրինակ ապարանիցն արքունի. |

—Ի՞նչ ձեւով կամ եղանակով շինեց.—Թագաւորական պալատին ձեւովը ։

| | |
|---|---|
| Այս կերպով խօսեցաւ. | Խօսեցաւ զայս օրինակ. |
| Նոյն գունով եւ նոյն ձեւով լաթ հագած էին. | Զգեցեալ էին հանդերձս զնոյն գոյն եւ զնոյն ձեւ |
| Ուրիշ կերպով ընենք. | Այլ ազգ արասցուք |

ԴԻՏ. Ի ձեռն, ձեռքով, նախադրութիւնը սեռական խնդիր կ՚ուզէ. հանդերձ՝ գործիական ։

| | |
|---|---|
| Իմ ձեռքովս կամ միջո-ցաւս այն պատուէրն հա-սաւ. | Ի ձեռն իմ, կամ յիմ ձեռն եհաս յայն պատուէր· |
| Բարեկամներու ձեռօք դաւաճանութիւնն ի-մացուց անոր: | Ի ձեռն բարեկամաց զգա-ցոյց նմա զդաւն |
| Որո՞ւ ձեռքով (միջոցաւ) ստացար այդ հարստու-թիւնը· մեր ձեռքով չէ՞ մի· | Յո՞յր ձեռն ստացար զմե-ծութիւնդ· ոչ ապաքէն ի մեր ձեռն |

## 51. Հրահանգ

Երեք օրուան ճամբայ գացին· Ձեր ճամբան գա-ցէք· Հասարակաց ճամբէն երթանք. Հեռու ճամբայ գնաց· Անոնց հետ ճամբայ մ'երթար· Երկայն ճամ-բէն երթալ չէին ուզեր· Մարդիկը լերան ճամբէն ա-նոնց ետեւէն ինկան· Ո՞ր ճամբէն երթանք· Շիտա-կէն երթանք· Զանոնք երկայն ճամբէն ղրկեց· Ինք կարճէն գնաց· Երբ օրուան մը ճամբայ եկան· Քաղ-քէն երկու օրուան ճամբայ հեռացանք. Այս կեր-պով խօսեցաւ անոնց հետ· Ամէնքն ալ նոյն գունով եւ նոյն ձեւով հանդերձներ կը հագնին· Եղբօրը հետ մէկտեղ հոս եկաւ. Հայաստան եկաւ կնոջմով եւ տղոցմով մէկտեղ·Այս եկեղեցին որո՞ւ ձեռքով շին-ուեցաւ· Իտալացի ճարտարապետներու ձեռքով· Աստուած մեծամեծ բաներ կը կատարէ անզօրներու եւ պզտիկներու ձեռքով:

Աշակերտք այս հրահանգը գրաբարի դարձունեն՝ հետեւեալ բառերուն միտ դնելով:



| | |
|---|---|
| Ետեւէն ինկալ, պնդել զկնի | Որո՞ւ ձեռքով, յո՞յր ձեռն |
| Շիտակ, ուղղորդ | Մեծամեծ բաներ, մեծա-մեծս |
| Մէկտեղ, հանդերձ | Կատարել, վճարել |
| Հայաստան, Հայք | Անզօր, տկար |
| Տղաք, մանկտի | Պզտիկ, անաւագ |

## ԼՈՒԾՈՒՄ

Գնացին զճանապարհ երից աւուրց· Երեք օրուան ճամբայ գացին։ Գնացին, բայ չէզոք կոր· յք· Գ· դէմք։ Գնացին, ո՞վ, որո՞նք· —Նոքա· Նոքա՝ էակ· դեր· Գ· դէմք յք· ուղղ· տէր բայի գնացին ին, զօ-րութեամբ։ —Նոքա գնացին, ո՞րչափ տեղ —Երից աւուրց ճանապարհ· Երեք օրուան ճամբայ (միջոց, տեղ)· ճանապարհ՝ հայց· բնութեան խնդիր է գնա-ցին ին, քանակի չափ, երկայնութիւն, ճամբայ ցու-ցնող բառերն հայերէն հայցական կը դրուին։

Խօսեցաւ ընդ նոսա զայս օրինակ· Անոնց հետ այս կերպով խօսեցաւ։ Խօսեցաւ, բայ չէզ. կոր· եզ· Գ· դէմք։ —Խօսեցաւ, ո՞վ. —Նա. Նա՝ էակ· դեր. Գ· դէմք. եզ· ուղղ· տէր բայի խօսեցաւ ին, զօրու-թեամբ։ —Նա խօսեցաւ, որո՞ւ հետ. —Ընդ նոսա, անոնց հետ. Ընդ նոսա՝ նախադրութեամբ խնդիր խօսեցաւ ին։ Նա խօսեցաւ ընդ նոսա, ինչ կերպով, Զայս օրինակ, այս կերպով. Զայս օրինակ՝ հայցա-կան բնութեան խնդիր խօսեցաւ ին· կերպ, եղա-նակ, ցուցնող բառեր հայերէն հայցական կը դրուին:

# ԴԱՍ ԼԳ.

## ՍՏՈՐՈԳԵԼԻ ՀԱՅՑԱԿԱՆ ԵՒ Ի ՆԱԽԴՐԻՒ

1. Ստորոգելին ուղղական է, երբ տէր բային կը վերաբերի (տես Դաս Գ)։

2. Ստորոգելին կրնայ ներգործական բայի մը սեռի խնդրոյն ալ վերաբերիլ, եւ ան ատեն անորոշ հայցական է. ինչպէս՝ Զեզ բարեկամ կոչեցի. Կոչեցի զձեզ բարեկամս։ Այս խօսքին մէջ բարեկամս բառը զձեզ սեռի խնդրոյն կը վերաբերի, ուստի եւ հայցական է։

3. Ստորոգելին, երբ գոյական է, կրնայ ի նախդրիւ հայցական ալ դրուիլ. ինչպէս. Դուք մեզի ծառայ եղէք. Եղիջիք դուք մեզ ի ծառայս, փոխանակ ըսելու՝ Եղիջիք դուք մեզ ծառայք։

### 52. Հրահանգ

Զանի ինծի բարեկամ ըրի. Մեզ իրենց որդիներուն դաստիարակ ըրին. Զանոնք իր տանը վրայ մատակարար դրաւ. Բանտին դուռները գոցուած գտաւ. Թագաւորը ձեզ վերատեսուչ չըրա՞ւ մի. Զանոնք արդար գտայ. Զեզ ինչ անուանեմ. Անոնց որդիք որոտման անուն դրաւ. Աս տղաքը դատարկապորտ սորվեցուցիք. Ձեր կիները՝ տանտիկին, ձեր աղջիկներ ժիր եւ համեստ սորվեցուցէք. Այս լեռները դաշտ պիտի ըլլան. Ինծի որդի եղիր, ես ալ քեզի հայր ըլլամ. Այդ չէն երկիրն անապատ ըլլայ. Զանոնք ինծի խորհրդական եւ խրատտու



ընտրեցի. Մեծամեծ ազգեր քակուեցան ու ոչինչ եղան. Այս պտուղները ձեզի կերակուր ըլլան։

| | |
|---|---|
| Դնել, կացուցանել, կարգել, դնել | Դատարկապորտ, դատարկանձն, ՚յքն. դատարկանձնիմ |
| Վերատեսուչ, տեսուչ | Քակուիլ, քակտիմ |

---

## ԼՈՒԾՈՒՄ

Զանի ինծի բարեկամ ըրի. Արարի զնա ինձ բարեկամ։ Արարի, բյ. ներգ. կտ. եզ. Ա. դէմք։ —Ո՞վ է ընողը. —Ես, զորութեամբ, էակ. դեր. եզ. Ա. դէմք. ուղղ. տէր բայի Արարի ին։ —Արարի, ըրի, զո՞վ. —Զնա, զանի. էակ. դեր. Գ. դէմք. եզ. հյց. սեռի խնդիր Արարի ին։ —Արարի զնա, ինչ. —Բարեկամ. բարեկամ՝ գո. հյց. ստորոգելի զնա ին։ —Արարի զնա բարեկամ, որո՞ւ. Ինձ, ինծի. էակ. դեր. Ա. դէմք. եզ. տրակ. ընութեան խնդիր Արարի ին։

# ԴԱՍ ԼԴ.

## ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

1. Որ յարաբերական դերանուն է (տես Դաս ԺԲ. 7։) Այս բառը որ, որոյ ի այսինքն 4. հոլովման պէս կը հոլովի (Տես էջ 105. Ա. Պատկ.). միայն եզ. տրականը կ՚ըլլայ Որում, եւ բացառականը՝ յորմէ։

2. Աշխարհաբար ող եւ ած բառերով բացատրըուած խօսքեր գրաբարի մէջ ընդհանրապէս որ յարաբերականով եւ դիմաւոր բայով կը բացատրը-

ուրն․ ինչպէս․ Այդ գիրքը քեզի տուող մարդն իմ բարեկամս է․ Այն որ ես քեզ զմատեանդ՝ բարեկամ իմ է։ Տեսած մարդդ իմ բարեկամս է․ Այն զոր տեսեր՝ բարեկամ իմ է։

3․ Այս տեսակ խօսքերու մէջ որ դերանուան յարաբերած անունը յարաբերեալ կ'ըսուի․ ուստի վերի խօսքերուն մէջ, Այր, մարդ բառը յարաբերեալ է։

Աշակերտք հետեւեալ աշխարհաբար խօսքերը յարաբերականով դիմաւոր բայի դարձունեն, բայց՝ ներկայ, անկատար, կատարեալ եւ ապառնի դնելով․ այսպէս․ Խօսող մարդը․ Այն որ խօսի, որ խօսէր, որ խօսեցաւ, որ խօսեսցի։

## 53․ Հրահանգ

Սորվող աշակերտը․ Կռուող զինուորը․ Կռուող կինը․ Դառնող ծերը․ Նստող երիտասարդը․ Հրամայող իշխանը․ Եկող մարդիկը․ Հնազանդող տղաք․ Տուող բարեկամը․ Արածուող անասունները․ Փախչող թշնամին․ Տեսած գիրքս․ Գտած մարգարիտդ․ Առած տունը․ Մեր տուած պարգեւները․ Ձեր փնտռած մարդը․ Անոնց ըսած խօսքը․ Գրած նամակս․ Ղրկած պատգամաւորը․ Թագաւորին տեսած երազը․ Եղբօրս բերած աթոռը․ Հօրդ շինած տունը․ Մեր բնակած քաղաքը․ Մեր անցած լեռները․ Անոնց մատուցած զոհերը․ Բազմութեան ելած դուռը․ Անոնց մեկնած տեղը․ Մեր անցած կամուրջը։

4․ Շատ անգամ աշխարհաբարին ող եւ ած վերջաւորած ածականներն առանց գոյականի են, ինչպէս՝ կ'ըսենք․ Տեսնողը, փոխանակ Տեսնող մար-



դը կամ անձը ըսելու․ Տեսածը, փոխանակ՝ Տեսած բանը։ Այս տեսակ խօսքեր գրաբարի կը դառնան այսպէս․ Տեսնողը, որ տեսանէ․ Տեսածը, զոր տեսանէ․ կամ, ինչպէս սովորաբար կ'ըլլայ, յարաբերականէն ետքը եկող բառին վրայ ն դիմորոշն աւելցնելով․ Որ տեսանէն, Զոր տեսանէն։

5․ Այս խօսքերուն մէջ յարաբերեալ մը զօրութեամբ կ'իմացուի․ Որ տեսանէն՝ Նա որ տեսանէ, ըսել է․ Զոր տեսանէն՝ Այն զոր տեսանէ, կը նշանակէ։

Պէտք է գիտնալ նախ՝ որ ն դիմորոշին տեղ շատ անգամ ս կը դրուի, երբ բայն առաջին դէմք է․ դ կը դրուի, երբ բայը երկրորդ դէմք է․ ուստի Տեսածս, գրաբար կրնայ ըլլալ՝ Զոր տեսանեմն կամ Զոր տեսանեմս․ Տեսածդ՝ Զոր տեսանեսդ։

Պէտք է գիտնալ երկրորդ որ աշխարհաբար՝ Տեսնողը, Տեսածը, խօսքերը կրնան, իմաստին նայելով, ներկայ, անկատար, կատարեալ եւ ապառնի նշանակութիւն ունենալ․ զոր օրինակ՝ Տեսնողը կրնայ հիմա տեսնողը կամ ան որ կը տեսնէ, ան որ կը տեսնէր, ան որ տեսաւ, ան որ պիտի տեսնէ, նշանակել․ այս պատճառաւ գրաբարին բայը կրնայ ոչ միայն ներկայ, այլ եւ անկատար, կատարեալ եւ ապառնի ըլլալ, եւ ըսուիլ․ Որ տեսանէն, որ տեսանէրն, որ ետեսն, որ տեսցէն․ Նոյնպէս Տեսածը, կրնայ դառնալ գրաբարի․ Զոր տեսանէն, զոր տեսանէրն, զոր ետեսն, եւն։

Աշակերտք հետեւեալ աշխարհաբար բառերը (ընդունելութիւնները) գրաբար յարաբերականով դիմաւոր բայի դարձունեն, յարաբերականէն ետքը

եկող բառին վրայ ըստ տեղւոյն ն, ս, դ դիմորոշները դնելով, բայց ալ ներկայ, անկատար, կատարեալ եւ ապառնի դնելով։

## 54. Հրահանգ

Խօսողը. Լսողը. Տեսնողը. Փնտռողը. Նստողը. Գիտցողը. Կարդացողը. Գրողը. Ուզողները. Երգողները. Տուողները. Պատմողը. Քնացողը. Պառողները. Դարձողները. Ղրկուողները. Ղրկողը. Լսողները. Գողցողը. Նեղողները. Սպաննողը։

Տեսածս. Առածը. Խօսածդ. Կարդացածը. Սորվածս. Մեր տեսածները. Ձեր փնտռածը. Ձեր փընտռածները. Անոնց փափաքածը. Մեր գրածը. Ձեր կանչածները. Գրածս. Ղրկածս. Ընդունածդ. Սորվածներս. Կերածդ. Անոնց կերածը. Մեր խմածը. Ձեր հագածը.

## ԴԻՏԵԼԻՔ

1. Գրաբար այսպէս որ յարաբերականով եւ դիմաւոր բայով շինուած խօսքեր որ ող ընդունելութեան գործութիւն ունին, կրնան հոլովիլ այսպէս. Որ խնդրէ, որոյ խնդրէ, որում խնդրէ, Որք տեսանեն, որոց տեսանեն, եւն, եւ կը նշանակեն՝ Խնդրողը, խնդրողին, Տեսնողները, տեսնողներուն, եւ այլն։

| | |
|---|---|
| Քենէ խնդրողին՝ տուր. | Որում խնդրէ ի քէն՝ տուր |
| Ասիկա լսողներուն երկու ականջները պիտի խօսին. | Որոց լսիցեն զայս՝ հնչեսցեն երկոքին ականջք |



| | |
|---|---|
| Մտնել ուզողներու մտնել չէք թողուր. | Որոց մտանելն կամին՝ չտայք թոյլ մտանել |
| Խօսիլ ուզողները կ'արգիլէր. | Զորս խօսելն կամէին՝ արգելոյր |

2. Բայց շատ անգամ փոխանակ որ յարաբերականը հոլովելու, պահանջուած հոլովին տեղ՝ նոյն հոլովով դերանուն մը կը դրուի. ինչպէս.

| | |
|---|---|
| Քենէ խնդրողին՝ տուր. | Որ խնդրէ ի քէն՝ տուր նմա |
| Քենէ փոխ առնել ուզողէն երեսդ մի դարձուներ. | Որ կամիցի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցաներ ի նմանէ զերեսս |
| Շապիկդ առնել ուզողին՝ բաճկոնդ ալ տուր. | Որ կամիցի առնուլ զշապիկս քո՝ թող ի նմա եւ զբաճկոն քո |
| Բաճկոնդ հանողէն՝ շապիկդ մի արգելուր. | Որ հանէ ի քէն զբաճկոն քո՝ մի արգելուր ի նմանէ եւ զշապիկս քո |
| Ասիկա լսողներուն երկու ականջները պիտի խօսին. | Որ լսիցեն զայս՝ հնչեսցեն երկոքին ականջք նոցա |
| Խօսիլ ուզողները կ'արգիլէր. | Որ խօսելն կամէին՝ արգելոյր զնոսա. |

3. Երբեմն յարաբերականով դիմաւոր բայը՝ իբրեւ ածական, ախորժարարին մէջ, յարաբերեալէն առաջ կը դրուի. ինչպէս.

| | |
|---|---|
| Ներսն եղող մարդիկը. | Որ ի ներքս էին արք |
| Զիս ղրկող հայրը. | Որ առաքեացն զիս հայր |
| Աղէկ վերակացութիւն ընող երէցները. | Որ բարուք վերակացու լինին երիցունք |

Այս դասին մէջ ըսուածներն աղէկ հասկնալէն ետքը, աշակերտք գրատախտակին դարձունեն վարի հրահանգը, հետեւեալ բառերուն միտ դնելով.

| | |
|---|---|
| Հոս, աստ, այսր | Նշան, նշանակ |
| Հասկնալ, իմանալ | Ոմանք, կէսք, այլք |
| Ալ, ոչ եւս | Քալող, գնայուն |
| Շինել (գիրք), յօրինել | Գէշ լուր, գոյժ |
| Խեղդուիլ, հեղձնուլ | Իրաւ, արդարեւ |
| Նամակ, թուղթ | |

## 55. Հրահանգ

Եղբայրդ սպաննող մարդն հոս է. Քեզի հետ խօսող կինը տեսայ. Անոնց ըսած խօսքը չհասկցան. Քաղաքը խռովող մարդիկը գիտե՞ք. Հոս եկող մարդիկն ո՞ւր են. Հօրս ղրկած գիրքը կարդացի՞ք. Քու պատմած բաներուդ տեղեակ չենք. Ինծի մատուցած ծաղիկներդ գեղեցիկ են. Այդ ծառերուն հասունցած պտուղները շատ քաղցր են. Անցած ժամանակն ալ չի դառնար. Անոր խորհուրդները գիտցող մը չկայ. Զեզ ճանչցողները շատ են. Մարդիկը՝ որոնցմէ այդ ընծաներն ընդունեցաք՝ մեր բարեկամներն են. Ուրկէ՞ լսեցիր բոլոր այդ գրածներդ. Քու շինած գիրքերէդ շատերը կարդացի. Ծովը խեղդուող տղաքն՝ ազնուականաց որդիք էին. Նամակը բերող պատանին թագաւորին սպասաւորներէն մէկն է. Այդ զինուորներուն պսակուած դափնիները մեծ յաղթութեան նշան են: Տուած հրամաններդ կատարեցի. Սպաննուած մարդիկն անմեղ էին. Գիշերն երեւցող աստղերէն ոմանք անշարժ են, ոմանք ալ



քալող. Մեր տեսած մարդն հոս է. Ձեր ընդունած ընծաները տեսայ. Գրած գիրքդ շատ ընտիր է. Ղրկած սպասաւորն ինծի եկաւ. Այս գիշեր պատահած հրդեհին տեղեակ չե՞ս. Եթէ տուած գէշ լուրդ ճշմարիտ է, իրաւ պէտք է տրտմիլ. Եթէ ըսած խօսքերս արդար են, ինչո՞ւ կը բարկանաս:

## 56. Հրահանգ

Ասիկա ընողը ձեր բարեկամն է. Զիս տեսնողը հոս է. Քեզ մատնողը քու որդիդ է. Մեզի հետ խօսողները փախեցին. Տեսնողներն ու լսողներն երանելի են. Չգործողը թող չուտէ. Ուտողները հինգ հոգի էին. Կարդացողը թող հասկնայ. Զիս ղրկողն ինծի պատուէր տուաւ. Աս գիրքը գրողները ձեզ կը ճանչնան. Հոն եղողները զարմացան. Մտնողներն ու ելլողները կը տեսնէին. Չգործողները պէտք է պատուհասել. Հոն գտնուողները բռնեցինք. Հետը խօսածս ձեր քոյրն է. Այդ տեսածդ իմ եղբայրս է. Քենէ խնդրողին տուր. Աս ընողը տեսայ. Բռնածնին սուրէ անցուցին. Ինծի տուածդ քեզի տամ. Լսածնիս քեզի պատմենք. Գրածը կարդացի. Ղրկածդ ընդունեցայ. Ըսածդ ճշմարիտ է. Ձեր ըսածներէն բան մը չեմ գիտեր. Պարծենցածդ սուտ է. Ընելիքդ շուտով ըրէ. Աս խնդրածս ինծի տուր. Այդ ղրկածդ ընդունեցայ. Ինծի տուածներէդ բան մը չկորսնցուցի. Քու կասկածածդ գիտեմ. Մեր փախցածներէն բան մը չպատահեցաւ. Առածդ իմս է. Կորսուածներն ի՞նչ էին.

Աշակերտք հետեւեալ բառերուն միտ դնեն.

| | |
|---|---|
| Հասկնալ, ի միտ առնուլ | Սուրէ անցունել, ընդ |
| Բռնել, ունել | սուր հանել |

6. Ուր, Յո, Ուստի, Մինչ, Մինչդեռ, Յորժամ, Որպէս բառերէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ ալ երբեմն ս, դ, և յօդերը կը դրուին, քանզի աս բառերէն առաջ ալ զօրութեամբ ուրիշ բառ մը կ'իմացուի. զոր օրինակ՝ Ուր եսն երթամ, դուք ոչ կարէք գալ. ուր էն առաջ տեղի բառը զօրութեամբ կ'իմացուի. ուստի եւ պիտի ըլլայ. Դուք ոչ կարէք գալ ի տեղին կամ անդր ուր ես երթամ.

## 57. Հրահանգ

Ուր ըլլալնին չենք գիտեր. Ուր երթալ ուզելը մեզի չըսաւ. Կու գամ ուր դուն կը բնակիս. Ցուցուր ինծի ուստի առիր ատիկա. Ուստի գալս չէք գիտեր. Ուր ղրկուած ըլլալն յայտնի չէ. Ուր տուն չինելը գիտեմ. Մեր քով եղած ատենն առողջ էր. Խօսած ատենն անոր մօտիկ կ'ընէի. Լմնցուցէք այդ գործը քանի որ ցորեկ է. Քանի որ հոս եմ՝ կ'ուզեմ զանի տեսնել. Ձեր քով եղած ատենս կը խօսէի. Այս ամէնը կատարուեցաւ քու գեղն եղած ատենդ. Տղայ եղած ատենս մայրս ինծի կը պատմէր. Հիւանդ եղած ատենս երեք անգամ գրել տուի. Անոր ձայնը լսեցիր ինծի պէս (այսինքն՝ ինչպէս որ ես լսեցի). Մեզի պէս ալ՝ անոնք այդ ամէնը գիտեն. Երեկուան պէս ընեմ. Գրէ՝ ինչպէս որ միշտ. Լսենք՝ ինչպէս միշտ. Անոնց պէս անհնազանդ չգտնուինք. Գացինք ինչպէս որ սովոր էինք. Ինչպէս որ առաջ ալ կ'ըսէի.

Աշակերտք հետեւեալ բառերուն միտ դնեն.



| | |
|---|---|
| Ուզել, կամել | Գեղ, շէն |
| Յայտնի, յայտ | Տղայ, մանուկ |
| Լմնցունել, բովանդակել | Երեք անգամ, երիցս |
| Ատենը, մինչ, մինչդեռ | Ձայն, բարբառ |
| Մօտիկ ընել, լսել, ունկն դնել | Միշտ, միշտ, հանապազ |
| Քանի որ, մինչ, մինչդեռ | Ինչպէս, որպէս |

# ԴԱՍ ԼԵ.

## ԲԱՑԱՅԱՅՏԻՉ. ԿՈՉԱԿԱՆ

1. Անձ մը կամ իր մը ճանչցնելու համար երբեմն անոր քով մէկ կամ քանի մը բառով յաւելուած մը կը դրուի, որ Բացայայտիչ կը կոչուի. Արմենակ, երէց որդին Հայկայ. աս խօսքին մէջ՝ Երէց որդին Հայկայ, Արմենակին բացայայտիչն է.

2. Բացայայտիչը նոյն իսկ բացայայտեալն է ուրիշ բառերով բացատրուած.

3. Գրաբար հայերէնի մէջ բացայայտիչը բացայայտելոյն հոլովը կը դրուի.

| | |
|---|---|
| Մեծն Տիգրան Հայոց թագաւորը. | Տիգրան մեծ, թագաւոր Հայոց |
| Դաւիթ իր թագաւորութիւնը Սողոմոն որդւոյն թողուց. | Դաւիթ եթող զթագաւորութիւն իւր որդւոյ իւրում Սողոմոնի |
| Դաւիթ Ուրիան սպաննել տուաւ որ անոր կինը Բերսաբէն առնէ. | Դաւիթ ետ սպանանել զՈւրիա, զի առցէ զկին նորա զԲերսաբէ |

| | |
|---|---|
| Սողոմոնի որդւոյն Ռոբովամի ատենը Հրէից թագաւորութիւնը երկուքի բաժնուեցաւ. | Առ Ռոբովամաւ, որդւով Սողոմոնի, թագաւորութիւնն Իսրայէլի բաժանեցաւ յերկուս |
| Մեծ գետէն Եփրատէն անցաւ. | Անց նա ըստ գետն մեծ ըստ Եփրատ |
| Անդրէաս իր եղբօրը Պետրոսին ըսաւ. | Անդրէաս ասէ ցեղբայր իւր ցՊետրոս |
| Ինչ կ'ուզես ինէ, խեղճ մարդ մը. | Զինչ խնդրես յինէն, յանձն տառապելոյ |
| Իր հայրենիքը Հայաստան եկաւ. | Եկն ի հայրենիս իւր ի Հայս |

ԴԻՏ. Շատ անգամ անձինք կամ իրեր տիտղոս մը կ'ունենան, ինչպէս՝ Աղեքսանդր Մակեդոնացւոց թագաւորը, Հայոց Ներսէս եւ Սահակ Պարթեւ հայրապետները, եւ ուրիշ անձինք Հին եւ Նոր պատմութեան մէջ մեծ տիտղոսն ունին. Վարդան Հայոց զօրավարը քաջ կը կոչուի։ Այսպիսի տիտղոսներ, եթէ անունէն առաջ գրուին, ն գիրը կ'առնեն. եթէ ետքը գրուին, ն գիրը չեն առներ. ինչպէս Մեծն Սահակ, Մեծին Սահակայ, Մեծաւն Սահակաւ. Սահակ մեծ, Սահակայ մեծի, Սահակաւ մեծաւ. Սուրբն Գրիգոր, Սրբոյն Գրիգորի. Գրիգոր սուրբ, Գրիգորի սրբոյ, եւն. Երանելին Տրդատ, Երանելւոյն Տրդատայ. Տրդատ երանելի, Տրդատայ երանելւոյ, եւն։

ԿՈՉԱԿԱՆ

1. Անձ մը կամ իր մը առ որ խօսքը կ'ուղղուի՝ Կոչական կ'ըսուի. Լսեցէք, Աթենացիներ. Լուարուք, Աթենացիք։ Այս խօսքին մէջ՝ Աթենացիք Կոչական է։



2. Շատ անգամ կոչականէն անմիջապէս առաջ ով կամ ո միջարկութիւնը կը գրուի. երբեմն ալ դու դերանունը կը գրուի կոչականէն անմիջապէս ետքը. Լուարուք, ով կամ ո Աթենացիք. Լսեցէք ով Աթենացիներ։ Եկ այսր, մանուկ դու. Հոս եկուր, տղայ։

3. Երբ կոչականն իրմէ առաջ ածական մը ունի, ածականին վրայ դ գիրը կը գրուի. Լուր, քաջդ Վարդան. Լսէ, քաջ Վարդան.

4. Եթէ կոչականէն ետքը յատկացուցիչ կայ, կոչականին վրայ կը գրուի դ գիրը. Լուր, արքայդ Հայոց. Լսէ, Հայոց թագաւոր։

## 58. Հրահանգ

Մեծն Աղեքսանդր, Մակեդոնացւոց թագաւորը, Պարսից տէրութիւնը նուաճեց. Ասիկա եղաւ Պարսից թագաւորին Դարեհի Կոդոմանոսի ատենը. Յիսուս խաչուեցաւ Հռոմայեցի դատաւորին Պոնտացի Պիղատոսին հրամանաւ. Աստուած Աբրահամին հրամայեց որ իր մէկհատիկ որդին Իսահակը զոհ ընէ. Հայոց քրիստոնէութեան դառնալը Սուրբ Գրիգոր Լուսաւորչին ձեռօք եղաւ. Մեծին Տրդատայ հրամանաւ սպաննուեցան Հռոմայեցի կուսանքները Հռիփսիմեանք, Հայոց Վաղարշապատ մայրաքաղաքին մէջ. Աբրահամ իր ծառային Եղիազարու ըսաւ. Յակոբ Եգիպտոս իր որդւոյն Յովսէփին եկաւ. Կայէն իր եղբօրն Աբելին նախանձեցաւ, եւ սպաննեց զանի. Հայոց նշանաւոր քաղաքներն Երասխ գետին եզերքն էին. Երանելին Սահակ եւ Մեսրոպ Սուրբ գիրքերը թարգմանեցին իրենց Եզնիկ, Արձան, Յովսէփ, Յովհան եւ Կորիւն աշակերտներովը մէկտեղ. Որդ-

եակ, հօրդ խրատը մտիկ ըրէ. Զո՞վ կը փնտռես, կնիկ. Ծառաներ, ձեր տէրերուն հնազանդ եղէք. Ինչո՞ւ կը տանջես զիս, ով մարդ. Գեղեցիկդ Արի-ադնէ, քե՞զ հոս ո՞վ բերաւ. Զէնքդ առ, քաջդ Վահան. Ել կայնէ, ով տղայ. Քեզի կ'ըսեմ, ով աղջիկ. Ի՞նչ կը քնանաս, արթնցիր, ով վատ. Տեարք, ի՞նչ կ'ուզէք որ ընեմ. Քեզ գիտեմ, Աստուծոյ սուրբը. Քենէ շնորհակալ եմ, քաջ Փելիքս. Իսրայելի Թագաւորը, խաչէն իջիր. Հեռու կեցէք ինէ, անիրաւ մշակներ. Ամչցիր, ով խաղաղութեան թշնամի. Վարձքդ մեծ է, ով աղքատներուն հայրը.

Աշակերտք վերի կանոններուն համեմատ, այս Հրահանգը գրաբարի դարձունեն:

---

## ԼՈՒԾՈՒՄ

Մեծն Աղեքսանդր Մակեդոնացւոց թագաւորը Պարսից տէրութիւնը նուաճեց: Աղեքսանդր մեծ, արքայ Մակեդոնացւոց, նուաճեաց զտէրութիւնն Պարսից: —Նուաճեաց, բայ ներգ. կտ. եզ. Գ. դէմք: —Նուաճեաց, ո՞վ, Աղեքսանդր մեծ. Աղեքսանդր, յատ. անուն. ուղղ. տէր բայի նուաճեացին. մեծ՝ ածական. Աղեքսանդրին ածական է: —Աղեքսանդր մեծ ո՞վ էր. —Արքայ Մակեդոնացւոց, Մակեդոնացւոց թագաւոր. բացայայտիչ Աղեքսանդրին: Աղեքսանդր մեծ նուաճեաց, զի՞նչ բան. —Զտէրութիւնն Պարսից. Տէրութիւն՝ գոյ. հյց. սեռի խնդիր նուաճեացին. Պարսից, յատ. ան. յք. սեռական, յատկացուցիչ՝ Տէրութիւնին:



# ԴԱՍ ԼԶ.

## ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

### ՏԷՐ ԲԱՅԻ

1. Բայերուն սահմանական ներկան, անկատարը կատարեալն ու ապառնին, ստորադասականն ու հրամայականը պարզ ժամանակներ են:

2. Բաղադրեալ ժամանակներ ալ կան: Ասոնք Եմ բային ներկայ, անկատար եւ ստորադասականէն ու աներեւոյթ անցեալէ (*) եւ ապառնիէ մը կը կազմուին:

3. Բաղադրեալ ժամանակներն են՝

| | |
|---|---|
| 1. Յարակատար. | Սիրեալ եմ, սիրեալ ես, ևն. |
| | Սիրած եմ, սիրած ես, ևն. |
| 2. Գերակատար. | Սիրեալ էի, սիրեալ էիր, ևն. |
| | Սիրած էի, սիրած էիր, ևն, |
| 3. Ստորադասական անցեալ | Սիրեալ իցեմ, սիրեալ իցես, ևն |
| | Սիրած եմ, կամ սիրած ըլլամ, և այլն. |
| 4. Ապառնի ներկայ. | Սիրելոց եմ, սիրելոց ես, ևն. |
| | Պիտի սիրեմ, ևն. |

---

(*) Աներեւոյթ անցեալը՝ որ Անցեալ, Անցեալ անորոշ կամ Անցեալ ընդունելութիւն ալ կ'ըսուի, այսպէս են՝ Սիրեալ, հատեալ, բացեալ, թողեալ, ևն: Աներեւոյթ ապառնին, որ Անորոշ ապառնի կամ Ընդունելութիւն ապառնի ալ կը կոչուի, է՝ Սիրելոց, հատանելոց, բանալոց, թողլոց, ևն:

5. Ապառնի անկատ. Սիրելոց էի, սիրելոց էիր, ևն. Պիտի սիրէի, ևն:

6. Ապառնի ստորադ. Սիրելոց իցեմ, սիրելոց իցես, ևն. Պիտի սիրեմ, ևն.

---

## ՏԷՐ ԲԱՅԻ

ԿԱՆ. 1. Հայերէն տէր բային միշտ ուղղական հոլով է:

ԿԱՆ. 2. Երկու դէպքի մէջ տէր բային կրնայ սեռական դրուիլ:

Ա. Երբ եւ շաղկապով կապուած երկու բայ միեւնոյն տէր բային ունին, առջի բայը կրնայ ընդունելութիւն անցեալի փոխուիլ, եւ շաղկապն ալ զանց առնուիլ. եւ ան ատեն տէր բային կրնայ սեռական դրուիլ: Զոր օրինակ՝ սա խօսքը, Լուաւ նա զայս եւ մեկնեցաւ. Անիկա լսեց ասիկա եւ գնաց, կրնայ այսպէս ալ բացատրուիլ. Լուեալ նորա զայս՝ մեկնեցաւ. եւ աշխարհաբարի կը դառնայ այսպէս. Անիկա այս լսելով գնաց:

Բ. Յարակատարին, Գերակատարին եւ Ստորադասական անցեալին (տես վերը) եզակի երրորդ դէմքը շատ անգամ թէ եզակի եւ թէ յոգնակի ամէն դէմքի տեղ կը գործածուի, եւ ան ատեն բուն բային տէր բային, թէ դերանուն ըլլայ եւ թէ գոյական, սեռական կը դրուի: Զոր օրինակ՝ Տեսեալ եմ զնա խօսքին մէջ՝ տեսեալ եմ առաջին դէմքը կրնանք երրորդ դէմքի փոխել, Տեսեալ է. եւ տէր բային որ է՝ ես, սեռականի փոխելով ըսել. Տեսեալ է իմ զնա:

Այսպէս միւս դէմքերն ալ.



| | |
|---|---|
| Ես զանի տեսած եմ. | Տեսեալ եմ ես զնա, կամ Տեսեալ է իմ զնա |
| Դուն զանի տեսած ես. | Տեսեալ ես դու զնա, կամ Տեսեալ է քո զնա |
| Ան, կամ, եղբայրս զանի տեսած է. | Տեսեալ է նա կամ եղբայր իմ զնա, եւ կամ Տեսեալ է նորա կամ եղբօր իմոյ զնա |
| Մենք զանի տեսած ենք. | Տեսեալ եմք մեք զնա, կամ Տեսեալ է մեր զնա |
| Դուք զանի տեսած էք. | Տեսեալ էք դուք զնա, կամ Տեսեալ է ձեր զնա |
| Անոնք, կամ, մեր եղբայրները զանի տեսած են. | Տեսեալ են նոքա կամ եղբարք իմ զնա, եւ կամ Տեսեալ է նոցա կամ եղբարց իմոց զնա: |

ԿԱՆ. 3. Տէր բային տրական կը դրուի հետեւեալ դէպքին մէջ.

Երբ երկու նախադասութիւն զի, թէ շաղկապով կապուած են, այն շաղկապները կը թողուին, երկրորդ բայն ալ աներեւոյթի կը փոխուի, եւ ան ատեն տէր բային տրական կը դրուի. ինչպէս. Ոչ կամիմք զի թագաւորեսցէ նա ի վերայ մեր. Չենք ուզեր որ անիկա մեր վրայ թագաւորէ. այս խօսքը կրնայ բացատրուիլ այսպէս. Ոչ կամիմք թագաւորել նմա ի վերայ մեր:

## 59. Հրաժանգ

Զինուորներն անոր վրայ հասնելով կապեցին զանի. Անիկա լեռը ելլելով նստաւ. Անոնք իմ խօսքերս պատգամաւորին պատմելով նորէն ինծի եկան. Զանի լերան ծայրը բերելով վար նետել կ'ուզէին. Օտա-

բական մարդը ներս խոթելով դուռը գոցեցին։ Ցե-լուգակները լեռնէն իջնելով դաշտին մէջ բնակեցան. Աստուծոյ հրեշտակը երկինքէն իջնելով գերեզմանին վրայ կը նստէր։ Կնիկները շուտով պարտէզէն ելլելով գեղն ապաւինելու կը փութային։ Քու եղբայրդ մօտենալով անոնց հետ խօսեցաւ։ Մատնիչը տեսնելով ասիկա՝ զղջաց։ Անոնք սակն առնելով սպասաւորներուն տուին։ Ծառաները մօտենալով անոր երկրպագութիւն կ'ընէին։ Անիկա աս ըսելով քնացաւ։ Իր գլուխը ծռելով հոգին աւանդեց։ Անոր ձեռքէն բռնելով դուրս հանեց։ Ոստիկանները ներս մտնելով զանի կը փնտռէին։ Մեսրովպ քունէն արթննալով մեր նշանագիրներն ստեղծեց։ Անիկա քաղքէն ելլելով մեզի եկաւ։ Յովսէփ իր եղբայրները տեսնելով՝ զանոնք ճանչցաւ։ Անոր գլուխը կտրելով թագաւորին բերին։ Իմ ձեռքէս բռնելով ներս տարաւ։ Ադամ անոր քալելուն ձայնը լսելով պահըւտեցաւ։ Մայրը որդւոյն մահուանը լուրը լսելով սկսաւ լալ։ Իր անկողինը մտնելով կը քնանար։ Ձեր եղբայրները կանչելով ղրկեցի։ Զինուորները գալով մեզ բռնել կ'ուզէին։ Սողոմոն իր հօրը թագաւորութեան աթոռն ելլելով՝ բոլոր ազգերն իրեն հնազանդեցուց։ Ծառաներն անոր մօտենալով կ'աղաչէին։ Զանիկա մէկդի առնելով հետը կը խօսէր։ Մեզ թողլով իրենց տուները գացին։ Աթոռ նստելով ժողովուրդը կը դատէր։ Մենք շատ օր հոն կենալով անոր գալուն կը սպասէինք։ Պատուհանէն անցնելով ներս մտաւ զանիկա տեսնելու։ Տաճարին առջեւը կենալով ձեր եղբօրը հետ կը խօսէի։ Կրակ վառելով նստան, ու կը տաքնային։



Տէր բայի վրայ նախընթաց 2 րորդ կանոնին Ա. մասին համեմատ, աշակերտք այս Հրահանգը գրաբարի դարձունեն՝ հետեւեալ բառերուն միտ դնելով.

| | |
|---|---|
| Նորէն, անդրէն | Ծռել (գլուխը), խոնարհեցուցանել |
| Ծայր (լերան. ուչուրում) արտեւան | Բռնել (ձեռքէն), ունել (զձեռանէ) |
| Բերել, ածել | Կտրել, հատանել |
| Վար նետել, ընկենուլ ի վայր | Քալել, գնալ |
| Խոթել, մուծանել | Լուր (մահուան), բոթ |
| Գոցել, փակել | Անկողին, մահիճ |
| Շուտով, վաղվաղակի | Մէկդի, մեկուսի |
| Ապաւինիլ (տեղ մը), անկանել ի | Պատուհանէն, ընդ պատուհանն |
| Մօտենալ, մատչել | Կրակ վառել, խարոյկ արկանել |
| Երկրպագութիւն ընել, երկիր պագանել | Տաքնալ, ջեռնուլ |

## 60. Հրահանգ

Դուք անոնց համար լսած էք։ Զանի շատ անգամ տեսած եմ։ Անոնք մեր նամակները կարդացած էին. Կարդացա՞ծ չէ՞ք։ Մենք անանկ բան մը կարդացած չենք։ Անոր վրայով շատ բան լսած եմ։ Անիկա շատ չարիք գործած էր։ Մենք ասիկա թագաւորէն պարգեւ առած ենք։ Եթէ թագաւորին հաւատարիմ եղած ըլլայիք։ Իմ առջի վարմունքս լսած էք։ Անիկա ճամբուն տեղեկացած էր։ Ոչ կերած ոչ ալ խմած ենք։ Եթէ մենք անոր պատուիրանները պահած ըլլայինք։ Անոնք գերութենէն նոր դարձած էին։ Կօ-

չիկներ հագած էին. Չեմ թողուր որ դուն ասկէ անցնիս. Թագաւորին հրամանն այս է, որ դուք շուտով այս քաղքէն երթաք. Կը պատմուի թէ անոնք դաշտ մը հասան եւ հոն քաղաք մը շինեցին. Պատուիրեցի որ սպասաւորները հոս գան. Կ'աղաչէին որ անձամբ կռուին մէջ չմտնէ. Կ'ըսեն թէ դուն կայսեր թշնամի ես. Կը փափաքին որ իրենց զօրավար ըլլաս։

Տէր բայի վրայ վերը դրուած 2 րորդ կանոնին Բ. մասին եւ 3 րորդ կանոնին համեմատ, աշակերտք այս հրահանգը գրաբարի դարձունեն, հետեւեալ բառերուն միտ դնելով։

| | |
|---|---|
| Անանկ բան մը, այնպիսի ինչ | Նոր, այն ինչ |
| | Կօշիկ (չիզմէ), մոյգ |
| Հաւատարիմ թագաւորին, հաւատարիմ առ թագաւորն | Ասկէ, աստի |
| | Երթալ (տեղէ մը), մեկնիլ |
| Վարմունք, գնացք | Պատուիրել, պատուէր տալ |
| Ուտել, ճաշակել | |

ԴԻՏ. Դիմաւոր բայ մը անցեալի կամ աներեւոյթի փոխել եւ տէր բային սեռական կամ տրական դնելը՝ հայկաբանութիւն, այսինքն՝ հայերէնին մասնաւոր մէկ յատկութիւնն է։ Այս կերպով փոխուած կամ ամփոփուած խօսք մը լուծելու ատեն, աշակերտք դիւրութեան համար կրնան խօսքը հասարակ կերպի դարձունել, եւ ապա լուծել։ Զոր օրինակ՝ հետեւեալ խօսքերը

Հասեալ զինուորացն ի վերայ նորա՝ կապեցին զնա.
Լուեալ է ձեր վասն նոցա.
Զտամ թոյլ անցանել ձեզ ասէ.

Հասարակ կերպի կը դառնան այսպէս.



Հասին զինուորքն ի վերայ նորա եւ կապեցին զնա.
Լուեալ էք դուք վասն նոցա.
Զտամ թոյլ զի անցանիցէք դուք ասէ.

Խօսքերն այսպէս պարզուելէն ետքը դիւրաւ կը լուծուին։

# ԴԱՍ ԼԷ.

## ԴԻՄԱՒՈՐ ԲԱՅԵՐՆ ԱՆԴԷՄԻ ՓՈԽԵԼ

Խօսք մը կարճ եւ ազդու ընելու համար շատ անգամ անոր մէկ դիմաւոր բայն անդէմի, այսինքն անցեալի կամ աներեւութի կը փոխուի։

Աս տեսակ համառօտութեան կամ ամփոփման դըլխաւորներն են.

1. Երբ երկու դիմաւոր բայ միեւնոյն տէր բային ունին, առաջինը անցեալի կը փոխուի. (Տես եւ Դաս ԼԶ)։

| | |
|---|---|
| Եղբայրդ զիս տեսաւ եւ կանչեց. | Տեսեալ զիս եղբօր իւր կոչեաց. փոխ. Եղբայր իւր ետես զիս եւ կոչեաց |
| Զանի առաւ եւ հետը [տարաւ. | Առեալ զնա՝ տարաւ ընդ իւր |
| Աստուած Ադամը ստեղծեց ու դրախտին մէջ դրաւ. | Արարեալ Աստուծոյ զԱդամ՝ եդ ի դրախտին |
| Կայէն Աբէլին նախանձեցաւ ու սպաննեց. | Նախանձեալ Կայենի ընդ Աբէլ՝ սպան զնա |

2. Խօսքի մը իբրեւ շաղկապով կապուած մասին դիմաւոր բայն ալ այսպէս անցեալի կրնայ փոխուիլ, եթէ բային ժամանակը կատարեալ է. զոր օրինակ.

| | |
|---|---|
| Երբ ասիկա ըսեց, ըսաւ. | Կոչեաց զայն՝ ասէ. փոխ. իբրեւ լուաւ զայս, ասէ |
| Երբ հոն հասանք, բանտը դրուեցանք. | Հասեալ մեր անդր՝ արկաք ի բանտ |
| Երբ ասիկա այս պատասխանը տուաւ, դատաւորը մեծ ձայնով ըսաւ. | Նորա զայս պատասխանի տուեալ, դատաւորն ի ձայն մեծ ասէ |
| Երբ թագաւորին առջեւը ելանք, մեզի հարցուց՝ | Յանդիման լեալ մեր թագաւորին, եհարց զմեզ |

Աս խօսքերուն մէջ բայը կրնայ ի նախդրիւ աներեւոյթ ալ դրուիլ. իսկ եթէ իբրեւ ով սկսուած խօսքին բայը ներկայ կամ ապառնի է, ի նախդրիւ աներեւոյթ դնել հարկ է. ինչպէս.

| | |
|---|---|
| Երբ ասիկա կը լսէք, ըսէք. | Ի լսել ձեր զայս, ասասջիք. փոխ. Իբրեւ լսէք զայս, ասացէք |
| Երբ հոն հասնին, բանտը պիտի դրուին. | Ի հասանել նոցա անդր՝ արկցին ի բանտ |
| Երբ թագաւորին առջեւն ելլենք, մեզի պիտի հարցնէ. | Ի լինել մեր յանդիման թագաւորին՝ հարցանիցէ զմեզ |

3. Մինչ, մինչդեռ շաղկապով սկսուած խօսքի մը բայը նոյնպէս ի նախդրիւ աներեւոյթի կրնայ փոխուիլ. ինչպէս.

| | |
|---|---|
| Անիկա աս խորհած ատենը՝ մարդ մը եկաւ. | Յածել նորա զայս զմտաւ՝ եկն այր մի. փոխ. Մինչդեռ նա զայս ածէր զմտաւ, եկն այր մի |



| | |
|---|---|
| Անոնք անտառէն անցած ատենը՝ աւազակներ անոնց վրայ հասան. | Յանցանել նոցա ընդ անտառն՝ հասին ի վերայ նոցա աւազակք |
| Պատին տակը կեցած վեր նայելու ատենը՝ քար մը ինկաւ եւ գանկը ջարդեց. | Ի կալ նորա առ որմովն եւ հայել ի վեր՝ վէմ մի անկեալ ջախջախեր զգլխաւառակ նորա |

4. Զի կամ երբ, թէ շաղկապով սկսուած խօսքի մը գլխաւոր բայը շատ անգամ ի, առ ի, առ նախադրութիւններով կամ ամենեւին առանց նախադրութեան աներեւոյթի կը փոխուի. (Տես եւ Դաս ԼՁ)։

| | |
|---|---|
| Ջուր բերին որ անոնց ոտուըները լուան. | Բերին ջուր լուանալ զոտս նոցա. փոխ. Բերին ջուր զի լուասցեն զոտս նոցա |
| Իրիկուան դէմ կ'ելլէինք որ դաշտին մէջ պտըտինք. | Ելանէաք ընդ երեկս զբօսնուլ ի դաշտին |
| Դժուարաւ համոզեցին ժողովուրդը որ չզարնեն անոր. | Հազիւ իմն հաւանեցուցին զժողովուրդն չհարկանել զնա |
| Ձիերուն բերանը սանձ կը դնենք որ մեզի հնազանդին. | Զիոց սանձս ի բերան դնեմք առ անսալոյ նոցա մեզ |
| Ոչ աչք ունին որ տեսնեն, ոչ ականջ ունին որ լսեն, ոչ քիթ որ օդ առնեն, եւ մատուըներ որ շօշափեն. | Ոչ աչս զոն նոցա ի տեսանել, ոչ ականջս ի լսել, ոչ ունչս առ ի ձգելոյ զօդ, եւ ոչ մատունս ձեռաց առ ի շօշափելոյ |

| | |
|---|---|
| Պատասխան տուին թէ չեն գիտեր. | Պատասխանի ետուն չգիտել փոխ. Պատասխանի ետուն թէ ոչ գիտեն |
| Անոնք կը սպասէին թէ պիտի ուռի կամ իյնայ ու յանկարծ պիտի մեռնի. | Նոքա ակն ունէին այտնլոյ նմա կամ անկանելոյ եւ յանկարծակի մեռանելոյ. |
| Մէկը պատուհանը չբացաւ որ դուրս նայի. | Ոչ ոք եբաց զպատուհանն նայել արտաքս |
| Անոր պատուիրեցի որ այն խօսքը մէկուն չյայտնէ. | Պատուէր ետու նմա չհանել ումեք զբանն ի վեր |

5. Որպէս զի կամ այնպէս զի շաղկապով սկսուած խօսքի մը դիմաւոր բայը մինչեւ, մինչ զի շաղկապով աներեւոյթի կը փոխուի. Ինչպէս.

| | |
|---|---|
| Շատ յոգնած էինք, այնպէս որ չէինք կրնար ոտքի վրայ կենալ. | Վաստակեալ եաք յոյժ՝ մինչեւ չկարել մեզ կալ յոտս. փոխ. Վաստակեալ եաք յոյժ, որպէս զի (այնպէս զի) ոչ կարեաք կալ յոտս |
| Ամենքն ալ ջարդենք, այնպէս որ անոնցմէ մէկը չազատի. | Սատակեցաք զամենեսին՝ մինչեւ չմնալ ի նոցանէ ապրեալ. |

---

## 61. Հրահանգ

Դահիճ զրկեց ու գլուխը կտրել տուաւ. Տուն եկաւ ու եղածները մեզի պատմեց. Մեզ հոն թող տուին ու գացին. Զանոնք իր տունն ընդունեց ու



անոնց կերակուր տուաւ. Բոլոր ստացուածները ծախեց ու հեռու երկիր գնաց. Երբ անոնց հարցուցինք, մեզի պատասխան տալ չուզեցին. Երբ զանի կը գտնէք, մեզի իմացուցէք. Երբ հոն հասանք, զանի հոն չգտանք. Երբ ձեր երկիրը դառնաք, զիս ալ ձեր հետը տարէք. Երբ անձրեւները կը տեղան, գետը կը յորդէ. Երբ լսեցինք ասիկա, զարմացանք. Մենք քաղաքը պտտած ատեն՝ մեզի առաջնորդող մարդը մեր հետը չէր. Մենք ներսը եղած ատեն՝ դրանը առջեւ պահապաններ կը կենային. Անոր այսպէս սաստկութեամբ խօսած ատենը՝ պատգամաւորը զարմացմամբ անոր կը նայէր. Անիկա շուտով յառաջ կու գայ եւ ձեռքը կ'երկնցնէ ինծի. Մենք անկէ հեռանալու աշխատած ատեն, սաստիկ հով մը մեր նաւը նաւահանգիստը մղեց. Անիկա այս խօսքերն ըսած ատեն՝ յանկարծ մեր աչուըները բացուեցան. Զեզի կը հրամայեմ որ ասկէ երթաք. Անոր խրատ տուի որ հոն չկենայ. Աւելի կ'ուզէին որ մեռնին քան թէ քաղաքը մտնեն. Կը բաղձայինք որ առտու ըլլայ. Կ'ըսէին թէ որոտում կ'ըլլայ. Չէին ուզեր որ իրենց հետ բնակի. Եղբօրդ ըսէ որ պարտքը վճարէ. Թանձր մշուշ կար, այնպէս որ իրար չէին տեսներ. Շատ հեռացան, այնպէս որ ալ չէին տեսնուեր. Ծովին մէջ մեծ շարժում եղաւ, այնպէս որ նաւն ալիքներէն կը ծածկուէր. Զանի անխնայ ծեծեցին, այնպէս որ շունչը չմնաց. Շատերը կու գային անոնց, այնպէս որ հաց ուտելու անգամ չէին հասներ. Հիւընդցաւ ու բժիշկ կանչեց. Մեզ այն մարդուն յանձնեց ու գնաց. Երբ կերակուրը կերաւ, զօրացաւ ու հաստատուեցաւ. Երբ տեսան որ զանի չեն

կրնար նուաճել, նենգութեամբ բռնել խորհեցան. Անոնք իրարու հետ կռուած ատեն՝ ուրիշ մը ձին առաւ գնաց. Մանանխոյ հատը երբ կը մեծնայ, ծառ կ'ըլլայ, այնպէս որ երկնից թռչունները կու գան ու անոր ճիւղերուն վրայ կը հանգչին։

| | |
|---|---|
| Հեռու երկիր, տար աշխարհ | Բաղձալ, ըղձալ |
| Իմացունել, ազդ առնել | Ալ չտեսնուիլ, ըստ ակն անկանել |
| Յառաջ գալ, մատչել յառաջ | Հասնիլ, ժամանել |
| Երկնցնել (ձեռքը), ձգել | Կերակուր ուտել, առնուլ կերակուր |
| Աշխատիլ, ջանալ | Հաստատուիլ, կազդուրիլ |
| Աւելի ուզել, ընտրել մանաւանդ | Նենգութեամբ, նենգաւ |

ԴԻՏ. Ա. Համառօտեալ կամ ամփոփեալ խօսք մը լուծելու ատեն՝ կրնան աշակերտք ամփոփեալ մասը բնական բացատրութեան ձեւին դարձունել, եւ այնպէս լուծել։ Զոր օրինակ, սա խօսքը՝ Սատակեցուք զամենեսին՝ մինչեւ չմնալ ի նոցանէ ապրեալ, կրնայ այսպէս պարզուիլ. Սատակեցուք զամենեսին, այնպէս զի ոչ մնասցէ ի նոցանէ ապրեալ. այսպէս պարզուելէն ետքը՝ ամփոփեալ մասն աւելի դիւրաւ կը լուծուի։ Տես եւ ԼԶ Դասին վերջին դիտողութիւնը։

ԴԻՏ. Բ. Խօսք մը ամփոփելու ատեն պէտք է նայիլ որ երկդիմութիւն չծագի։ Միշտ այն ձեւն ընտրելի է որ հոմ կամ երկդիմի իմաստ չի տար։



## ՆԱԽԸՆԹԱՑ ԴԱՍԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԽԱՌՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Ուսուցիչք կրնան հետեւեալ հրահանգներն այլեւ այլ դասերու բաժնել։

### 1. Հրահանգ

Տունը նոր է. Եկեղեցին հին էր. Փայտը երկաթէն թեթեւ է. Բացախը սաստիկ է. Աղը կծու է, բայց հոտելէ կը պահէ. Ոսկին բոլոր մետաղներէն ազնըուագոյն է. Ադամանդը շատ մեծագին է, բայց երկաթէն աւելի օգտակար եւ գործածական չէ. Կտաւը կերպասէն աւելի ցանցառ (սէյրէք) է. Այս գինին անջուր է. Այդ հովիտը ջրոտ է, անոր համար բարեբեր է. Անձրեւն ու կարկուտը ծանր են. Շոգին թեթեւ է. Մարդիկ եւ անասունները քալող եւ շարժող են. Մարդ զգացող, իմացող եւ խօսող է. Ձին կրակոտ է. Եղբայրդ վախկոտ է. Դուն խիստ ես. Անոնք վկայ են. Մենք ականատես ենք. Անոնք ականջալուր են. Ձեր եղբայրը տունը կը գործէ. Այս տղաքն իրենց հանդերձները պատռեցին. Նաւը ծովը ընկղմեցին. Մարդիկը ծովը խեղդուեցան. Կառավարը գետը իյնալով կորսուեցաւ.

| | |
|---|---|
| Սաստիկ, բարկ | Ջրոտ, ջրարբի |
| Հոտել, նեխութիւն | Բարեբեր, յուռթի |
| Մեծագին, պատուական | Քալող, գնայուն |
| Գործածական, պիտանի | Շարժող, շարժուն |
| Ցանցառ, անօսր | Զգացող, զգայուն |
| Անջուր (գինի), անապակ | Իմացող, իմաստուն |

Խօսող, խօսուն — Գետն լճնալով կորսուիլ, գետամոյն լինել
Կրակոտ, ջերմ
Ծովը խռովուիլ, ծովակուր լինել

---

## 2. Հրահանգ

Բարեկամս ձեր հայրը տեսաւ· Զինուորներն իրենց զօրավարը կանչեցին· Այն քաղքին մէջ կին մը կար· Այս կինն իր աղջիկը չի սիրեր· Այս հայրն իր որդիքը կ'անիծէ· Երկինքն աստղեր կան· Ջրհորներուն մէջ օձեր կան· Լեռներուն մէջ մեծ օձեր կան· Մեծամեծ կէտեր կան ծովին մէջ· Երկրիս վրայ բարձր լեռներ կան· Լեռներուն մէջ մեծամեծ անտառներ կան· Անոր գերեզմանն այն քաղքին մէջն է· Մեր բարեկամներն այս տունին մէջն են· Անոնց ոսկրներն այս գերեզմանին մէջն են· Սպասաւորներն այն պալատին մէջն են· Այն սրահին մէջ հիւրեր կան· Այս սենեկին մէջ գէշ հոտ կայ· Այս կրակարանին մէջ կրակ կայ· Ձեր շտեմարանին մէջ շատ ցորեն կայ· Կառավարը վարժ է· Վարժապետն հմուտ եւ փորձառու է· Աշակերտները կրթեալ են· Եղջերուն եւ նապաստակն արագընթաց են· Տղան տհաս է· Պատանին հասուն է· Ծովուն մէջ ձուկեր կան· Արեգական մէջ բիծեր կան· Աշխարհիս մէջ շատ մարդիկ կան· Հոն շատ բազմութիւն կար· Այն պատին մէջ շատ կապեալներ կային· Ձեր եղբայրը տեսնել կ'ուզեմ· Քու տանդ մէջ նստէ· Այս տունը մերն է· Դուք մեր սիրելիներն էք· Ձեր եղբայրները մեր բարեկամներն են·



Մեծ օձ, վիշապ — Փորձառու, փորձ
Պալատ, ապարանք — Կրթեալ, կիրթ
Գէշ հոտ, ժանտահոտութիւն — Տհաս, խակ
Բազմութիւն, ամբոխ

## 3. Հրահանգ

Անոնց ծառաները մեր ծանօթն են· Այն մարդն իմ վարպետս է· Զանի շատ խրատեցի· Այս խօսքերը ձեր գիրքերուն մէջ գրեցէք· Դուռը գոցեցին· Անոնցմէ ոմանք պատժեցինք· Ասկէ մէկը չի կրնար անցնիլ· Ամէնքն ալ հոս կը բնակին· Դուք հարուստ կնոջ եղբայր էք. Այն լեռնէն կ'իջնէին· Մեր երեսը չտեսաւ· Այդ տղան դուրս հանեցէք· Ձեր գեղը շատ գեղեցիկ է· Այս պարտէզը մեծ աշխատութեամբ շինեցինք· Ձեզ շատ յոգնեցուցի· Ինծի ներէ. Պատգամաւորներն իմ խօսքերս անոնց պատմեցին· Խօսքն անոնց յայտնեց. Ես ձեզ կը հանգչեցընեմ· Անոնց հայրը հոն չէր· Անոնց ընկերները մեր բարեկամն են. Քարերը փողոցն են. Զինուորները հրապարակն են. Նաւերը նաւահանգստին մէջ են. Նաւաստիները նաւին մէջն են· Անոնց ամանները քուրձին (չուվալ) մէջն էին· Անոր արծաթն իր ծոցն է· Մեր սուրն անոր ձեռքն է· Անոնցմէ ոմանք նաւն են· Ձեր բարեկամներէն ուրիշները քաղաքն են· Ամէնն ալ սրահին մէջն են· Մեր ցորենն շտեմարանն է· Ամէն մէկն իր տունն է. Տունը մէկը չկայ· Ձենէ շատերն աղքատ են· Անոնցմէ քիչերը հոս են. Անոնցմէ հինգն իմաստուն են· Ձեզմէ մէկը սատանայ է· Ձեր բարեկամներէն մէկն հոն էր· Մենէ մէկն հոն չէր· Մենէ ոչ մէկը հոն էր· Եղբայր մը ու-

նիմ. Անիկա որդի մը ունի. Եղբայրս պարտէզ մը ունի. Դուք շատ բարեկամներ ունիք. Եօթն եղբայր ունինք. Անիկա գեղեցիկ պարտէզ մը ունէր. Դուք շատ գիրքեր ունիք. Հայրս շատ ստակ ունի. Անիկա շատ արջառներ եւ ոչխարներ ունեցաւ. Իսահակ ջրհոր մը ունէր. Որդի մը ունիմ. Մեծ տուն մը ունի. Պզտիկ քաղաք մը ունիմ. Մեծ տուներ ունինք. Անոնք շատ ստացուածք ունին. Իմ խօսքերս լսեցէք. Այն լեռնէն կ՚իջնէր. Այս քաղքին մէջ բնակեցաւ. Այն տունն երթանք. Այն պարտէզին մէջ նոր գերեզման կար. Կենաց ծառը դրախտին մէջտեղն էր. Տասը տարի ապրեցաւ. Ութ ժամ ձեզի սպասեցինք. Անոնք այս աշխարհէս են. Դուք այս աշխարհէս չէք. Երբ անիկա թագաւորէն լսեցին. Անոր քալելուն ձայնը լսեց. Այդ մարդն այս տունը խոթեցէք. Զանիկա օտար երկիր տարին. Այն հացէն կերաք:

Անկէ, ընդ այս
Յոգնեցնել, աշխատ առնել
Ներէ, հրամ. ներեսջիր.
Յայտնել, ի վեր հանել
Հանգչեցնել, հանգուցանել
Ամէն մէկը, իւրաքանչիւր
Մէկը, ումն
Ոչ մէկը, ոչ ոք
Քալել, գնալ
Խոթել, մուծանել

4. Հրահանգ

Ձեր եղբայրը տեսայ ու անոր ըսի. Անոր ձայնը լսեցի ու կանչեցի. Անոր մահուան լուրն առաւ ու սկսաւ լալ. Զանի երկու մղոն տարին. Անոնց հինգ քոռ ցորեն տուին. Պատը երկու կանգուն բարձրա-



ցուցին. Զինուորներուն զէնքերն առաւ. Տունին յարկը քակեցին. Անոր եղբայրները հոն էին. Իր ծառային աղջիկն սպաննեց. Սենեկին դուռները բացին. Տաճարին վարագոյրը ճեղքուեցաւ. Եղբօրս ձայնը լսեցի. Մեր բոլոր ստացուածքը քուկդ է. Այդ աշտանակն իմս է. Այն պարտէզը գեղեցիկ է. Անոնց ամանները լեցուն են. Մեր տուները բարձր են. Զանի լերան գլուխը հանեցի. Իր մառանին մէջ շատ գինի ունէր. Ութ տարի աշխատեցայ անիկա առնելու համար. Դաշտին երկայնութիւնը տասուերկու մղոն էր. Այն գուբին մէջ առիւծներ կային. Թագաւորը հզօր է. Այն մարդը բանսարկու է. Խօսելու ատենը կ՚ըսէր. Արտաշիսի փեսայութեան ատենը ոսկի կը տեղար, Սաթինկան հարսնութեան ատենն ալ մարգարիտ. Դուն Շարայի որկորն ունիս, մենք Շիրակայ համբարները չունինք. Իմ գիրքերս օ՞ւր են. Զանոնք օ՞ւր դրիք:

Լուր, համբաւ
Ճեղքեմ, ցելում

5. Հրահանգ

Զանոնք ձեր եղբօրը տուի. Այդ գիրքերն ո՞վ շարադրած է. Գիտուն մարդ մը զանոնք շարադրած է. Հոսհինգ սափոր ջուր բերէք. Ես ձեզի ըսելու շատ բան ունիմ. Երկու որդի ունիմ. Անիկա չորս աղջիկ ունէր. Շատ հարստութիւն ունէին. Համբերելու զօրութիւն չունիմ. Ներս մտաւ ու նստաւ. Զանի իր գիրկն առաւ ու օրհնեց. Երկու օրուան ճամբայ քալեցինք. Գիշեր եւ ցորեկ կ՚երթայինք. Առէք այս մարդիկն ու իրենց տուները տարէք. Անոր բարեկամներն այս դուռնէն անցան ու մեզի եկան. Այս

պատմութիւնը լսած ատենը կը զարմանար. Երկու օր առաջ ձեր ծառաները մեզի լուր տուին. Անոնց ընկերները մեր բարեկամներն են. Դուն իմ որդիս ես. Մենք ձեր բարեկամներն ենք. Եղբայրներս ձեր վրայով պատմեցին. Մենք անոնց հետ ձեզի եկանք. Անոնք ձեր եղբօրը հետ մեր տունը գացին. Երեք օր ճամփորդութիւն ընելով հոն հասանք. Ձեր սիրոյն համար այս աշխատութիւնը յանձն կ'առնեմ. Առտու իրիկուն ձեզի համար կ'աշխատէինք:

| | |
|---|---|
| Շարադրեմ, յօրինել | Ճամփորդութիւն ընեմ, ճանապարհորդել |
| Նստիմ, բազմիլ | |
| Գիշեր ցորեկ, զտիւ եւ զգիշեր | Սիրոյն համար, առ սէր |
| Առաջ, յառաջ քան զ | Առտու իրիկուն, զցայգ եւ զցերեկ |

## 6. Հրահանգ

Ինծի հրաման տուր որ երթամ հայրս տեսնելու. Անոր պատուէր տուր որ զիս չնեղէ. Անոր վախէն լռեցինք. Այն մարդուն որդին կը ճանչնամ, բայց ձեզ չեմ ճանչնար. Զանոնք վրանը խոթեցէք. Ինչո՞ւ համար բոլոր օրը պարապ կեցած էք. Հոս ի՞նչպէս մնաք. պատմեցէք մեզի. Այս ճամբէն մէկը չի կրնար անցնիլ. Անիկա աղէկ մարդու որդի է. Ասիկա հարուստ կնկան աղջիկ է. Արքայից արքային ծառաներն ենք. Այդ գերիներն այն բերդը տարէք, քաղաքը մի բերէք. Իր եղբօրը քով բնակեցաւ չորս տարի, եւ մեր երեսը չտեսաւ. Իր հայրենիքէն աքսորուեցաւ. Ձեր գեղն եկայ, շատ գեղեցիկ է. Խօսքին երկայնութենէն ձանձրացաւ եւ քունը տարաւ. Անոնց այն խօսքերէն գիտցայ որ անոր եղ-



բայրն էք. Բազմութիւնն այն եկեղեցին կը դիմէր. Զանի տաճարին մէջ տեսան իր բարեկամներուն հետ. Երկիրը մեծ է. Ծովը խորունկ է. Երկինքը բարձր է. Լուսինը յատուկ լոյս չունի. Անիկա վաթսուն տարի ապրեցաւ, եւ քառասուն օր թագաւորեց. Իմ տունս մօտ է. Կնձնւոյն շուքին տակ կը նստէր. Իմ ձեռքիս տակն է. Ձեր իշխանութեանը տակ շատեր ունիք. Եղբայրս երկու որդի ունի. Տասը սպասաւոր ունէր. Անոնք շատ ստակ ունին. Ստակ չունիմ, բայց ունեցածս տամ:

| | |
|---|---|
| Վախէն, առ ահի | Աքսորուիմ, տարագիր լինիմ |
| Բոլոր (օր), ողջոյն | |
| Աղէկ, ազնիւ | Քունը տանիլ, ննջել |
| Բերդ, դղեակ | Յատուկ, առանձին |
| | Շուք, հովանի |

## 7. Հրահանգ

Մարիամ գերեզմանը եկաւ. Գացէք, ըսէք ձեր բարեկամներուն որ հրապարակն երթան. Անոնք հոն ժողվուեցան, եւ անոր գալուն կը սպասէին. Ստակը սեղանաւորին դարձուց. Անիկա ստակն տանելով կ'ըսէ. Ջուր առաւ ու ձեռուըները լուաց. Ան տեղը եկան որ աւերակ կը կոչուէր. Դուն իմ սիրելի որդիս ես. Ես քու հայրդ եմ. Թագաւորը տօնին ատենը հոն էր. Աշակերտները հարսնիքն էին. Ժամը իննին ատենները խաւար եղաւ. Ութ մղոն քալեցինք. Ան ատենները սով կար. Կէս գիշերուան ատենները յարձակեցան անոնց վրայ. Գիշերանց ելլելով կ'երթային. Հարիւր լիտր իւղ բերին. Կրնամ այս տաճարը քակել, եւ երեք օրուան մէջ շինել զայն. Այն

երկրէն կու գանք․ Այս քաղաքն եկան․ Այն քաղաքին մէջ աղքատ մը կար․ Զանի տեսնելով կանչեց ու իր քովը նստեցուց․ Մեզ բռնեց ու կը չարչարէր․ Պատուհանը բացաւ ու կը նայէր․ Զանի բանտէն արձակեց․ Զանոնք բանտարկեց․ Ձեր եղբայրներն եկեղեցին խօթեցին․ Այն եկեղեցւոյն մէջ կը քարոզէր։

Ժամը իննին ատենները, զինն ժամու
Բանտարկեմ, դնել ի դի-պահոց
Չարչարեմ, ղկեմ

## 8. Հրահանգ

Այն բանտին մէջ շատ կապեալներ կային․ Զանի ջուրը նետեց․ Անոր ձայնը լսելով կ'ուրախանար․ Յակոբ ինը տարի ծառայեց Լաբանին Ռաքէլին համար․ Չորս ժամ ոտքով գացինք․ Եօթը տարի սով եղաւ․ Երուսաղէմի տաճարը քառասուն տարին շինուեցաւ․ Ինծի հինգ քանքար արծաթ տուաւ․ Եօթը սափոր ջուր բերին․ Տասը փունջ ծաղիկ քաղեցինք․ Այս տունը մերն է․ Դուք մեր սիրելիներն էք․ Եօթը օր աշխատեցան ու զանի դուրս հանեցին․ Ութ մղոն քալելէն ետքը մեծ քաղաք մը հասանք․ Քաղքին դուռնէն ներս մտնելու ատեն հինգ հոգի տեսանք․ Այն գիրքը կարդացած չենք․ Փոքրիկ քաղաք մը ունիմ․ Եկու եւ հոն բնակէ․ Այս լեռներէն շատ հեղեղներ կ'իջնեն․ Պատուհանէն անցաւ ու ներս մտաւ․ Ինք եւ իր որդիքը մեզ տեսնելու եկան․ Եթէ ես եկած չըլլայի․ Ձեզ շատ օրեր փորձեցի․ Մեր գործքերը ձեզի պատմեցինք, բայց դուք մեզի չհաւատացիք․ Անիկա հարուստ մարդու որդի էր։

Նետեմ, ընկենուլ [նիլ Ոտքով, հետի
Ուրախանամ, ուրախ լի- Հոգի, ոգի․ (անձ)



## 9. Հրահանգ

Զանի Թագաւորին տարին․ Եղբօրը քով կեցաւ շատ օրեր․ Զանոնք դահիճներու մատնեց․ Անոր վրանին տակը ճաշեցին․ Երկու օրուան ճամբայ գացինք․ Իմ խօսքերս լսեցէք․ Անոր մանչերն ու աղջիկները մեզի եկան․ Քիչ մը ետքը զանոնք տեսայ․ Մեր աղաչանքն՝ անոնց ընդունելի չեղաւ․ Թագաւորի խորհուրդները ծածկել պէտք է․ Աստուծոյ բրածները ձեզ պատմեմ․ Աստուծոյ եւ անոր զօրութեանը կը հաւատամ․ Հազիւ անիկա ոտքը ցամաքը դրած էր․ Աստուած այս աշխարհը ստեղծած է․ Վաղուան համար մի հոգաք․ Մեզի անոնց վրայով պատմեցին․ Բան կը փնտռէին որ անոր վրայով չարախօսեն․ Զանի քաղքէն դուրս հանեցին․ Զանոնք տանանը բերին․ Շատերն այս քաղքէն ելան․ Այդ տղաքն այն տունը տարէք․ Այն քաղաքը կը բնակէր․ Իմաստուն մարդոց խօսքերուն մտիկ ըրէք․ Այս մարդիկը քաջ թագաւորի զինուորներ են․ Այս տեղը չարագործ մարդիկներով լեցուցիք․ Դուրս ելէք եւ զանոնք փնտռեցէք․ Ցորենն իրենց ամաններուն մէջ ժողվեցին․ Երբ բազմութիւնը տեսաւ, նստեցաւ․ Անոր դուրս ելլելու ատենը բազմութիւնը ներս կը մտնէր․ Զանոնք այդ եկեղեցին խօթեցէք։

Քիչ մը ետքը, յետ սակաւ միոյ
Հազիւ, այն ինչ
Ստեղծեմ, առնեմ

## 10. Հրահանգ

Երկրիս բոլորտիքն օդ է․ Ժողովուրդն անոր բոլորտիքը ժողվուեցաւ․ Այն քաղքին բոլորտիքը պատ-

նէշներ չընեցին. Անոր վրայով ձեզի բան մը պիտի ըսեմ. Ձեր եղբօրը վրայով ամբաստանութիւն կ՚ընեն. Ձեր բարեկամներն իմ վրայովս կը տրտնջեն. Զինուորները պարտէզին դուռնէն մտան. Բազմութիւնը դաշտին երեսը տարածուեցաւ. Տասը ժամ բան չկերած. Տասուերկու մղոն քալելէն ետքը քաղաքը հասանք. Մեզ տեսան ու սկսան փախչիլ. Փախան ու բերդն ապաւինեցան. Զանի մէկդի առաւ ու հետը կը խօսէր. Չէի գիտեր թէ ինչ է. Չկրցան մեր խօսքերն իմանալ. Մեզ թողուցին ու իրենց տուները գացին. Տասուերկու եղբայր ենք. Այդ մարդիկն Աստուծոյ ծառաներն են. Շատ եղբայրներ ունիմ. Երկու տուն ունիք. Քսան ծառայ ունի. Գիրքեր ունինք. Այն տունը մի մտնէք. Այս քաղաքը ծնանք. Այս տեղէն հեռու է. Այս տաճարէն խոթեցէք զանոնք. Իմ բարեկամիս երթանք:

Ամբաստանութիւն ընել, ամբաստանել — Բան չկերած, անսուաղ
Մէկդի, մեկուսի

## 11. Հրահանգ

Եղբօրը տունը մտաւ. Բարեկամներն անոր եկան. Թուղթը գրելու ատենը ծառաները զանի կանչեցին. Աթոռին վրայ նստելով ժողովուրդը կը դատէր. Երբ հիւանդը բժշկեց, զանի իր տունը ղրկեց. Բարեկամներն անոր կ՚ըսեն. Մեզի հետ գալ կ՚ուզէ՞ր. Շատ օրեր հոն կեցանք, ու անոր գալուն կը սպասէինք. Բանտին մէջն էր, ու եղբայրներուն կ՚աղաչէր որ զինք ազատեն. Զանի լերանը վրայ հանելէն ետքը՝ եղածներն անոր պատմեցին. Այն մարդը ձեզի ղրկեցի որ իմ վրայով ձեզի լուր տայ. Եթէ այդ



մարդիկը կը սիրէք, մի չարչարէք զանոնք. Երբ զանի երկու մղոն տարին, շատ յոգնեցան. Պատուհանէն անցաւ ու ներս մտաւ զանի տեսնելու. Անոր համբաւը բոլոր այն երկիրը տարածուեցաւ. Երկու օր անոնց հետ քալելէն ետքը գեղ մը հասանք. Տաճարին առջեւը կենալով ձեր եղբօրը հետ կը խօսէի. Իմ որդիքս ձեր բարեկամներն են. Ես օտար չեմ.

Յոգնիմ, վաստակիմ — Պզտիկ (որդի), կրտսեր

## 12- Հրահանգ

Ես զանոնք տեսած եմ. Դուք այն գիրքը կարդացած էք. Աստուած այս աշխարհս ստեղծած է. Եթէ անոնք հոս եկած ըլլային. Դուն իմ վրայովս լսած ես. Մենք անոնցմէ երկու թուղթ ընդունած ենք. Ես այն մարդը տեսած չեմ. Անիկա սանկ խօսք մը ըսած չէ. Մենք մէկը սպաննած չենք. Եթէ այն եկած չըլլար. Այն քաղքէն ելաւ ու մեզի եկաւ. Քու եղբայրդ եւ քոյրդ մեզի եկան. Իմ հարսնիքս եկէք. Իր այգին մշակներ ղրկեց. Զանոնք տասուերկու օր կը սորվեցնէր. Նոյ եւ անոր որդիքը տապանը մտան. Հոգին ու մարմինը դժոխքին մէջ կորսնցնելու կարող է. Ծերերը եւ երիտասարդները սպաննեցին. Մանչեր ու աղջիկներ ունեցաւ. Անոնք մեր որդիներն են. Այս աղաքն իմս են. Երբ զանի տեսան, անոր քովը ժողվուեցան. Հաւն իր ձագերը թեւերուն տակ կը ժողվէ. Անոնք քահանայապետին սըրահը մտան. Շատերը երբ լսեցին, անոր հաւատացին. Քու որդիդ հոս բեր. Հոն մարդ չկար. Բան մը չլսեցինք. Այն տեղէն հեռացան. Մեզի մօտե-

ցաւ. Յովսէփին եղբայրներն Եգիպտոս իջան ցորեն գնելու. Յովսէփ իր եղբայրները տեսաւ ու զանոնք ճանչցաւ. Եգիպտոսի մէջ եօթը տարի առատութիւն եղաւ. Մեծ որդին սպաննուեցաւ. Պզտիկը հօրը կ'ըսէ. Քու որդիդ ըլլալու արժանի չեմ.

## 13. Հրահանգ

Իմ եղբայրներս քենէ կը վախնան. Աստուծմէ չես վախնար. Անոր կ'աղաչէին որ իրենց հետ երթայ. Երեք տաղաւար շինենք. Անոր գլուխը կտրեցին ու թագաւորին բերին. Երբ թագաւորը տեսաւ, շատ զարմացաւ. Անոր խօսքերուն միտք չէր ըներ. Յակոբ իր հայրերուն գերեզմանը թաղուեցաւ. Պատերազմի լուրեր պիտի լսէք. Անկիւն մը քաշուեցաւ ու կը նըստէր. Տէրն իմ օգնականս է. Իմ ձեռքիս տակ զինուորներ ունիմ. Շատ օրեր նեղութիւն կրեցին. Մենք անոնցմէ վախ չունինք. Յունաց բոլոր ուսմունքներուն մէջ կրթուեցաւ. Մեզի շատ ստակ հարկաւոր է. Մեզի հետ անոր պալատն եկան. Անոր կ'աղաչէին որ իրենց սահմաններէն երթայ. Մենք գիրքերը սորված չենք. Այն մարդը տեսած չեմ. Եթէ այս խօսքերն ըսած չըլլայի. Քար մը նետելու չափ տեղ անոնցմէ հեռացաւ. Քառասուն օր չկերաւ ու չխմեց. Տասը տարի անկողին ինկած էր. Բերդն ապաւինեցան. Երկինք ելաւ ու Աստուծոյ աջ կողմը նստաւ. Անոր տասը դահեկան տուաւ. Հնազանդ որդին իր հայրը կ'ուրախացնէ. Զանի կը խրատէր որ իր խօսքերուն միտք ընէ. Բազմութիւնը դաշտին վրայ ցրուեցաւ. Լեռներէն ու ձորերէն անցանք:

| | |
|---|---|
| Միտք ընել, անսալ | Նեղութիւն կրել, տառապիլ |
| Քաշուիլ, առանձնանալ | |



| | |
|---|---|
| Վախ, երկիւղ | Ինկած (անկողին), անկեալ դնիմ |
| Կրթուիլ, վարժիլ | Ուրախացնել, ուրախ առնել |
| Հարկաւոր, պիտոյ | |
| Քար մը նետելու չափ տեղ, քարընկէց մի | |

## 14. Հրահանգ

Եօթն օր բանտին մէջ մնաց. Ութ հոգւոյ չափ (իբրեւ) ջրհեղեղէն ազատեցան. Զիս մահուընէ փըրկէ, Տէր. Այն տեղին մարդիկը զանի ճանչցան. Վայրենի ազգերու բնակարանները մտաւ. Գետին քովէն կ'երթար. Ասիկա քու սիրոյդ համար ըրի. Ատելութենէն զանի սպաննել տուաւ. Տրտմութենէն հիւանդացաւ. Իրենց բարեկամները թշնամիներուն ձեռքը մատնել կ'ուզեն. Անոնցմէ ոմանք մեզի եկան. Անոր ծննդեան առենը չարերը պիտի խնդան. Անոր ներս մտնելու առենն ամէնքն ալ ոտք ելան. Անոր ոտքն ինկաւ եւ կ'աղաչէր. Քաղաքը հասած առենը՝ բարեկամները զանի դիմաւորեցին. Երբ ասիկա ըսաւ, ամէնքը լռեցին. Մեզի օգնէ քանզի (զի) ահա կը կորսուինք. Ամէն բան քուկդ է. Այս ամէնն իմս է. Երկինք իմ աթոռս է. Դուք իմ որդիքս էք. Շատ բարեկամներ ունիք. Ուրախութենէն գնաց ու իր ստացուածքը ծախեց. Իմ զօրութիւնս դուն ես. Դուք մեր պարծանքն էք. Եղբայրներս եւ քոյրերս հոս են. Քու ծառաներդ եւ աղախիններդ եւ անասունդ չգործեն. Ձեր բարի գործերը տեսնեն. Անուշ խօսքեր խօսեցաւ. Բարեբարոյ կնոջ որդի էր. Անըզգամ եւ լեզուանի մարդու հանդիպեցանք. Նենգաւոր մարդոց հետ հաց մի ուտեր. Քու բարեկամնե-

րուդ հետ ուրախ եղիր · Ձկնորսներն ուռկանը կը քաշէին . Մեր վրայով շատ բան կը պատմեն . Ես երբեք անոր տունը գացած չէի , բայց ան ստէպ իմ տունս կու գար · Զօրքը գետն անցնելով քաղաքն առաւ · Քաղաքներ շինեցին եւ անոնց մէջ բնակեցան · Աբրահամ իր ծերութեան ատենը շատ հարուստ եղաւ · Իսահակ անունով որդի մը ունեցաւ, որուն աչուըները կուրցան ծերութեան ատենը · Հայկ իր որդիները եւ թոռներն առնելով, Հայաստան եկաւ · Բելին հետ կռուեցաւ եւ անոր յաղթեց ·

| | |
|---|---|
| Ազատիմ, ապրիմ | Դիմաւորեմ, ընդ առաջ լինիմ |
| Փրկեմ, ապրեցուցանեմ | |
| Բնակարան, բնակութիւն | Լռեմ, լուռ լինիմ |
| Ոտք ելլեմ, յոտն կամ | Քաշեմ, ձգեմ |
| | Կուրնամ, վասիմ |

## 15. Հրահանգ

Այս մարդը հիւանդ է · Քու բարեկամդ աղքատ է · Այս տղան իմ որդիս է · Այս մարդը ձեր թագաւորն է · Ասոնք մեր բարեկամներն են · Այս մարդիկը ձեր ազգականները չեն · Այս ծերունին այս քաղքին դատաւորն է · Ասոնք մեր թագաւորին զինուորներն են · Այս աղջիկը քու դուստրդ է · Ձեր թշնամին չենք · Հայրս այն քաղքին իշխանն էր · Այս երկու մարդիկը Յունաց զօրավարներ են · Հոն եղողները բռնեցինք · Մտնողները կ'արգելուին · Տեսնողներն ու լսողները կանչեցինք · Ասիկա ընողը տեսայ · Ձեզ մատնողն սպաննեցին · Մեզի հետ խօսողը կը ճանչնա՞ս · Այս քաղաքը պզտիկ է , բայց շատ գեղեցիկ է · Այդ պարտէզը մեծ չէ , բայց անոր մէջ



շատ ծառեր կան · Մեր հանդերձը հին է , բայց մեր ոտքի ամանները հին չեն · Այս լեռները բարձր են , բայց երկրին օդն առողջ չէ · Այն գետին ջուրերը յստակ են · Գետն ալ խորո՞ւնկ է Քաղքին մէջ կռիւ եղաւ եւ շատ վիրաւորներ եղան · Շատ օրեր անոր տունն եղայ , բայց եղբայրդ ինծի հետ չէր · Մենք ձենէ գոհ ենք , դուք ալ մենէ գո՞հ էք · Տեսած մարդդ գովութեան արժանի չէ · Այն կինն այրի , աղքատ եւ օրուան հացին կարօտ էր · Այդ տղան իմ եղբայրս է · Այդ աղջիկն աղքատ մօր մէկհատիկ աղջիկն է · Այդ տղաքն իմ որդիներս են · Քաջ եղէք , ով մարդիկ · Որդեակ , ինծի հետ ուրախ եղիր · Եղբայր , ո՞ղջ ես . Ինծի ուլ մը չտուիր որ բարեկամներուս հետ ուրախանայի · Քու անունդ սուրբ ըլլայ · Ձեզի ծառայ ըլլանք · Ձեր տուները աւերակ ըլլան · Միշտ կ'ուրախանար · Քու ստակդ քեզի ըլլայ · Ինծի որդի մը պիտի ըլլա՞յ · Ես ձեր մէջ սպասաւորի մը պէս եմ · Ձենէ մեծը պզտիկին պէս ըլլայ · Ոչ իմ կամքս , այլ քուկդ ըլլայ · Ամբարտաւան մի ըլլար · Լռեցէք ·

| | |
|---|---|
| Ոտքի աման, օղ ոտից | Օրուան հաց, աւուրն պարէն |

## 16. Հրահանգ

Հայրս պարտէզ մը գնեց . Գիրքեր գնեցինք · Քոյրդ պզտիկ գիրքը գնեց · Գնած գիրքդ ընտիր է · Եղբօրդ գնելու տունը գեղեցիկ՝ բայց շատ պզտիկ է · Ես ալ տուն մը գնեցի որ շատ մեծ է · Թուղթը գրեցի՞ր · Հօրդ ինծի պարգեւած ձին ծախեցի · Դու ալ քուկինդ ծախեցի՞ր · Իշխանը իր կառքն ու ձիերը կը ծախէ · Հօրեղբայրս իր պզտիկ որդւոյն հա-

մար գեղեցիկ գլխարկ մը գնեց. Այս տղան երկայն նամակ մը գրեց իր մօրը. Մեր հայրը այս պարտէզն ու այս այգին քու հօրաքրոջդ գնեց. Մարդ մը հարսնիք ունէր. Բոլոր իր բարեկամները կանչեց. Կինը իր դրացիները կը կանչէ. Հովիւները ոչխարները կ'արածեն. Դուն խիստ մարդ մըն ես. Ցանածդ կը հնձես. Արձակեցէք զանոնք որ իրենց կերակուր գտնեն. Մեր լապտերները կը մարին. Ձեր ձիթ-իւղէն մեզի ծախեցէք. Վաճառականներուն գացէք, ու գնեցէք ձեզի. Ինծի ինչ կ'ուզէք տալ. Ես զանի ձեզի կը բերեմ. Ձեռքդ պնակը մի խոթեր. Ամենէն աղէկներն ամաններուն մէջ ժողվեցին. Օտար էի եւ զիս ընդունեցիք. Քահանայապետն իր հանդերձները պատռեց. Այս կինն իր տղաքը կը սիրէ. Եղբայրներս եւ քոյրերս կը սիրեմ. Բարեկամներս եւ վարժապետներս ալ կը սիրեմ. Ծաղիկներդ ջրեցի՞ր. Իմիններս եւ քուկիններդ ջրեցի. Քոյրս ալ իրենները ջրեց. Եղբայրներդ երկու շուն գնեցին որ շատ գեղեցիկ են. Կան կերակուրներ եւ խմելիքներ որոնք, եթէ շատ ուտուին եւ խմուին, հիւանդութիւններ կը պատճառեն. Ալմաստն քարի տեսակ մըն է որուն վրայ երկաթ չի բանիր. Մշակ անոնք են որ երկիրը կը գործեն. Վարժապետները ծոյլ տղաքը կը պարսաւեն, փութաջանները կը գովեն:

| | |
|---|---|
| Ձի, երիվար | Խմելիք, ըմպելի |
| Գլխարկ, խոյր | Պատճառել, գործել |
| Պնակ, սկաւառակ | Քար, վէմ |
| Խոթել, մխել [ղովել | Տեսակ, ազգ [ծել |
| Ընդունիլ (տունը), ժո- | Բանիլ (ներգործել), գոր- |
| Ջրել, ոռոգել | Փութաջան, ժիր |



## 17. Հրահանգ

Տեսար մարդը որուն քեզ ղրկեցի. Այն մարդը չտեսայ, բայց վարը կը տեսնեմ. Փնտռածդ գտա՞ր. Փնտռածս չգտայ, չփնտռածս գտայ. Զանի գտաւ ու անոր հարցուց. Ներս չմտնես. Պարտէզը մտաւ. Ամէնքն ալ մրափեցին ու քնացան. Փեսան եկաւ, ու պատրաստներն անոր հետ մտան հարսնիքը. Ստակն առնողը գնաց, գետինը (երկիր) փորեց, եւ ստակը ծածկեց. Այդ տունը մտիր ու տես. Այդ անպիտան ծառան դուրս հանեցէք. Զանի բռնեցին որ սպաննեն. Երբ խօսքը լմնցուց, լեռը ելաւ. Դարձեալ գալով զանոնք քնոյ մէջ գտաւ. Անոր հետ եղողներէն մէկը ձեռքը երկնցուց, սուրը հանեց եւ ծառան զարկաւ. Ան ատեն անոր երեսը թքին. Քեզի զարնողն ո՞վ է. Երբ դուրս ելաւ, ուրիշ կին մը զանի տեսաւ. Եղբայրներս եւ քոյրերս տեսա՞ր. Տեսանք ձեր սպասաւորներն ու աղախինները որ պարտէզին մէջ ծառերուն շուքին տակը կը պառկէին. Մեր ճամբորդներն հասան. Այս խօսքը թագաւորին ականջը հասաւ. Եթէ օդին տաքութիւնն անդաստանները չտաքցնէ, պտուղները չեն հասնիր. Սպասաւորը խօսքը յայտնեց. Այդ գործը կրնաք գլուխ հանել. Զանի թագաւորին առջեւ բերին. Երբ չկրցաւ համոզել, զանի անիծեց. Եղբայրդ ինչ միտք ունի. Յունաստան երթալու միտք ունի. Այդ գիրքերը սեղանին վրայ գտանք. Ծովն ուռկան նետած էին. Թակոյկներու մէջ ջուր դրին. Անոր կարմիր քղամիդ հագուցին. Լաթերը հագաւ. Սուրդ մէջքդ կապէ. Նաւին կարասիներէն շատ բան ծովը նետեցին. Ունեցածը գործածեց.

Մրափել, ննջել
Քնանալ, ի քուն մտանել
Ծածկել, թաքուցանել
Դարձեալ, միւսանգամ
Մէկը, մի ոմն
Օդին տաքութիւնը, տօթ
Տաքցնել, ջեռուցանել
Գլուխ հանել, ի գլուխ հանել
Համրել, ածել ի համար
Միտք ունենալ, զմտաւ ածել
Նետել, } արկանել
Դնել }
Հագցունել, արկանել
Մէջք, մէջ
Կապել, ածել
Գործածել, արկանել ի կիր

## 18. Հրահանգ

Ահա երկու քանքար վաստկեցայ. Շատ բան վաստըկեցաւ. Ընելիքս լսել կ'ուզե՞ս. Անոր ագարակը երթալ չուզեց. Ատոր ըրածը խօսէ. Շատ տրտմեցան եւ լռեցին. Հրապարակներու մէջ խօսեցէք. Ինծի հետ ծածուկ մի խօսիր. Ամէնքը գայթակղելու ալ ըլլան, ես պիտի չգայթակղիմ. Ձեր քոյրերն ո՞ւր են. Մեր քոյրերն հոս են. Ձեր եղբայրներն ո՞ւր են. Անոնք Աթէնք երթալու համար ճամբայ ելան. Շատ անգամ խորհեցաւ, բայց բան մը չկրցաւ ընել. Պարսկաստանէն եկաւ ու Հայաստան բնակեցաւ. Ասանկ բան մը Հնդկաստանի մէջ չերեւցաւ. Ինչո՞ւ համար կը նեղուիս. Քեզ նեղողն ո՞վ է. Վարժապետը զՏիգրան կը պարսաւէ. Կ'ըսէ թէ չաշխատիր, ընկերներուն հետ միշտ կռիւ կ'ընէ. Այդ գիրին քեզի ի՞նչպէս կ'երեւայ. Ինծի կ'երեւայ որ շատ ընտիր է. Այս տղաքը պիտի լան, երբ իրենց մայրը բաժնուի. Եթէ չկատարես, քեզ հօրդ պիտի ամբաստանեմ. Եթէ Աստուծոյ չհնազանդիք, խեղճ



պիտի ըլլաք. Մեր ծնողներուն կը հնազանդէինք, եւ մեր վարժապետներուն մտիկ կ'ընէինք. Խոհական տղաք իրենց մեծերուն միշտ կը հնազանդին. Նստող մարդոց նայեցաւ. Գերանը նախ քու աչքէդ հանէ, ու ետքը շիւղը եղբօրդ աչքէն հանելու նայէ. Խոտերուն արմատները տաքէն կը չորնան. Թուզը չորցաւ. Լեզուս չորցաւ. Ծարաւէն կը պապակիմ. Ջուր չըլլալէն ծարաւած էինք. Աղքատներուն պէտք է ողորմիլ. Աստուած անոր ողորմեցաւ. Ողորմողը ողորմութիւն պիտի գտնէ. Իմ հանդերձներուս ո՞վ դպաւ. Բարկացաւ ու ներս մտնել չէր ուզեր. Զանոնք իրենց բարեկամ կը համարին. Կարծեց որ մեռած է. Նստելով՝ վաստկած ստակը կը համրէր. Մեռնելու ալ ըլլամ, քենէ չպիտի զատուիմ։

Վաստկիլ, շահիլ
Լռել, լուռ լինիլ
Ծածուկ, ի ծածուկ
Ճամբայ ելլել, մեկնիլ
Ընել (բան մը), վճարել
Պարսկաստան, Պարսք
Հայաստան, Հայք
Հնդկաստան, Հնդիկք
Նեղուիլ, տառապիլ
Կռիւ կ'ընել, կագիլ
Ի՞նչպէս, որպիսի
Երեւալ, թուիլ
Բաժնուիլ, մեկնիլ
Ամբաստանել, ամբաստան լինիլ
Խեղճ, թշուառ
Մտիկ ընել, անսալ
Խոհական, մտավարժ
Մեծ, աւագ
Տաք, տապ
Չորնալ, ցամաքիլ, գօսանալ, չորանալ
Չըլլալէն, առ ի չգոյէ
Ծարաւած ըլլալ, պապակիլ
Դպչիլ, մերձենալ
Կարծել, համարիլ
Զատուիլ, մեկնիլ

## 19. Հրահանգ

Եթէ չյոգնիս, եթէ շարունակ խաղաս, միշտ աղ- քատ պիտի ըլլաս. Քոյրերս միշտ իրենց վարժա- պետներուն մտիկ կ'ընէին, շատ կ'աշխատէին, եւ քիչ կը խաղային. Եթէ Աստուծոյ, ծնողացդ եւ վարժապետներուդ մտիկ չընես, երբեք երջանիկ պի- տի չըլլաս. Այս տղան կուլայ, հաց չունի. Նոյ տա- պանին պատուհանը բացաւ. Երկու օր անոր քովը կեցանք. Լաթերս լուացի. Երուսաղէմ երթալու կը փութար. Ինչո՞ւ կը հեղգաս, եղ. Փութա, եկուր Երուսաղէմ. Զանի ծեծելու եկողները՝ մէկդի կե- ցան անկէ. Երբ ասիկա լսեցին, շատ ուրախացան. Իր արցունքովը անոր ոտուըները կը թրջէր. Երբ գինովութենէն արթնցաւ, ան ատեն զգաց. Դեռ չէ՞ք զգար. Դառն կերպով լացաւ. Երեսդ լուա. Ի- րենց լաթերը լուացին.

Յոգնիմ, վաստակիմ
Շարունակ, ցանգ
Միշտ, հանապազ
Շատ (մկ.), բազումս
Քիչ, սակաւ
Ծեծեմ, հարկանեմ
Մէկդի կենամ, ի բաց կամ
Ուրախանամ, խնդամ
Արցունք, արտասուք
Թրջեմ, թանամ
Գինովութենէն արթըն- նամ, սթափիմ ի գինւոյ
Դեռ, տակաւին
Զգամ, զգամ, իմանամ
Դառն կերպով, դառնա- պէս

## 20. Հրահանգ

Հաց առնելու մտցան. Կը խոստանաք ու չէք կա- տարեր. Այս ամէնը հասկցաք. Անոնք չհասկցան. Գերեզմանը վազեց. Խրամէն անդին ցատկեց. Ոտք



ելաւ եւ կը ցատկռտէր. Երբ ծեծին վրայով լսեց, դուրս ցատկեց. Հագած պատմուճանը հանեց. Մար- դը հիւընդացաւ եւ մեռնելու մօտ էր. Ձեր հանդերձ- ները հանեցէք, եւ քուրձեր հագէք. Իր անկողնին մէջ զօրացաւ. Ողբացէք եւ սգացէք. Հրամայէ որ մինչեւ երեք օր գերեզմանին պահպանութիւն ընեն. Զըլլայ որ աշկերտները գիշերանց գալով զանի գող- նան. Ամպն անոնցմէ վերցաւ. Լաթերը կը զար- մանային անոր խօսքերուն. Գթալով ձեռքը երկնցուց, եւ անոր դպաւ. Ինծի մի դպչիր. Զենէ ոչ մէկուն ստակին կամ հանդերձին ցանկացայ. Անոնք ալ իրենց տեղերը դարձան. Ագարակ մը ստացաւ. Ես շատ ըս- տակով ստացայ այս քաղաքացութիւնը. Երուանդ, ե՞րբ պիտի լուացուիս. Քիչ ատենէն պիտի լուացուիմ. Եթէ մէկ անդամը ցաւ կը կրէ, բոլոր անդամներն անոր հետ ցաւ կը կրեն. Հռոմայեցիք գան եւ մեր ազգը վեր- ցունեն. Անոր աչուըները բացուեցան ու կը տեսնէր. Եթէ կանուխ իմանայինք, դարման մը կ'ընէինք. Ձեռուըները լուաց. Ջջանացողը երբեք հարուստ չըլ- լար. Աստուած աս աշխարհը դեռ չստեղծած. Դեռ արեւը չելած. Դեռ անոնք իրար չտեսած.

Հասկնամ, իմանամ, ի միտ առնում
Վազեմ, ընթանամ
(Խրամէն) անդին, ըստ
Ցատկեմ, վազեմ
Ոտք ելլեմ, յոտն կամ
Ցատկռտեմ, վազվազեմ
Ծեծ, գան
Զըլլայ որ, գուցէ
Գիշերանց, գիշերի
Երկնցնեմ, ձգեմ
Շատ ստակով, բազում գնոց
Քիչ ատենէն, ընդ հուպ
Ցաւ կրեմ, վշտանամ
Հռոմայեցի, Հոռոմ

Դուրս վազեմ, դիմեմ | Վերցունեմ, բառնամ
Մօտ, մերձ ի | Կանուխ, վաղագոյն
Պաշտպանութիւն ընեմ, զգուշանամ | Ըլլամ, առնիմ
| Դեռ չ..., մինչչեւ, չեւ

## 21. Հրահանգ

Եղբայրդ ո՞ւր է. Երկու ամիս է քանի որ եղբայրս մեռաւ. Քեզ տեսնելու կարօտէն կը մեռնիմ. Վախէն դողացին. Գիտէր որ զանի նախանձէն մեռնեցին. Ցաւին սաստկութենէն հանդերձները կը պատռէր. Իրենք գիրենք ազատելու աճապարանքէն աւարը թողուցին. Մեր սիրտերուն նեղութենէն կը մեռնինք. Այդ տղաքը սովէն պիտի մեռնին. Ծարաւէն մարած էինք. Խնդալէն կը մարէր. Հայրս երեկ թեւերուս մէջ մեռաւ. Հայրդ մեռա՞ծ է. Մայրս քիչ ատենէն պիտի մեռնի. Կը բաղձամ որ որդիս տեսնեմ, դեռ չմեռած. Դուն չմեռած պիտի մեռնիմ. Այդպէս շուտ ո՞ւր կը վազես. Բժիշկ բերելու կ'երթամ, Հայրս մեռնելու մօտ է. Ե՞րբ ծնած ես. Հազար ութ հարիւր տասնին ծնայ. Եթէ ես տարի մը առաջ ծնած ըլլայի, քու ունեցած տարիքդ կ'ըլլայի։ Հօրեղբայրս իր հօրը մեռնելէն ետքը ծնաւ. Պզտիկ քոյրս Մարտի ամսուն ծընաւ. Այս օրերս անոր տղայ մը պիտի ծնանի. Երբ ան խօսելու սկսաւ, ամէնքը լռեցին. Անոր ինծի ըրածը քեզի պատմելու սկսիմ. Նստէ, եթէ կը հաճիս. Ուր որ տեղ գտնեմ՝ կը նստիմ. Հոն ժամ մը նստայ. Ասոր ըսէ որ նստի. Հոս նստեցէք մինչեւ որ ես գամ. Քու քովդ նստինք. Եթէ նստի, ալ չելլեր. Ինչո՞ւ չես նստիր. Նստելու տեղ չկայ. Տեղ տուր որ այդ պարոնը նստի. Եկեղեցին ո՞ւր նստած էիր. Քու



մօրաքեռդ քով նստած էի. Ինչո՞ւ համար ոտքի վրայ կը կենաք, պարոններ, հիմա նստեցէք։

Քանի որ, յորմէ հետէ | Խնդալ, ծաղր
Պոռամ, աղաղակեմ | Շուտ, արագ
Ինքզինք, զանձն. յք. զանձինս | Տարիք, տիք
Աճապարանք (աճելէ), փոյթ | Հաճիմ, հաճոյ լինիմ (տրականով)
Նեղութիւն, տառապանք | Քովը, առընթեր
Մարիմ (ծարաւէ, եւն), նուաղիմ | Պարոն, տէր
Մարիմ (խնդալէն), թաղանամ | Ինչո՞ւ համար, զի՞ է զի
| Ոտքի վրայ կենամ, կամ յոտն
| Հիմա, արդ

## 22. Հրահանգ

Անոր ոտքը կ'իյնար ու կ'աղաչէր. Անոր վիզն ինկաւ ու կը համբուրէր զանի. Ծովն ինկան ու խեղդուեցան. Անոնց վրայ ինկան ու զանոնք ջարդեցին. Զգուշացիր որ չիյնաս. Եթէ իյնամ, նորէն կ'ելլեմ. Մովսէս Փարաւոնին տանը մէջ մեծցաւ. Հայաստանին բարեօդ տեղերը մեծցած էր. Մարմինը բերուեցաւ ու հօրը գերեզմանին մէջ թաղուեցաւ. Երբ թագաւորին առջեւը բերուեցանք, մեզի հարցուց. Կ'ուզէր երթալ, բայց արգիլեցինք զանի. Զանի թողուցին ու փախան. Ինչո՞ւ չէք թողուր որ այդ մարդըն իր տեղն երթայ. Քեզ բռնեցի, եւ չեմ թողուր. Անմեղ արիւն մի թափեր. Նաւն իր բեռերը պարպեց. Զանի թողուց եւ գնաց. Ոչխարներ եւ արջառներ կը մորթեմ. Փչելով ողջ ողջ անոնց մորթը հանեցին. Նաւին բոլոր գործիքները եւ կարասի-

ները ծովը նետեցին․ Իր հանդերձները կը նետէր ու կը փախչէր․ Այդ գաւաթները գինով լեցուցէք․ Տեղ մը մ'երթաք, մինչեւ որ ձեր ամանները լեցուին․ Քեզի ըսելիք մը ունիմ․ Ինծի ի՞նչ ըսել կ'ուզես․ Բան մը չեմ ըսեր․ Միայն ըսէ․ Ետքը քեզի կ'ըսեմ․ Քեզի պատմածներէս հօրս բան մը չըսես․ Անոր մի ըսեր որ անկողինն եմ․ Քեզի ի՞նչ ըսաւ․ Ձեզի չըսի՞․ Դեռ ինծի չըսիր․ Կ'ուզե՞ս որ քեզի ըսեմ․ Պէտք չէ որ մարդ ամէն լսածն ըսէ․ Ասիկա ինծի ականջէս ըսաւ․ Քեզի ըսածն ի՞նչ է․ Անոր ճշմարիտը միայն ըսի․ Թող ուզածն ըսէ․ Կը զղջամ որ ատիկա ըսի․ Յօժարութեամբ կ'ըսէի, եթէ գիտնայի․ Եթէ տարբեր բան մը ըսէի, սուտ կը խօսէի․ Երէկ եղբօրդ ըսի որ գայ զիս տեսնէ․ Շատ անգամ կ'ըսէր որ բարեկամին մահուանը վրայ կը ցաւի։

| | |
|---|---|
| Վիզն լնալ, անկանիլ զպարանոցաւ | Պարպել, թափել |
| Ջարդել, կոտրել | Մորթել, զենուլ |
| Զգուշանալ, զգոյշ լինիլ | Մորթը հանել, մորթել |
| Նորէն, միւսանգամ | Ողջ ողջ, կենդանւոյն |
| Ելլել (տուն, եւն), կանգնիլ | Գործիք, կազմած |
| Մեծնալ, սնանիլ | Տեղ մը, ուրեք |
| Հայաստան, Հայոց աշխարհ | Ետքը, ապա |
| Բալքօն, հովատուն | Ականջէ, յունկանէ |
| Տեղ, վայր | Միայն (մկր.), եւեթ |
| Թափել, հեղուլ | Յօժարութեամբ, մտադիւր |
| | Տարբեր, այլազգ |
| | Ցաւիլ, ցաւ է (տրականով) |



## 23. Հրահանգ

Կարդացածդ ի՞նչ է․ Նոր գիրք մը կը կարդամ․ Նոյնը մենք ալ կը կարդանք․ Հայրս ատենօք Յունաց հեղինակները կը կարդար, հիմա ալ չի կարդար զանոնք․ Այսօր Հերոդոտոսին պատմութիւնը կարդացի․ Հայրս երեկ Թուկիդիդէսին կը կարդար․ Հիմա պիտի կարդամ գեղեցիկ գիրք մը զոր մէկը ինծի փոխ տուած է․ Աւելի շատ կը կարդայինք, եթէ աւելի պարապ ժամանակ ունենայինք․ Ուրեմն կարդալը կը սիրէք․ Կ'ուզե՞ս որ քեզի այս նամակը կարդամ․ Աղէկ չես կարդար․ Ի՞նչպէս պէտք է կարդալ այս բառը․ Կը բաղձայի քեզի պէս կարդալ գիտնալ․ Կարդացածներդ միտքդ թող գան․ Տղաքս գրեթէ բնաւ չեն կարդար․ կարդալ չեն սորվիր․ Շատ անգամ կը կրկնեմ անոնց թէ պէտք չէ կարդալէն ծուլնալ, որ սիրտն ու միտքը միանգամայն կը շտկէ։

Այդ աթոռն իր տեղը դիր․ Գլխարկս ո՞ւր դրիր․ Զանի սեղանին վրայ դրի․ Հանդերձս առտուանց սնտուկը դրի․ Եթէ ուրիշ տեղ դնէի, չէի կրնար իրիկուան զայն գտնել․ Ո՞ւր կ'ուզես որ լաթերդ դնեմ․ Դիր ուր որ կը հաճիս․ Կը կարծես թէ անկողնին վրա՞յ դրի Միտքը դրաւ երթալ․ Գլխարկդ գլուխդ դիր․ Դնենք թէ հոն է․ Զանի գլխուն վերեւը բարձի վրայ դնէ․ Զանի բանտ դրին․ Նոր գերեզմանի մէջ դրուեցաւ․ որ քարի մէջ փորուած էր․

| | |
|---|---|
| Ատենօք, երբեմն | Կարդալը, ընթերցուած |
| Հեղինակ (գրոց), մատենագիր | Շտկել, յարդարել |
| | Առտուանց, այգուն |

| | |
|---|---|
| Աւելի ստէպ, յաճախագոյն եւս | Ուրիշ տեղ, այլ ուրեք |
| Պարապ ժամանակ, ժամ պարապոյ | Կրնալ, մարթ լինել (տրականով) |
| Ուրեմն, ապա | Կարծեմ, համարիմ |
| Աղէկ (մկբ.), բարւոք | Միտքը դնեմ, դնեմ ի մտի |
| Միտքը գալ, յուշ լինել | Գլխու վերեւ, սնարք |
| Կրկնեմ (շատ անգամ ընել), յեղյեղում | |

## 24. Հրահանգ

Ասիկա ինծի համար առնեմ. Ո՞րչափ բան կ'ուզես առնել. Կէսը կ'առնեմ. Եղբայրներս մնացածները թող առնեն. Կ'ուզես կանգ առնել. Ուզածդ առ. Ի՞նչ կ'ուզես որ առնեմ. Աղախինը թող տղան գիրկն առնէ. Այդ դիպակէն (ճանճիկ) կ'առնէինք, եթէ եղբայրս ամէնն առած չըլլար. Այս ամէնն հասկցա՞ր. Ինծի կ'երեւայ որ բոլոր աշկերտներս այս պատուէրը չհասկցան. Զայն անոնց ձեռքէն առի. Նաւերն առին ու գացին. Ինծի ձի մը բերէք. Երկու մոմ կը վառէր. Մէկը գլխուն վերեւը, միւսը ոտքին դին. Ի՞նչ կ'ընես. Ինծի պատուիրածդ կ'ընեմ. Կ'ընենք՝ ինչ որ պարտական ենք ընել. Այդ տղաք բան մը չեն ըներ. Ինչու համար բան մը չեն ըներ. Քանզի դուք ալ բան մը չէք ըներ. Ի՞նչ կ'ընէիր իմ ներս մտած ատենս. Կրակ կը վառէի. Իրիկունն ի՞նչ կ'ընէք. Քու առտուն ըրածդ ես իրիկունը պիտի ընեմ. Ուզածդ ըրէ. Միշտ պիտի ընենք ինչ որ պարտական ենք. Մէկու մը գէշութիւն չընես. Եթէ քեզի պէս հարուստ ըլլայի, շատ բան



կ'ընէի. Այս մարդիկն ուրիշ բան չեն ըներ, բայց ուտել եւ խմել. Զանի ինծի բարեկամ ըրի. Դատաւորներն անոր իրաւունք չըրին. Այս տղան իր հօրը կամքը կ'ընէ.

| | |
|---|---|
| Մնացած, մնացորդ | Ճանչուոր, ծանօթ |
| Կանգ առնել, զտեղի առնուլ | Ինքզինք ճանչցնել, տալ ծանօթս |
| Հասկնամ, ի միտ առնում | Ո՞ւր (շարժում), յո՞ |
| Բերեմ, առնում | Առաւօտուն, ընդ առաւօտն |
| Ոտքին դին, անոտսք | Առտուները, ընդ առաւօտս |
| Պարտական եմ, պարտիմ | Կամաց, մեղմով |
| Վառեմ, լուցանեմ | Թողում, թոյլ տամ |
| Իրիկունը, յերեկոյին | |
| Գէշութիւն, չար | |
| Աղէկ, քաջ | |

## 25. Հրահանգ

Հիմա քեզ կը ճանչնամ. Դուն ալ զիս կը ճանչնաս. Հոս մէկը չեմ ճանչնար. Եղբայրդ զիս աղէկ կը ճանչնայ. Հոս շատերը կը ճանչնամ. Հոս շատ ճանչուորներ ունինք. Քոյրդ չէի ճանչնար. Հօրեղբայրդ ինծի շատ ծանօթ է. Ալ ձեզ պիտի չճանչնայ. Հարցուցէք անոր թէ զիս դեռ կը ճանչնա՞յ. Կ'ուզեն որ այն մարդը ճանչնամ. Ես զանի դեռ չճանչցած՝ ինծի եկաւ. Ինքզինք անոր չճանչցուց. Քեզ քու ճանչուորներէդ մէկուն հետ տեսայ, որուն հետ ես ծանօթ չէի. Զանի ձայնէն ճանչցայ. Ցանցանքդ ճանչցիր.

Ո՞ւր կ'երթաս. Տուն կ'երթամ. Եղբայրս դպրոց կ'երթայ. Առաւօտուն ո՞ւր կ'երթայիր, երբ ես ներս մտայ. Մեր պարտէզը կ'երթայի. Առտուներն հո՞ն

կ՚երթաք · Յօժարութեամբ կ՚երթայի պտտելու, եթէ եղբայրս հոս ըլլար · Եթէ կը հաճիս, ես ալ քեզի հետ գամ · Մէկտեղ երթանք · Այնպէս շուտ մի քալեր, կամաց գնա · Այդ տղաքն ո՞ւր կ՚երթան · Մեր գացած ճամբէն կ՚երթան · Ո՞ւր է քոյրդ · Հայրը տեսնելու գընաց, վաղը պիտի դառնայ · Զանի դիմաւորենք · Վաղը խնջոյքը երթալ կ՚ուզե՞ս · Հայրս չի թողուր որ հոն երթամ · Քիչ առենէն հոն կ՚երթամ · Քիչ մ՚ալ կեցիր որ մէկտեղ երթանք · Պէտք է որ երթամ · Երթալ չեն ուզեր · Այդ մարդիկն ի՞նչ բանի կ՚երթան · Ջուրի կ՚երթան ։

## 26 . Հրամանգ

Այդ տղան ո՞ւր կը տանիք · Զանի դպրոց կը տանինք · Կ՚ուզէ՞ք զանի տուն տանել · Մեր քոյրերը թատրոն կը տանինք · Ո՞ւր կ՚ուզես որ քեզ տանիմ · Զիս ձեր պարտէզը տար · Յօժարութեամբ ձեզ հոն կը տանիմ · Քեզ կը տանէի, եթէ պարապ ժամանակ ունենայի · Չափէն աւելի կ՚ուշանանք, եթէ ձեզ հոն տանինք · Ե՞րբ պիտի գաս եղբայրդ հոն տանելու · Գիրքերս ո՞ւր տարիք · Չգիտեմ ուր տարի · Տանելը չտեսանք · Այդ պատանին հազարապետին տար · Սպասաւորներուն պատուիրեց որ զանի ներս սրահը տանին · Այս պտուղներէն քիչ մը ուտենք · Հիմա չեմ ուտեր, քանզի անօթի չեմ · Երբեմն շատ բան կ՚ուտէինք, հիմա քիչ կ՚ուտենք · Երբ այն հացէն կերաւ, եւ գինիէն խմեց, հոգի առաւ եւ սկսաւ խօսիլ · Ինչո՞ւ չէք ուտեր, պարոններ, եւ չէք խմեր · Կերէք եւ խմեցէք · Բան մը չկերան եւ չխմեցին · Ով է որ ոչխար ունի եւ անոր կաթէն չի խմեր, կամ միսը չուտեր · Կան



անասուններ որոնց միսը չուտուիր · բայց եթէ մէկուն սիրտն առնէր եւ անոնց միսէն ուտէր, անոր վնաս մը չէր ըլլար · Այդ դրախտին մէջ եղած բոլոր ծառերէն կերէք, բայց աս ծառէն մի ուտէք · Հոս խմելու բան մը չկա՞յ · Ահա գինի · խմեցէք, եթէ կը հաճիք · Ես բնաւ գինի չեմ խմեր · Միայն ջուր կը խմենք · Թագաւորին կենացը խմենք · Երէկ գաւաթ մը գինի խմեցի, այլ այսօր չեմ խմեր · Մէկտեղ խըմենք · Դուն բաւական կերար, եւ ան չափէն աւելի խմեց · Մեր խմածը բաւական է · Երէկ մեր խմած գինին այնպէս աղէկ էր, որ մենէ ամէն մէկը մէյմէկ շիշ խմեց ։

Այդպէս ուշ ուստի՞ կու գաս · Պտտելէ կու գամ · Ծառան ուստի՞ կու գայիր, երբ քեզի հանդիպեցայ · Ամարանոցէն կու գայի · Երէկ չափազանց ուշ եկայ, բայց այս առտու շատ կանուխ եկայ · Շուտ կու գանք, եթէ ժամանակ ըլլայ · Կ՚ուզէ որ ժամն ութին գանք · Յարմար ժամանակ եկաք, ձեզի ըսելիք մը ունիմ · Քիչ առենէն կու գա՞յ · Եկէք, պարոններ · Որդիդ եկաւ եւ քեզ ուզեց · Բարեկամ, հոս եկուր ։

| | |
|---|---|
| Պտուղ, միրգ | Շուտ (ժամ մը առաջ), վաղ |
| (Մէկուն) կենացը, յարեւ | Ժամը ութին, յութերորդ ժամու |
| Բաւական, շատ | Յարմար ժամանակ, դիպող ժամ |
| Աղէկ, ազնիւ | Ուզել (պահանջել), խնդրել |
| Մէյմէկ, մեն մի | |
| Ուշ, անագան | |
| Չափազանց, կարի | |

## 27. Հրահանգ

Ձեռքդ ի՞նչ ունիս: Ձեռքս գիրք մը ունիմ: Կը կարծէի թէ եղբօրս կորսնցուցած մատանին ունի: Ա՛ռ, ահա դահեկան մը դուռը կեցող աղքատին համար: Սորվածդ աղէկ միտքդ պահէ: Այդ տունն ո՞վ վարձու կը բռնէ: Հօրեղբայրս զայն վարձու բռնեց: Երեք մշակ վարձու բռնէ որ այգիիս մէջ գործեն: Այդ մարդիկը բռնեցէք, եւ մի թողուք զանոնք: Ընդունածդ ի՞նչ է: Թագաւորէն պարգեւ ընդունեցի: Կը կարծես թէ մենք ալ պիտի առնե՞նք: Պիտի առնէք, եթէ արժանի ըլլաք: Մէկը ձեզ իր տունը պիտի չընդունի: Մարդիկը մեզ շատ պատուով ընդունեցան: Այս գիրքը քեզի կու տամ: Այդ արծաթն այդ աղքատ կնոջը տուր: Այս հիւանդին քիչ մը գինի տուէք: Մայրն անոր պտուղ, խնձոր, տանձ եւ նուռ տուաւ: Պանդոկապետին ըսէ որ ատոր պատառ մը միս, գաւաթ մը գինի եւ մանանիխ եւ հաց տայ: Քու դրացւոյդ վեց գրիչ, թուղթ եւ մելան տուինք: Այս ամէնը քեզի կու տամ, եթէ քեզի ըսելիքս ընես: Ո՞րու տանք այդ գիրքը: Ձեր հօրը տուէք: Եթէ աղքատի ողորմութիւն տաս, գաղտնի տուր: Հանդերձներդ ո՞ւր են: Զանոնք ինծի տուողին տուի: Գիտե՞ս հայրս երբ պիտի գայ: Չեմ գիտեր: Ըսէ որ գիտնամ: Գիտցիր որ մենք քու սպառնալիքէդ չենք վախնար: Կրնա՞ս ատիկա մեզի ընել: Այո, կրնամ: Ո՞ւր կ'երթաս: Հրապարակը: Կրնա՞նք մենք ալ գալ: Դուք հոն չէք կրնար գալ: Ըսաւ թէ կրնամ ընել եւ չկրցաւ ընել: Երէկ եւ



առջի օրը չկրցայ անկողինէն ելլել. վաղը կարելի է կարենամ ելլել:

| | |
|---|---|
| Ա՛ռ (բռնէ), կալ | Մելան, թանաք, մելան |
| Միտքը պահել, ունել ի մտի | Կրնամ, կարող եմ |
| | Կարելի է, թերեւս |
| Թուղթ, քարտէս, քարտ | |

# ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԿԻՆ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

### 1

### ՅՈՎՍԷՓ ԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԷՆ ԿԸ ԾԱԽՈՒԻ

Յակոբ Յովսէփը կը սիրէր իր միւս որդիներէն աւելի, վասն զի զանի ծերութեան ատենն ունեցած էր: Յակոբ այլեւայլ գոյներէ ծաղկէ կապայ մը շինելով՝ անոր հագցուց: Բայց Յովսէփին եղբայրները կ'ատէին զանի՝ աւելի սիրուելուն համար իրենց հօրմէն ու երկու երազներուն համար, զոր Յովսէփ անոնց պատմած էր: «Ինծի կ'երեւէր թէ», ըսաւ Յովսէփ օր մը իր եղբայրներուն, «ինծի կ'երեւէր թէ արտը ձեզի հետ որայ կը կապէի, եւ ահա իմ որաս կայնեցաւ, ու ձեր որաներն ելլելով իմ որայիս երկրպագութիւն կ'ընէին: Դարձեալ՝ ինծի կ'երեւէր թէ արեգակը, լուսինը եւ տասնըերկու աստղ կը տեսնէի որ ինծի երկրպագութիւն կ'ընէին»:

Յակոբին որդիքը Սիւքէմ կոչուած տեղ մը գացած էին իրենց ոչխարներն արածելու ։ Յովսէփ անոնց հետ չէր, հայրն ալ զանի ղրկեց որ անոնց վրայով լուր բերէ ։ Երբ եղբայրները զանի հեռուէն տեսան, իրարու ըսին. «Ահա մեր երազ տեսնողը, եկէք զանի մեռցունենք եւ ըսենք թէ գազաններէն փարատուելով կորսուեցաւ» ։ Բայց Ռուբէն, այն եղբայրներուն մէկը որ զանի ազատել կ'ուզէր, խրատ տուաւ անոնց որ պատանին չմեռցունեն. անոնք ալ անոր մտիկ ընելով զՅովսէփ անջուր գուբ մը նետեցին ։ Ետքը իրենց եղբօրը Յուդային խրատին հետեւելով գուբէն հանեցին զանի եւ ծախեցին քսան դահեկանի Իսմայելացի վաճառականաց որոնք ուղտերով խունկ կը տանէին Եգիպտոս ։ Ետքը Յովսէփին ծաղկէ կապան առնելով ու այծի ձագի մը արեանը մէջ թաթխելով ղրկեցին իրենց հօրը որ ըսաւ. «Այս կապան իմ որդւոյս Յովսէփինն է. գէշ կենդանի մը կերաւ Յովսէփը» ։ Խեղճ հայրը լաթերը հանելով քուրձ հագաւ եւ իր որդւոյն վրայ սուգ ըրաւ երկայն ատեն ։

## 2

### ՅՈՎՍԷՓ ՊԵՏԱՓՐԷՍԻՆ ՏԱՆԸ ՄԷՋ

Իսմայելացի վաճառականներն Յովսէփը Եգիպտոս տանելով Փարաւոն Թագաւորին սպարապետին Պետափրէսի ծախեցին ։ Յովսէփ սիրելի եղաւ իր տիրոջը որ զանի գործակալ դրաւ իր բոլոր տանը եւ բոլոր ստացուածներուն վրայ ։ Բայց որովհետեւ դիւ-



րահաւան էր, մտիկ ընելով իր կնոջը խօսքին որ զրպարտութիւն կ'ընէր Յովսէփին վրայ՝ իր հաւատարիմ ծառան բանտ դրաւ ։

## 3

### ԹԱԳԱՒՈՐԻՆ ՄԱՏՌՈՒԱԿԻՆ ԵՒ ՄԱՏԱԿԱՐԱՐԻՆ ԵՐԱԶՆԵՐԸ

Փարաւոնին երկու պաշտօնեաները, մատռուակն (qaskhfkar) ու մատակարարը (vkfighará), Յովսէփին եղած բանտն էին ։ Երկուքն ալ մէկ գիշերուան մէջ երազ տեսնելով աղաչեցին Յովսէփին որ երազն իրենց մեկնէ. «Կը տեսնէի», ըսաւ առջինը, «որթ (առւմա) մը որ երեք ճիւղ ունէր խաղողի ողկոյզներով ծանրացած, զորոնք առնելով կը ճմլէի Փարաւոնին գաւաթին մէջ եւ անոր կու տայի» ։ «Երեք օրէն,» ըսաւ Յովսէփ, «քու պաշտօնիդ մէջ պիտի հաստատուիս, եւ այն ատեն յիշէ զիս, եւ աղաչէ թագաւորին որ զիս ասկէ հանէ, վասն զի անիրաւ տեղը կը կենամ այս բանտին մէջ» ։ Մատակարարն ալ իր երազը պատմելով ըսաւ. «Գլխուս վրայ երեք կողով կը կրէի, եւ ամենէն վրայի կողովին մէջ կային ուտելիքներ որոնք երկինքին թռչունները կ'ուտէին» ։ Յովսէփ անոր ըսաւ. «Երեք օրէն Փարաւոն քու գլուխդ կտրել պիտի տայ ու փայտէ կախել տայ, եւ հոն թռչուններուն կերակուր պիտի ըլլաս» ։ Ինչպէս որ Յովսէփ գուշակեց՝ այնպէս եղաւ. բայց մատռուակն իր պաշտօնին մէջ հաստատուելով՝ խոստացածը մոռցաւ ։

## 4

### ՓԱՐԱՒՈՆԻՆ ԵՐԱԶՆ ՈՒ ՅՈՎՍԵՓԻՆ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ

Երկու տարի ետքը նոյն իսկ Փարաւոն երկու երազ տեսաւ ։ Անոր կ'երեւէր թէ կը կենար Նեղոսին եզերքը, ուրկէ կ'ելլէին եօթը գէր կովեր, որոնք կը սկսէին ջուրին քովն արածուիլ. Ետքը նոյն գետէն կ'ելլէին ուրիշ եօթը նիհար կովեր որոնք առջինները կը կլլէին ։ Երկրորդ երազին մէջ թագաւորը կը տեսնէր եօթը հատ մէկ կոթէ ելած լեցուն հասկեր, եւ նոյնպէս մէկ կոթէ ելած ուրիշ եօթը պարապ հասկեր լեցուն հասկերը կը կլլէին ։ Թագաւորն արթննալուն պէս վախնալով՝ Եգիպտացւոց բոլոր իղձերուն (փալճը) հարցուց, բայց ի զուր ։ Անոնցմէն մատռուակն Յովսէփը յիշելով՝ անոր համար խօսեցաւ թագաւորին, որ անմիջապէս զանի իր առջեւը բերել տուաւ որ երազը մեկնէ ։ Յովսէփ Փարաւոնին երազները լսելով՝ անոր ըսաւ. «Առատութեան եօթը տարիներ պիտի ըլլան, եւ ետքը պակասութիւն պիտի ըլլայ եօթը տարի, որոնք իրրեւ թէ առջի առատութեան տարիները պիտի կլլեն ։ Թող, ըսաւ, թագաւորը բոլոր Եգիպտոսի երկրին վրայ խելացի մարդ մը դնէ, որ առատութեան տարիներուն հունձքին հինգերորդ մասը պահէ սովի ատենին համար» ։ Այս խրատը Փարաւոնին եւ անոր բոլոր մեծամեծներուն հաճելի երեւցաւ։ «Ո՞ւր գտնեմ», ըսաւ Փարաւոն, «ասկէ աւելի խելացի եւ հնարագէտ մէկը» · եւ յետոյ Յովսէփին դառնալով ըսաւ. «Ահա քեզ այսօր բոլոր Եգիպտացւոց երկրին վրայ դրի» ։ Ետքը



մատնին հանելով Յովսէփին մատը դրաւ, անոր քըթանէ կապայ հագցուց, վիզը մանեակ մը կախեց, եւ զանի իր կառքերուն մէկը հանելով՝ քարոզ (թէլլալ) կանչել տուաւ թէ բոլոր ժողովուրդը Յովսէփին առջին ծնկան վրայ գայ, եւ գիտնայ թէ անիկա Եգիպտացւոց բոլոր երկրին վրայ իշխան դրուեցաւ ։ Այնուհետեւ Փարաւոն Յովսէփին որ երեսուն տարուան էր՝ Պետափրէսին, Արեգ քաղքին քուրմին, աղջիկն Ասանէթը կին տուաւ, ուրկէ երկու որդիք եղան, Մանասէ եւ Եփրեմ ։

---

## 5

### ՅԱԿՈԲ ԻՒՐ ՈՐԴԻՔԸ ԵԳԻՊՏՈՍ ԿԸ ՂՐԿԷ

Յովսէփին ըսածին պէս, առատութեան եօթը տարիները եկան, եւ անոնցմէ ետքը ուրիշ եօթը տարի պակասութեան ։ Անատեն սով եղաւ բոլոր Եգիպտացւոց երկրին մէջ եւ բոլոր աշխարհի վրայ · եւ ամէն դիմրէ Եգիպտոս կու գային ցորեն գնելու, զոր Յովսէփ ժողվելով պահած էր շտեմարաններու մէջ ։ Յակոբ իմանալով թէ Եգիպտոս ցորեն կայ՝ ղըրկեց հոն իր որդիքը որոնք տասն էին, բայց պզտիկը Բենիամին իր քով պահեց ։ Յովսէփ ճանչցաւ իր եղբայրները՝ զինք անոնց առանց ճանչցնելու, եւ ձեւացընելով թէ լրտես են՝ անոնց ըսաւ. «Դուք Եգիպտոսին ելլելու եւ մտնելու տեղերը դիտելու եկած էք» ։ «Ոչ, տէր,» ըսին եղբայրները, «այլ մենք ցորեն գնելու եկանք ։ Տասուերկու եղբարք ենք, մէկ մարդու որդիք, որ Քանանացւոց երկիրը կը բնակի ։

Մենք ամենէն պզտիկը մեր հօրը քով է, մէկն ալ մէջտեղ չէ»։ Յովսէփ անոնց ըսաւ. «Ձեզ ասկէ չեմ թողուր, մինչեւ որ ձեր պզտիկ եղբայրը գայ. ղըրկեցէք ձենէ մէկը որ զանի հոս բերէ»։ Ասոր ըսելով զանոնք բանտ դրաւ. ետքը երրորդ օրը զանոնք անկէ հանելով ըսաւ. «Ձենէ մէկը հոս իմ քովս պատանդ մնայ, միւսները ցորենով մէկտեղ երթան, եւ երբ կը դառնաք, ձեր պզտիկ եղբայրը բերէք, որպէս զի գիտնամ թէ ձեր խօսքերը ճշմարիտ են»։ Անոնք իրարու կ՚ըսէին. «Իրաւամբ կը կրենք այս նեղութիւնները, վասն զի վնասեցինք անոր, եւ չողորմեցանք անոր, երբ մեզի կ՚աղաչէր»։ Եւ չէին գիտեր թէ Յովսէփ իրենց խօսքը կը հասկնար, վասն զի անիկա անոնց հետ թարգմանով կը խօսէր։ Բայց Յովսէփ քիչ մը ատեն առանձնանալով լացաւ։ Ետքը նորէն գալով հրամայեց ծառաներուն որ Շըմաւոնը վար դնեն, եւ անոնց քուրձերը (չուվալ) ցորենով լեցնելով, ստակն ամէն մէկուն քուրձին բերանը դնեն, եւ յետոյ զանոնք արձկեց։ Անոնք Քանանացւոց երկիրն հասնելով՝ իրենց բոլոր պատահածներն իրենց հօրը պատմեցին, եւ Յակոբ ըսաւ անոնց. «Զիս անզաւակ ըրիք. Շմաւոն գերի է. Յովսէփ չկայ, Բենիամին ալ ինէ առնել կ՚ուզէք. ոչ այդպէս. չեմ ուզեր թողուլ որ անիկա ձեզի հետ երթայ»։

---

## 6

### ՅԱԿՈԲԻՆ ՈՐԴԻՔԸ ԵԳԻՊՏՈՍ ԿԸ ԴԱՌՆԱՆ

Երբ սովը բոլոր երկրի վրայ սաստկացաւ, Յակոբ ըսաւ իր որդիներուն. «Նորէն Եգիպտոս գացէք»։



Յուդա ըսաւ իր հօրը. «Եթէ կ՚ուզես որ երթանք, Բենիամինը մեզի հետ ղրկէ. ես երաշխաւոր կ՚ըլլամ տղուն, զանի ինէ ուզէ»։ «Եթէ այնպէս է, ըսաւ Յակոբ, ըրէք ինչպէս որ ձեզի հաճոյ է. բայց երկրիս ամենէն ընտիր պտուղներէն առէք որ ընծայ տաք տիրող մարդուն. առջինին կրկինն ալ ստակ առէք. ձեր քուրձերուն մէջ գտնուածն ալ տարէք, չըլլայ որ դաւաճանութիւն մը ըլլայ»։ Եւ թողուց որ երթան՝ յանձնելով զանոնք Աստուծոյ խնամքին։ Յովսէփ լսեց որ եղբայրներն եկան, եւ թէ Բենիամին ալ անոնց հետ է, հրաման տուաւ իր գործակալին որ ճաշ պատրաստէ։ Երբ եղբայրներն անոր ներկայացան, իրենց ընծաներն անոր տուին, եւ մինչեւ գետինը ծռելով բարեւ տուին։ Յովսէփ ալ անոնց մեծ քաղցրութեամբ բարեւ տուաւ, եւ հարցուց անոնց. «Ո՞ղջ է ձեր ծերունի հայրը որուն համար կ՚ըսէիք թէ Քանանացւոց երկիրն է»։ Ետքը նայելով Բենիամինին որ իր մէկ մօրէ եղբայրն էր՝ ըսաւ. «Ա՞յդ է ձեր պզտիկ եղբայրը. Աստուած քեզի ողորմի, տղաս, եւ քեզ պահէ», եւ փութալով դուրս ելաւ, քանզի սիրտն ելաւ, եւ ալ չէր գիտնար արցունքը բռնելու։ Երեսը լուալէն ետքը դարձեալ եկաւ՝ ինքզինք բռնելով, եւ երբ կերակուրը պատրաստուեցաւ, իր եղբայրներուն հետ սեղան նստաւ։

---

## 7

### ՅՈՎՍԷՓ ԶԻՆՔ ԿԸ ՃԱՆՉՑՆԷ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ

Կերակուրէն ետքը պատուիրեց Յովսէփ իր գործակալին որ հիւրերուն քուրձերը ցորենով լեցունէ,

անոնց բերած ստակն ալ հոն դնէ, իր գաւաթն ալ Բենիամինին քուրձին մէջ դնէ ։ Անոնք հազիւ թէ քաղքէն դուրս ելած էին, գործակալն անոնց վրայ հասնելով՝ արգիլեց զանոնք, եւ իր տիրոջը գաւաթը կ՚ուզէր անոնցմէ ։ Քուրձերը բացուեցան, եւ գաւաթը Բենիամինի քուրձին մէջ գտնուեցաւ ։ Անատեն անոնք զարմանալով եւ զարհուրելով՝ իրենց լաթերը պատռելով քաղաքը դարձան ։ Յովսէփ անոնց ըսաւ. «Ինչո՞ւ համար գաւաթս գողցաք. չէ՞ք գիտեր որ չկայ մէկը որ կորուստ գտնայ ինծի չափ ։ Հիմա գաւաթը գողցողն ինծի ծառայ ըլլայ, եւ դուք խաղաղութեամբ ձեր հօրը գացէք ։ Անատեն Յուդայ պատասխան տալով ըսաւ. «Քու ծառադ մեր հայրը պիտի մեռնի, եթէ այդ պատանին անոր չդարձնեմ, քանզի ես մինչեւ ցմահ երաշխաւոր եղած եմ ատոր համար, ես ծառայ ըլլամ քեզ տիրոջս, եւ այդ պատանին թող երթայ իր եղբայրներուն հետ» ։ Յովսէփ այլ չկրնալով համբերել ։ բոլոր Եգիպտացիները դուրս հանել տուաւ, եւ մեծ ձայնիւ լալով՝ ըսաւ իր եղբայրներուն. «Ես Յովսէփն եմ. հայրս դեռ ո՞ղջ է» ։ Եւ որովհետեւ անոնք վախէն պապանձած եւ թմրած էին, կրկին ըսաւ անոնց քաղցրութեամբ. «Մօտ եկէք ինծի. ես Յովսէփն եմ, ձեր եղբայրը զոր դուք ծախեցիք. բայց մի վախնաք. Աստուած զիս Եգիպտոս ղրկեց որ ձեզ կերակրեմ ։ Գացէք հօրս եւ պատմեցէք անոր ձեր տեսածը, եւ աճապարեցէք ինծի գալու ։ Գեսեմ պիտի բնակիք, եւ ես ձեզ հոն կերակրեմ, վասն զի այդ սովը տակաւին հինգ տարի պիտի տեւէ» ։ Եւ Բենիամինի վիզն իյնալով՝ համբուրեց զանի լալով. միւս եղբայր-



ներն ալ համբուրեց մեծ գորովով, եւ անոնք հաւատացին անոր ։

---

8

ՅԱԿՈԲ ԵԳԻՊՏՈՍ ԲՆԱԿԵԼՈՒ ԿՈՒ ԳԱՅ

Յովսէփ հրաման տուաւ որ իր եղբայրներէն ամէն մէկուն համար երկերկու հանդերձ շինուի. իսկ Բենիամինի համար հինգ՝ շատ գեղեցիկ հանդերձ շինել տուաւ, եւ երեք հարիւր արծաթի դահեկան տուաւ անոր ։ Նոյնչափ դահեկան եւ ուրիշ շատ բան ղրկեց իր հօրը ։ Նոյն իսկ Թագաւորը կառքեր տանել տուաւ որ Յակոբը բերեն իրեններովն ու բոլոր ունեցածովը ։ Յակոբ իր որդւոցը բերնէն բոլոր եղած դէպքերը լսելով, Թագաւորին կառքերն ու Յովսէփին ընծաներն ալ տեսնելով՝ գոչեց. «Այսուհետեւ բանի մը չեմ փափաքիր, վասն զի որդիս Յովսէփ կենդանի է. դեռ չմեռած երթամ զանի տեսնելու» ։ Ճամբայ ելաւ Յակոբ իր ընտանիքովը եւ բոլոր կարասիներովը, որ Եգիպտոս երթայ ։ Յովսէփ դիմաւորեց իր հայրը, ու անոր վիզն իյնալով, արցունքովը կը թրջէր զանի ։ Յետոյ զանի ներկայացուց Փարաւոնին, որ հարցուց Յակոբին թէ քանի տարուան է. ան ալ պատասխան տալով ըսաւ. «Երկրի վրայ իմ պանդխտութեանս տարիներուն թիւը հարիւր եւ երեսուն է. իմ հայրերուս տարիներուն թիւէն քիչ, եւ ցաւով ու հեծութեամբ լեցուն» ։ Յովսէփ Փարաւոնին հրամանաւը Գեսեմի, բոլոր Եգիպտացւոց երկրին մէջ ամենէն պտղաբեր երկիրն իր հօրը եւ եղբայրներուն տուաւ իբրեւ ստացուած ։

## 9

### ՅԱԿՈԲ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԸ Կ'ՕՐՀՆԷ ՈՒ ԿԸ ՄԵՌՆԻ

Յակոբ Եգիպտոս տասնըեօթը տարի ալ ապրեցաւ։ Անատեն տեսնելով որ պիտի մեռնի՝ երդում ընել տուաւ Յովսէփին որ զինքը իր հայրերուն գերեզմանը թաղէ. ետքը օրհնեց Յովսէփին երկու որդիքը Եփրեմ եւ Մանասէ։ Յետոյ իր բոլոր որդիքն անկողնին բոլորտիքը կանչելով անոնց ամէն մէկուն խօսեցաւ եւ օրհնեց զանոնք։ Ռուբէն որդին յանդիմանեց անոր գործած մէկ մեծ յանցանքին համար. Շմաւոնն ու Ղեւին ալ՝ անոնց Սիւքեմացիներէն առած անօրէն վրէժխնդրութեանը համար։ Երբ Յուդային եկաւ, ըսաւ անոր. «Դուն գովուիս քու եղբայրներէդ, եւ ձեռքդ քու թշնամիներդ լծոյ տակ դնէ»։ Յակոբ խօսելէն դադրելով՝ ոտուըներն անկողնին մէջ տարածեց ու մեռաւ։ Յովսէփ տեսնելով որ Հայրը մեռաւ, ինկաւ անոր վրայ եւ արցունքով համբուրեց զանի։ Ետքը Եգիպտացի դի պատողներուն պատուիրելով որ անոր մարմինը պատեն երկրին սովորութեանը համեմատ, զանի անձամբ եղբայրներուն հետ Քանանու երկիրը տարաւ, ու մեծ պատուով դրաւ զանի Մակփելայ քարայր կոչուած գերեզմանին մէջ, Քեբրոնի մօտ։

---

## 10

### ՅՈՎՍԷՓԻՆ ՄԱՀԸ

Յակոբին մահուընէն ետքը Յովսէփին եղբայրները վախնալով թէ չըլլայ որ Յովսէփ իրենց ըրած գէ-



շութիւնը յիշէ, աղաչեցին անոր որ իրենց ներէ. անիկա ալ զանոնք քաղցրութեամբ եւ սիրով հանդարտեցուց։ Անիկա անատեն յիսունուվեց տարուան էր, եւ յիսունուչորս տարի ալ ապրեցաւ՝ միշտ սիրելի եւ յարգելի ըլլալով Եգիպտացւոց առջեւ որոնց փրկիչ եղած էր։ Իր մեռնելէն առաջ ըսաւ իր եղբայրներուն. «Աստուած օր մը ձեզի նայելով՝ պիտի հանէ ձեզ աստի որ մեր հայրերուն տուած երկիրը տանի։ Երդում ըրէք ինծի որ ոսկրներս ձեզի հետ կը տանիք»։ անոնք ալ անոր երդում ըրին։ Երբ Յովսէփ հարիւր տասը տարուան վախճանեցաւ, անոր մարմինը զմռսուեցաւ ու դագաղի մէջ դրուեցաւ՝ Իսրայէլի որդւոց Եգիպտոսէն մինչեւ ելլելը Քանանացւոց երկիրը երթալու համար։

# ԱՅԼԵՒԱՅԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

---

## 1

### ՇՆԻԿ

Տղայ մը օր մը առուի մը քով պտտելու կ'երթայ, եւ կը հանդիպի հոն քանի մը չար տղոց որ պզտիկ շուն մը առուին ջուրերուն մէջ խեղդել կ'ուզէին։ Տղան խեղճ պզտիկ անասնոյն կը գթայ, զանի կը գնէ եւ իրեն հետ տուն կը բերէ։ Շունը շուտով իւր բարերարին այնպէս կը վարժի, որ անիկա ուր որ կ'երթայ՝ անոր ետեւէն կը պտտի։ Գիշեր մը երբ տղան անկողին մտնել կ'ուզէր, շունը սկսաւ հաչել, եւ

չէր թողուր որ քնանայ ։ Պատանին շունին ինչու համար հաչելը գիտնալ ուզելով՝ ճրագ մը առաւ , եւ երբ տաղին անդին կը պտտէր բան մը տեսնելու , մէկէն անկողնին տակ ահուելի տեսքով մարդ մը տեսաւ , եւ հասկցաւ որ գող է ։ Վախէն պոռալուն պէս , բոլոր տունին մէջ եղողները եկան գլուխը ժողվուեցան , եւ գողը բռնելով դատաւորին մատնեցին ։ Երբ հարցափորձ եղաւ , խոստովանեցաւ մարդը թէ միտքը դրած էր բոլոր տունին մէջ եղողները մէկիկ մէկիկ սպաննել՝ պատանիէն սկսելով , յետոյ տունը կողոպտել ։

Ան ատեն շնորհակալ եղաւ տղան Աստուծոյ որ այնպէս անվնաս ազատեց զանի , եւ ըսաւ. Ո՞վ երբեք կրնար երեւակայել թէ շունի ձագ մը որուն ես կեանքը փրկեցի՝ պիտի փրկէր իմ կեանքս ։

---

## 2

### ԼԱՒ ԴՐԱՑԻՆԵՐ

Ջաղացպան մը պզտիկ տղայ մը ունէր , որ առուի մը եզերքին մօտ խաղալու ատենը՝ ջուրն ինկաւ ։ Ատաղձագործ մը որ առուին անդիի դին կը բնակէր՝ եղածը տեսաւ , եւ իսկոյն ջուրը նետուելով տղան ողջ հանեց ու հօրը ներկայացուց ։ Տարի մը անցնելէն ետքը՝ յանկարծ գիշեր մը ատաղձագործին տանը մէջ կրակ պատահեցաւ ։ Բայց տունը բռնելէն ետքը ատաղձագործն իմացաւ , եւ հազիւ ինքը , կինը եւ որդիքը կրցան ազատիլ ։ Բայց ազատելու աճապարելէն մոռցան տանիլ ամենէն պզտիկ տղան որ իբր երկու տարեկան աղջիկ մըն էր ։ Տղուն աղաղակը բոր-



բոքած կրակին մէջէն կը լսուէր ։ Հայրն ու մայրը դառն կերպով կուլային , բայց չկար մէկը որ մտնելու եւ տղան ազատելու համարձակէր ։ Անատեն Ջաղացպանն աճապարելով եւ կրակին մէջ դիմելով , կ՚առնու կը բերէ տղան անարատ , եւ հօրը կու տայ ըսելով. Օրհնեալ ըլլայ Տէրը որ ինծի պատեհութիւն տուաւ քու ինծի ըրած երախտիքդ հատուցանելու. դուն իմ մանչս ջուրէն հանեցիր , ես ալ, Աստուծոյ օգնութեամբը , քու աղջիկդ կրակէն ազատեցի ։

Երբ երկու տղաքն ալ չափահաս եղան , ջուրէն հանուողը կրակէն հանուածն իրեն կին ըրաւ ։

---

## 3

### ՎԱՐԴԻ ԾԱՌԸ

Աղքատ կին մը աղջիկ մը ունէր , որ վարդի մատաղ տունկ մը տնկեց հողէ ամանի մէջ , եւ բնակած խուցին պատուհանին առջեւը դրաւ ։ Գարնան օրեր էին , եւ տունկը վարդի կոկոններով (կոնչա) լեցուն էր ։ Օդն աղէկ եղած ատեններ՝ աղջիկը վարդին ծառը պատուհանէն դուրս կը թողուր , եւ իրիկուան դէմ , երբ արեւը մտնելու վրայ կ՚ըլլար , ներս կ՚առնէր ։ Պատահեցաւ որ իրիկուն մը տունկը , ինչպէս որ սովոր էր , պահելու փոյթ չըրաւ , քանզի ըսաւ թէ հարկ չէ , վասն զի օդը տաք եւ մեղմ է ։ Բայց երբ առտուն ելաւ , վարդին տունկը ցուրտէն չորցած տեսաւ ։ Կու լար , երբ տունկին կը նայէր , ու տրտմութենէն կ՚ըսէր. Ահա մէկ անմտութիւնս այնչափ աշխատութեանս արդիւնքը ջնջեց ։

Անատեն մայրը պատասխան տուաւ անոր ըսելով. Այդ պզտիկ դիպուածը որ քեզի այնչափ ցաւ կը պատճառէ՝ կրնայ քեզի մեծ օգտակարութեան մը պատճառ ըլլալ։ Անկէ սորվէ թէ ինչ որ ցուրտը ծաղկած վարդի տունկին ըրաւ՝ նոյնը կ'ընէ բարուց ապականութիւնն անմեղութեան, եւ թէ ինքզինք մոլութենէ զերծ պահելու համար շարունակ փոյթ եւ միշտ զգուշութիւն պէտք է։

---

## 4

### ԸՆԿՈՒԶԻ ԿԵՂԵՒՆԵՐ

Տէր կոմը Ս. ճշմարտութիւնն ու արդարութիւնը շատ կը սիրէր։ Քանի մը չար մարդիկ աս բանիս համար անոր բարկացած էին, այնպէս որ մէկտեղ երդում ըրին եւ զանի կորսնցնելու եռեւէ էին։ Եւ արդարեւ շատ ստակ տուին չարագործ մարդու մը որ զանի հետեւեալ օր գիշերանց սպաննել խոստացաւ։

Ազնուական կոմը վերահաս վտանգին ամենեւին չէր սպասեր։ Անոր քեռորդիները, սիրուն տղաք, խրիկուան դէմ անոր եկան։ Կոմն անոնց գալուն վրայ ուրախանալով, հանեց պտուղ՝ խնձոր, տանձ եւ ընկոյզ։ Երբ տղաքը մեկնեցան, կոմն ուզեց քնանալ, եւ ինքզինք Աստուծոյ պաշտպանութեանը յանձնելով՝ անկասկած քնացաւ, Բայց կէս գիշերուան ատենները չարագործը որ գաղտուկ տունը մտած էր՝ կամացուկ մը կոմին սենեակը մտաւ, մինչ անիկա աղէկ մը քնոյ մէջ էր, պզտիկ լապտեր մ'ալ անկողնին քով կը վառէր։ Չարագործը դանակը



հանելով, եւ ձեռքը վեր վերցուցած անոր կը մօտենար։ Բայց մէկէն սենեկին մէջ այնպէս սաստիկ շառաչիւն մը լսուեցաւ, որ կոմը քունէն արթնցաւ։ Երբ ելլելով տեսաւ մարդը դանակը ձեռքը, շուտով առաւ զէնքերը որ անկողնին գլխուն վերեւը պատէն կախուած էին, եւ սպառնացաւ զանի սպաննել։ Մարդը սարսափելով դանակը ձգեց ու թողութիւն կը խնդրէր։ Ետքը բանտ մնելու տխրուելով՝ իրեն խրատ տուողներն յայտնեց։

Կոմը կը մտածէր թէ այն շառաչիւնը պատճառողն ինչ էր որ զանի քունէն արթնցուց։ Աչուըներն ասդին անդին պտտցուցած ատենը տեսաւ որ տղաքը գետինը ձգած էին ընկուզի կեղեւ մը, որուն վրայ կոխած էր չարագործը։ Կոմը զարմանալով ըսաւ. Աստուծոյ խնամքովը ընկուզի կեղեւ մը զիս ազատեց, եւ անզգամներն արդարութեան սուրին մատնեց։

---

## 5

### ՍԱՒՈՒՂԻՆ ԷՇԵՐԸ

Երեք հոգի Ամստրդամ քաղքէն ճամբայ ելլելով գործի մը համար մէկտեղ գեղ մը կ'երթային։ Ճամբուն վրայ կը տեսնեն գեղացի մը որ շտապով անոնց կու գար, եւ դէմքին տեսքէն կ'երեւար որ վերջին աստիճան տղէտ եւ ապուշ էր։ Երեք հոգին իրարու կ'ըսեն. Եկէք ասիկա ծաղր ընենք։ Աս կ'ըսեն ու հեռանալով՝ իբր քարընկէց մը իրարմէ զատ ճամբուն վրայ կը կենան։ Երբ գեղացին առջինին կը մօտենայ, անկէ աս խօսքը կը լսէ. Բարեւ, Հայր Աբրահամ։

Աս խօսքը լսելով գեղացին անոր բարեւ կու տայ գլխով, եւ կ'ըսէ. Բարեւ, Անկէ քիչ մը հեռուն կը տեսնէ առջինին միւս ընկերը, որ անոր կ'ըսէ. Բարեւ, Հայր Իսահակ։ Ասոր ալ գեղացին նոյն պատասխանը կ'ընէ։ Ետքը անկէ առաջ երթալով կը գտնէ երրորդը որ կ'ըսէ. Բարեւ, Հայր Յակոբ։ Ան ատեն գեղացին անոնց միտքը հասկնալով, անոր կ'ըսէ. Կը խաբուիք, պարոններ, ես Աբրահամ չեմ, ոչ Իսահակ, ոչ ալ Յակոբ, այս Կիսեայ որդին Սաւուղն եմ, եւ ելած եմ հօրս էշերը փնտռելու. բայց զարմանք, մերիններն էգ էին, իմ գտածներս արու են։

---

## 6

### ՅՈՎՍԷՓ ԿԱՅՍՐ

Յովսէփ Երկրորդ, Գերմանացւոց Կայսրը, իբր անծանօթ մը ըրած առջի ճամբորդութեան ատեն սուրհանդակներու կայան մը հասնելով՝ ձիերը փոխելու համար ախոռին մէջ ձի չգտաւ։ Սուրհանդակապետն անծանօթ անձին ըսաւ որ քիչ մը սպասէ, խոստովանելով թէ ձիերը ղրկած է իր որդւոյն կնունքին հրաւիրուած ազգականներն ու բարեկամները բերելու։ Կայսրը մարդուն հետ խօսակցութեան սկսելով, եւ զանի ողջամիտ եւ հայրենասէր գտնելով՝ յայտնեց անոր թէ կը բաղձայ տղուն կնքահայր ըլլալ։ Սուրհանդակապետն անոր առաջարկութեանը զարմացաւ, բայց եւ այնպէս անծանօթ մարդը նախամեծար համարելով իր հօրեղբօրորդիէն որ երկրագործ էր՝ հաճելով յանձն առաւ։ Երբ եկեղեցի գացին,



պաշտօնը սկսաւ։ Մկրտող երէցը Կայսեր հարցուց. Անունդ ի՞նչ է. ան ալ ըսաւ՝ Յովսէփ է անունս։ Մականունդ ի՞նչ է, կրկնեց երէցը։ Ի՞նչ պէտք է քեզի ասիկա, ըսաւ Կայսրը, ինծի կ'երեւայ որ Յովսէփ անունը միայն բաւական է։ Ոչ, պարոն, ըսաւ Երէցը. կ'ուզենք ընտանիքիդ մականունն ալ գիտնալ։ Եթէ այնպէս է, ըսաւ ան ատեն Կայսրը, մականունս է Յովսէփ Երկրորդ, Կայսր Գերմանիոյ։ Երէցն ու հօն եղողներն ապշեցան, սուրհանդակապետն ալ թագաւորին ոտքն ինկաւ, որ զանի վերուց մարդասիրաբար, եւ անոր շատ պարգեւներ տալով խոստացաւ որ իր սանուն յիշատակը չի մոռնար։

---

## 7

### ԱՆՑԵԱԼ ՄԵԾՈՒԹԻՒՆ

Դիոն աքսորուելով ապերախտ Սիրակուսացիներէն, ապաւինեցաւ Մեգարացւոց քաղաքը, ուր Պրէոդոտոս անունով մէկը կ'իշխէր։ Երբ պատահեցաւ որ ասիկա օր մը մէկուն կողմէն իրեն եղած անիրաւութեան մը համար իրաւունք պահանջէ, իշխանին պալատն երթալով անոր ներկայանալ ուզեց, բայց մէկուն հոգը չեղաւ այս երեւելի անձին առջի մեծութեանն արժանի անոր պատիւ ընել։ Երկայն ատեն զանի սպասել տալէն ետքը՝ պատասխան տրուեցաւ թէ Պրէոդոտոս կարեւոր գործերու զբաղած ըլլալով չի կրնար այն օրն անոր ընդունելութիւն ընել։ Դիոնի բարեկամները որ անոր հետ էին՝ կը զայրանային որ իբրեւ անարգ մէկու մը հետ վարուեցան այն սքանչելի

անձին հետ որ իշխանութեան մէջ եղած ատենը միշտ մարդասիրաբար կը վարուէր իրեն դիմողներուն հետ։ Բայց Դիոն առանց տրտնջելու հանդարտութեամբ ըսաւ անոնց. Բարեկամներ, թերեւս ես ալ նոյնն ըրած եմ Սիրակուսայի մէջ իշխան եղած ատենս։ Ժամանակ անցնելէն ետքը այս մեծ անձն իր հայրենիքն ազատեց Դիոնեսիոս բռնաւորէն որ երկիրը կը հարստահարէր, եւ խաղաղութիւնն ու արդարութիւնը նորէն հաստատեց. բայց սպաննուեցաւ Աթենացի Կալիպպոսէն որ անոր հիւրն ու բարեկամն էր։ Իսկ Դիոնեսիոս բռնաւորը Սիրակուսայէն աքսորուելով եկաւ բնակեցաւ Կորնթոս, ուր վարժապետ ըլլալով աղքատութեան մէջ մեռաւ։

---

## 8

### ԳՈՂՆ ՈՒ ԽՈԶԸ

Երկու մարդ որ արջ մը կը պտտցունէին՝ օր մը իրիկուան դէմ շատ ուշ գեղ մը հասնելով իջեւան մը իջան ուր կ'ուզէին այն գիշերն անցունել։ Պանդոկապետը որ իր պարարեալ (պէսլի) խոզը նոր ծախած էր՝ արջն այն ախոռը դրաւ ուր առաջ խոզը կը կայնէր։ Կէս գիշերուան ատենները գող մը որ ցորեկը եղածին տեղեակ չէր՝ գաղտ պանդոկը մտնելով կ'ուզէր պարարած խոզը տանիլ։ Կամացուկ մը ախոռին դուռը բանալով մութին մէջ խարխափելով ներս կը մտնէ, եւ փոխանակ խոզին զոր գտնել կը կարծէր՝ կը բռնէ արջը, որ ոտք ելլելով ահելի ձայնով երկու թաթերը մարդուն վրայ կը նետէ, եւ այնպէս ուժով կը պնդէ զանի, որ մարդը չի կրնար



շարժիլ։ Վախն ու տագնապն անոր ողբալի աղաղակներ հանել կուտան, այնպէս որ պանդոկին մէջ բոլոր քնացողներն անոր ալռալէն ցատկելով կ'արթննան, եւ դժուարաւ կրնան արիւնլուայ մարդը գազանին ճիրաններէն ազատել։ Բայց անիկա աս վըտանգէն ազատելուն պէս արդարութեան ձեռքը մատնուեցաւ։

---

## 9

### ԵՐԵՍԷ ԻՆԿԱԾ ՊԱՇՏՕՆԵԱՆ

Պարսից թագաւորներէն մէկն իր պաշտօնեաներուն գլխաւորին բարկանալով՝ զանի իշխանութենէն կը ձգէ եւ անոր տեղ ուրիշ մը կը դնէ։ Բայց շնորհք մը ընելու համար՝ թոյլ կու տայ անոր որ բոլոր ընտանեօքը խաղաղութեամբ բնակելու համար իրեն տեղ մը ընտրէ, բոլոր ստացուածն ալ անոր կը շնորհէ։ Բայց պաշտօնեան թագաւորին կ'ըսէ. Ի՞նչ պէտք են ինծի ասկէ ետքը այն ստացուածները զոր ինծի կ'ուզէ շնորհել ձեր վեհափառութիւնը. կ'աղաչեմ, հրաման տուէք որ ամէնն ալ ինէ առնուի. բայց հաճի ձեր վեհափառութիւնը խնդրածս կատարելու. ցուցուի ինծի ձեր տէրութեանը մէջ անպիտան եւ ամայի գեղ մը կամ աւան մը զոր խնամելով շէնցնեմ։ Անատեն հրաման տուաւ թագաւորը որ մարդ հանուի՝ պաշտօնէին փափաքածին պէս տեղ մը փնտռելու. բայց թագաւորէն ղրկուողները գալով լուր տուին թէ բոլոր տէրութեան մէջ գիւղ կամ աւան եւ կամ բնակութեան տեղ մը չկայ որ անշէն եւ անմշակ ըլլայ։ Անատեն պաշտօնեան թագաւորին կ'ը-

ալ. Աղէկ գիտէի, որքայ, որ ինծի կառավարելու յանձնուած բոլոր երկրին մէջ չկայ բնաւ աւեր եւ անբնակ տեղ մը. այսպիսի տեղ մը խնդրած ատենս՝ նպատակս էր առիթ տալ որ անձամբ հասկնաք թէ ինչպէս չէն եւ ծաղկած ձեզի կը դարձնեմ երկիրը։ Երանի թէ ձեր վեհափառութիւնը գտնէր ուրիշ պաշտօնեայ մը որ կարող ըլլար ետքը նոյն վկայութիւնը տալ։

---

## 10

### ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿ ՄԸ

Կարոլոս ԺԲ. Պետրոս մեծէն Բուլդաւայի քով յաղթուելէն ետքը՝ երեք Սուետացի գիւղականք հայրենասիրութեան զարմանալի օրինակ մը տուին։ Ասոնք իմանալուն պէս որ Սուետի թագաւորն յաղթուեցաւ եւ մեծ կարօտութեան մէջ է, իրենց բոլոր աւելորդ բաները՝ կարասի, հանդերձ, գարի, չոր խոտ եւ անասուն ժողվելով, զանոնք մօտ քաղաքներէն մէկուն մէջ ծախելու գացին, եւ անոնցմէ մէկը ծախուածին գինն առնելով եւ ձի մը հեծնելով՝ աճապարանօք Սուետի բանակն հասաւ։ Ո՞ւր է թագաւորը, կը գոչէր պահապաններուն հեռուէն, զիս անոր տարէք, անոր բան մը պիտի ըսեմ։ Պաշտօնակալներէն մէկն անոր մտիկ ընելով՝ զանի Կարոլոսին առջեւ տարաւ։ Երբ գեղացին թագաւորին քով մտաւ՝ մէկէն ծնկան վրայ գալով ծոցէն երկու քսակ ոսկի հանեց, եւ թագաւորին տուաւ՝ յայտնելով անոր թէ ինչպէս մէկտեղ բերած էր այն դրամը երկու ընկերներովը։ Կ'ըսուի թէ Կարոլոս մարդուն



պատմութեանը վրայ յարտօր շարժեցաւ, եւ ըսաւ. Ազնուականներէս եւ ոչ մէկը հաւատարմութեան այսպիսի ապացոյց մը տուաւ։ Յետոյ խոստացաւ գեղացւոյն որ անոր հայրենասիրութեանը իբր վարձ՝ զանի ազնուականութեան աստիճան բարձրացնէ, բայց երբ անիկա յանձն չառաւ եւ ընտրեց յաւէտ իւր վաղեմի բարեկամներուն հետ իր աստիճանին մէջ մնալ, թագաւորն իր առջեւ գրել տուաւ հրովարտակ մը որով այն ազնուամիտ գեղացին եւ անոր երկու ընկերները բոլորովին հարկէ ազատ կ'ընէր, եւ իւր շնորհակալութիւնը ցուցնելու համար՝ մօրուքէն քանի մը թել փրցնելով հրովարտակը կնքած կնքամոմին տակը դրաւ։

---

## 11

### ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՓԱՐՈՍԸ

Փարոսի աշտարակը որ Պտղոմէոս Եղբայրասէրի հրամանաւ շինուեցաւ՝ աշխարհիս եօթը հրաշալեաց մէկն էր, եւ ուրիշ անոր նման աշտարակներ որ նաւավարներու առաջնորդութեան համար ետքը շինուեցան՝ նոյն անունն առին։ Անիկա քառանկիւն, ճերմակ մարմարէ, բազմայարկ մեծ շէնք մըն էր, եւ ունէր տանիք որուն վրայ ամէն գիշեր մեծ կրակ կը վառուէր, զոր նաւավարք շատ հեռուէն կրնային տեսնել։ Շէնքին ձեւն հանող եւ գործը լմնցնող ճարտարապետը Սոստրատոս էր։ Անիկա իւր ճարտարութեան համբաւը յետոյ թողուլ փափաքելով, եւ իւր անունը թագաւորին անուանը հետ

գնել չհամարձակելով՝ այսպիսի միջոց մը խորհեցաւ։ Շէնքին ճակատը կրով ծեփելով՝ վրան Թագաւորին համար գովեստի խօսքեր գրեց, իսկ ծեփին տակը քարի վրայ ուրիշ գրուած մը փորագրեց։ Իբր դար մը ետքը ծեփը թափելով՝ Պտղոմէոսի վրայ գրուածը ջնջուելով կորսուեցաւ, տակը փորագրուածը միայն կ'երեւար մեծամեծ նշանագիրներով այսպէս. Սոստրատոս Կնիդացի փրկիչ աստուածներուն՝ նաւարկութեան օգտին համար։

---

## 12

### ԴՐՕՇԱԿ

Դերձակ մը մեռնելու հիւանդութեան մէջ լինալով՝ երազի մէջ զարմանալի բան մը կը տեսնէ։ Անոր կ'երեւար թէ վերջին ատեանին մէջ կը կենար, մահուան հրեշտակն ալ կեցած կը բանար անոր առջեւ շատ մեծ դրօշակ մը (պայրագ), տեսակ տեսակ կերպասներու (խումաշ) կտորներէ շինուած, զորոնք անիկա ատեն ատեն իր յաճախորդներէն (միւշթէրի) գողցած էր։ Նոյն վայրկենին անոր կ'երեւէր թէ դժոխքը կը մտնէր։ Մարդն այս տեսարանէն վախնալով քունէն ցատկելով ելաւ՝ բոլորովին պաղ քրտինքի մէջ։

Այս երազն իրեն Աստուծմէ ազդարարութիւն մը համարելով, ուխտ ըրաւ որ ալ չգողնայ, եթէ ողջնայ հիւանդութենէն։ Քիչ ատեն ետքը իրաւ հիւանդութենէ կ'առողջանայ, եւ որովհետեւ իր առաքինութեանը վստահ չէր. կը պատուիրէ իր գործաւորներէն մէկուն որ դրօշակն իրեն յիշեցնէ, երբ



լաթ մը կտրելու ըլլայ։ Մարդն ատեն մը իր ուխտին մէջ հաւատարիմ մնալէն ետքը՝ օր մը թանկագին կերպասէ մը լաթ մը կտրած ատենը՝ ագահութեան հոգիէն փորձուելով կը գիջանի ընչասիրութեան, եւ կտաւէն մաս մը կը գողնայ։ Յիշեցնող մարդը պարապ տեղ անոր ազդարարութիւն կ'ընէ որ դրօշակն յիշէ։ Դու ալ դրօշակովդ չափազանց կը ձանձրացնես ականջներս, կ'ըսէ անոր դերձակը. երազի մէջ տեսած դրօշիս մէջ այս տեսակ կերպաս չկար։

---

## 13

### ՍԱՓՐԻՉՔ

Սափրիչ մը որուն գործն էր մօրուք ածիլել եւ մազ կտրել՝ շատ յաճախորդներ իրեն ձգելու համար խանութին դուռը պատին վրայ նկարել տուաւ մարդ մը որ ծովն իյնալով խեղդուելու մօտ էր, եւ ուրիշ մը անոր վրայ գթալով՝ լողալով կու գայ զանի ջուրէն հանելու, բայց բռնելու ատեն մազերէն որ ճըշմարիտ չէին՝ սուտ մազը միայն ձեռքը կը մնայ, եւ ազատել ուզած մարդն ընկղմելով կը խեղդուի։ Այս պատկերին վրայ մեծ տառերով գրուած էր այսպէս. Վայ անոնց որ կեղծ մազ ունին։ Ասով կ'ուզէր իմացընել թէ կեղծ մազերը վնասակար են։

Ուրիշ սափրիչ մը որուն գործն էր կեղծ մազեր շինել, երբ տեսաւ որ շատերն իր արուեստակցին օրինակէն համոզուելով կեղծ մազ գործածելէ ետ կը կենան, իրեն եղած վնասին առաջն առնելու համար սա հնարքը խորհեցաւ։ Նոյնպէս իր խանութին ճա-

կատը նկարել տուաւ Աբիսողոմ մազերէն կախուած ծառէ մը, եւ տակը գրեց այսպէս. Երանի թէ մազերը կեղծ ըլլային։

Պատմութիւնն այս զարմանալի մրցման (եարըշ) ինչ վախճան ունենալուն վրայ բան մը չըսեր, բայց հիմակուան սովորութիւնը կը ցուցնէ թէ կեղծ մազերը խափանուեցան, այլ անշուշտ նորէն կ'ելլեն, պէտք է համբերել։ Ասոր պէս շատ հրաշքներ գործած է նորաձեւութիւնը։

---

## 14

### ՀԱՆՃԱՐԵՂ ԽՐԱՏ ՄԸ

Մեծ զօրութեան տէր երիտասարդ իշխան մը Հնդկաստան կը թագաւորէր. եւ որովհետեւ շատ ինքնահաւան եւ հպարտ էր, իրեն եւ իր հպատակներուն շատ վնաս կ'ընէր։ Անոր հաւատարիմ ծառաները պարապ տեղ կ'իմացնէին անոր թէ թագաւորի մը ամենէն մեծ զօրութիւնն՝ իր հպատակներուն սիրտը շահելն է։ Անոր այս խրատը տուողներէն շատերն աչքէ ինկան եւ պատժի ենթակայ եղան։ Իմաստուն մարդ մը ուզելով թագաւորը համոզել՝ զանի առանց բարկութեան շարժելու, նարտի խաղը հնարեց, ուր թագաւորը, թէպէտ ուրիշ անձինքներէն երեւելի է, առանց հպատակներուն եւ զինուորներուն օգնութեանը բան մը չի կրնար ընել։ Երիտասարդ թագաւորը, բնականէն հանճարեղ ըլլալով, խրատին զօրութիւնը հասկցաւ ու վարքը փոխեց, եւ այնպէս վերահաս չարիքին առջեւն առաւ։



Խաղը հնարող մարդուն երախտեացը հատուցում ընել ուզելով, անոր հարցուց թէ ի՛նչ փոխարէն կը խնդրէ. ան ալ ուզեց որ իրեն այնչափ հատ ցորեն տայ որչափ որ նարտին տախտակին վրայ խորշեր կան, սա պայմանաւ որ ցորենի հատերուն թիւը միշտ կրկնուի՝ առաջին խորշէն մինչեւ վերջինը որ վաթսուն եւ եօթներորդ է։ Թագաւորն անմիջապէս անոր խնդիրքը շնորհեց դեռ չքննած. բայց երբ հաշիւ ընելով գտաւ որ Հնդկաստանի բոլոր հունձքը բաւական չէին խոստացածը կատարելու։ Ասկէ առիթ առնելով իմաստունը ցուցուց երիտասարդ թագաւորին թէ որչափ հարկաւոր է որ թագաւոր մը իր բոլորտիքն եղողներէն զգոյշ ըլլայ, եւ անոնց չթողու որ անոնց ըրած բարերարութիւնները գէշի գործածեն։

---

## 15

### ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Ուէսդմինսդէրի մեծ դպրոցին աշակերտներուն երկու դասերուն մէջտեղ վարագոյր մը կար զանոնք իրարմէ զատելու համար։ Պզտիկ աշկերտներուն մէկը օր մը չգիտնալով (առանց դիտման) վարագոյրը պատռեց, եւ որովհետեւ տղան բնութեամբ հեզ եւ վախկոտ էր, կը վախնար որ չըլլայ թէ պատիժ ընդունի վերակացուէն որ խիստ մարդ մըն էր։ Տղուն աշակերտակիցներէն մէկը որ անկէ մեծ էր տարիքով՝ զանի հանդարտեցուց խոստանալով անոր թէ յանցանքն իր վրայ կ'առնէ, եւ ինք կը կրէ պատիժը։

Բաւական տարիներ ետքը ընտանի պատերազմ ե-

լաւ Անգղիոյ մէջ, եւ այս երկու տղոց որ արդէն չափահաս էին՝ ամէն մէկը մէկ կուսակցութեան կողմնակից եղաւ. մէկը ռամկապետաց կողմէն էր, մէկալն ալ թագաւորական կողմէն ։ Երբեմն մէկ կուսակցութիւնը, երբեմն մէկալը յաղթելէն ետքը, ռամկապետականք յաջողելով թագաւորական զօրքին բոլոր վերին պաշտօնակալները բռնեցին ։ Ասոնց համար դատաւորներ դրուեցան, այն վախկոտ աշակերտն ալ որ դատաւորութեան հետեւած էր՝ այն դատաւորներէն մէկն եղաւ ։ Դատուելու համար ատեան բերուողներուն անուններուն մէջ լսելով իր աշակերտակցին եւ բարեկամին անունը, զոր դպրոցէն ելլելէն ի վեր տեսած չէր, սիրտը շարժեցաւ. ուշադրութեամբ անոր նայեցաւ եւ իրեն այնպէս երեւցաւ որ ան է, եւ անոր քանի մը բան հարցնելով ստուգեց որ իրաւ ան է, եւ առանց ինքզինք անոր յայտնելու շուտ մը ճամբայ ելաւ Լոնտրա երթալու։ Հոն պէտք եղած անձանց քով բանեցուցած ազդեցութեամբն ու ջանքովը յաջողեցաւ իր բարերարն ազատելու այն պատժէն որմէ անոր ընկերներէն մէկը չկրցաւ ազատիլ ։

---

## 16

### ԳԱՄ ՄԸ

Գեղացի մը քաղաք երթալու համար իր ձին համետելով, տեսաւ որ ձիուն ոտքին գամերուն մէկը պակաս էր. եւ որովհետեւ երթալու կը փութար, ինքնիրեն ըսաւ. Ի՞նչ փնաս կամ օգուտ կայ ինծի,



եթէ ձիուն ոտքը գամ մը աւելի կամ պակաս է ։ Աս ըսելով ճամբայ ելաւ ։ Ճամբան ձիուն մէկ ոտքին պայտը (նալը) խախտելով ինկաւ ։ «Եթէ հոս տեղ մը պայտառ մը ըլլար», ըսաւ, «կրնայի պայտը տեղը դնել տալ. բայց որովհետեւ հոս այնպիսի մէկը չըկայ, ձին կրնայ մէկալ երեքովը ճամբան գլուխ հանել» ։ Բայց ճամբուն վրայի քարերը վիրաւորեցին կենդանւոյն ոտքը, որ սկսաւ քալելու ատենը կաղալ. Եւ այսպէս կաղն ի կաղը ծանր կերպով գացած ատենը, յանկարծ երկու գող ելան մացառներէն դուրս մարդը կողոպտելու, որ ձիուն կաղալէն չկրնալով շուտով պրծիլ, աւազակներուն ձեռքն ինկաւ, որոնք անոր մախաղին եւ մէջը եղածներուն հետ մէկտեղ ձին ալ առնելով, թողուցին մարդը որ երթայ. Անիկա ամէն բանէ զուրկ տուն դառնալու ստիպուելով, տրտմած ըսաւ ինքնիրեն. «Ինչպէս կրնայի խորհել որ գամ մը պակաս ըլլալուն համար ձիս պիտի կորսնցունէի» ։

---

## 17

### ԽՈՐ ԾԵՐՈՒԹԻՒՆ

Ռուսիոյ մեծամեծներէն մէկը՝ Տէրութեան գաւառներէն մէկուն իշխանութիւնը կ'առնէ, եւ գաւառին մէջ այցելութեամբ պտտած ատենը, կը տեսնէ ճերմակ մազերով մարդ մը որ գեղէն քիչ մը հեռուն եղող տնակի մը դուռը նստած կուլար, եւ անոր կ'ըսէ. «Ի՞նչ ունիս, մարդ, ինչո՞ւ համար տրտմած ես եւ կու լաս» ։ «Տէր», կ'ըսէ ծերը հառաչելով, «կու լամ, վասն զի հայրս զիս ծեծելով դուրս ըրաւ» ։

Իշխանը զարմանալով այս խօսքին, եւ շուտ մը ձիէն իջնելով ներս կը մտնէ։ Ոտքը տանը բակին մէջ դրածին պէս՝ հոն ճերմակ մազերով աղջիկէն աւելի ծեր ուրիշ մարդ մը կը տեսնէ, որ բարկացած ալ կ'երեւէր։ «Ինչո՞ւ համար խռոված ես», կ'ըսէ անոր գաւառապետը։ «Մի հարցըներ, տէր», կ'ըսէ ծերը. «որդիս որ դուռը կը կենայ՝ անզգուշութեամբ գետինը ձգեց ծերունի հայրս, որ քամակին ոսկրը կոտրելով նստած է»։ Գաւառապետն բառերը կատակ կարծեց. բայց շուտով հասկցաւ որ կատակ չէր խօսքը, քանզի սենեակ մը տարուելով՝ հոն կրակարանին մօտ մեծկակ աթոռի մը վրայ ուրիշ մարդ մը տեսաւ շատ ծեր, որուն կռնակը ծռած էր ծերութենէն, բայց դեռ աշխոյժ եւ ուժով էր։ «Իրաւ», ըսաւ գաւառապետն ինքնիրեն, «այս մարդիկը նահապետներուն ցեղէն են»։

---

## 18

### ՋՈՐԻ ՄԸ

Բժիշկ մը իր ջորին հեծնելով՝ կոկորդին մէջ խաղուարտ մը ունեցող հիւանդ մը տեսնելու կ'երթար։ Երթալու տեղը հասնելով եւ ջորիէն վար իջնելով, հոն դրանն աջին հանդիպեցաւ իր ճանչուորներէն մէկուն որուն հետ սկսաւ խօսիլ։ Երբ խօսքը երկընցաւ, սանձը թողուց, ջորին ալ տանը դուռը բաց գտնելով, ներս մտաւ։ Հիւանդին խուցը, կ'ըսէ պատմութիւնը, բակին վրայ էր եւ կէս մը բաց թողուած էր, որպէս զի ներս օդ առնի։ Կենդանին աս-



դին անդին նայելով, դուցէ ուտելու բան մը գըտնելու համար, եւ բաց դուռը տեսնելով սանձովը եւ համետովը կը մտնէ հիւանդին խուցը, որ ոտքի ձայն լսելով եւ կարծելով թէ բժիշկն է, առանց աչքին դառնալու թեւն անոր կ'երկնցնէ որպէս զի զննէ։ Ջորին առանց պատճառը գիտնալու իր առջեւը երկնցած թեւ մը տեսնելով ակռաներովը դաստակէն (պիլէկ) կը բռնէ։ Հիւանդը սարսափած աչքին կը դառնայ, եւ ջորին տեսնելով՝ անկողնէն ցատկելով կ'իջնէ որ կենդանին դուրս ընէ, բայց սաստիկ ծիծաղելէն կոկորդին մէջի խաղուարտը կը պատռի։ Այն միջոցին բժիշկը վրայ հասնելով կ'ուզէր ջորին մտրակով (խամչիով) ծեծել. հիւանդը ձայն հանելով կ'ըսէ. «Այդ անասունին վնաս մ'ըներ, պարոն բժիշկ. այս դէպքը զարմանալի է. այդ ջորին ըննացուց այնպիսի հիւանդութիւն մը որուն դուցէ արուեստը ճար մը պիտի չկրնար ընել. եթէ այսպիսի հիւանդութեան մը մէջ իյնամ, այդ ջորին ղրկէ, եւ դուն անձամբ ինծի գալու մի յոգնիր»։

---

## 19

### ԹԱՂՈՒԱԾ ԳԱՆՁ ՄԸ

Կը պատմուի թէ երկրագործ մը որ աշխատութիւնը շատ կը յարգէր՝ ուզելով իր մահուանը մօտ գործքով ցուցնել իր որդւոյն թէ որչափ օգտակար է աշխատութիւնը, զանի կը կանչէ իր քով, եւ գաղտնիք մը յայտնելու պէս անոր կ'ըսէ. «Տղաս, մեր արտին մէջ որ կը գործենք՝ թաղուած գանձ մը կայ, բայց

Թէ որ տեղն է՝ չեմ գիտեր» ։ Այս ըսելով՝ անոր խրատ կու տայ որ, առանց մէկուն յայտնելու, ինք անձամբ փորէ արտը ։ «Այսպէս ընելով», կ'ըսէր, «ստուգիւ պիտի գտնես գանձը» ։ Մարդը կը մեռնի, եւ որդին թաղուած գանձը գտնելու յուսով, կ'առնէ բահ եւ բրիչ, եւ շատ օրեր աշխատելով արտը ծայրէ ծայր փորեց, եւ գանձին չպատահելով՝ տրտմեալ եւ յուսահատ կ'երթայ ։

Բայց երկիրն այնպէս գործուելով եւ ցանուելով, հունձքի ատենը կու տայ առատ բերք, զոր երխտապարտ երկրագործը ժողվելով եւ շտեմարաններուն մէջ դնելով՝ շատ կը հարստանայ ։ Այն ատեն կը հասկնայ թէ հօրն ըսած գանձը՝ նոյն իսկ աշխատութիւնն էր ։

# ԱԶԴ

## ԷՋ 95, ԹԻՒ 7 ԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ

Բացառական հոլով գոյականի մը հետ, փոխանակ ցուցական ածականաց բացառականներուն, յայսմանէ, յայնմանէ, յայդմանէ, եւն, աստի, անտի, այտի մակբայները կրնան գործածուիլ ։ Զոր օրինակ.

| | |
|---|---|
| Այս քաղքէն. | Ի քաղաքէ աստի, փխնկ. ի քաղաքէս յայսմանէ |
| Այն տունէն. | Ի տանէ անտի, փխնկ. ի տանէն յայնմանէ. |
| Այդ երկրէն. | Յերկրէ այտի, փխնկ. յերկրէդ յայդմանէ |
| Այս զօրքերէն. | Ի զօրաց աստի, փխնկ. ի զօրացս յայսցանէ. |
| Այն սպասաւորներէն. | Ի սպասաւորաց անտի, փխնկ. ի սպասաւորացն յայնցանէ. |
| Այդ տղոցմէն. | Ի մանկտւոյ այտի, փխնկ. ի մանկտւոյդ յայդցանէ |
| Անիկա այն լեռնէն իջած ատենը. | Իջանել նորա ի լեռնէ անտի |
| Այն ժողովուրդէն ոմանք ելան զինք տեսնելու. | Ոմանք ի ժողովրդէ անտի ելին տեսանել զնա |
| Աս քաղքէն գացէք. | Մեկնեցարուք ի քաղաքէ աստի |
| Մեզի այդ հացէն տուէք. | Տուք մեզ ի հացէ այտի |

| | |
|---|---|
| Այն աշակերտներէն եր- | Երկուք յաշակերտաց անտի |
| կուքը գեղ մը կ'եր- | երթային ի գիւղ մի |
| թային · | |
| Անոր վախէն պահապան- | Յահէ անտի նորա խռո- |
| ները խռովեցան · | վեցան պահապանքն |

### ԲԱՅԵՐՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ ՄԸ

Բայերուն հրամայականը, մանաւանդ կրաւորականինը, շատ անգամ սա ձեւով ալ կ'ըլլայ · Ազատեսցիր, ազատէ կամ ազատուէ · Ազատեսցիք, ազատեցէք կամ ազատուեցէք · Կերիցիր, կեր · Կերիցիք կերէք · Բացցիր, բացուէ · Բացցիք, բացուեցէք · Խօսեսցիր, խօսէ · Խօսեսցիք, խօսեցէք · Երթիջիր, փոխանակ Երթ · Երթիցիք, փխնկ · Երթայք, եւն ·

## ՑԱՆԿ ՆԻԹՈՑ

**Ածական.** Ի՞նչ է. 2. Տեսակները. Որական ածականներ. 13. Ո՞ւր կը դրուին. 15. 59. Անոնց համաձայնութիւնը. 44. Աստիճանները, 152, 153, 154. Թուական ածականներ. 13. 14. Ասոնց համաձայնութիւնը. 158. Ստացական ածականներ. 14. 17. 18. Ասոնց համաձայնութիւնը. 44. Ցուցական ածականներ. 14. 20. Ասոնց համաձայնութիւնը. 45.

**Ածանցական մասնիկներ.** 24. 25.

**Ածանցեալ բառեր.** 24.

**Անեզական անուանք.** 9. Ասոնց բայը. 10.

**Անոր, անոնց, իրենց** բառերուն գրաբարը. 18.

**Անորոշ հայցական.** 65

**Անուն.** Ի՞նչ է. 2. Անուանց մէջ ձայնաւորներու փոփոխութիւն. 37. 38. Անուանց հոլովման պատկերը. 105.

**Ապառնի** ժամանակին գործածութիւնը. 68. 69.

**Աստ, անդ, այսր, անդր,** եայլն, մակբայներու գործածութիւնը. 78.

**Արմատ** բառեր. 24

**Բաղադրեալ** ժամանակ, 3. 177.

**Բայ.** Ի՞նչ է. 2. Բայերուն եղանակը, ժամանակը, դէմքը, թիւը, 3. Տեսակները, 3. Գոյական կամ էական բայ, 3, 4. 142. Ածական բայ, 3. 10. 55. Տեսակները, Ներգործական. Չէզոք 55. 56. Բայերուն լծորդութիւնները. 56. 61. 64. 67. 76. 82. Գ. լծորդութեան վրայ դիտողութիւն, 80. 81. Դ. լծորդութեան վրայ դիտողութիւն, 83. Բայերուն կրաւորականը, 91. 92. 93. Անցողական բայ, 148. 149. Անկանոն կամ զարտուղի բայ, 114. 120. 132. 138. Բայերուն աներեւոյթը, 87. 88. Դիմաւոր բայ, 5. Ե՞րբ յոքնակի կը դրուի, 10. Դիմաւոր բայ մը անդէմի փոխել. 183. 184. 185. 486. Եղանիմ, Լինիմ, Գոմ բայերը. 141. 143. Եմ բային այլեւայլ գործողութիւնները, 142. 143. Տամ բային գոր-

ժամութիւնը, 150. Արկանեմ, Ածեմ, Կախեմ բայերը, 132. Հայիմ, Նայիմ բայերը, 73. Թաղցնում, Երդնում բայերը, 140.

**Բայանուն.** 87. 106.

**Բարդ** բառեր, 30. 31. 106. 124. 125.

**Բացայայտիչ**, 173.

**Գոյական**, տես Անուն.

**Գործողութեան մը պարագաները.** 70. 134.

**Դերանուն.** Ի՞նչ է. 50. Տեսակները, 50. Էական դերանուն, 50. Ստացական դերանուն, 51. Ասոնք երբ Ք և Ն յօդ կ'առնեն, 44. 53. Ցուցական դերանուն. 45. 51. Յարաբերական դերանուն, 52. 165. **Որ** յարաբերականը դիմաւոր բայով ինչ կը նշանակէ, 166. **Ս, Դ, Ն**, յարաբերականէն ետքը երբ կը գործածուին, 167. Դիմաւոր բայով **Որ** յարաբերական հոլոված, 168. 169. **Որ** յարաբերականով դիմաւոր բայ իբրև ածական գործածուած, 169.

**Եզակի**, 8.

**Երին** և **Երեան** վերջաւորող Թուական անուններ, 145.

**Զինչ** և **Ինչ** բառերը. 68. 130. 131.

**Խնդիր.** Սեռի. 55. Բնութեան. 15. Բնութեան խնդիր հայցական. 157. 161.

**Կոչական.** 174. **Ով** կամ **Ո** միջարկութեան հետ. 175. **Դու** դերանուան հետ. 175. **Դ** գիրը կոչականի հետ. 175.

**Հոլով.** Ուղղական հոլով. 2. **Ուղղական հոլով յոգնակի**, Անուանց. 89. Ստացականաց. 53. Ցուցականաց. 20. Էական դերանուանց. 50. 51. **Սեռական հոլով**, Անուանց. 33. 34. 35. 36. 37. Ստացականաց. 43. Ցուցականաց. 44. Էական դերանուանց. 50. **Տրական հոլով**, Անուանց. 66. Ստացականաց. 66. Ցուցականաց. 66. Էական դերանուանց. 67. **Հայցական հոլով**, Անուանց. 54. Յոքնակին. 54. Ցուցականաց. 55. Էական դերանուանց. 55. (Տես և Անորոշ հայցական). **Ճանապարհ, օրինակ, ազգ, ձև** բառերը հայցական. 161. **Բացառական հոլով.** Անուանց, 94. 95. 98. 144. 145. Անուանց յոքնակի բացառականը. 95. 96. 98. Ստացականաց բացառականը, 95. Ցուցականաց բացառականը. 95.



Էական դերանուանց բացառականը. 95. Բացառականը Թուական և քանակական անուանց խնդիր. 145. 146. **Գործիական հոլով.** Անուանց. 101. 102. Անուանց յոքնակի գործիականը 102. Ցուցականաց գործիականը. 102. Ստացականաց գործիականը. 102. Էական դերանուանց գործիականը. 102. **Պատմական հոլով.** 127. **Պարառական հոլով.** 128.

**Մակբայ.** 77. 78. Բացասական մակբայ. 116.

**Մասունք բանի.** 2.

**Յատկացուցիչ.** Ի՞նչ է. 33. Ուր կը դրուի. 42.

**Յոքնակի.** 8. Անուններն ինչպէս յոքնակի կ'ըլլան. 8. 9.

**Յօդ** և **գործածութիւնը.** Անուանց հետ. 6. 10. 11. Անորոշ հայցականի հետ. 65. Յատկացուցչի հետ. 42. Յատուկ անուն յատկացուցչի հետ. 47. 48. Ստացականաց հետ. 18. 53. Տիտղոսներու հետ. 174. Ե՞րբ յօդ չի գործածուիր. 48.

**Նախադասութիւն.** Ի՞նչ է. 4. Ի՞նչ բաներէ կը բաղկանայ. 74. Զեղչեալ նախադասութիւն. 75.

**Նախդիրք.** **Ի** նախդիր. 70. 71. 87. **Զ** նախդիր. 65. 126. 127. 128. **Յ** նախդիր. 117.

**Նախադրութիւնք.** 70. **Առ** և **առ ի** նախադրութիւն 71. 72. 77. 78. 87. 99. 100. 116. 117. **Ընդ** նախադր. 121. 122. **Ըստ** նախադր. 122. Այլևայլ նախադրութեանց խնդիրները. 134. 135. 161.

**Ով**, **ո** բառերը. 131.

**Ոք** բառը. 73.

**Չիք** բառը. 144.

**Պարզ ժամանակ.** 3. 177.

**Ս, Դ, Ն** գիրերը. 18. Ցուցականաց հետ. 20. Յարաբերականէն ետքը. 167. Ուրիշ քանի մը բառերէ ետքը. 172.

**Ստորոգելի.** 5. 6. Ե՞րբ հայցական պիտի ըլլայ. 164. **Ի** նախդրիւ ստորոգելի. 161.

**Տէր բայի.** 5. 6. Մէկէ աւելի տէր բայիներու բայը. 10. Տէր բայի կանոններ. Տէր բային սեռական. 178. Տ ր բային տրական. 179.

# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ


Դաս Ա. Լեզու, Քերականութիւն, Մասունք բանի . . . . . . . . 1
» Բ. Անուն, Ածական եւ Բայ . . . . . . . . 2
» Գ. Լուծում եւ Ցօղ . . . . . . . . 5
» Դ. Անուան թիւը . . . . . . . . 8
» Ե. Ածականներուն տեսակները . . . . . . . . 13
» Զ. Հրահանգ նախընթաց դասերուն . . . . 21
» Է. Արմատ եւ Ածանցեալ բառեր . . . . . . . . 24
» Ը. Բարդ բառեր . . . . . . . . 30
» Թ. Սեռական հոլով . . . . . . . . 33
» Ժ. Ածականաց համաձայնութիւնը. Ստացական եւ Ցուցական ածականաց սեռականները . . . . . . . . 43
» ԺԱ. Յատուկ անուն յատկացուցիչ . . . . . . 47
» ԺԲ. Դերանուն . . . . . . . . 50
» ԺԳ. Հայցական հոլով. Ածական բայ. Սեռի խնդիր . . . . . . . . 54
» ԺԴ. Ա. Լծորդութիւն . . . . . . . . 61
» ԺԵ. Բ. Լծորդութիւն, *իլ* վերջաւորած բայեր. Անորոշ հայցական. Տրական հոլով . . . . . . . . 63
» ԺԶ. Նախադրութիւն . . . . . . . . 70
» ԺԷ. Գ. Լծորդութիւն, *ալ* եւ *անալ* վերջաւորած բայեր. Մակբայ . . . . . . . . 76
» ԺԸ. Դ. Լծ., *ուլ* վերջաւորած բայեր . . . . 82
» ԺԹ. *ի*, *առ* նախադրութեանց քանի մը գործածութիւնը . . . . . . . . 87
» Ի. Չորս լծորդութեանց կրաւորականները. Բացառական հոլով . . . . . . . . 91

Դաս ԻԱ. *Առ* նախադրութիւն. Գործիական հոլով ........................ 99
» ԻԲ. Բարդ բառեր ........................ 106
» ԻԳ. Անկանոն կամ զարտուղի բայեր. Բացասական մակբայ. *Առ* նախադրութեան ուրիշ գործածութիւնը. *զ* նախդիր ........................ 114
» ԻԴ. Անկանոն բայեր. *Ընդ* եւ *ըստ* նախադրութիւնք ........................ 120
» ԻԵ. Բարդ բառեր. *զ* նախդրին այլեւայլ գործածութիւնները ........................ 124
» ԻԶ. Անկանոն բայեր. Տեղւոյ պարագայ ցուցնող նախադրութիւնք ........................ 132
» ԻԷ. Անկանոն բայեր ........................ 138
» ԻԸ. *Եմ* բային քանի մը գործածութիւնները. 142
» ԻԹ. Անցողական բայեր ........................ 148
» Լ. Ածականաց աստիճանները. Բաղդատութիւն ........................ 152
» ԼԱ. Հայցական հոլով Բնութեան խնդիր. Թուական ածականաց համաձայնութիւնը ........................ 156
» ԼԲ. Հայցական հոլով բնութեան խնդիր . . 161
» ԼԳ. Ստորոգելի հայցական եւ *ի* նախդրիւ. 164
» ԼԴ. Յարաբերական դերանուն ........ 165
» ԼԵ. Բացայայտիչ. Կոչական ........... 173
» ԼԶ. Բաղադրեալ ժամանակներ. Տէր բայի. 177
» ԼԷ. Դիմաւոր բայերն անդէմի փոխել . . . . 185
Նախընթաց դասերուն վրայ խառն հրահանգներ. 189
Յովսէփ գեղեցկին պատմութիւնը ........... 219
Այլ եւայլ պատմութիւններ ........... 229

1376
ՀՀ Ազգային գրադարան
NL0059373